«ՎԵՐԱԾՆՈՒՆԴ»
ՀՈԳԵՎՈՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՏԻԵԶԵՐՔԻ ՕՐԵՆՔՆԵՐԸ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ԵՎ ՏԻԵԶԵՐՔԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒԺԵՐԻ
ՈՒՂԵՐՁՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ
ԸՆԴՈՒՆԵԼ Է ՄԱՐԹԱՆ 2016 – 2022 ԹԹ.
ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

ՏԻԵԶԵՐՔԻ ՕՐԵՆՔՆԵՐԸ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ԵՎ ՏԻԵԶԵՐՔԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒԺԵՐԻ
ՈՒՂԵՐՁՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ
ԸՆԴՈՒՆԵԼ Է ՄԱՐԹԱՆ 2016 – 2022 ԹԹ.
ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ I **9**

ՏԻԵԶԵՐՔԻ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՀԻՄՔԸ **9**

ԳԼՈՒԽ II **12**

ԻՄ ՃՇՄԱՐԻՏ ՈՒՍՄՈՒՆՔԸ **12**

ՄՏԵՐՄԻԿ ԶՐՈՒՅՑՆԵՐ 13

ԻՆՉ ՆԵՐՍՈՒՄ Է՝ ԱՅՆ ԷԼ ԴՐՍՈՒՄ Է 17

ՄԵՆՔ ԲՈԼՈՐՍ ԶԱՎԱԿՆԵՐՆ ԵՆՔ ԱՍՏԾՈ 20

ՍՏՐՈՒԿՆԵՐ ԹԵ ԱՐԱՐԻՉՆԵՐ 22

ՁԵՐ ԿՅԱՆՔԻ «ՂԵԿԱՆԻՎԸ» 24

ՀՐԱՇԱԳՈՐԾ ԲԺՇԿՈՒՄՆԵՐ 27

ԳԼԽԱՎՈՐ ԿՅԱՆՔԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉՆԵՐԸ 29

ՍԵՐԸ ԾՆՈՒՄ Է ՄԵՐ 31

ԱՍՏՎԱԾ ՄԵՐ Է 34

ԳԼՈՒԽ III **36**

ՏԻԵԶԵՐՔԻ ՕՐԵՆՔՆԵՐԸ՝ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ **36**

ՆՈՐ ԱՍՏԻՃԱՆ՝ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ 37

ՏԻԵԶԵՐՔԻ ՕՐԵՆՔՆԵՐԸ՝ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ 40

ՄԻԱՄՆՈՒԹՅԱՆ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՕՐԵՆՔԸ 42

ՊԱՏՃԱՌԻ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔԻ ՕՐԵՆՔ 44

ԱԶԱՏ ԿԱՄՔԻ ՕՐԵՆՔ 47

ՏԻԵԶԵՐՔԻ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ԿԱՊԸ 49

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ «ՊԱՏՎԻ ԿՈԴԵՔՍ» 52

ՏԻԵԶԵՐՔԻ ՕՐԵՆՔՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ 54

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐ. ՀԱՏՈՒՅՄԱՆ ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ 57

ԶՂՋՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ (ՊՐԱԿՏԻԿԱ) 59
ԻՆՉՊԵՍ Է ԶՂՋՈՒՄԸ ՓՈԽՈՒՄ ՁԵՐ ԿՅԱՆՔԸ 61
ՄԻ՛ՇՏ ԵՂԵՔ ԱՅՆ, ԻՆՉ ԿԱՔ 64
ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԷԳՐԵԳՈՐԸ 66
ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԷԳՐԵԳՈՐԸ ԵՎ ՏԻԵԶԵՐՔԻ ՕՐԵՆՔՆԵՐԸ 69
ՄԱՐԴՈՒ ԵՎ ԷԳՐԵԳՈՐԻ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ 71
ԷՆԵՐԳԻԱՆԵՐԻ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ՄՈԼՈՐԱԿՈՒՄ 74
ԳԼՈՒԽ IV 77
ԻՆՉՊԵՍ ՊԱՇՏՊԱՆԵԼ ՍԵՓԱԿԱՆ ԷՆԵՐԳԱՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ՉԽԱԽՏԵԼՈՎ ՏԻԵԶԵՐՔԻ ՕՐԵՆՔՆԵՐԸ 77
ԻՆՉՊԵՍ ՊԱՇՏՊԱՆԵՔ ԻՆՔՆԵՐԴ ՁԵԶ՝ ՉԽԱԽՏԵԼՈՎ ՏԻԵԶԵՐՔԻ ՕՐԵՆՔՆԵՐԸ 78
ԻՆՉՊԵՍ ՀԱՂԹՈՂ ԴՈՒՐՍ ԳԱԼ՝ ՉԽԱԽՏԵԼՈՎ ՏԻԵԶԵՐՔԻ ՕՐԵՆՔՆԵՐԸ 81
ԻՆՉՊԵՍ ՊԱՀԵՔ ՁԵԶ ԿԼՈՆՆԵՐԻ ՀԵՏ՝ ՉԽԱԽՏԵԼՈՎ ՏԻԵԶԵՐՔԻ ՕՐԵՆՔՆԵՐԸ 83
ԱՆՁՆԱԿԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ 86
ԲԱՐԻԿԱԴԻ ՀԱԿԱՌԱԿ ԿՈՂՄԵՐՈՒՄ 88
ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ԱԶԱՏԱԳՐՈՒՄ (ՊՐԱԿՏԻԿԱ) 91
«ԱՆՁԻ ԵՐԿԱՏՈՒՄ» ՊՐԱԿՏԻԿԱՆ 94
ՀԱՄԿԱՆԱԼԻ ԼԵԶՎՈՎ 96
ԱԶԱՏԱԳՐՈՒՄ «ԿԵՆՎՈՐՆԵՐԻՑ» (ՊՐԱԿՏԻԿԱ) 99
ԳԼՈՒԽ V 102
ՏԻԵԶԵՐՔԻ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՈՒ ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԵՐՔՆԵՐԻ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՎՐԱ 102
ՄԱՐԴՈՒ ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԵՐՔՆԵՐԻ ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ 103

ԵՐԿՐԻ ՏԱՐԵՐՔԸ ԵՎ ՄԱՐԴԸ 105
ՋՐԻ ՏԱՐԵՐՔԸ ԵՎ ՄԱՐԴԸ 107
ՕԴԻ ՏԱՐԵՐՔԸ ԵՎ ՄԱՐԴԸ 109
ԿՐԱԿԻ ՏԱՐԵՐՔԸ ԵՎ ՄԱՐԴԸ 112
ՍԻՐՈ ՏԱՐԵՐՔԸ ԵՎ ՄԱՐԴԸ 114
ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՌՆՈՒՄ (ՊՐԱԿՏԻԿԱ) 116
ԳԼՈՒԽ VI 120
ՎԵՐԱԲԵՄՈՒՆՔԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ՝ ՏԻԵԶԵՐՔԻ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ 120
ԻՆՉՊԵՍ ԿԱՌՈՒՑԵԼ ՆՈՐ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ (ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ) 121
ԱՊԱԳԱՅԻ ՍԵՐՈՒՆԴԸ 124
ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ԽԱՂ 127
ԹՎԱՅՆԱՑՎԱԾ ՍԵՐՈՒՆԴ 129
ԶՐՈՒՅՑ ՀԱՎԱՍԱՐԸ ՀԱՎԱՍԱՐԻ ՀԵՏ 132
ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ՝ ԵՐԵԽԱՅԻ ԱՉՔԵՐՈՎ 135
ՌԻՍԿԻ ԽՈՒՄԲ 138
Ո՞Չ ՄԻ ՊԱՅՄԱՆՈՎ 141
ԶԱՎԱԿՆԵՐԻ ԵՎ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ 144
ՄԻԱԲԵՎԵՌ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԵՐՈՒՆԴ (ՊՐԱԿՏԻԿԱ) 147
ԳԼՈՒԽ VII 150
ԻՆՉԻ Է ՀԱՆԳԵՑՆՈՒՄ ՏԻԵԶԵՐՔԻ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԱՆՏԵՍՈՒՄԸ 150
ԲԱՐԻՆ՝ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ 151
ՉԱՐԸ՝ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ 153
ՆԱԽԱՆՁ ԵՎ ՎԻՐԱՎՈՐԱՆՔ 156
ՎԻՐԱՎՈՐԱՆՔՆԵՐԸ՝ ՁԵՐ ԵՆԹԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ 159
ՏԻԵԶԵՐՔԻ Ո՞Ր ՕՐԵՆՔՆ Է ԽԱԽՏՎԵԼ 161

ՀՐԵՇՏԱԿԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՄԿԶԲՈՒՆՔԸ.....164
ԱՎԵՐԻՉ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 167
ԱԿԱՄԱ ԱԶԳԱԿԱՆՆԵՐ.....170
ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ ԵՎ ՏԻԵԶԵՐՔԻ ՕՐԵՆՔՆԵՐԸ 173
ՆՈՐ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ.....176
ԳԼՈՒԽ VIII 179
ՏԻԵԶԵՐՔԻ ՕՐԵՆՔՆԵՐԸ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՉԱՓՈՒՄՈՒՄ.....179
ՀԻՆԳԵՐՈՐԴ ՉԱՓՄԱՆ ՄԱՐԴՈՒ ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ԿԱԶՄԻՉԸ 180
ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԵՋ 183
ՄԱՐԴԿԱՅԻՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՉԱՓՄԱՆ ԵՐԿՐՈՒՄ 186
ԵՎ ԻՆՉ ԹԱՔՈՒՆ ԷՐ՝ ՀԱՅՏՆԻ ԿԴԱՌՆԱ.....189
ՆՅՈՒԹԱԿԱՆ ԲԱՐԻՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ 192
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ (ԿՈՈՐԴԻՆԱՑԻՈՆ) ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՆՈՐ ԵՐԿՐՈՒՄ 194
ԵՐԿՈՒ ՀՈԳԻՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ 196
ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՉԱՓՄԱՆ ԵՐԿՐՈՒՄ 198
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ ՆՈՐ ԵՐԿՐՈՒՄ 201
ՀԻՆԳԵՐՈՐԴ ՉԱՓՄԱՆ ԵՐԿՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ .204
ՄՈԼՈՐԱԿԻ ՀԵՏ ՄԻԱՍՆԱԲԱՐ 206
ԲՈՒՅՍԵՐԸ՝ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՉԱՓՄԱՆ ԵՐԿՐՈՒՄ.....209
ՋՐԻ ՏԱՐԵՐՔԸ՝ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՉԱՓՄԱՆ ԵՐԿՐՈՒՄ 211
ՕԴԻ ՏԱՐԵՐՔԸ ԵՎ ՄԱՐԴԸ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՉԱՓՄԱՆ ԵՐԿՐՈՒՄ 213
ԿՐԱԿԻ ՏԱՐԵՐՔԸ ԵՎ ՄԱՐԴԸ՝ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՉԱՓՄԱՆ ԵՐԿՐՈՒՄ 216
ՀԻՆԳԵՐՈՐԴ ՉԱՓՄԱՆ ԵՐԿՐԻ ԿԵՆՍՈԼՈՐՏԸ (ԲԻՈՍՖԵՐԱՆ).....219
ՊԱՐԿԵՇՏՈՒԹՅՈՒՆ.....221

ԳԼՈՒԽ IX 225

ՆՈՐ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ..... 225

ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՏԱՆՈՂ ՈՒՂԻՆ 226

ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆ ՈԳՈՒ ԵՎ ՀԱՎԱՏԻ ՄԵՋ 229

ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆ (ՊՐԱԿՏԻԿԱ)..... 231

ՆՄԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ ԵՎ ԲՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ..... 234

ՆՄԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ..... 237

ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՄԱԳՆԻՍ (ՊՐԱԿՏԻԿԱ)..... 239

ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՄԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ 242

ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԽՈՀՆԵՐ 245

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՐՁԻԿ (ՊՐԱԿՏԻԿԱ)..... 247

ՀԱՅԵԼԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆ..... 250

ԲՈՒՄԵՐԱՆԳԸ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ Է..... 252

ԶՈՀ ԵՎ ԴԱՀԻՃ 255

ԱՆՆՎԱՃՆԵՐԸ..... 258

ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ 261

ՊԱՏՃԱՌԻ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔԻ «ՎԵՐԱԾՐԱԳՐԱՎՈՐՈՒՄ»..... 263

ՓՈԽԵԼՈՎ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԴ՝ ՓՈԽՈՒՄ ԵՍ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԴ..... 266

ՌԻԿՈՇԵՏԻՑ ԽՈՒՍԱՓԵԼՈՒ ՀԱՄԱՐ (ՊՐԱԿՏԻԿԱ)..... 268

ՈՐՔԱՆ ՇԱՏ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ, ԱՅՆՔԱՆ ՀՈՒԺԿՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ 271

ԳԼՈՒԽ X..... 274

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ՝ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿԻ ԷՆԵՐԳԻԱՆԵՐՈՒՄ 274

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՉԱՓՄԱՆ ԿՇԵՌՔԻ ՆԺԱՐԸ..... 275

ՁԳՈՂՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԳԵՎՈՐ ԶԱՐԹՈՆՔԻ ՎՐԱ 277
ԱՆԴՐԱԴԱՐՁՄԱՆ ՕՐԵՆՔԸ ԵՎ ԱՆՑՄԱՆ ՍՅԵՆԱՐԸ 280
ՄԻԱՄՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԲԱԶՄԱՍՏԻՃԱՆՈՒԹՅՈՒՆԸ 283
ԱԶԱՏ ԿԱՄՔԻ ՕՐԵՆՔԻ «ՎԵՐԱԴԱՐՁԸ» 285
ԱԶԱՏ ԿԱՄՔԻ «ՊԱՐԱՆԻ ՁԳՈՒՄ» 287
«ԸՆԿԵՐԱՆԱԼ» ՊԱՏՃԱՌԻ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔԻ ՕՐԵՆՔԻ ՀԵՏ 290
ՏԻԵԶԵՐՔԻ ՕՐԵՆՔՆԵՐԻՆ ՀԱՄԱՔԱՅԼ 292
ԳԼՈՒԽ XI 296
ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԵՆՔԸ 296
ՈԳԵԿԱՆ ՍԿԻԶԲ՝ ԳՈՐՇ ԱՌՕՐՅԱՅՈՒՄ 297
ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԵՆՔԸ 299
ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 301
ՄԱՐԴԿԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ «ԳՈՐԾՎԱԾՔԸ» (ՊՐԱԿՏԻԿԱ) 303
ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՄՆՈՒԹՅՈՒՆԸ 306
ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԴԵՊԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 308
«ԴԵՂ» ԵՐԿՎՈՒԹՅԱՆ ԴԵՄ 310
ՍՏԵՂԾԱԳՈՐԾԵԼՈՎ ՏԻԵԶԵՐՔԻ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ 312

ԳԼՈՒԽ I

ՏԻԵԶԵՐՔԻ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՀԻՄՔԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՏԻԵԶԵՐՔԻ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՀԻՄՔԸ

ՏԻԵԶԵՐՔԻ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՀԻՄՔԸ

Վլադիմիր Շուտով.

Բարև Ձեզ,

...Յանկալի կլիներ ավելին իմանալ «Տիեզերքի կառուցվածքի հիմնական սկզբունքները» թեմայի վերաբերյալ:

14 հունվարի 2016 թ.

Մարթա

— **Բացարձակ-Հայր**, ուզում եմ խնդրել քեզ շարադրել **Տիեզերքի Օրենքները**, որոնց մասին այնքան հիշատակում են Բարձրագույն Ուժերը:

Բացարձակ-Հայր

— Գոյություն ունի **Տիեզերքի երեք հիմնական Օրենք**, որոնցից ծագում են մյուսները։

Առաջին. Ինչ վերևում է՝ այն էլ ներքևում է, կամ՝ Արտաքինն արտացոլում է Ներքինը։

Երկրորդ. Նմանը միշտ նմանին է ձգում, կամ՝ Էներգիաներն առձգվում են ըստ թրթռանքի։

Երրորդ. Ամբողջականության և Միասնության Օրենք, կամ՝ Տիեզերքում ամեն ինչ մասնիկն է Միասնական Ամբողջի։

Իսկ այժմ կարող ենք ավելի հանգամանորեն անդրադառնալ նրանցից յուրաքանչյուրին։

Առաջին օրենք

Սրանից բխում են պատճառա-հետևանքային կապերը, որոնց թիվ ու հաշիվ չկա, և գլխավորը դրանց մեջ այն է, որ ձեր կյանքում տեղի ունեցող բոլոր իրադարձությունները արտացոլանքն են ձեր ներքին վիճակի՝ ձեր մտքերի, հույզերի, զգացմունքների։ Նշանակում է՝ ձեր բոլոր դժբախտությունների և տառապանքների պատճառը հարկավոր է փնտրել ՄԻՄԻԱՅՆ ձեր մեջ։

Երկրորդ օրենք

Ձեր շուրջը եղած ամեն բան արտացոլում է ձեր հոգևոր զարգացման՝ ձեր թրթիռների մակարդակը։ Եվ եթե այն չի գոհացնում ձեզ, ուրեմն պետք է աշխատեք ինքներդ ձեզ վրա, որ ավելի վեր բարձրանաք, և այդ ժամանակ կփոխվի ձեր կյանքը, կփոխվեն շուրջը եղած մարդիկ, ամեն ինչ նոր երանգներով կգունավորվի։ Եվ դուք ի զորու՛ եք այդ ամենն անելու, զավակնե՛րս։

Երրորդ օրենք

Այս օրենքը, թերևս, ամենաբարդն է ձեր ըմբռնման համար, սակայն նա, ով կկարողանա լիովին հասկանալ այն, իսկական երջանկություն կգտնի։

Բանն այն է, զավակնե՛րս, որ այսքան երկար գտնվելով երկվության աշխարհում, դուք կորցրել եք ձեր Միասնական Տան մասը կազմելու զգացումը, մոռացել եք, որ բոլորդ հսկայական Տիեզերքի մասնիկներն եք՝ ձեր Հոգու փորձառության համար նրանից «զատված»։

Եվ անչափ կարևոր է, որ հասկանաք՝ չի կարող իսկապես երջանիկ լինել ամբողջի մի մասնիկը, եթե երջանիկ չեն մյուսները։ Այդ իսկ պատճառով ասվում է՝ «Սիրի՛ր մերձավորիդ ինչպես քո անձը»։ Բայց համաձայնվե՛ք, սիրելինե՛րս, որ ձեզ համար դա շատ է դժվար։

Սակայն նա, ով հասու դառնա այդ ասույթի ողջ խորությանն ու իմաստությանը, կճանաչի իր Աստվածային Էությունը և իսկական երջանկություն կգտնի։

Ընդունել է Մարթան, հունվարի 14 2016 թ.

ԳԼՈՒԽ II

ԻՄ ՃՇՄԱՐԻՏ ՈՒՍՄՈՒՆՔԸ

Եշուայի ուղերձները Տիեզերական Օրենքների մասին,
թելադրվել են 2018 թ. հունվարի 17-24

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՄՏԵՐՄԻԿ ԶՐՈՒՅՑՆԵՐ

2. ԻՆՉ ՆԵՐՍՈՒՄ Է՝ ԱՅՆ ԷԼ ԴՐՍՈՒՄ Է

3. ՄԵՆՔ ԲՈԼՈՐՍ ԶԱՎԱԿՆԵՐՆ ԵՆՔ ԱՍՏԾՈ

4. ՍՏՐՈՒԿՆԵՐ ԹԵ ԱՐԱՐԻՉՆԵՐ

5. ՁԵՐ ԿՅԱՆՔԻ «ՂԵԿԱՆԻՎԸ»

6. ՀՐԱՇԱԳՈՐԾ ԲԺՇԿՈՒՄՆԵՐ

7. ԳԼԽԱՎՈՐ ԿՅԱՆՔԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉՆԵՐԸ

8. ՍԵՐԸ ԾՆՈՒՄ Է ՍԵՐ

9. ԱՍՏՎԱԾ ՍԵՐ Է

ՄՏԵՐՄԻԿ ԶՐՈՒՅՑՆԵՐ

Ողջունում եմ ձեզ, իմ հարազա՛տ ու սիրելի հոգիներ։

Այսօր ես ուզում եմ ձեզ պատմել իմ իսկական Ուսմունքի մասին։

Անցած հարյուրամյակների ընթացքում իմ Ուսմունքն այնքան փոփոխություններ է կրել, որ միայն փշրանքներն են ձեզ հասել իրենց նախաստեղծ վիճակով։

Եկել է ժամանակը, երբ ես կարող եմ լիովին վերականգնել այն և ճշտել բոլոր հորինվածքներն ու միտումնավոր աղավաղումները՝ ներմուծված այն ուժերի կողմից, որոնք տիրապետել են մարդկանց գիտակցությանը, տանելով մի հունով, որը թույլ է տվել իրենց կառավարել մարդուն ու ստիպել նրան մոռանալ **իր Աստվածային ծագումը**։

Մինչդեռ հենց դա՛ էր իմ ամբողջ Ուսմունքի անկյունաքարը։

Սակայն սկսենք սկզբից։

Այժմ, երբ մեր Հայրն ու Մայրը պատմել են ձեզ իմ կյանքի պատմությունը, դուք արդեն գիտեք, որ ես ձեզնից մեկն եմ եղել՝ Երկիր գալով իբրև մարդու որդի, այլ ոչ իբրև Աստված, ինչպես փորձում են ներկայացնել եկեղեցականները։

Քանի որ իմ առաքելությունը համամոլորակային բնույթ ուներ, Արարիչը թույլ տվեց իմ Հոգուն Երկիր իջնել իր զույգ հիպոստասներով՝ արական և իգական, ինչը մեծագույն բարեբախտություն եղավ ինձ համար և հաջողության գրավական։

Միավորումը Մարիամ Մագթաղենացու հետ ֆիզիկական պլանում, այնպիսի հզոր հոգևոր ազդակ տվեց իմ Հոգուն, որ նա «հիշեց», թե ինչու է եկել Երկիր, և առանց հապաղելու ձեռնամուխ եղավ իր առաքելության իրագործմանը, քանզի գիտեր, թե որքան քիչ ժամանակ է տրված իրեն Երկրի վրա։

Իսկ շնորհիվ Մայրիկիս՝ այդ մեծագույն հոգու, որ մարմնավորվել էր ինձ հետ միասին միևնույն ժամանակաշրջանում, ես վաղ

մանկությունից ապրել ու դաստիարակվել եմ մի միջավայրում, ուր այն ժամանակ շատ քչերին էր հաջողվում թափանցել։

Երբ լքեցի Կումրանում գտնվող եսսենացիների համայնքը, արդեն կազմավորված մարդ էի և հստակ ըմբռնում ունեի **Տիեզերքի Օրենքների մասին**, **որոնք և միայն որոնք կարող էին երջանիկ ու բովանդակալից դարձնել մարդու կյանքը** և, իհարկե, առաջին հերթին հոգևոր արժեքներով։

Ու թեև աշխարհի իմ ըմբռնումը մարդկանց հասցնելու առաջին փորձերս չպսակվեցին հաջողությամբ, ես արդեն գիտեի, որ ինձ նախասահմանված միակ ճանապարհը մարդկանց լուսավորելն է։

Հնդկաստանում ճամփորդելու տարիներին, հատկապես Ագարտա այցելելուց և նրա Քրմերի հետ հաղորդակցվելուց հետո, Ուսմունքը, որ պիտի տանեի մարդկանց, վերջապես «մարմին առավ». ես հասկացա, թե ինչ ձևով պիտի այն մատուցեի մարդկանց, որ լիներ պարզ ու մատչելի, վստահություն առաջ բերեր և թափանցեր սրտերը։

Իմ կենսափորձն ու բնատուր դիտունակությունը վառ, հետաքրքիր կերպարներ և ուշագրավ պատմություններ էին հրամցնում ինձ, որոնցով լուսաբանում էի այն, ինչ ուզում էի հասցնել մարդկանց, իսկ ինձ բնորոշ հումորի զգացումն օգնում էր անել դա թեթևորեն, ուրախ, չնմանվելով վերակացուի կամ խրատաբանի։

Կարծում եմ՝ հենց դրա շնորհիվ էլ իմ զրույցները բերկրանք էին պարգևում թե՛ ինձ, թե՛ մասնակից մարդկանց։

Հիմնական զրույցն սկսելուց առաջ ես էներգետիկական միասնություն էի հաստատում՝ անելով կարճ մեդիտացիա, ներկաների համար գրեթե աննկատելի։

Մի վայրկյան փակում էի աչքերս և հավաքվածներին պատկերացնում իբրև վառվռուն ճրագներ՝ միասնական Աստվածային ակունքից բռնկված, կամ էլ կրակի կայծեր, որ պտույտ են գալիս հրաշագեղ Աստվածային պարով։

Ամբողջ հոգով զգում էի, որ **մենք բոլորս մեկ ամբողջություն ենք, ժամանակավորապես տրոհված մանրագույն մասնիկների, որպեսզի ինչ-որ ժամանակ, հավաքվելով մեկտեղ, Արարչի գիրկը վերադառնանք**։

Զգում էի՝ ինչպես է շուրջս փոխվում տարածությունը, ինչպես է տոգորվում արդեն բոլորովին այլ էներգիաներով, որոնք, տարրալուծելով ամենայն բացասական բան, Լույսով ու Սիրով էին լցնում մարդկանց սրտերը։

Եվ միայն այդ Աստվածային «նախերգանքից» հետո էի սկսում խոսել այն մասին, ինչի համար եկել էի մարդկանց հետ հանդիպման։

* *

Սկզբում հավաքվածներին պատմում էի, թե ով է Աստված, որի մասին լսել է ամեն ոք, բայց որին բոլորը պատկերացնում են յուրովի՝ կախված դավանանքից, ապրած միջավայրից, դաստիարակությունից և կրթությունից։

Բացատրում էի, որ **Աստված այն ամենն է, ինչ տեսնում են իրենց շուրջը. երկիրն ու երկինքը, ջուրն ու օդը, բնության բոլոր տարերքները, կենդանիներն ու թռչունները...**

Երկրի վրա եղած ամեն բան ստեղծել է նա՝ Արարիչը մեր։

Բայց նրա արարչության պսակը մարդն է՝ իր անբաժանելի մասնիկը, իր սիրասուն զավակը։

Ջանում էի բացատրել որքան կարելի է պարզ։ Երբեմն ասում էի, որ մեր Արարիչը նման է հզորազոր հրաշագեղ ծառի, որի ճյուղերը երկրի վրա ապրող ազգերն ու ժողովուրդներն են, իսկ ամեն մարդկային հոգի այդ ծառի մի տերևն է։

Երկիր գալով՝ նա բողբոջի պես ծնվում է ճյուղերից մեկի վրա։

Հետզհետե հասունանում է բողբոջ-հոգին, լցվում հյութերով, և դուրս է գալիս նուրբ ու մատղաշ ծիլը, որն այնուհետ վերածվում է ամուր ու գեղեցիկ տերևի, բայց ժամանակի հետ թոշնում է և թափվում գետին...

Այդ ամենը, սակայն, կատարվում է մարդու մարմնի հետ միայն, որի մեջ մարմնավորվել է հոգին։ Իսկ ինքը՝ Հոգին, անմահ է և Աստվածային և պիտի Երկիր գա այնքան անգամ, որքան անհրաժեշտ կլինի հասկանալու համար, թե ով է ինքը և ինչ համար է կրկին ու կրկին մարմնավորվում այս մոլորակի վրա։

Այդպես քայլ առ քայլ ես մարդկանց բերում էի վերամարմնավորման մտքին։

Երբեմն այսպես էի բացատրում։

Հոգին անմահ է և ապրում է Երկնային ոլորտներում, ուր տիրում է միայն Սերը՝ Արարչի էներգիան, այսինքն՝ այնտեղ չկա ո՛չ վիշտ, ո՛չ տառապանք,- հույզեր, որոնք բնորոշ են ստորին հոծ աշխարհներին։

Բայց Հոգին անչափ հետաքրքրասեր է և ուզում է ի՛ր վրա փորձել Տիեզերքում եղած ամեն բան և հատկապես՝ Երկրում, այս չքնաղ մոլորակում, որտեղ կյանքն այնքան վառ է և անկանխատեսելի։

Այստեղ ամեն ինչ կա տարատեսակ հույզեր վերապրելու և զգալու, ոգու տոկունության և ուժի անհավանական փորձություններ անցնելու, երջանկություն ու վիշտ ճաշակելու, նաև հասկանալու համար, թե ինչ է հարստությունն ու աղքատությունը, բարությունն ու ագահությունը, գթասրտությունն ու դաժանությունը, սերն ու ատելությունը. մի խոսքով՝ իր միջով անցկացնելու Երկրի վրա գոյություն ունեցող զգացմունքների ողջ գամման, զգալու նրանց բոլոր նրբերանգները և այդ կերպ ձեռք բերելու անգին կենսափորձ մի աշխարհում, որտեղ իշխում են հակադրությունների էներգիաները։

Եվ ամեն անգամ վերադառնալով Տուն՝ իր Երկնային ոլորտները, Հոգին իր հետ տանում է Երկրում վաստակած բովանդակ փորձը, որպեսզի հարկ եղածին պես գիտակցի այն, վերապրի և խորհի, թե ինչպես կարելի է լավացնել կյանքը այդ բազմաչարչար Երկրում, ինչպես կարելի է պարարել մարդկանց սրտերը Բարությամբ ու Սիրով, որ թույլ կտա նրանց ապրել խաղաղ և երջանիկ։

Եվ հետո, նկատի առնելով իր նախորդ փորձը, նա ընտրում է նոր մարմնավորում, նոր երկիր, նոր սոցիալական միջավայր, որպեսզի

լրացնի Երկիր մոլորակում ապրելու իրեն պակասող փորձառությունը և հասկանա, թե ինչպես կարելի է օգնել մարդկանց՝ ապրելու ավելի լավ ու երջանիկ. . .

Մարդիկ միշտ էլ բազմաթիվ հարցեր էին տալիս ինձ, որովհետև այդ գիտելիքները բոլորովին նոր էին ու անսպասելի իրենց համար։

Եվ ես ջանում էի պատասխանել հնարավորինս պարզ ու հանգամանորեն, որպես օրինակ բերելով կյանքային պատմություններ, մարդկային ճակատագրեր՝ զարմանալի և անբացատրելիորեն խճճված։

Ես չէի անցնում հաջորդ թեմային այնքան ժամանակ, մինչև չէի համոզվում, որ բոլոր ներկաները լիովին հասկացել են պատմածս՝ ընդունելով իմ խոսքերը ոչ միայն մտքով, այլև իրենց ողջ հոգով ու սրտով։

ԻՆՉ ՆԵՐՍՈՒՄ Է՝ ԱՅՆ ԷԼ ԴՐՍՈՒՄ Է

Ինձ հետ հանդիպելու էին գալիս ամենատարբեր մարդիկ, և ես միշտ զարմանում էի, թե ինչ ուրախությամբ, հետաքրքրությամբ ու անկեղծ կարեկցանքով էին լսում իմ պատմածը, ինչ վստահությամբ ու սրտաբացությամբ էին ի պատասխան կիսում իրենց սեփական պատմությունները՝ զվարճալի և տխուր, ծիծաղաշարժ և անկանխատեսելի, այնպես, ինչպես կյանքն է հորինում իր անսպառ երևակայությամբ։

Եվ դա անգին օգնություն էր ինձ համար, որովհետև կարողանում էի իրենց իսկ օրինակներով ցույց տալ, թե **ինչպես են գործում Տիեզերքի Օրենքները և հատկապես գլխավոր Օրենքը՝ «Ինչ ներսում է՝ այն էլ դրսում է»**։

Ամենաշատը հենց այս Օրենքին էի ուշադրություն դարձնում, քանի որ նրա ազդեցությունն իր կյանքում կարող էր տեսնել բացարձակապես

ամեն մարդ, որը գեթ մեկ անգամ խորհել էր իրեն պատահած դեպքերի իսկական պատճառների մասին՝ առանց մեղքը ուրիշի վրա բարդելու, ինչը, ցավոք, շատերիդ է բնորոշ։

Այդպես է կառուցված մարդը. երբ երջանիկ է, պարզապես վայելում է կյանքը՝ չմտածելով ոչ մի բանի մասին և հաճախ մոռանալով շնորհակալություն հայտնել Արարչին իրեն շնորհված ուրախության համար։

Եվ դիմում է Աստծուն լոկ այն ժամանակ, երբ վիճակը վատ է։

Իմ զրույցների մեջ շատ էի ուզում բացատրել մարդկանց, որ իրենք իսկ Աստծու մասնիկներն են, այսինքն՝ հենց իրենք կարող են օգնել իրենց և ավելի լավը դարձնել իրենց կյանքը։

Բայց դրա համար պետք է սովորեն ապրել Տիեզերքի Օրենքներով։ Երբեմն այսպիսի օրինակ էի բերում։

Ասում էի, որ ամեն մարդ ծնվում է Արարչի Սիրո հոսանքի մեջ։ Հետո այդ հոսանքը, ինչպես փառահեղ ջրառատ մի գետ, տանում է նրան կյանքի միջով։

Սակայն ամեն ոք ազատ է ընտրելու՝ մնալ այդ օրինյալ հոսանքի մեջ, հետևելով նրա ընթացքին՝ նրա Օրենքներին, թե դուրս գալ ափ և ապրել մարդկային օրենքներով, որոնք հորինվել են սոսկ մի նպատակով, որ վախի և հնազանդության մեջ պահեն մարդուն։

Ես բացատրում էի, որ Աստվածային հոսանքը մարդու ճշմարիտ գիտակցությունն է, նրա բնատուր էությունը, և որ Սիրո մեջ ապրելը նույնքան բնական է մարդու համար, որքան շնչելը։

Բայց մարդիկ մոռացե՞լ են դա։ Ավելի ճիշտ՝ մարդկանց ստիպել են մոռանալ նրանք, ում ձեռնտու էր դա։

Ամենապարար Սիրո փոխարեն մարդկանց գիտակցության մեջ դանդաղ, բայց վստահ ներարկում էին Վախ, որն աստիճանաբար կլանում էր այն ամենը, ինչ արժեքավոր էր, թանկ ու սիրելի նրանց համար։

Եվ այդ Վախը, որն ամուր բույն դրեց մարդու հոգում, ծնունդ տվեց ավերիչ հույզերի՝ շուրջբոլորը սերմանելով վիշտ, տառապանք, ստրկամտություն, աղքատություն ու հիվանդություն։

Սակայն ում հաջողվում էր ազատվել Վախից և կրկին Սիրո հուրը բորբոքել իր սրտում, սկսում էր բոլորովին այլ հայացքով նայել կյանքին։

Եվ նրա Սիրո Լույսն արդեն դեպի իրեն էր ձգում երջանիկ իրադարձություններ և բարի, լավ մարդկանց։

Կյանքը նրա համար ողողվում էր վառվռուն գույներով և առատորեն շնորհում երկրային բոլոր բարիքները։

Դա կախարդանք էր թվում, սակայն իրականում հենց այդպես է դրսևորվում Տիեզերքի այդ ամենազոր Օրենքը՝ «Արտաքինը միշտ արտացոլում է մարդու ներքին բովանդակությունը»։

Ինձ հաճախ այսպիսի հարց էին տալիս, որը տեսնում եմ՝ այսօր էլ շատերիդ է հուզում. «Այդ դեպքում ինչու՞ է այն չար ու վատ մարդը այդքան երջանիկ և հարուստ, իսկ ես, որ բարի ու լավն եմ, այսքան աղքատ եմ և անբախտ»։

Ես այսպես էի պատասխանում. «Իսկ դուք վստա՞հ եք, որ այդ հարուստ մարդը երջանիկ է։ Գուցե նրա հոգում իսկական դժոխք է տիրում, և եթե դա կարողանայիք տեսնել, ոչ մի դեպքում չէիք ցանկանա նրա տեղում լինել։

Երբեք մի՛ դատեք մարդուն արտաքին նշաններով, իր նյութական բարեկեցությամբ, այլ փորձեք նայել աչքերի մեջ, հոգու խորքը։ Եվ հնարավոր է՝ այնպիսի ցավ ու տառապանք տեսնեք, այնպիսի վախ՝ կորցնելու իր փողերն ու իշխանությունը, հարստության այնպիսի մոլեգին կիրք, որը չի թողնում քուն գա աչքերին՝ ծնունդ տալով հոգու և մարմնի ախտերի, որ անկեղծորեն կխղճաք այդ մարդուն։

Իսկ որքա՛ն երջանիկներ կան շուրջը՝ համեստագույն վաստակով։

Նրանք վայելում են բնությունը, որը բոլորին շռայլում է իր գեղեցկությունը, վայելում են մերձավորների սերը, իրենց այգում

աճեցրած բերքը, սիրելի կնոջ թխած հացը, մանկան ծիծաղը և նույնիսկ ֆիզիկական աշխատանքը, որը միշտ ուրախությամբ են անում, որովհետև տեսնում են իրենց աշխատանքի պտուղները և սեփական կյանքի արարիչը զգում իրենց»։

ՄԵՆՔ ԲՈԼՈՐՍ ԶԱՎԱԿՆԵՐՆ ԵՆՔ ԱՍՏԾՈ

Այսօր ես ուզում եմ պատմել, թե ինչ եղանակով էի փորձում հասցնել մարդկանց այն միտքը, որ **մենք բոլորս մեկ ամբողջի մասնիկներն ենք՝** անկախ այն բանից, թե որ երկրում ենք ծնվել, ինչ գույն ունի մեր մաշկը, հարուստ ենք թե աղքատ, որն է մեր դավանանքը. . .

Այն ժամանակ դժվար էր դա հասկանալ, ինչպես և, ի միջի այլոց, հիմա . անչափ մեծ է ռասայական, սոցիալական և կրոնական շերտավորումը երկվության աշխարհում։

Ես ստիպված էի ծանրակշիռ փաստարկներ և տարատեսակ օրինակներ գտնել, որպեսզի մարդիկ կարողանային գիտակցել իրենց վսեմությունն ու պատկանելությունը Արարչին։

Չափազանց անհավանական էին հնչում նրանց ականջին այս խոսքերը՝ **«ձեզնից յուրաքանչյուրը մասնիկն է Աստծո»**, այնքան անհասանելի, մեծ ու ահարկու էին համարում նրան։

Եվ այդ ժամանակ խնդրում էի հետևյալը. հիշել իրենց կյանքի ամենաերջանիկ պահը, երբ Սերը բերնեբերան լցրել է իրենց սրտերը՝ բառի բուն իմաստով հորդելով դուրս, և զգալ, թե ինչպես է դրան արձագանքում իրենց մարմինը, ինչ են իրենք զգում ներքուստ։

Գրեթե բոլորը զգում էին, որ երանությամբ են համակվում, իսկ ներսը պարարվում է ջերմությամբ։

Ես ասում էի. «Այն, ինչ զգում եք հիմա, հենց դա էլ միացումն է Աստծու հետ, որովհետև Աստված Սեր է՝ մաքրամաքուր Սեր։ Եվ երբ մեր

սրտերը սիրով են լցվում, մենք ձուլվում ենք նրա հետ՝ դառնալով մեկ ամբողջություն»:

Դա մեր հոգու բնական վիճակն է, որը մոռանում է հոգին՝ իջնելով այս բաժանման նյութական աշխարհը:

Եվ յուրաքանչյուր հոգու նպատակն է՝ անցնելով երկրային երկար ու ձիգ ճանապարհ, ծնվելով կրկին ու կրկին, վերապրելով ամենատարբեր զգացմունքներ և վաստակելով անգին փորձ, վերադառնալ Սիրո հարազատ էներգիաների մեջ՝ միաձուլվել Արարչին:

Սակայն դրա համար նա պետք է ավելի իմաստուն դառնա և հասկանա շատ բան՝ աստիճանաբար բարձրանալով հոգևոր սանդուղքի աստիճաններով, մաքրելով հոգին վախի, զայրույթի, ագրեսիայի, ագահության, խանդի, իշխանության նսեմ էներգիաներից, որոնք ձգում են իրեն ցած՝ թույլ չտալով սլանալ Երկինք:

Եվ միայն այդ ժամանակ մարդը կկարողանա մերձենալ Աստծուն, որովհետև կձգվի դեպի նա ըստ էներգիաների համանմանության:

Այդպես հետզհետե անցնում էի հաջորդ **Տիեզերական Օրենքին՝ «Նմանը նմանին է ձգում»**:

Այնուհետև կյանքից բերված բազմաթիվ օրինակներով մենք միասին «ուսումնասիրում» էինք, թե ինչպես է գործում այդ օրենքը:

Եվ մարդիկ սկսում էին արդեն բոլորովին նորովի նայել կյանքի շատ իրադարձությունների, հասկանալով իրենց անհաջողությունների ու դժբախտությունների պատճառները:

«Բայց ամենակարևորը,- ասում էի ես նրանց,- այն է, որ դուք ամեն վայրկյան կարող եք շտկել դրությունը: Դրա համար հարկավոր է լոկ փոխել սեփական մտքերի և զգացմունքների ընթացքը, այսինքն՝ լցվել բոլորովին այլ էներգիաներով:

Ձեր հոգևոր աշխատանքը կփոխհատուցվի հարյուրապատիկ չափով: Ամեն ինչ ասես հրաշքով կսկսի փոխվել ձեր շուրջը:

Ձեր բարի մտքերն ու դիտավորությունները անպայման ձեր կյանքի մեջ կներձգեն բարություն և բարօրություն, երջանկություն և ուրախություն։

Սակայն դրանք պիտի բխեն սրտից, պարուրելով մարդկանց անկեղծ ջերմությամբ և Սիրով, քանզի մարդուն հնարավոր չէ խաբել, նա անպայման բնազդորեն կզգա կեղծիքը և նույն կերպ կպատասխանի ձեզ»։

Այդպես, աննկատելիորեն ես բերում էի մարդկանց այն մտքին, որ իրենք ունակ են ինքնուրույն արարելու իրենց իրականությունը, և դա արդեն իսկ ապացուցում էր, որ իրենք մասնիկներն են Աստծո, ամենազոր և ամենակարող։

Եվ իրենց գլխավոր ուժը Սիրո մեջ է, այդ հրաշագործ էներգիայի, որին ենթակա է ամեն-ամեն բան։

ՍՏՐՈՒԿՆԵՐ ԹԵ ԱՐԱՐԻՉՆԵՐ

Ես ուզում եմ փոքր-ինչ շեղվել թեմայից և պատմել, թե ինչպես էին իշխանավորներն ու հոգևորականները վերաբերվում ժողովրդի հետ ունեցած իմ զրույցներին։

Սկզբում մեծ նշանակություն չէին տալիս, քանզի համարում էին, որ ես պարզապես տարօրինակ մեկն եմ, որը սիրում է խոսել և ոչ մի վտանգ չի ներկայացնում իրենց համար։

Բայց շուտով սպառնալիք զգացին իմ կողմից, որովհետև մեր հանդիպումներից հետո նրանց ազդեցությունը մարդկանց վրա սկսել էր նկատելիորեն նվազել։

Իսկ կրոնն այն ժամանակներում անասելի ուժեղ էր և մարդկանց վերահսկման գործիքներից մեկն էր։

Նրա սպասավորներն ուղղակիորեն ենթարկվում էին աշխարհիկ իշխանություններին, այդ կերպ կազմելով մարդկային գիտակցության միասնական «կառավարման համակարգ»։

Իմ հետևորդների թվի մեծանալու հետ նրանք հասկացան, թե ինչ վտանգ եմ ես ներկայացնում իրենց համար։

Սեփական կյանքի արարիչ-մարդիկ բնավ չէին մտնում նրանց պլանների մեջ։ Եվ բացի այդ, իմ զրույցները վերամարմնավորման, կամքի ազատության և Արարչի հետ միանալու մասին լիովին հակասում էին նրանց կրոնական դոգմաներին, որոնք ամեն ինչից վեր դասում էին հնազանդությունն ու խոնարհումը Աստծո և իշխանավորների առջև։

Մի որոշ ժամանակ նրանք չէին կարողանում մեղադրանք առաջադրել ինձ, չէ՞ որ ես ոչ մի կոչ չէի անում մարդկանց, չէի տրամադրում իշխանությունների դեմ, միայն ընկերական զրույցներ էի վարում, և մարդիկ ազատ էին ընդունելու կամ մերժելու իմ ասածները։

Բայց քանի որ մարդիկ սկսում էին գործնականորեն կիրառել Տիեզերքի Օրենքները, որոնց մասին զրուցում էինք նրանց հետ, և տեսնում էին, որ դրանք իսկապես գործում են, որովհետև իրենց կյանքը սկսում էր բարելավվել, իմ հետևորդներն օրըստօրե ավելի ու ավելի էին շատանում։

Մարդուն, որ զգացել է ազատությունը և հաղորդակից դարձել Սիրո Աստվածային էներգիային, այլևս դժվար էր հետ խցկել աշխարհընկալման այն նեղ շրջանակի մեջ, որ նրա համար պատրաստել էին կրոնն ու իշխանավորները։

Իսկ ինձ համար դա ապացույց էր, որ ես պատվով էի կատարում առաքելությունը, որի համար Երկիր էի եկել, և որ մարդիկ ոչ միայն ի սրտե ընդունում էին իմ Ուսմունքը, այլև սկսում էին ապրել Տիեզերքի Օրենքներով։

Ժամանակի հետ սկսեցին խոչընդոտել մեր հանդիպումների կազմակերպումը, իսկ Հրեաստանի որոշ քաղաքներում իմ անունն արդեն արգելքի տակ էր։

Եվ ինձ հաճելի էր, որ դա բնավ չէր կանգնեցնում ինձ լսել ցանկացողներին:

Մարդիկ տասնյակ կիլոմետրեր էին կտրում հասնելու այն վայրերը, ուր դեռ կարող էի հանդիպել նրանց հետ և, չնայած բոլոր խոչընդոտներին, ունկնդիրներիս թիվը շարունակ աճում էր:

Ես տեսնում էի, որ հանդիպումից հետո մարդիկ հեռանում էին լիովին վերափոխված: Նույնիսկ նրանք, ովքեր գալիս էին լոկ հետաքրքրությունից դրդված և սկզբում միայն անվստահություն էին զգում, հեռանում էին արտասուքն աչքերին, տոգորված հավատով, որ Աստված միշտ իրենց հետ է և իրենց կյանքն անպայման կլավանա, եթե ապրեն Տիեզերքի ճշմարիտ Օրենքներով, այլ ոչ թե՝ մարդկանց պարտադրած:

ՁԵՐ ԿՅԱՆՔԻ «ՂԵԿԱՆԻՎԸ»

Եվ այսպես, փոքրիկ շեղումից հետո, ես ուզում եմ շարունակել զրույցը, թե ինչպես էի փորձում հասցնել մարդկանց իմ Ուսմունքի իմաստը, որն իրականում Տիեզերքի Օրենքների մի ժողովածու էր, որ կարելի էր շարադրել ընդամենը մի քանի րոպեում: Սակայն իմ խնդիրն այն էր, որ այդ Օրենքները ամուր հաստատվեն մարդկանց հոգիներում և դառնան եռաչափ աշխարհում գոյատևելու նրանց գլխավոր «գործիքները», այլ ոչ թե զուտ գիտելիքներ:

Այդ պատճառով էլ, արդեն մեծ լսարանի առաջ, իմ «քարոզների» հիմնական մասը առաջվա նման օրինակներ էին կյանքից, մատչելի ու հասկանալի յուրաքանչյուրին:

Ես ուզում էի ցույց տալ պատճառա-հետևանքային կապերը, որ մարդու կյանքում տեղի ունեցող ամեն իրադարձության հիմքն ենկազմում, որովհետև ոչինչ երբեք չի հայտնվում ինքն իրեն:

Մեր շուրջը կատարվող ամեն բան մեր մտքերի և զգացմունքների արգասիքն է, անկախ նրանից՝ գիտակցում ենք դա, թե ոչ։

Մե՛նք ենք մեր էներգիաներով սնուցում, մեր հույզերով տոգորում մեր երազանքները, հարաբերությունները մարդկանց հետ, կյանքային բոլոր իրավիճակները։

Մենք ինքներս ենք «փքում նավի առագաստները», որով լողում ենք կյանքի հորձանուտում։ Եվ լոկ մեզնից է կախված, թե ինչպես և ուր կշարժվի այն։

Ես ձգտում էի հասցնել մարդկանց ամենակարևոր միտքը՝ որ ամեն ինչ մեր սեփական ձեռքերում է։

Մենք ենք նավապետը մեր նավի, և ոչ ոք մեր փոխարեն չի անի մեր գործը։

Եվ եթե լցնենք մեր կյանքի «օվկիանոսը» վախով, չարությամբ, ագրեսիայով, այդ բացասական էներգիաներն անպատճառ «փոթորիկ» կբարձրացնեն, որը խարխուլ մակույկի նման ճոճելով այս ու այն կողմ կշպրտի մեր նավը՝ ցնցելով մեր կյանքը և վախի, վշտի ու անհուսության ճիրաններում պահելով մեզ։

Իսկ եթե սնուցենք մեր «օվկիանոսը» Լույսով ու Սիրով, Բարությամբ ու Գթասրտությամբ, մեր նավը գեղեցիկ ու վեհապանծ կճեղքի ջրային տարածքները՝ որոնելով հետաքրքիր արկածներ, այցելելով խաղաղ ծովածոցեր, ուր հանգիստ կառնենք հոգով և կրմբոշխնենք կյանքի բոլոր վայելքները։

Ես պետք է համոզեի մարդկանց, որ դրանք սոսկ գեղեցիկ խոսքեր չեն, այլ ստույգ իրականություն։

Հաճախ էին գանգատվում կյանքից՝ ասելով, որ չափազանց շատ խոչընդոտներ են հանդիպում իրենց «նավարկության» ընթացքում։

Իսկ ես պատասխանում էի, որ այդ ամենը հենց իրենց օգտին է, քանզի դժվարություններն ու խոչընդոտները ամեն նավագնացության անբաժանելի մասն են։

Ճանապարհին հանդիպող «ծանծաղուտներն ու խութերը» ստուգարքներ են «նավապետի» համար։ Դրանք հղկում են նրա վարպետությունը՝ հասցնելով կատարելության։

Ես բացատրում էի, որ մեր գիտակցությունն անծայր է, անսահման, Աստվածային։

Հենց նա է այն կյանքային «օվկիանոսը», որ պիտի կտրի անցնի հերթական անգամ Երկիր իջած մարդը։

Եվ մեր ամեն մի նոր մարմնավորում կոչված է խորացնելու և ընդլայնելու մեր գիտակցությունը՝ բարձրացնելու այն վարպետությունը, որ ձեռք է բերվել նախորդ կյանքերում։

Մեր ողջ նախորդ փորձը պահպանվում է խորքային հիշողության մեջ, և մենք ի զորու ենք վեր հանելու այն, որպեսզի չկրկնենք նախկին սխալները և վստահորեն շարժվենք առաջ դեպի նվիրական նպատակը՝ միանալ մեր գիտակցությամբ Աստծու գիտակցությանը, ինչը թույլ կտա մեզ այլևս երբեք չվերադառնալ այս բազմաչարչար Երկիրը և շարունակել մեր գոյությունը արդեն ուրիշ՝ բարձր աշխարհներում։

Այլաբանություններից ես անցնում էի որոշակի կյանքային իրավիճակների, որոնք անթիվ ու անհամար էին։

Եվ այդպես, աստիճանաբար, մարդիկ սկսում էին հասկանալ, թե ինչպես է գործում Տիեզերքի այս կամ այն Օրենքը, որ իրենք միանգամայն ի վիճակի են գործադրելու դրանք կյանքում, որպեսզի ավելի լուսավոր ու երջանիկ դառնա իրենց կյանքը։

ՀՐԱՇԱԳՈՐԾ ԲԺՇԿՈՒՄՆԵՐ

Ես ուզում եմ բացել ձեզ իմ «հրաշագործ բժշկումների» գաղտնիքը։

Քանի որ դրանց լուրը ինձնից առաջ էր տեղ հասնում, մեր հանդիպումներին հաճախ բերում էին հիվանդ ու անկարող մարդկանց և խնդրում էին բուժել։

Պետք է ասեմ, որ ես ոչ միշտ էի համաձայնվում, որովհետև կարողանում էի թափանցել մարդու դաշտի մեջ և տեսնել նրա հիվանդության պատճառը։

Տառապյալներին մերժելը անասելի դժվար էր, և ես միշտ ջանում էի հնարավորինս մեղմ լինել, բացատրելով մարդուն, որ այդ փորձությունը նրան ուղարկված է ի վերուստ և ինձ տրված չէ միջամտել նրա ճակատագրին։

Բայց ես ասում էի, որ նա ինքը կարող է օգնել իրեն, եթե հասկանա, թե ինչու է իրեն տրվել այդ հիվանդությունը, ինչն է սխալ անում իր կյանքում։

Եվ եթե փոխի իր մտքերի ընթացքը, ազատվի իրեն փոթորկող կրքերից, որոնք քայքայում են իր հոգին ու մարմինը, անպատճառ կապաքինվի։

Ես բացատրում էի մարդկանց, որ հիվանդությունները իրենց մարմնի մեջ իջած բացասական մտքերն ու զգացմունքներն են, որոնք աստիճանաբար քայքայում են նսեմ էներգիաներով համակված մարդուն։

Սակայն նույնիսկ այդ տխրառիթ փորձը ցույց է տալիս, որ հենց իրենք են ստեղծում իրենց իրականությունը։

Եվ եթե կարողացել են ավերել իրենց մարմինը սեփական մտքերով ու հույզերով, նշանակում է՝ կարող են նաև վերականգնել այն՝ քայքայիչ բացասական էներգիաները փոխարինելով բուժիչ Աստվածային էներգիաներով։

Ես բազմաթիվ օրինակներ էի բերում կյանքից, երբ մարդը, հավատալով իր ուժին ու զորությանը և տոգորելով իրեն Անպայման Սիրո էներգիաներով, վերածնվել է աչքի առաջ։

Ես ասում էի, որ կենդանի և մեռյալ ջուրը հեքիաթ չէ, այլ իրողություն։ Եվ որ մեզնից ամեն ոք իր Սիրո ուժով կարող է սովորական ջուրը վերածել կենդանի ջրի, իսկ չարության և ագրեսիայի էներգիայով՝ մեռյալ ջրի։

Բացատրում էի, որ հիվանդությունները մարդկանց տրվում են հոգևոր աճի, ինքնահաղթահարման, սեփական սխալների գիտակցման համար։

Մենք պետք է շնորհակալ լինենք դրանց համար Աստծուն, որովհետև դրանք մեր «դաստիարակման» ծայրահեղ միջոցն են, այսինքն՝ վերջին հույսը, որ կգիտակցենք մեր սխալները և կսկսենք փոխվել։ Եվ այդ դեպքում իզուր ապրած չենք լինի մեր կյանքը։

Եվ եթե տեսնում էի, որ մարդը ողջ հոգով ընդունում է իմ խոսքերը և կանգնած է հոգևոր նորացման շեմին, զետեղում էի նրան իմ դաշտում՝ Անսահման և Անպայման Սիրո էներգիաների մեջ, և նա ապաքինվում էր աչքի առաջ։

Սակայն իմ նպատակը հրաշք ցույց տալը չէր, այլ՝ սոսկ ապացուցել մարդկանց, որ իմ բոլոր ասածները սին խոսքեր չեն, այլ իրականություն, որը մատչելի է յուրաքանչյուրին։

Ես բացում էի բուժման «մեխանիզմը», բացատրելով, որ արդեն հասել եմ այն վիճակին, երբ հիվանդությունը չի կարող ձգվել դեպի ինձ մեր էներգիաների մեծ տարբերության պատճառով։

Մենք բոլորս կենդանի մագնիսներ ենք, և միայն մեզնից է կախված, թե ինչ լիցք կունենան դրանք, այսինքն՝ նաև այն, թե ինչ կձգենք դեպի մեզ։

Մարդկանց վրա հատկապես ուժեղ տպավորություն էր գործում, որ վերքերը փակվում էին աչքի առաջ, երբ մոտեցնում էի ձեռքս, կամ երբ կույրերը սկսում էին տեսնել, իսկ կաղերը դադարում էին կաղալուց։

Դա կատարվում էր շնորհիվ այն բանի, որ հայտնվելով իմ դաշտում՝ նրանց մարմինները այլ կառուցվածք էին ձեռք բերում՝ պարարվելով Սիրո Աստվածային էներգիայով, և մարմնի բոլոր ձևախախտված մասերը արագորեն վերականգնվում էին։

Սակայն ինձ համար ամենակարևորը բացատրելն էր մարդկանց, որ իրենք էլ ունակ էին դրան, հարկավոր էր միայն փոխել իրենց, փոխել աշխարհայացքը, կյանքի ըմբռնումը, տոգորել իրենց ուրիշ էներգիաներով՝ փոխել իրենց «մագնիսների» լիցքը։

«Իհարկե, դրա համար հարկավոր է ժամանակ և տքնաջան աշխատանք ինքներդ ձեզ վրա,- ասում էի ես։- Սակայն արդյունքը միանգամայն արժանի է այդ ջանքերին։ Դուք կդառնաք ձեր հրաշալի իրականության արարիչները, Երկիր իջած իսկական Աստվածներ»։

ԳԼԽԱՎՈՐ ԿՅԱՆՔԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉՆԵՐԸ

Ես մոտենում եմ իմ պատմության ավարտին և կուզենայի հանրագումարի բերել մարդկանց հետ ունեցած իմ զրույցները, ձեզ տալ իմ Ուսմունքի «մզվածքը»՝ գլխավոր կյանքային կողմնորոշիչները, որ ձգտում էի ներդնել մարդկանց գիտակցության մեջ։

<u>Առաջինը և ամենակարևորը</u>՝ այն ըմբռնումն է, որ Երկրի վրա և Տիեզերքում եղած ամեն ինչ բաղկացած է տարբեր խտության էներգիաներից։ Եվ այդ էներգիան կենդանի է, քանի որ ունի իր սեփական գիտակցությունը։

Մեր կյանքի ամեն ակնթարթին մենք փոխհարաբերվում ենք նրա հետ՝ դեպի մեզ ձգելով այն էներգիան, որն արտացոլում է մեր գիտակցության՝ մեր մտքերի և զգացմունքների ներկա վիճակը։

Դա՛ է հիմքերի հիմքը, որից բխում են Տիեզերքի մյուս բոլոր Օրենքները։

Երկրորդ՝ մենք ամենքս Միակ Հոր՝ Տիեզերքի Արարչի զավակներն ենք, անբաժանելի մասնիկները նրա։

Եվ մեր բնական նախածին էներգիան զուտ Սիրո էներգիան է, որովհետև Աստված Սեր է՝ Ամենապարար, Անսահման և Անպայման։

Սակայն գալով Երկիր՝ մենք մոռանում ենք դա, մոռանում ենք նաև մեր հարազատությունը Արարչի և Երկրի երեսին ապրող ամեն մարդու հետ։

Մենք ներգրավվում ենք «խաղի» մեջ, որտեղ կան յուրայիններ և օտարներ, բարիներ և չարեր, տերեր և ստրուկներ, վախկոտներ և քաջեր, հարուստներ և աղքատներ, մի խոսքով՝ ուր տիրում են հակադրությունների էներգիաները իրենց ողջ բազմազանությամբ։

Սակայն այդ «խաղի» գլխավոր կանոնն այն է, որ անցնելով տարատեսակ փորձությունների երկարուձիգ ճանապարհ, ծնվելով կրկին ու կրկին տարբեր մարմինների և տարբեր պայմանների մեջ՝ վերհիշենք մեր Աստվածային ծագումը և վերջ ի վերջո ընտրենք Անսահման և Անպայման Սիրո մեր միակ հարազատ էներգիան, որը մեզ թույլ կտա միաձուլվել Արարչին, այսինքն վերադառնալ Տուն՝ սկզբնաղբյուրը, որից իջել ենք այս հոծ աշխարհը բացառիկ փորձի ձեռքբերման և մեր Հոգիների զարգացման համար։

Ինձ հաճախ հարցնում էին. «Իսկ ինչու՞ ենք մենք իջնում Երկիր, ուր այսքան դժբախտություն ու տառապանք կա»։

Բացատրելու համար ես անցնում էի **երրորդ օրենքին**՝ Էվոլյուցիայի Օրենքին։

Տիեզերքում ամեն ինչ շարժման, զարգացման մեջ է։ Ամեն ինչ ձգտում է կատարելացման։ Բայց դրան հասնելու համար երբեմն հարկավոր է լինում ընկնել մինչև հատակը, որ անցնելով բազում փորձություններով՝ հաղթանակի վայելքն ապրենք։

Ես հաճախ օրինակ էի բերում ժողովրդական հեքիաթները, որոնցում արտացոլված էին խորքային իմացություններ մարդու զարգացման մասին՝ Հոգու ճանապարհը, որ տանում է դեպի Աստված։

Ես ջանում էի բացատրել, որ մեր հոգիները, Երկնքում, մարմնավորումների միջև, իրենք են ընտրում իրենց երկրային «արկածները», և որքան հինավուրց ու իմաստուն է հոգին, այնքան դժվարին ուղի է պլանավորում իր համար։

Եվ այն, որ մենք մոռանում ենք դա՝ Երկիր իջնելով, նույնպես մտնում է այս Աստվածային «խաղի» կանոնների մեջ, որի մասնակիցն ենք բոլորս։

Թերևս հենց դա էր ամենից դժվար լինում բացատրել մարդկանց, որովհետև կյանքում շատ չէին իմ խոսքերի ճշմարտությունը հաստատող օրինակները։

Սոսկ եզակի մարդկանց էր տրված մարմնավորման մեջ եղած ժամանակ իմանալ սեփական հոգու խնդիրները և ձեռնամուխ լինել իրենց առաքելության կատարմանը, ինչպես եղել է իմ, Մարիամ Մագթաղենացու, մորս, Հովհաննես Մկրտչի և իմ աշակերտներից ոմանց պարագայում։

Եվ այդուհանդերձ մարդիկ հավատում էին ինձ, որովհետև մնացած բոլոր պատմածներս գտնում էին իրենց հաստատումը, և նրանք սեփական օրինակով էին տեսնում, թե ինչպես են գործում Տիեզերքի Օրենքները։

ՄԵՐԸ ԾՆՈՒՄ Է ՄԵՐ

Եվ այսպես, շարունակենք զրույցը, թե ինչն էի ես համարում ամենակարևորը իմ Ուսմունքի մեջ և ինչպես էի փորձում դա հասցնել մարդկանց։

Թերևս, ամենամեծ ուշադրությունը դարձնում էի Տիեզերքի «Ինչ ներսում է՝ այն էլ դրսում է» Օրենքին, քանի որ այս Օրենքի խոր ըմբռնումը և ամենակարևորը՝ կիրառումը կյանքում կարող է փոխել մարդու ճակատագիրը և իսկապես երջանիկ դարձնել նրան։

Ես բացատրում էի մարդկանց, որ հարկավոր է ոչ թե ժամանակ առ ժամանակ մտաբերել, որ արտաքինն արտացոլում է ներքինը, և փոխել մտքերն ու զգացմունքները ինչ-որ հատուկ իրավիճակում ցանկալի արդյունքին հասնելու համար, այլ կարևոր է սովորել **ՄՇՏԱՊԵՍ ԱՊՐԵԼ** Սիրո էներգիաների մեջ, և դա կօգնի գտնել հոգու ներդաշնակություն և իմաստուն մոտեցում կյանքին:

Լոկ մշտական «լուսարձակումը» ներսից, մշտական տոգորումը Սիրով թույլ կտա մարդկանց իսկապես բարելավել իրենց կյանքը:

Այդ Աստվածային էներգիաները ամենահուսալի պաշտպանությունը կլինեն բոլոր փորձանքների դեմ և նրանց կյանքի մեջ կներձգեն բարի ու լավ մարդկանց, երջանիկ իրադարձություններ և բարենպաստ իրավիճակներ:

Սերը ծնում է Սեր: Սա դարձավ իմ գլխավոր պատվիրաններից մեկը:

Իսկ հաջորդը եղավ՝ **ամեն մարդ իր կյանքի Արարիչն է**: Եվ կարող է փոխել այն ամեն վայրկյան գեթ իր մտքի և ցանկության ուժով, որովհետև նման է Աստծուն, որի մի մասնիկն է:

Ես մեծ ուշադրություն էի դարձնում **Ազատ կամքի օրենքին**:

Շատերը ճիշտ չէին հասկանում այն՝ շփոթելով ամենաթողության հասկացության հետ:

Առավել հասկանալի դարձնելու համար ես բացատրում էի հետևյալ կերպ:

Ասում էի, որ նրա հիմքում **ընտրության ազատությունն է**, որը ամեն մարդ ի՛նքը պետք է անի:

Ուրիշի, ինչ-որ մեկի պարտադրած կամքը կամ ուրիշի ընտրությունը երբեք չեն երջանկացնի, որովհետև յուրաքանչյուր հոգի բացառիկ է և անկրկնելի, յուրաքանչյուր հոգի Երկիր է գալիս իր սեփական խնդիրներով և միայն մարդն ինքը կարող է հոգևոր աշխատանքի շնորհիվ «վերհիշել» դրանք ու զգալ, թե ինչ է հարկավոր իրեն, ինչը կօգնի իրեն կատարել իր երկրային նախասահմանումը:

Եվ դրա համար պետք է հարց տաս ինքդ քեզ. «Իսկ ի՞նչ է ցանկանում իմ հոգին։ Ի՞նչը կարող է ինձ իսկապես երջանիկ դարձնել։ Ի՞նչը կուրախացնի և բավականություն կպատճառի ինձ։ Ամենից լավ ի՞նչ եմ անում ես։ Ո՞րն է իմ տաղանդը։ Ի՞նչ օգուտ կարող եմ բերել մարդկանց։»

Եվ այս հարցերին պատասխանելիս պետք չէ ելնել գործնական նկատառումներից, հանրորեն ընդունված արժեքներից, կյանքի մասին եղած ավանդական հայացքներից, այլ հարկավոր է նայել սեփական հոգու ամենախորքը և հասկանալ, թե ինչ է ուզում նա՝ ձեր Աստվածային մասնիկը, այլ ոչ թե դուք՝ որպես Երկրի վրա ապրող մարդ։

Պատասխանը կարող է գալ պայծառացման նման, որպես հուշում ի վերուստ կամ ինչ-որ նշան, որ կտա ճակատագիրը պետք եղած մարդու կամ անակնկալ իրավիճակի տեսքով։

Կարևոր է սովորել որսալ Բարձրագույն Ուժերի և ձեր սեփական հոգու ուղարկած ամենատարբեր հուշումները։ Իսկ դրանք առկա են յուրաքանչյուր մարդու կյանքում։

Միշտ ականջալուր եղեք ձեր ինտուիցիային, որը հենց ձեր հոգու ձայնն է։ Նա միշտ ձեզ հետ է, միշտ ձեռքի տակ։ Եվ եթե կարողանաք երկխոսություն հաստատել նրա հետ, ձեր կյանքը բոլորովին այլ իմաստ կստանա. դուք կմիանաք Աստծուն, որը կառաջնորդի ձեզ կյանքում։

Ես միշտ հնարավորինս շատ օրինակներ էի բերում կյանքից և խնդրում էի մեր հանդիպումներին ներկա գտնվող մարդկանց պատմել իրենց սեփական պատմությունները, որոնք հաստատում էին իմ խոսքերը։ Եվ այդպիսի պատմություններ միշտ գտնվում էին։

ԱՍՏՎԱԾ ՍԵՐ Է

Եվ վերջում ուզում եմ ձեզ պատմել Տիեզերքի ևս մեկ Օրենքի մասին, որն անչափ կարևոր դեր է խաղում մարդու կյանքում։

Դա **Պատճառա-հետևանքային կապերի օրենքն է**, որն ի հայտ է գալիս որպես «պարգև» կամ «պատիժ» մեր արարքների համար։

Ամենակարևոր բանը, որ ջանում էի հասցնել մարդկանց, այն էր, որ **Աստված երբեք և ոչ մի բանի համար չի պատժում մեզ**։

Կյանքում բոլոր անախորժությունները պատահում են մեզ լոկ այն պատճառով, որ ԻՆՔՆԵՐՍ ենք առձգում դրանք մեր մտքերով, զգացմունքներով և արարքներով։

Այնպես, ինչպես մեր կյանքում եղած ամեն երջանիկ և ուրախալի բան գալիս է որպես հատուցում մեր արդար, սրտաբուխ և Սիրով լեցուն արարքների։

Սակայն պատճառա-հետևանքային կապերի շղթան երբեմն կարող է շատ երկար լինել, և տեսնել այն ոչ բոլորին է տրված, որովհետև կարող է ձգվել նույնիսկ մինչև նախորդ մարմնավորումները։

Կյանքը բարդ է և բազմադեմ։ Ամենատարբեր մարդիկ են շրջապատում մեզ և հաստատում մեզ հետ խրթին, երբեմն խճճված հարաբերություններ, որոնք նույնպես կարող են ձգվել նախորդ կյանքերից։

Հաճախ հոգիները միևնույն ընտանիքում են ծնվում հենց նրա համար, որ քանդեն վաղեմի հանգույցները, տրամաբանական ավարտին հասցնեն այն, ինչ չի հաջողվել նախորդ մարմնավորումներում։

Եվ տեսնել դա գործնականորեն անհնար է։ Բայց եթե գիտես այդ մասին, արդեն ուրիշ կերպ՝ ավելի գիտակցված կընկալես շատ բաներ։

Կան նաև նշաններ, որոնցով կարելի է որոշել այդ տեսակ վաղեմի կապերը։

Որքան դժվար են հարաբերությունները ձեր ճանապարհին պատահած ինչ-որ մարդու հետ, այնքան մեծ է հավանականությունը, որ հենց նրա հետ պետք է քանդեք նախորդ կյանքից ձգվող հին «հանգույցը»։

Եվ դրա համար պետք է ընդունեք նրան այնպես, ինչպես կա, և սիրեք ամբողջ սրտով։ Միայն Սերը կարող է վերջ դնել հինավուրց թշնամությանը և ազատել հետագա տառապանքից։

Սակայն առավել հաճախ պատճառը և հետևանքը մակերեսին են, և դուք միանգամայն կարող եք տեսնել միմյանցից բխող դեպքերի շղթան։

Ես համոզված եմ, որ ձեզնից յուրաքանչյուրը բազմաթիվ այդպիսի օրինակներ կգտնի իր սեփական կյանքից։

Եվ վերջին բանը, որ կուզեի ձեզ ասել։

Հարկավոր է հիշել, սիրելինե՛րս, որ Տիեզերքի բոլոր Օրենքները կապված են մեկը մյուսի հետ և բխում են միմյանցից։

Ուստի անհնար է կառուցել երջանիկ, ներդաշնակ կյանք՝ գործի դնելով դրանցից միայն մեկը և անտեսելով մյուսները։

Բայց եթե կյանքը Սիրո էներգիաների մեջ դառնա ձեր հոգու բնական վիճակը, այլևս ստիպված չեք լինի մտածել, թե ինչպես և ինչ օրենքներ եք կատարում, ինչն է բխում ինչից և ինչ հետևանքներ կլինեն։

Դուք կգտնեք ձեր Աստվածայնությունը, քանզի **Աստված Սեր է**, այսինքն՝ կսկսեք արարել ձեր իրականությունը Տիեզերքի Օրենքներին համապատասխան՝ առանց մտածելու նրանց մասին։

Մշտապես Սիրո էներգիաների մեջ ապրող մարդը ունակ չէ խախտելու այդ օրենքներից և ոչ մեկը, որովհետև նրա գիտակցությունն արդեն դուրս է գալիս հոծ աշխարհի սահմաններից և բնակվում է կեցության բարձրագույն ոլորտներում։ Եվ ես ուրախ եմ, որ ձեզնից շատերն արդեն ընդհուպ մոտեցել են այդ վիճակին և մնում է անել վերջին քայլը՝ անցնելու Հինգերորդ չափում ձեր չքնաղ մոլորակի հետ միասին։

Այսպիսով ես ավարտում եմ իմ ուղերձների շարքը և օրհնում եմ, որ ներդաշնակորեն մուտք գործեք ձեզ համար նոր այդ իրականությունը։

Ի սրտե սիրող Եշուան խոսեց ձեզ հետ

Ընդունել է Մարթան 2018 թ. հունվարի 17-24

ԳԼՈՒԽ III

ՏԻԵԶԵՐՔԻ ՕՐԵՆՔՆԵՐԸ՝ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Բացարձակ-Հոր ուղերձները, ընդունել է Մարթան 2018 թ. ապրիլի 29 – մայիսի 15
«ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ՝ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ» շարքի մի մասը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆՈՐ ԱՍՏԻՃԱՆ՝ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ Բացարփակ-Հոր ուղերձները, ընդունել է Մարթան 2018 թ. ապրիլի 29 – մայիսի 15

2. ՏԻԵԶԵՐՔԻ ՕՐԵՆՔՆԵՐԸ՝ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ

3. ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՕՐԵՆՔԸ

4. . ՊԱՏՃԱՌԻ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔԻ ՕՐԵՆՔԸ

5. ԱԶԱՏ ԿԱՄՔԻ ՕՐԵՆՔԸ

6. ՏԻԵԶԵՐՔԻ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ԿԱՊԸ

7. ԱՍՏՎԱԾԱՅԻՆ «ՊԱՏՎԻ ԿՈԴԵՔՍԸ»

8. ՏԻԵԶԵՐՔԻ ՕՐԵՆՔՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ

9. ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐ. ՀԱՏՈՒՑՄԱՆ ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

10. ԶՂՋՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ (ՊՐԱԿՏԻԿԱ)

11. ԻՆՉՊԵՍ Է ԶՂՋՈՒՄԸ ՓՈԽՈՒՄ ՁԵՐ ԿՅԱՆՔԸ

***

1. ՄԻ՛ՇՏ ԵՂԵՔ ԱՅՆ, ԻՆՉ ԿԱՔ

2. ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԷԳՐԵԳՈՐ

3. ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԷԳՐԵԳՈՐԸ ԵՎ ՏԻԵԶԵՐՔԻ ՕՐԵՆՔՆԵՐԸ

4. ՄԱՐԴՈՒ ԵՎ ԷԳՐԵԳՈՐԻ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

5. ԷԵՐԳԻԱՆԵՐԻ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ՄՈԼՈՐԱԿՈՒՄ

ՆՈՐ ԱՍՏԻՃԱՆ՝ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Ողջունում եմ ձեզ, իմ սիրասու՛ն զավակներ։

Այսօր մենք մոտենում ենք մի անչափ կարևոր թեմայի, որն այսուհետ կդառնա ձեր փարոսը Համբարձման տանող ճանապարհին։

Եվ խոսքը կվերաբերի ձեր նոր կյանքային դիրքորոշմանը, հիմնված արդեն այլ՝ Տիեզերական Օրենքների վրա, և թե ինչպես դեռևս ապրելով եռաչափ աշխարհում, սովորեք չհեռանալ դրանցից, քանզի

Համբարձում ընտրած մարդկանց համար հետադարձ ճանապարհ այլևս չկա։

Եվ կսկսենք ամենապարզից՝ նրանից, որ բոլորդ հրաշալի գիտեք և որն արդեն դարձել է ձեր սովորական վիճակը՝ ձեր երկրորդ բնավորությունը։

Ովքեր վաղուց են կարդում այս կայքէջի ուղերձները, սովորել են այն մտքին, որ **դուք ինքներդ եք արարում ձեր իրականությունը** մտքի, դիտավորության, ցանկության ուժով։

Ձեզ տրվել են բազմաթիվ պրակտիկաներ, որոնց օգնությամբ կարելի է ստեղծել նման իրականություն, և դուք, զավակնե՛րս, սովորել եք գործածել դրանք։

Դուք գիտակցել եք, որ Տիեզերքի Օրենքները գործում են անկասելիորեն և հարկավոր է լոկ մշտապես հիշել նրանց մասին՝ ներդաշնակ վիճակում մնալու և ձեր շուրջը Սիրո ու ըմբռնման մթնոլորտ ստեղծելու համար։

Սակայն տեսնում եմ, որ ամենադժվար բանը ձեզ համար **ՄՇՏԱՊԵՍ** այդ վիճակում մնալն է, քանի որ անասելի շատ կենցաղային խնդիրներ և անսպասելի իրադարձություններ են լինում, որոնք հանում են ձեզ հավասարակշռությունից, այսինքն՝ այդ Աստվածային վիճակից։

Ու թեև ես բազմիցս ասել եմ իմ նախորդ ուղերձներում, որ հենց այդ դեպքերն են կոփում ձեր Ոգին և դառնում ձեր ամրության ստուգումը, գործնականում ձեր հակազդեցությունը (ռեակցիան) հաճախ իր բարձունքում չի լինում։

Դուք շարունակում եք մտածել և գործել իներցիայով, տարեցտարի, մարմնավորումից մարմնավորում գլորվելով միևնույն տրորված հունով։

Եվ հիմա մենք կխոսենք, թե ինչպես կարելի է հաղթահարել այդ իներցիան, դուրս գալ ուղիղ ճանապարհի, որի վրա այլևս չեք «սայթաքի»՝ եռաչափ աշխարհի ձեր սովորություններին դեմ առնելով։

Առաջին բանը, որ պետք է անեք ձեզ անախորժ, անկանխատեսելի հանգամանքների դեպքում, նույնիսկ ամենաողբերգական՝ սովորական մարդու տեսանկյունից, հարցնել ինքներդ ձեզ կամ ձեր Հոգևոր ուղեկցորդներին, թե ինչու դա տեղի ունեցավ։

Դուք պետք է ի հայտ բերեք ձեզ հետ կատարվածի խորքային պատճառը և տեսնեք ձեր դերը այդ իրադարձության մեջ։

Սակայն դա կհաջողվի միայն այն դեպքում, եթե կարողանաք լիովին անջատել ձեր միտքը՝ իր տրամաբանական կառուցումներով և հնարանքներով, ինչպես նաև ձեր մարդկային Էգոն, որը, բնականաբար, տառապում է ձեզ հետ պատահած անախորժություններից։

Դուք պետք է տեսնեք պատկերն ամբողջությամբ՝ ողջ Աստվածային սցենարը, որն իրադարձության յուրաքանչյուր մասնակցի համար այնպես է գրվել, որ նա առավելագույն դասերը քաղի դրանից, ձեռք բերելով հենց իր համար նախատեսված փորձը, այդ կերպ հնարավորություն տալով նաև իր մերձավորներին վաստակել իրենցը։

Մի՛ վախեցեք ուրիշների աչքին սառն ու անտարբեր երևալուց։

Նույնիսկ կարող եք արտաքուստ ցուցաբերել ձեր սովորական հույզերը, սակայն **ՆԵՐՔՈՒՍՏ** պարտավոր եք մնալ կատարելապես հանգիստ և հավասարակշռված, որ չշեղվեք այն թրթիռային ալիքից, որը տանում է ձեզ նոր իրականություն, ուր այլևս չկա ցավ ու տառապանք, այլ կա միայն յուրաքանչյուր իրադարձության իմաստուն ու խոր ընդունում որպես Աստվածային, այսինքն՝ տեղին։

Փորձե՛ք, զավակնե՛րս, ամեն օր ձեր հետ տեղի ունեցող ամեն ինչին նայել հենց այդ դիրքից։

Եվ թող դա դառնա դեպի Համբարձման տանող ձեր հոգևոր սանդուղքի հաջորդ աստիճանը, որից այլևս չեք իջնի, այլ կշարունակեք բարձրանալ ավելի ու ավելի վեր՝ նոր իրականություն, նոր հրաշալի կյանք։

Եվ ես օրհնում եմ ձեզ, զավակնե՛րս, որ լինի այդպես։

ՏԻԵԶԵՐՔԻ ՕՐԵՆՔՆԵՐԸ՝ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Այսօր մենք կշարունակենք մեր զրույցը, թե ինչ սկզբունքներով է հարկավոր առաջնորդվել երրորդից Հինգերորդ չափում Անցման փուլում, որ իրագործում է Երկիրը՝ ողջ մարդկության հետ միասին։

Առայժմ ձեր մոլորակում հատուկենտ մարդիկ գիտեն, թե ինչ բացառիկ և վիթխարի ժամանակներում է ձեզ բախտ վիճակվել ապրելու։

Այդ իսկ պատճառով, զավակնե՛րս, ձեզ վրա հատուկ պատասխանատվություն է ընկնում. սեփական օրինակով ցույց տալ, թե ինչպիսին պիտի լինի ապագայի մարդը և այդ կերպ մյուսներին էլ ճանապարհ հարթել դեպի նոր կյանք։

Եվ իմ հաջորդ ուղերձներում ես շեշտը կդնեմ Տիեզերքի Օրենքների գործնական կիրառման վրա։

Որպեսզի մարդկությունը վերածնվի, հարկավոր է ստեղծել պայմաններ, որոնք կնպաստեն այդ Օրենքների պահպանմանը։

Իսկ որո՞նք են այդ պայմանները։

<u>Նախ և առաջ</u>, մարդկանց ցանկացած խմբում, լինի ընտանիք, աշխատանքային կոլեկտիվ թե ստեղծագործական միություն, անհրաժեշտ է ստեղծել Սիրո մթնոլորտ, ուր կտիրի փոխադարձ հարգանք, ըմբռնում և հավասար հնարավորությունների տրամադրում բոլորին։

Ինչպե՞ս կարելի է դա անել։

Անտարակույս, հարկավոր է սկսել ձեզնից։ Եթե ձեզ հաջողվի հասնել լիակատար ներդաշնակության, Անպայման Սիրո և ծայրաստիճան բարյացակամության վիճակին, ձեր էներգետիկական դաշտը ունակ կլինի իր մեջ ներառելու տասնյակ և նույնիսկ հարյուրավոր մարդկանց, որոնք, պարզապես գտնվելով նրանում, ակամա կսկսեն բարեփոխվել։

Նրանց կյանքից կվերանա ագրեսիան, դյուրագրգռությունը, ինքնահաստատման և մրցակցության ոգին, իշխելու և վերահսկելու տենչը։

Հավանաբար ձեզնից ամեն ոք կարող է հիշել մի դեպք, երբ ինչ-որ մեկի հայտնվելը կոլեկտիվում լիովին փոխել է մթնոլորտը՝ դեպի լավ կամ դեպի վատ, այսինքն՝ էներգապես ուժեղ անձը «ճզմել է» մյուսներին։

Եվ հիմա դուք, զավակնե՛րս, պետք է դառնաք հենց այդպիսի ուժեղ անձնավորություն, ճառագելով Լույսի և Սիրո էներգիա, որն իր հզորությամբ ունակ կլինի փոխակերպելու ձեր շուրջ եղած տարածությունը և շուռ տալու մարդկանց գիտակցությունը Աստվածայինի ուղղությամբ։

<u>Երկրորդ</u>, հարկավոր է սովորել գործնականորեն ներմուծել Աստվածային Տիեզերական Օրենքները տվյալ մարդկային խմբի մեջ, այնպես, որ ոչ միայն դուք, այլև մյուսները տեսնեն այդ Օրենքների ազդեցությունն իրենց կյանքում։

Ինչպե՞ս անել դա։

Փորձե՛ք շրջապատի մարդկանց կոնկրետ օրինակներով ցույց տալ, թե ինչ է կատարվում իրենց հետ, երբ խախտվում են այդ Օրենքները։

Անշուշտ, դուք կգտնեք բազմաթիվ նման օրինակներ թե՛ անձնական, թե՛ հանրային և թե՛ մասնագիտական կյանքից։

Սակայն խոսել այդ մասին հարկավոր է չափազանց մեղմ ու նրբանկատորեն, չխոցելով մարդկանց հոգիները և ոչ մի բանում չմեղադրելով նրանց, որովհետև Երկրի բնակչության մեծամասնությունը ապրում է ԱՆԳԻՏԱԿՑՈՐԵՆ, այսինքն՝ չգիտի, թե ինչ է անում։

Շատերի համար աշխարհի այդ նոր տեսողությունը նման է նոր հաղորդակցական լեզվի՝ բարդ ու անծանոթ, և յուրացնելու համար նրանք ստիպված կլինեն բավական չարչարվել։

Սակայն դա կլինի արդեն Հոգու աշխատանք, այլ ոչ թե Մտքի, և այն շատ ավելի դժվար է, որովհետև այդ աշխատանքի արդյունքներն ի

հայտ են գալիս ոչ միանգամից, դրանք նախ ձևավորվում են մարդու նուրբ մարմիններում և հետո միայն աստիճանաբար իջնում իրական կյանք։

Եվ երրորդ, հարկավոր է գտնել այնպիսի խոսքեր ու ծանրակշիռ փաստարկներ հօգուտ այն կյանքի, որ սպասելու է մարդկանց իրենց աշխարհայացքի և վարքագծի փոփոխման դեպքում, որոնք բաղձալի ուղեցույց աստղ կդառնան նրանց համար, որին կհավատան անվերապահորեն և ընդմիշտ և որն այդուհետ կառաջնորդի իրենց կյանքում՝ չթողնելով հետ նայել դեպի անցյալ, մաքրելով նրանց գիտակցությունը երկվության բոլոր մնացորդներից։

ՄԻԱՄՆՈՒԹՅԱՆ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՕՐԵՆՔԸ

Եվ այսպես, շարունակենք մեր զրույցը, թե ինչպես կարելի է ապրել Տիեզերքի Օրենքներով՝ դեռևս գտնվելով երրորդ չափման տարածության մեջ։

Իհարկե, հարկավոր է հիշել, որ ի տարբերություն մարդկային հասարակության ձեր սովորական օրենքների՝ նրանց արդյունքները չեն կարող միանգամից տեսանելի դառնալ։

Եվ ոչ միայն այն պատճառով, որ ժամանակ է պետք՝ մինչև նուրբ պլանից իջնեն ֆիզիկական պլան։

Հիմնական պատճառն այն է, որ երրորդ և հինգերորդ չափումների էներգետիկական դաշտերի թրթիռային տարբերությունը չափազանց մեծ է և նրանց փոխներթափանցումը կախված է բազմաթիվ գործոններից, բայց, իհարկե, առաջին հերթին մարդկային գործոնից։

Որքան բարձր լինեն Տիեզերքի Աստվածային Օրենքներով ապրող մարդկային խմբի թրթիռները, այնքան շուտ նրանց արդյունքները կհայտնվեն ֆիզիկական պլանում։

Որպեսզի լավ հասկանաք, թե ինչպես է դա գործում, վերցնենք մի այսպիսի օրինակ։

Ենթադրենք, ձեր ընտանիքը որոշել է ձեռք բերել տուն՝ քաղաքից դուրս։ Եթե ընտանիքի բոլոր անդամներն արդեն բավական բարձր թրթիռային մակարդակ ունեն, նրանց խորթ են այնպիսի բացասական էներգիաներ, ինչպես՝ խորամանկությունը, ագահությունը, ագրեսիան, վախը, անինքնավստահությունը, և նրանք բոլորն ապրում են Լույսի և Սիրո էներգիաների մեջ, ապա այս Աստվածային էներգիաները համընթաց քամու նման կլցնեն ձեր «ցանկությունների» առագաստները, և դրանք արագ կուղղվեն դեպի նվիրական նպատակը։

Իսկ եթե ընտանիքի ամեն անդամ իր ալիքն ունի՝ մեկը վախենում է, որ այդ ցանկությունն անիրականանալի է, մյուսը փորձում է դրան հասնել ուրիշների հաշվին, իսկ երրորդն առհասարակ չի ուզում նման տուն, ապա միանգամայն հնարավոր է, որ ձեր ցանկության իրականացումը ձգձգվի տարիներով, կամ էլ՝ ընդհանրապես չկատարվի։

Հավատացե՛ք, զավակնե՛րս, ձեր գործողությունների էներգետիկական ներդաշնակությունը ոչ պակաս կարևոր է, քան ձեր գործողությունների ներդաշնակությունը ֆիզիկական պլանում, իսկ երբեմն՝ շատ ավելի կարևոր է։

Իսկ ո՞ր Տիեզերքի Օրենքն է դրսևորվում տվյալ դեպքում։

Անկասկած, **Միասնության Օրենքը**, որն ասում է՝ դուք բոլորդ մեկ ամբողջության մասնիկներն եք, - այստեղ՝ ֆիզիկական պլանում՝ միևնույն ընտանիքի, - և որպեսզի այդ ամբողջությունը չտրոհվի մասերի, այն պետք է ունենա միասնական էներգետիկական լիցք։

Հինգերորդ չափման տարածության մեջ ամեն ինչ տեղի կունենա բնականորեն, քանի որ ձեր միասնությունը կարտահայտվի թրթիռների միասնությամբ, որոնք ներդաշնակ պայմաններ կստեղծեն յուրաքանչյուր մարդու կյանքի համար։

Բայց քանի դեռ ապրում եք եռաչափ աշխարհում, նման միասնություն ստեղծելը հեշտ չի լինում: Դա պահանջում է Հոգու անդադար աշխատանք, յուրաքանչյուր մտքի և զգացմունքի դիտարկում:

Դա գիտակցության իսկական բեկում է, որը դիմադրում է՝ չցանկանալով հրաժարվել սովորական մտածելակերպից, կյանքային սկզբունքներից, ավանդույթներից, պայմանականություններից:

Եվ հասանելի է միայն այն մեծ հոգիներին, որոնք կարողացել են դուրս պրծնել երկվության աշխարհի սոցիալական «ճիրաններից» և ձեռք բերել ներքին ազատություն, որը կախում չունի ուրիշի կարծիքից. հասանելի է նրանց, ովքեր տեղափոխվել են մի աշխարհ, ուր տիրում են այլ՝ Տիեզերքի հավերժական Օրենքները, որոնց հիմքը կազմում է Աստվածային էներգետիկական բաղադրիչը, այլ ոչ թե արհեստականորեն պարտադրված կյանքային սկզբունքները, որոնց նպատակը մարդկանց գիտակցության ստրկացումն է:

Եվ համասեռ, գորշ ու անդեմ զանգվածի այս սոցիալական «միասնությունը», որն այնքան հեշտ է կառավարվում, անչափ տարբերվում է Աստվածային Միասնությունից, որտեղ յուրաքանչյուր մարդկային հոգի վառ լրացումն է ուրիշ հոգիների՝ բացառիկ, անկրկնելի, ազատ ու անգին մասնիկների, որոնք ապրում են Լույսի և Սիրո միասնական էներգատարածության մեջ:

ՊԱՏՃԱՌԻ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔԻ ՕՐԵՆՔ

Այսօր մենք միասին կանդրադառնանք Տիեզերքի նոր Օրենքի, որն այժմ արդեն կարող է և պետք է կիրառվի առօրյա կյանքում:

Եվ խոսքը կվերաբերի **Պատճառի և հետևանքի օրենքին** կամ, այլ կերպ ասած, նրան, որ **արտաքինը միշտ արտացոլում է ներքինը**:

Թերևս, հենց այս Օրենքի ներգործությունը ամենից հեշտ կլինի երևան բերել, քանի որ նրա արդյունքները բավական արագ են դրսևորվում:

Դուք կարող եք տեսնել դա ամեն քայլափոխին։

Օրինակ՝ ձեզ դուր չեկա՞վ ինչ-որ մեկը, ուրեմն իսկույն ևեթ կոպիտ արտահայտություն կլսեք ձեր հասցեին նրանից կամ պարզապես կզգաք նրանից եկող բացասական էներգիան։

Այժմ դա գործում է գրեթե վայրկենապես, որովհետև Երկիր եկող բարձր թրթիռների շնորհիվ փոխվել են ժամանակային պարամետրերը, և մարդուց արտազատվող բոլոր էներգիաները իսկույն նրան են վերադառնում միևնույն որակով, երբեմն էլ՝ ավելի սաստկացած։

Եվ դրանում դրական բան կա, քանի որ ժամանակի մեջ այդքան կարճացած պատճառա-հետևանքային կապը թույլ է տալիս ձեզ էքստեռն անցնել ձեր դասերը, ընթացքում շտկելով վարքը, մտքերն ու զգացմունքները։

Հավանաբար արդեն շատերդ եք դա նկատել։

Սակայն հիմա, զավակնե՛րս, դուք պետք է սովորեք կիրառել այս Օրենքը ընդլայնված մասշտաբով։

Եվ ես կբացատրեմ, ինչ է դա նշանակում։

Ինչպես արդեն ասվել է [իմ նախորդ ուղերձում](), Սիրո մթնոլորտի ստեղծումը մարդկանց խմբում կամ մեծ կոլեկտիվում երաշխիքն է այն բանի, որ միասնական էներգետիկական բաղադրիչը կարող է կեցության բոլորովին այլ մակարդակ բարձրացնել նրանց։

Եվ այդ դեպքում ընդհանուր նպատակը ձեռք է բերվում նվազագույն ջանքերով և ամենակարճ ժամկետում։

Իսկ եթե դրա հետ մեկտեղ դուք անշեղորեն հարգեք նաև Տիեզերքի մյուս Օրենքը՝ պատճառա-հետևանքային կապի օրենքը, ձեր բոլոր դժվարություններն ու խնդիրները կլուծվեն վայրկենապես, ասես հրաշքով։

Եկե՛ք դիտարկենք դա կոնկրետ օրինակով։

Ենթադրենք, դուք պատրաստում եք ինչ-որ նախագիծ, որի ներդրման համար պահանջվում է ժամանակ և ողջ կոլեկտիվի անմնացորդ ջանքերը։

Եվ եթե նման նախագծի մշակման նպատակը կամ «պատճառը» ավելի լավ կենսապայմանների ստեղծումն է, այսինքն՝ ուղղված է մարդկանց բարեկեցությանը, և բոլոր մասնակիցները գիտակցում են դա, աշխատելով լիակատար նվիրումով՝ երջանկության և ուրախության զգացումով, որ իրենց նախագիծը օգուտ պիտի բերի մարդկանց, ապա դրա «հետևանքը» կլինի նախագծի բարեհաջող ավարտը ամենասեղմ ժամկետում։

Այդ կերպ ֆիզիկական պլանում կդրսևորվի Պատճառա-հետևանքային կապի օրենքը, որն ամրապնդված կլինի Աստվածային Սիրո էներգիայով տոգորված ձեր աշխատանքով։

Եվ հակառակը, եթե ձեր նախագիծն ուղղված է մարդկանց նեղ խմբի անձնական պահանջների բավարարմանը, որոնք փորձում են իրենց շահը ուրիշների ցավի ու դժբախտության հաշվին ստանալ, այսինքն՝ եթե նրա էներգետիկական բաղադրիչը ամենացածր թրթռանքի էներգիաներ է պարունակում, ապա ամեն քային այն կբախվի խոչընդոտների՝ համանման էներգիաների տեսքով, որ կարձակեն այդ խոչընդոտներն ստեղծող մարդիկ։

Դա առանձնապես զգալի է հիմա, երբ բարձրաթրթիռ էներգիաները դուրս են մղում երկվության աշխարհի հին էներգիաները, որոնք ակամա «սեղմվում են», այսինքն՝ ավելի են խտանում։

Հիշե՛ք սա, զավակնե՛րս, և հետևե՛ք, թե ինչպես է այդ ամենը տեղի ունենում, որպեսզի կարողանաք ցույց տալ նաև ուրիշներին, որոնք իրենց հոգևոր զարգացման ամենասկզբում են դեռ։

ԱԶԱՏ ԿԱՄՔԻ ՕՐԵՆՔ

Այսօր մենք կխոսենք Տիեզերքի ևս մեկ Օրենքի մասին, որը շատերդ կիրառում եք (կամ չեք կիրառում) անգիտակցաբար և որը մեծ ազդեցություն ունի ձեր կյանքում։

Խոսքը կվերաբերի **Ազատ Կամքի Օրենքին**։

Այս հասկացությունը հաճախ շփոթում են ամենաթողության հետ, որն իրականում ոչ մի ընդհանուր բան չունի նրա հետ։

«Ազատ Կամքը», Աստվածային ըմբռնմամբ, մտքերի, զգացմունքների և իրականության ընկալման ներքին ազատությունն է։

Դա գիտակցության անկանխակալությունն է, նրա նախաստեղծ ու մաքուր վիճակը, զգացմունքների և հույզերի արտահայտման անկեղծությունն ու բնականությունը։

Դա Հոգու սրտագին պոռթկումներն են, որոնք զսպված չեն Խելքի և գործնական նկատառումների «աքցաններով»։

Դա սեփական ինտուիցիային լսելու և առօրյա կյանքում նրանով ղեկավարվելու ունակությունն է։

Դա «ազատ նավարկությունն» է՝ չնայելով ուրիշների կարծիքին ու դատողությանը։

Դա ներքին Աստվածային կողմնորոշիչներն են՝ խղճի, պարկեշտության, հոգու մաքրության տեսքով։

Իսկ հիմա եկե՛ք տեսնենք, թե ինչ է **«Ազատ Կամքի խախտումը»**։

Նախ և առաջ, դա ներխուժումն է ուրիշ մարդու ներքին էներգետիկական տարածության մեջ։

Դա կարող է տեղի ունենալ նույնիսկ առանց խոսքի, այն դեպքում, երբ ինչ-որ մեկի մասին վատ եք մտածում՝ դատելով, քննադատելով, անբարյացակամորեն։

Այդ կերպ դուք մտովի պարտադրում եք ուրիշին աշխարհի ձեր տեսողությունը՝ ժխտելով սեփական կարծիք ունենալու նրա իրավունքը։

Որպես հետևանք, նույնիսկ երկխոսության մեջ չմտնելով այդ մարդու հետ, դուք արդեն իսկ խախտում եք նրա Ազատ Կամքը։

Հենց դա է նկատի առնվում, երբ ասվում է՝ «Մի՛ դատեք, որ չդատվեք»։

Այլ կերպ ասած՝ «Մի՛ խախտեք ուրիշի Ազատ Կամքը, և նա չի խախտի ձերը»։

Հարգանքը ուրիշի կարծիքի նկատմամբ, հենց ուրիշի Ազատ Կամքի Օրենքի պահպանումն է։

Խոսքով այս ամենը շատ հեշտ է թվում, այնպես չէ՞ զավակնե՛րս։

Իսկ ի՞նչ է կատարվում իրականում։

Դեռ խանձարուրից սկսած մարդուն խցկում են որոշակի շրջանակների մեջ, որոնք հարմար ու ձեռնտու են ծնողներին, ուսուցիչներին, վերադասներին, կառավարությանը, այսպես ասած՝ հասարակությանը, որի մեջ մարդը վերածվում է իր կամքը ճզմող հսկայական մեքենայի մի փոքրիկ պտուտակի։

Եվ հիմա, զավակնե՛րս, եկել է ժամանակը նորովի ապրելու, վերագտնելով սեփական ներքին ազատությունը և հարգելով մյուսների ներքին ազատությունը։

Դա կարելի է անվանել հեղափոխություն, բայց նրա հիմքը կկազմի ո՛չ թե ագրեսիան, մարդկանց կյանքի և մտածելակերպի բռնի կոտրումը, ինչպես եղել է նախկինում, այլ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ «ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ»։

Եվ տվյալ դեպքում որպես նման «հեղաշրջման» նախաձեռնող հանդես է գալիս ձեր Երկիրը, որը ձերբազատվում է հին, դարն ապրած էներգիաներից և ձեզ՝ իր բնակիչներին էլ ակամա ձգում է իր հետևից։

Դա տեղի է ունենում ամենաբնական ձևով, առանց հարկադրանքի և բռնության, որովհետև նրան կհետևեն միայն այն մարդիկ, որոնք

իրենք են ցանկություն հայտնել Անցում կատարելու Հինգերորդ չափում։

Իսկ մյուսները ցածր թրթռանքի և իրենց կյանքում որևէ բան փոխել չկամենալու պատճառով կմնան երրորդ չափման մեջ և կշարունակեն մարմնավորվել ուրիշ մոլորակների վրա։

Այդպիսով Ազատ Կամքի Օրենքն անշեղորեն պահվում է համամարդկային մասշտաբով։

ՏԻԵԶԵՐՔԻ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ԿԱՊԸ

Այսօր մենք կշարունակենք զրույցը, թե ինչպես է Ազատ Կամքի Օրենքն անդրադառնում ձեր կյանքի վրա։

Թերևս հենց նրա չիմացությունը կամ սխալ ըմբռնումն է ձեր շատ ու շատ հիվանդությունների, փորձանքների ու դժբախտությունների պատճառը։

Այս Օրենքը սերտորեն միահյուսվում է Պատճառի և հետևանքի օրենքի հետ, և որպեսզի դուք լավ հասկանաք դա, դիտարկենք մի կոնկրետ օրինակ, թերևս ամենատարածվածը՝ մոր սերն իր երեխայի նկատմամբ և նրան երջանիկ տեսնելու նրա ցանկությունը։

Համաձայնե՛ք, զավակնե՛րս, որ ամենախրթին բանը ձեզ համար ձեր երեխայի անձնական տարածության մեջ չներխուժելն է, քանի որ դժվարություններից ու խնդիրներից նրան պաշտպանելու ցանկությունը ձեզնից ուժեղ է գտնվում։

Ձեզ հաճախ թվում է, թե դուք ավելի լավ գիտեք՝ ինչ պետք է նա անի, ինչպես պետք է ապրի, և շատ քչերիդ է հաջողվում ձեռնպահ մնալ ծնողական «բարի» խորհուրդներից։

Ճիշտ ինչպես որ եռաչափ աշխարհում շատ քչերին է տրված իսկապես զգալ իր երեխայի Հոգին, լսել այդ Հոգու ցանկություններն ու կարիքները և ընդունել նրա Ազատ Կամքը։

Առավել հաճախ դուք վարվում եք երկվության աշխարհում ընդունված շաբլոնի համաձայն, այդպիսով փաստորեն ամեն օր խախտելով Ազատ Կամքի Օրենքը ձեր երեխայի առնչությամբ։

Եվ որպես հետևանք, ձեր միջև ծագում են բախումներ, որվհետև նույնիսկ փոքրիկ երեխան միշտ գիտի, թե ինչ է ուզում, և երբ դիմադրում են իր իսկական ցանկություններին, նրա մեջ արթնանում է հակադրության ոգին, այսինքն՝ ագրեսիան։

Բայց երբեմն էլ նա ներփակվում է իր մեջ, հասկանալով, որ ապարդյուն է պայքարել «սիրող» ծնողների դեմ։

Եթե նման դիմակայությունը երկար է ձգվում, երեխան ընկնում է դեպրեսիայի մեջ և կորցնում ամեն հետաքրքրություն կյանքի նկատմամբ։ Եվ դա պատճառ է դառնում շատ հիվանդությունների, որոնք անասելի դժվար է լինում հաղթահարել, ինչպես օրինակ՝ ալերգիան։

Տվյալ դեպքում հիվանդությունը հետևանք է ձեր երեխայի կամքի ճնշման, նրան ձեր կանոններին և կյանքային սկզբունքներին ենթարկելուն։

Իհարկե, զավակնե՛րս, այստեղ էլ չի կարելի շփոթել Ազատ Կամքը ամենաթողության հետ՝ ընկնելով մյուս ծայրահեղության մեջ, այլապես սոսկ ձեր տեղերը կփոխվեն և արդեն երեխան կսկսի ներխուժել ձեր անձնական տարածության մեջ՝ ճնշելով ձեր Ազատ Կամքը։

Սահմանը շատ նուրբ է, և զգալ այն ու պահել հավասարակշռությունը հնարավոր է լոկ այն դեպքում, երբ ձեր ընտանիքում Սերն ու Հարգանքն են տիրում միմյանց նկատմամբ, անկախ ընտանիքի անդամների տարիքից, և որտեղ ամեն ոք սովոր է հաշվի առնելու մյուսի կարծիքը, անշուշտ եթե այն չի պարտադրվում ագրեսիվ ձևով՝

այդ կերպ աղավաղելով մարդու էներգետիկական տարածությունը և սնուցելով նրան բացասական էներգիաներով։

Ազատ Կամքի Օրենքի սխալ ըմբռնման պատճառը հաճախ այն է, որ ինքնին Սեր բառը երկվության աշխարհում ձեռք է բերել իսկական Աստվածային Սիրուց շատ հեռու մի իմաստ։

Առավել հաճախ այն ենթադրում է ինչ ասես՝ հոգատարություն, խնամք, վերահսկողություն, սեռական ցանկություններ, գործնական նկատառումներ, պատասխանատվություն, մեղքի զգացում և շատ ու շատ ուրիշ բաներ։

Իրականում Սերը, բառի Աստվածային ըմբռնմամբ, Հարգանքն է մարդու անձի, Հոգու նկատմամբ։

Դա Ազատ Կամքի Օրենքի հարգումն է։

Մարդուն երջանիկ տեսնելու անկեղծ ցանկությունը՝ չպարտադրելով նրան երջանկության սեփական ըմբռնումը։

Եվ շատերիդ համար դժվար է հաշտվել սրա հետ, որովհետև եռաչափ աշխարհում առաջին պլան է ելնում ոչ թե ձեր Հոգին, այլ Էգոն, որն ուզում է սեփական արշինով չափել շուրջը եղած բոլոր մարդկանց և հատկապես մերձավորներին, որպեսզի իրեն լավ, հանգիստ ու հարմարավետ զգա այս երկվության աշխարհում, որին դուք սովոր եք։

Սակայն հիմա, զավակնե՛րս, հարկավոր է սովորել այն բանին, որ այդ աշխարհը չգոյության գիրկն է գնում, ինչպես և՝ իր օրենքները, և այժմ իրենց իրավունքներն են ստանձնում Տիեզերքի Հավերժական Աստվածային Օրենքները, և ես ուզում եմ, որ դուք բոլորդ պատրաստ լինեք դրան։

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ «ՊԱՏՎԻ ԿՈԴԵՔՍ»

Եվ այսպես, եկե՛ք շարունակենք զրույցը Տիեզերքի Օրենքների փոխազդեցության մասին։

Հավանաբար արդեն գլխի եք ընկել, որ յուրաքանչյուր Օրենք լրացնում է մյուսին և բխում է հաջորդից։

Ինչու՞ է այդպես լինում։

Նախ և առաջ՝ որովհետև Տիեզերական Օրենքները այն Աստվածային բաղադրիչների հանրագումարն են, որոնք իրենց իդեալական համակցությամբ ձևավորում են Սիրո էներգետիկական տարածությունը, որն ակունքն է ամենայն գոյի, որից Երկիր են գալիս մարդկային հոգիները և ուր վերադառնում են՝ մարդու ֆիզիկական մարմնի մահից հետո։

Եվ նա, ում հաջողվում է հասու դառնալ այդ օրենքներին և ապրել նրանց համապատասխան, անցնում է կեցության արդեն բոլորովին ուրիշ մակարդակ, ուր անկարող են թափանցել բացասական էներգիաները՝ թրթիռային խզվածքի պատճառով, որ առկա է նրանց և Սիրո Աստվածային էներգիայի միջև իր մաքուր վիճակով։

Ահա թե ինչու է այդքան կարևոր, զավակնե՛րս, սովորել պահել Տիեզերքի Օրենքները ձեր առօրյա կյանքում։

Հենց նրանք են այն բանալին, որը բացում է Հինգերորդ չափման նոր իրականության դուռը։

Եվ այսօր ես կբացատրեմ Տիեզերքի Օրենքների փոխազդեցության ևս մեկ մեխանիզմ։

Եկեք տեսնենք, թե ինչպես են իրար հետ կապվում Միասնության Օրենքն ու Ազատ Կամքի Օրենքը։

Առաջին հայացքից կարող է թվալ, թե նրանք հակադրվում են իրար, սակայն այդպես չէ։

Վերցնենք մի կոնկրետ օրինակ։

Ձեզ և ձեր գործընկերներին հանձնարարվել է առաջադրանք, որի կատարումը համատեղ աշխատանք է ենթադրում։

Ձեզնից յուրաքանչյուրը պետք է իր ներդրումը բերի այդ գործին՝ իր կարողության համապատասխան։

Երկվության աշխարհում հաճախ է պատահում, որ աշխատակիցներից ամեն մեկը սկսում է «վերմակն իր վրա քաշել»՝ ջանալով անձնական արտոնություններ ստանալ կամ մյուսների հաշվին ինքնահաստատվել գործում։

Եվ այստեղ առաջին պլան է ելնում մարդու Էգոն, որը նախ և առաջ մտածում է իր մասին, հետո միայն գործընկերների և ընդհանրապես նախագծի։

Իսկ ինչ է տեղի ունենում, երբ կոլեկտիվի բոլոր անդամները թրթիռային այն մակարդակն ունեն, որը թույլ է տալիս նրանց ապրել Տիեզերքի Օրենքներով։

Այդ ժամանակ նրանց գիտակցությունն արդեն դուրս գալիս երկվության սահմաններից, և նրանք ընկալում են իրենց կոլեկտիվը որպես Մեկ Ամբողջություն, իսկ գործընկերներից յուրաքանչյուրին՝ որպես նրա անգին մասնիկը։

Յուրաքանչյուրի Ազատ Կամքը անվիճելի է և անձեռնմխելի, որովհետև միայն այդպես կարող են լիովին բացահայտել իրենց բոլոր ունակություններն ու տաղանդները։

Տվյալ դեպքում ասպարեզ է ելնում ոչ թե մարդու Էգոն, այլ Հոգին, որն ապրում է Աստվածային Օրենքներով, դա նշանակում է՝ նա կանի ամեն ինչ, որ մարդու բոլոր մտքերը, հույզերն ու գործողությունները համապատասխանեն Տիեզերքի Օրենքներին։

Հենց դրա համար է, զավակնե՛րս, որ բոլոր ուղերձներում Բարձրագույն Ուժերը ձեզ կոչ են անում անջատել ձեր տրամաբանական միտքը և տեղը զիջել Հոգուն՝ ձեր Աստվածային հիպոստասին, որը միշտ ձեզ հետ է և միայն սպասում է, որ հիշեք իրեն։

Նա ցույց կտա ճիշտ ճանապարհը և կանի ամեն ինչ, որ և՛ ինքներդ լինեք ներդաշնակ ու երջանիկ, և՛ ուրիշներին երջանկություն ու ներդաշնակություն պարգևեք։

Ձեր Հոգին անպայման հոգ կտանի, որ ձեր կյանքում մեկն իսկ չխախտվի Տիեզերքի Օրենքներից, - այդ Աստվածային «Պատվի կոդեքսից», որը բերկրանք ու Սեր է շնորհում մարդկանց։

Իսկ ի՞նչ է պետք անել դրա համար։

Պարզապես ամեն անգամ, երբ պատրաստվում եք ինչ-որ բան ձեռնարկել, մեծ լինի թե փոքր, խնդրեք ձեր Հոգուն տանել ձեզ հարկ եղած ուղղությամբ, նշաններ ու հուշումներ առաքել, և սովորեք տեսնել ու լսել այդ նշանները։

Այլ կերպ ասած՝ ապրե՛ք Հոգով, և ոչ թե Խելքով, չէ՞ որ լոկ այդ դեպքում կկարողանաք փոխակերպել ձեր կյանքը Հինգերորդ չափման տարածության՝ գտնվելով դեռևս եռաչափ աշխարհում։

Եվ ես օրհնում եմ ձեզ, զավակնե՛րս, որ այդպես լինի. . .

ՏԻԵԶԵՐՔԻ ՕՐԵՆՔՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ

Այսօր ես ուզում եմ ձեզ պատմել, թե ինչու են Տիեզերքի Օրենքները գործում միշտ և ամենուրեք՝ անկախ այն բանից՝ գիտեն այդ մասին մարդիկ, թե ոչ։

Հենց դրանով են նրանք տարբերվում մարդու ստեղծած օրենքներից, որոնք հիմնականում միտում ունեն հարկադրաբար ամրապնդելու ոմանց իշխանությունը մյուսների վրա, ստիպելու մարդկանց ապրել շաբլոնով, սփռելու պատժի վախ, եթե այդ օրենքները չհարգվեն։

Հարկ է խոստովանել, որ երրորդ չափման երկվության աշխարհում իսկապես դժվար կլինի ապրել առանց որոշակի

սահմանափակումների, քանի որ չափազանց շատ երիտասարդ հոգիներ են մարմնավորվում Երկրի վրա և նրանց գիտակցությունը դեռևս պատրաստ չէ, որ ապրեն ազատ աշխարհում և հետևեն իրենց ներքին օրենքներին՝ Հոգու կանչին. . .

Սակայն, մյուս կողմից, դուք բոլորդ հրաշալի գիտեք, թե ինչ հեշտությամբ են մարդիկ շրջանցում հասարակության պարտադրած օրենքները և որ սրանք ի զորու չեն հետ պահելու մարդուն հանցանքից՝ ինչ պատիժ էլ որ նրան սպառնա, նույնիսկ՝ մահապատիժ։

Ինչու՞ է այդպես լինում։

Նախ և առաջ այն պատճառով, որ շատերը դժվարանում են տիրապետել իրենց ցանկություններին, մտքերին ու զգացմունքներին, որովհետև սպառողական հասարակության մեջ, որ ստեղծել են այդ աշխարհի ուժեղները, մարդիկ ենթակա են անասելի շատ գայթակղությունների։

Մարդուն արհեստականորեն պարտադրված արժեքների այդ համակարգը կոչված է նրա հոգու խորխորատներից վեր հանելու ամենանսեմ ցանկությունները՝ հեռացնելով նրան հոգևոր ուղուց և ավելի ու ավելի թաղելով նյութական աշխարհի ճահճում։

Եվ նույնիսկ կրոնը, որ կոչված է Աստվածային սկիզբը բացահայտելու մարդու մեջ, վերածվել է երկվության աշխարհի մի հերթական հաստատության, որում տիրում է բաժանումը բարձրների և ցածրների, Աստծո և «Աստծո ծառաների»։

Մարդիկ բնազդաբար զգում են, որ կեղծ ու անարդար են այդ օրենքները, որոնք սպանում են հոգևոր սկիզբն իրենց մեջ՝ ստրկացնելով գիտակցությունն ու վերածելով իրենց օրինապահ քաղաքացիների։

Ուրեմն ինչո՞վ են Տիեզերքի Օրենքները տարբերվում համամարդկային օրենքներից։

Առաջին հերթին նրանով, որ Տիեզերքի Օրենքների հիմքը կազմում է էներգետիկական բաղադրիչը, որը բնավ կախում չունի մարդու կամքից ու ցանկությունից։

Այս Օրենքներն ընդհանուր են բոլորի համար, դրանք պարզապես անհնար է խախտել, քանի որ դրանց գործողություններն անտեսանելի են մարդու համար, այսինքն՝ մարդու խելքը,- մտքերը, զգացմունքները, ցանկությունները,- անկարող են որևէ կերպ միջամտել այդ պրոցեսին։

Սակայն ուշադիր և խելամիտ մարդն այնուամենայնիվ կարող է իր ճակատագրում ի հայտ բերել որոշակի օրինաչափություններ, հասկանալ կամ, ավելի շուտ, զգալ, թե ինչու են միևնույն խնդիրները էլի ու էլի ծառանում իր կյանքում, այսինքն՝ բացահայտել կրկնվող դեպքերի պատճառա-հետևանքային շղթան։

Հենց այդպես, բազմաթիվ դիտարկումների և մշտապես նոր փորձ ձեռք բերելու ճանապարհով էլ մարդը հանգում է Տիեզերքի Օրենքների ըմբռնմանը, դրանց դիմադրելու անկարելիությանը։

Այդ դիտարկումներն արտացոլված են ձեր առածներում ու ասացվածքներում, հեքիաթներում, առակներում և բանաստեղծություններում։

Այդպես այլաբանորեն էին փորձում տարբեր ժամանակաշրջաններում Երկիր եկած շատ ու շատ մեծ հոգիներ մարդկանց հասցնել հավիտենական գիտելիքները՝ Տիեզերքի Մեծ Օրենքները։

Եվ հետզհետե դրանք թափանցում էին մարդկանց հոգիների մեջ, փոխելով նրանց գիտակցությունը, աշխարհընկալումը, իսկական, այլ ոչ թե դրսից պարտադրված արդարության պատկերացումը։

Մարդիկ սկսում էին խորհել կյանքի իմաստի, իրենց անհաջողությունների պատճառների, իսկական կյանքային արժեքների մասին, այն արժեքների, որ իրենց Հոգին է փափագում, և ոչ թե անհագուրդ Էգոն։

Եվ ահա եկել է ժամանակը, երբ Տիեզերքի Օրենքները ձեզ տրվում են ուղղակիորեն՝ Աստվածային պատգամաբերների միջոցով, որոնք ունակ են ընդունելու այդ անգին տեղեկատվությունը Տիեզերքի Բարձրագույն Ուժերից։

Եվ հիմա միայն դուք եք որոշում, զավակնե՛րս, ապրել այդ Օրենքներով, թե մնալ երկվության աշխարհի գերության մեջ, որը ջանում է պահել իշխանությունը իրեն հասանելի բոլոր միջոցներով։

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐ. ՀԱՏՈՒՑՄԱՆ ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Այսօր մենք կշարունակենք զրույցը Տիեզերքի Օրենքների վերաբերյալ և կխոսենք, թե ինչպես կարող են նրանք զուգակցվել մարդկանց սահմանած օրենքների հետ երրորդ չափման աշխարհում։

Չնայած տարբերություններին, որոնց անդրադարձանք իմ նախորդ ուղերձում, նրանց միջև անշուշտ գոյություն ունեն նաև որոշակի շփման կետեր։

Դրանք հիմնականում առնչվում են այն օրենսդրական միջոցներին, որոնք ուղղված են մարդու ագրեսիվ գործողությունների խափանմանը, երբ դրանք ֆիզիկական և բարոյական վնաս են հասցնում շրջապատի մարդկանց։

Սակայն այստեղ էլ էական տարբերություն կա նրանց միջև։

Օրինակ, եռաչափ աշխարհի օրենքների համաձայն, ուրիշների նկատմամբ դրսևորած ագրեսիայի դեպքում մեղավորին սպառնում է պատիժ դրամական տուգանքի կամ բանտարկության տեսքով։

Իսկ Տիեզերքի Օրենքներն այլ կերպ են գործում։ Այդ մարդն **ԱՆԽՈՒՍՓԵԼԻՈՐԵՆ** պատասխան կտա իր չարագործության

համար, բայց «պատիժը» կգա այնտեղից, որտեղից նա ամենևին չի սպասում։

Եվ դրա ազդեցությունը կարող է նույնիսկ ավելի ուժգին լինել, քան ֆիզիկական կալանքը կամ դրամական փոխհատուցումը իր արարքի դիմաց։

Եկե՛ք դիտարկենք կոնկրետ օրինակով։

Ենթադրենք, ալկոհոլի ազդեցության տակ կամ պարզապես ագրեսիվ վիճակում մեկը վիրավորել է անցորդին՝ բոլորովին անծանոթ մի մարդու։

Եթե դեպքի վկաներ չեն եղել, իսկ տուժողը չի կարողացել պաշտպանել իր իրավունքները, վիրավորողը կմնա անպատիժ։

Իսկ Աստվածային տեսանկյունից, այստեղ խախտված են Տիեզերքի բոլոր Օրենքները՝ Միասնության, Ազատ Կամքի, Անդրադարձման, Պատճառի և Հետևանքի։

Այդ իսկ պատճառով անցորդի գլխին թափված բացասական էներգիաներն **ԱՆՓՈՓՈԽ** ձևով կվերադառնան վիրավորողին՝ էներգիաների նմանության համաձայն։ Եվ բնավ պարտադիր չէ, որ դա անի վիրավորվածը։

Դա կարող է անել բոլորովին ուրիշ մեկը, նույնիսկ ամենամտերիմ ու սիրելի մարդը, որը «կվերադարձնի» միևնույն զգացմունքներն ու հույզերը, ինչ նա ժամանակին թափել էր այն անծանոթի գլխին։

Իսկ հիմա դիտարկենք մեկ այլ օրինակ։

Մի մարդ պարգևատրվել է իր բարեգործությունների համար. ստացել է պատվոգիր, մեդալ կամ դրամական պարգև։

Եվ այստեղ կարևորվում է այն, թե ինչպիսի զգացումներ և հույզեր են դրդել մարդուն բարերարություն անելու։

Եթե արել է ի սրտե, ոչ ցուցադրաբար և ոչ էլ հանուն փառասիրության, աչքի ընկնելու ցանկության կամ իր արածից օգուտ քաղելու, Տիեզերքը

կպարգևատրի նրան, և նույնիսկ ավելի շռայլորեն, քան մարդիկ են ի վիճակի։

Երկնքի շնորհները բառացիորեն կտեղան նրա վրա, և հաճախ այնտեղից, որտեղից նա սպասել անգամ չի կարող։

Բայց եթե այդ «բարի» գործերի հիմքում ցածրաթրթիռ մտքեր ու զգացմունքներ են, ապա նրա «պարգևը» կլինի սոսկ անախորժությունները, որոնց պատճառը ինքն էլ կդժվարանա հասկանալ, քանի որ դրանք դեպի նա կձգվեն էներգապես՝ ըստ թրթիռային նմանության։

Հենց այսպես են գործում Տիեզերքի Օրենքները։ Եվ շրջանցել դրանք արդեն անկարելի է, որովհետև այդ Օրենքները ենթակա չեն եռաչափ մարդկանց ազդեցությանը։

Միշտ հիշեք սա, զավակնե՛րս։

ԶՂՋՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ (ՊՐԱԿՏԻԿԱ)

Այսօր մենք կխոսենք, թե ինչ է **ԶՂՋՈՒՄԸ**, և կքննենք նրա էներգետիկական բաղադրիչը։

Բարձրագույն Ուժերի բազմաթիվ ուղերձներում արդեն խոսվել է այն մասին, որ ամեն ինչ ենթակա է մարդու իշխանությանը, բայց դրա համար նա պետք է գիտակցված մոտենա նրան, ինչ անում է։

Ցավալին այն է, որ ապրելով երկվության աշխարհում, մարդիկ ակամա արտածում են այդ աշխարհի էներգիաները՝ բաժանման և հակառակության, իսկ Տիեզերքի Օրենքների չիմացությունը է՛լ ավելի է վատթարացնում դրությունը։

Եվ հիմա ես կպատմեմ, թե ինչպես կարելի է «աշխատել սխալների վրա»՝ հետ շրջել այն, ինչ վաստակել եք եռաչափ աշխարհում ապրելու բազում տարիների ընթացքում, երբ չգիտեիք, թե ինչ եք անում։

Այժմ, ձեր ներկայիս դրության բարձունքից, երբ արդեն տիրապետում եք Աստվածային գիտելիքներին և ունակ եք ձեր կյանքի շատ իրադարձություններ վերլուծելու Տիեզերքի Օրենքների դիրքից, դուք կարող եք փոխել ձեր գործողությունների էներգետիկական բաղադրիչը՝ հետ շրջելով ժամանակը։

Դուք արդեն գիտեք, սիրելինե՛րս, որ ժամանակը շատ հարաբերական հասկացություն է և որ դուք բոլորդ գոյություն ունեք միաժամանակ անցյալում, ներկայում և ապագայում, այդ իսկ պատճառով, որպես ձեր հոգևոր աշխատանքի մեկնակետ կարող եք վերցնել ժամանակի ցանկացած հատված։

Սակայն իմ խորհուրդն է՝ սկսել հենց մանկությունից։

Վերհիշեք ամենավառ դրվագները, որ դաջվել են ձեր հիշողության մեջ, և զգացեք, թե ինչ հույզերով են ղեկավարվել այն պահին ձեր գործողությունները։

Դա կարող է լինել վախ, հուսահատություն, անվստահություն աշխարհի նկատմամբ, վիրավորանք, մեղքի զգացում. . .

Խնդրեք ձեր Հոգուն ցույց տալ ձեր կյանքի այն դրվագները, որոնք կարիք ունեն շտկման, որոնք եղել են **ՈՉ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ**, այսինքն՝ լեցուն են ցածր թրթռանքի բացասական էներգիաներով։

Դա շատ երկարատև աշխատանք է, որ պահանջում է ավելի քան մեկ մեդիտացիա, սակայն հավատացեք, որ վարձը հարյուրապատիկ ավելի կլինի ձեր Հոգու այդ տքնաջան աշխատանքի դիմաց։

Այդ մեդիտացիաների ժամանակ դուք պետք է փոխեք ձեր կյանքի ամենատհաճ և ցավալի պահերի էներգետիկական բաղադրիչը։

Դիտարկենք դա կոնկրետ օրինակներով։

Ենթադրենք՝ մանուկ տարիքում ձեզ սաստիկ վիրավորել են ձեր հասակակիցները, ինչի հետևանքով դուք կորցրել եք վստահությունը ինքներդ ձեր նկատմամբ։

Կամ էլ հակառակը՝ դուք եք խիստ վիրավորել ինչ-որ մեկին, խոցելով ուրիշ մի երեխայի Հոգին։

Առաջին դեպքում դուք ներս եք թողել ձեր մեջ վախի և աշխարհի նկատմամբ անվստահության էներգիաները։

Իսկ երկրորդ դեպքում՝ ուրիշին եք լցրել այդ էներգիաներով։

Փորձեք վերախաղալ այդ իրավիճակներն այնպես, որ տարրալուծեք այդ էներգիաները Լույսի և Սիրո էներգիաներով, և ամբողջ Հոգով ներողություն խնդրեք Տիեզերքից իր Օրենքները խախտելու համար, որ արել եք չիմացությամբ։

Այժմ ես կտամ **ձեր կյանքի «վերաբեմարկման» ունիվերսալ մեթոդ**։

Ձետեղեք անախորժ իրավիճակը՝ իր բոլոր մասնակիցներով հանդերձ, մեծ ոսկյա գնդի մեջ, որը լցված է Սիրո Աստվածային էներգիայով, և խնդրեք ինձ, ձեր բոլոր Երկնային Օգնականներին, ձեր Բարձրագույն Եսին՝ վերախաղարկել այն այնպես, որ ամեն ինչ կատարվի բոլոր մասնակիցների համար լավագույն ելքով և Տիեզերքի բոլոր Օրենքների պահպանմամբ։

Իսկ հետո տեսեք, թե ինչ տեղի կունենա՝ ինչպես այն կլուծվի ի բարձրագույն բարօրություն բոլորի։

Ձանացեք լիովին անջատել ձեր Միտքը և մնալ որպես կողմնակի դիտորդ, որն իր սեփական օրինակով հասու է դառնում Տիեզերքի Օրենքների աշխատանքին. . .

ԻՆՉՊԵՍ Է ԶՂՋՈՒՄԸ ՓՈԽՈՒՄ ՁԵՐ ԿՅԱՆՔԸ

Այսօր մենք կշարունակենք զրույցը զղջման մասին, որը մանավանդ հիմա առանձնակի կարևոր նշանակություն է ստանում։

Ես գիտեմ, որ ձեզնից շատերը խիստ հիվանդագին են վերաբերվում իրենց անցյալ սխալներին և դրանք ուղղելու անհնարինությանը։

Այդ պատճառով էլ [իմ նախորդ ուղերձում](#) տվեցի ձեզ հատուկ պրակտիկա, որը թույլ է տալիս վերստին խաղալ կյանքի ցավոտ դրվագները՝ այլ էներգետիկական լիցք հաղորդելով դրանց։

Եվ հիմա ավելի հանգամանորեն կպատմեմ, թե ինչպես է դա գործում և ինչ բերի ձեր ներկա կյանքին։

Իհարկե, զավակնե՛րս, շատ բաներ այլևս անկարելի է հետ բերել։ Ֆիզիկական պլանում դուք, հնարավոր է, ձեր աշխատանքի ոչ մի փոփոխություն էլ չտեսնեք։

Սակայն նուրբ պլանում և ձեր այժմյան էներգետիկական տարածության մեջ տեղի կունենան հսկայական փոփոխություններ։

Դարձյալ դիտարկենք կոնկրետ օրինակով։

Ենթադրենք՝ շատ վաղուց, վիրավորանքը, խանդը, տարըմբոնումը կամ ձեր գոռոզությունը (гордыня) հանգեցրել են սիրելի մարդուց բաժանման, ինչը մեծ տառապանք է պատճառել թե՛ նրան, թե՛ ձեզ։

Եվ հիմա դուք արել եք Զղջման Պրակտիկան՝ վերախաղալով այն իրավիճակը։ Ձեզ ցույց են տվել այդ բախման՝ երկուսիդ համար էլ իդեալական լուծումը՝ դուք ներել եք իրար և ապրել երկար ու երջանիկ կյանքով։

Սակայն իրականում այն մարդն արդեն վաղուց ունի իր ընտանիքը, իսկ դուք՝ ձերը։

Ուրեմն ինչպե՞ս կանդրադառնա այդ պրակտիկան ձեր այժմյան կյանքի վրա։

Եզակի դեպքերում, եթե դա մտնում է ձեր երկուսի հոգիների զարգացման պլանների մեջ, իսկ ձեր միությունը որոշակի առաքելություն է կրում, դուք կարող եք վերստին միանալ, բայց ձեր հարաբերություններն արդեն կկառուցվեն բոլորովին այլ՝ հոգևոր սկզբունքների վրա, և դուք անհապաղ ձեռնամուխ կլինեք ձեր առաքելության իրագործմանը։

Սակայն առավել հաճախ, դուք կշարունակեք ձեր կյանքը՝ արտաքուստ ոչինչ չփոխելով նրանում, բայց ձեր նուրբ մարմինների մեջ կկատարվեն շատ մեծ փոփոխություններ։

Նրանցից կվերանա բացասական էներգիայի հսկայական փակոցը (блок), որն այդ բոլոր տարիներին «ճնշել» է՝ արտաքուստ հաճախ դրսևորվելով հոգևոր և ֆիզիկական հիվանդությունների տեսքով։

Եվ ձեզնից յուրաքանչյուրն ունի բազմաթիվ այդպիսի օրինակներ, որոնք փակոցներ են առաջացրել ձեր նուրբ մարմիններում, քանի որ ապրելով եռաչափ աշխարհում՝ շատ քչերին է հաջողվում զերծ մնալ նման սխալներից։

Սակայն եթե չծուլանաք և կրկին «ապրեք» ձեր կյանքը՝ արդեն գիտակցված կերպով, լուրջ ու մանրակրկիտ «աշխատանք տանելով սխալների վրա», կկարողանաք լիովին մաքրել ձեր նուրբ մարմինները բոլոր մեծ ու փոքր փակոցներից, որ մոլախոտի պես փարթամացել են ձեր մեջ՝ խանգարելով Աստվածային չքնաղ «ծաղիկների» ծլարձակմանը, որոնք կարող են լույս աշխարհ գալ միայն Լույսի և Սիրո մաքրամաքուր էներգիաների մեջ։

Այդ ամենը դուք ի զորու եք անելու, զավակնե՛րս։

Ձեր կյանքի աննկարագրելի իրավիճակները ներդաշնակ դարձնող, այսինքն՝ բացասական էներգիաները դրականի փոխակերպող ամեն նոր մեդիտացիայի հետ, ձեր էներգետիկական տարածությունը ավելի ու ավելի կողողվի Սիրո էներգիաներով։

Այն Սեր կքաղի ժամանակից անդին մի տարածությունից, ուր չկա ո՛չ անցյալ, ո՛չ ներկա, ո՛չ ապագա։

Այլ խոսքով՝ արտաքուստ կդրսևորվի ձեր կյանքի բազմատարբերակայնությունը, բայց՝ իր իդեալական կատարմամբ։

Տվյալ դեպքում ձեր կյանքի ամեն դրվագ ձեզ ավելի ու ավելի առաջ կմղի ձեր հոգևոր ճանապարհով, այսինքն՝ կմերձեցնի բաղձալի Համբարձմանը։

Եվ ես օրհնում եմ ձեզ, որ այդպես լինի, զավակնե՛րս։

ՄԻ՛ՇՏ ԵՂԵՔ ԱՅՆ, ԻՆՉ ԿԱՔ

Այսօրվա ուղերձը կարող է մեծ նշանակություն ունենալ նրանց համար, ովքեր արդեն Ծառայության են ելել. նրանց համար, ովքեր իրենց կյանքը նվիրաբերել են մարդկության օգնությանը՝ չափումից չափում Անցում կատարելու իր համար բախտորոշ այս փուլում:

Եվ այդպիսի մարդիկ հիմա բավական շատ են Երկրի վրա:

Հաճախ ձեզ թվում է, թե նման առաքելություն ունեն լոկ նրանք, ովքեր գրում են գրքեր ու հոդվածներ, ֆիլմեր են նկարահանում, պատրաստում են հեռուստատեսային հաղորդումներ Համբարձման վերաբերյալ, և հատկապես նրանք, ովքեր ունեն իրենց կայքէջերը և այդ թեմայով ուղերձներ են ընդունում Բարձրագույն Ուժերից:

Սակայն իրականում ցանկացած մարդ, որն իր ողջ սրտով զգացել է այդ տեղեկության իսկությունը, ողջ Հոգով ընդունել է այն և կանգնել Համբարձման ուղու վրա, արդե՛ն իսկ ԾԱՌԱՅՈՒՄ է նրան:

Այդպես դուք բոլորդ, զավակնե՛րս, ստեղծում եք Երկրի ՆՈՐ Էգրեգորը, որն ամեն նոր արթնացած մարդու հետ ավելի ու ավելի է մեծանում՝ աստիճանաբար դուրս մղելով երկվության աշխարհի նախկին էգրեգորները, որոնք իրենց մեջ կուտակում են մարդկանց արձակած բոլոր տեսակի բացասական էներգիաները:

Եվ այս նոր՝ **Համբարձման Էգրեգորը** հիրավի ձեր ընդհանուր զավակն է, որ ծնվել է մաքուր ու անպայման, այսինքն՝ Աստվածային Սիրո մեջ:

Ձեր այդ համատեղ աշխատանքն էլ հենց նախատիպն է Հինգերորդ չափման կյանքի, որտեղ չկա մարդկանց բաժանում գլխավորների և երկրորդականների, ավելի և պակաս հոգևորների, խելացիների և հիմարների, ուսյալների և թերուսների, քանի որ նոր կյանքում գոյություն ունի մարդու գնահատման միայն մեկ չափանիշ՝ նրա լուսավոր Հոգին և բացառիկությունը. միայն նրան բնորոշ տաղանդներն ու ունակությունները, որ նա պարգևում է բոլորին:

Հենց դա էլ տեղի է ունենում այժմ նրանց հետ, որոնց դուք անվանում եք «Լուսատտիկներ»։

Ձեզնից ամեն ոք յուրովի ծառայում է Համբարձման գործին, և բոլորդ միավորված եք մեկ նպատակով՝ փոխակերպել Խավարը Լույսի, ինչն էլ թույլ կտա ձեր Երկրին իր լավագույն զավակների հետ միասին իրագործել Անցումը։

Այդ իսկ պատճառով, զավակնե՛րս, երբե՛ք մի մտածեք, թե ինչ-որ մեկն ավելի լավն է ձեզնից, ավելի կարևոր, նշանակալից, խելոք, հոգևոր կամ Համբարձման գործի գիտակ։

Հաճախ ձեր մոլորակին հղված անկեղծ և ուժգին Սերը շատ ավելի մեծ էներգետիկական լիցք է կրում, քան տասնյակ ուղերձները, որ ընդունում է ինչ-որ մեկը, որի՝ նուրբ պլանից տեղեկատվություն ընդունելու կապուղին բաց է։

Կամ էլ, օրինակ, տեղին և ժամանակին ասված խոսքը կարող է բառիս բուն իմաստով փրկել ինչ-որ մեկին կործանումից և լիովին փոխել նրա կյանքը՝ բացելով այնպիսի հորիզոններ, որոնց մասին նա երազել անգամ չէր համարձակվել։

Ձեզնից յուրաքանչյուրն ունի իր ճանապարհը և մարդկանց հետ շփվելու իր մեթոդները։ Եվ անչափ կարևոր է հետևել հենց ձե՛ր ուղուն, զգալով ձե՛ր ուժեղ կողմը, տեղեկատվության հաղորդման հատկապես ձե՛զ բնորոշ ունակությունները։

Մեկն էլ կարող է պարզապես ջերմացնել մարդուն իր հոգու տաքությամբ ու քնքուշ ժպիտով։ Եվ նրա հոգին կհալվի ու կդառնա դեպի Լույսը։

Երբեք մի՛ փորձեք կրկնօրինակել ինչ-որ մեկին, կիրառել ուրիշի շփման ձևը, տեղեկատվության հաղորդման միջոցները, այսինքն՝ փորձել անել մի բան, որ հատուկ չէ ձեզ։

Հիշե՛ք՝ ամենաթանկ բանը, որ դուք ունեք, ձեր անհատականությունն ու անկրկնելիությունն է։

Դա իսկապես ձեր ամենամեծ հարստությունն է, սովորե՛ք հմտորեն ու արժանապատիվ կերպով տնօրինել այն։

Եվ այդ ժամանակ ձեզնից ամեն մեկը կդառնա այն Աստվածային մասնիկը, որն օրգանապես կներարկվի **Համբարձման Միասնական Էգրեգորի** մեջ՝ ներբերելով իր Հոգու բովանդակ հարստությունը։

Եվ ես օրհնում եմ ձեզ, զավակնե՛րս, որ այդպես լինի։

ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԷԳՐԵԳՈՐԸ

Այսօր ես կուզենայի շարունակել զրույցը Համբարձման Էգրեգորի կառուցման վերաբերյալ, որն այժմ առաջնահերթ խնդիր է Անցումն ընտրած յուրաքանչյուր մարդու համար։

Ինչու՞ է դա այդքան կարևորվում։

Դուք արդեն գիտեք, զավակնե՛րս, որ Տիեզերքում ամեն ինչ բաղկացած է էներգիայից՝ բնությունը, բոլոր կենդանի էակները, նրանց մտքերը, զգացմունքները, ցանկությունները, արարքները։ Նույնիսկ անշունչ առարկաներն իրենց ստեղծողների էներգիաներն են կրում։

Եվ ողջ այդ էներգետիկական բազմազանությունը աստիճանաբար «դասակարգվում է» ըստ թրթիռների նմանության՝ Երկրի նուրբ պլանում ստեղծելով յուրօրինակ «մագնիս»-էգրեգորներ, որոնք առձգելով իրենց համապատասխանող ավելի ու ավելի շատ էներգիաներ, հասնում են հսկայական, երբեմն հրեշավոր չափերի։

Դրանցից ամենամեծը վախի և տառապանքի էգրեգորներն են, որոնք ստորաբաժանվում են բազմաթիվ «ենթաէգրեգորների»՝ էներգետիկական թելերով սերտորեն շաղկապված իրենց հիմնական գոյացությունների հետ։

Այդպես, վախի էգրեգորն իր մեջ ներառում է այնպիսի ածանցյալներ, ինչպես մահվան և ցավի վախը, վախը սեփական անձի և

մերձավորների համար, ապագայի և ներկայի վախը, հիմար ու ծիծաղելի երևալու վախը. . .

Իսկ տառապանքի էգրեգորն առանձնանում է է՛լ ավելի մեծ բազմազանությամբ։ Նրա բաղադրիչներն են վիրավորանքը, ագահությունը, խանդը, ֆիզիկական և հոգեկան ցավի բոլոր տեսակները՝ մերձավորներին կորցնելու վիշտը, անպատասխան սերը, աշխատանքի, բնակարանի, ընտանիքի կորուստը, մի խոսքով՝ բոլոր կյանքային ձախորդություններն ու զժտությունները։

Զուտ զգացմունքային էգրեգորներից բացի գոյություն ունեն նաև բազմաթիվ էգրեգորներ, որոնք ձևավորվել են հավաքական գիտակցությամբ՝ ինչ-որ մեկի կամ բանի նկատմամբ եղած ընդհանուր հավատով։

Այդպիսի էգրեգորների ամենավառ օրինակը քրիստոնեական, մուսուլմանական և բուդդհայական էգրեգորներն են, ինչպես նաև ազգային էգրեգորը՝ այն երկրներում, որտեղ արմատավորվում է հայրենասիրության զգացում։

Ինչու՞ եմ այսքան մանրամասնորեն անդրադառնում սրան։

Լոկ նրա համար, զավակնե՛րս, որ դուք լիովին գիտակցեք այն աշխատանքի ծավալը, որ սպասում է ձեզ։

Բանն այն է, որ Հինգերորդ չափման Երկիրը չի արձագանքում այդ էգրեգորներից և ոչ մեկին, քանի որ դրանք բոլորը երկվության աշխարհի ծնունդ են, այսինքն՝ բաժանման էներգիաներ են կրում իրենց մեջ։

Այն դրական հույզերը, որ ճառագել են մաքուր ու լուսավոր հոգիները, կորել են նսեմ կրքերի «փոթորկոտ օվկիանոսում», որոնք սնունդ են տալիս երկվության աշխարհի՝ խիտ օղակով Երկիրը շրջապատած էգրեգորներին։

Եվ հիմա դուք պետք է ստեղծեք ՆՈՐ՝ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԷԳՐԵԳՈՐ, միաբևեռ աշխարհի էգրեգոր, և հետզհետե այն պետք է ձեռք բերի

այնպիսի ուժ ու հզորություն, որ ընդունակ լինի իր Լույսով և Սիրով տարրալուծելու մյուս բոլոր էգրեգորները։

Դուք արդեն համոզվել եք, զավակնե՛րս, ձեր սեփական օրինակով, որ դա հնարավոր է։

Դուք սովորել եք աշխատել այդ էգրեգորների հետ ձեր ընտանիքի, աշխատանքային կոլեկտիվի, ինչ-որ մեկն էլ՝ ողջ քաղաքի մասշտաբով։

Դուք տեսնում եք, թե ինչպես են աչքի առաջ փոխակերպվում մարդիկ՝ սրբվելով Սիրո էներգիայի հոսանքներով, ինչպես է ձեր շուրջը ագրեսիվ մթնոլորտը փոխվում բարեկամականի, ինչպես է ամեն ինչ շողում նոր գույներով. . .

Եվ հիմա, զավակնե՛րս, ձեր աշխատանքը պետք է բարձրանա նոր մակարդակ՝ ձեռք բերի համամոլորակային մասշտաբ։

Դրա համար հարկավոր է, որ ձեր գիտակցությունն ընդլայնվի մինչև ձեր մոլորակի հետ տեղի ունեցող համընդհանուր էներգետիկական պրոցեսների ըմբռնումը։

Դուք պետք է Երկրի շուրջը ձևավորեք **ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՄԻԱԲԵՎԵՌ ԷԳՐԵԳՈՐ**, որն իր մեջ կներառի և դեպի դուրս կարտազատի ամենաբարձր թրթռանքի էներգիա, այլ կերպ ասած՝ կազմված կլինի Սիրո մաքրամաքուր էներգիայից։

Սակայն, նախ և առաջ, դուք ինքներդ պետք է սովորեք այնպես վերահսկել ձեզ, որ փակեք բոլոր էներգետիկական կապուղիները, որոնք ձեզ կապում են երկվության աշխարհի՝ ամեն տեսակ բացասական էներգիաներ կուտակած էգրեգորների հետ։

Եվ թող դա դառնա Համբարձման Էգրեգորի ստեղծմանն ուղղված առաջին քայլը, որովհետև եթե ամեն մարդ սկսի վերահսկել իր մտքերն ու զգացմունքները, արդեն իսկ կդադարի սնուցել այն էգրեգորները, որոնք հենց այն բալաստն են, որ թույլ չի տալիս համբարձվել ձեր մոլորակին։

ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԷԳՐԵԳՈՐԸ ԵՎ ՏԻԵԶԵՐՔԻ ՕՐԵՆՔՆԵՐԸ

Եվ այսպես, այսօր մենք կշարունակենք զրույցը Համբարձման Էգրեգորի մասին և կքննենք այն մի քիչ ուրիշ տեսանկյունից, մասնավորապես՝ թե ինչպես է Տիեզերքի Օրենքների հետ հարաբերակցվում այն փաստը, որ բոլոր մյուս էգրեգորները դուրս կմղվեն (կտարրալուծվեն) Հինգերորդ չափման այդ նոր Էգրեգորով։

Եթե ելնենք նրանից, որ յուրաքանչյուր էգրեգոր մարդու մտքերի և զգացմունքների ծնունդն է, ապա նման էգրեգորի փոխակերպումը կամ լրիվ վերացումը կարող է երևալ որպես Տիեզերքի Օրենքների խախտում, օրինակ՝ Ազատ Կամքի Օրենքի, Անդրադարձման Օրենքի կամ Պատճառի և Հետևանքի Օրենքի։

Սակայն իրականում ոչ մի հակասություն էլ այստեղ չկա, և ես կբացատրեմ, թե ինչու։

Ամեն կենդանի շունչ Երկրի և մյուս մոլորակների վրա ծնված է Սիրո էներգիայից՝ նախասկզբնական Աստվածային էներգիայից, ամենայն գոյի ակունքից։

Եվ եթե հետագայում մարդկության պատմությունը սկսել է զարգանալ ուրիշ սցենարով, Երկրի վրա ծնունդ տալով ցածրաթրթիռ բացասական էներգիաների, ապա դա հետևանք է իմ նախնական մտահղացման աղավաղման՝ ձեր գիտակցությունն ու ֆիզիկական մարմինները ստրկացնել ձգտող էակների օտարածին ներխուժումով։

Ցավոք, դա հաջողվել է նրանց։

Եվ հիմա մարդկությունը կանգնած է երկընտրանքի առաջ. թույլ տալ Դրակոնյանների թշնամական քաղաքակրթությանը ավարտին հասցնել իր չարաղետ ծրագիրը՝ մարդկանց վերածելով իրենց բոլոր ցանկությունները կատարող հնազանդ գործիքի՝ նրանց գիտակցությունը իրենց մշակած ծրագրերին լիովին ենթարկելու ճանապարհով, թե՞ ահռելի ջանքեր գործադրելով դուրս պրծնել այդ

գերությունից և վերադառնալ սեփական ակունքներին՝ Աստվածային էությանը։

Եվ տվյալ դեպքում խոսքն այն մասին չէ, որ խախտվում է մարդկանց ազատ կամքը, որոնք ցանկանում են բացասական էներգիաներ արտածել աշխարհ, այլ այն մասին, որ պետք է վերականգնել նրանց կորսված դիրքերը, օգնել վերհիշելու, թե ով են իրենք և որտեղից են եկել, և ազատել նրանց օտարածին էներգիաների գերությունից։

Ճիշտ ինչպես բարի հրաշագործն է կախարդանքից ազատում այն խեղճ մարդկանց, որոնց վրա նզովք են դրել չար ուժերը։

Ընդհանուր առմամբ հենց դա էլ կատարվել է մարդկության հետ, որի գիտակցության մեջ դանդաղ, բայց համառորեն ներդրվել են բաժանման ծրագրերը, ինչի արդյունքում էլ առաջ է եկել երկվության աշխարհը՝ դրանից բխող բոլոր հետևանքներով։

Հարկավոր է հիշել, որ յուրաքանչյուր մարդու Հոգի հիշում է , թե որտեղից է եկել ինքը, և ձգտում է վերադառնալ այնտեղ՝ Սիրո հարազատ էներգիաների մեջ։

Բոլոր ձախորդություններն ու դժբախտությունները Երկրի վրա տեղի են ունենում լոկ Սիրո պակասից, նրա՝ բոլորովին այլ հասկացություններով նենգափոխումից, որոնք ոչ մի ընդհանուր բան չունեն մաքուր անպայման Սիրո՝ միակ Աստվածային Սիրո հետ։

Եվ հիմա եկել է ժամանակը, զավակնե՛րս, որ դառնաք այդպիսի հրաշագործներ՝ մարդկության փրկիչներ, որոնք վերացնում են Դրակոնյանների ռասայի չար հմայանքները։

Զգալով իրենց մոտալուտ վախճանը, նրանք գնացին վա բանկ՝ գործի դնելով մարդկանց համընդհանուր չիպավորումը, նորածինների պարտադիր պատվաստումը, վերահսկելով յուրաքանչյուր մարդու իր բջջային հեռախոսի, համակարգչի, բանկային քարտերի միջոցով։

Նրանք սահմանել են համընդհանուր լրտեսություն և մարդկանց գիտակցության համընդհանուր զոմբիացում, և եթե վերջ չդրվի այդ ամենին, Երկրի վրա այլևս մարդ չի մնա, որ փրկեք։

Հենց այդ պատճառով էլ, զավակնե՛րս, ես նորից ու նորից կրկնում եմ, որ հապաղելու ժամանակ չի մնում, որ յուրաքանչյուր օրն ու ժամը թանկ են դառնում, և միայն ձեզնից է կախված՝ քանի մարդ և ինչ ժամկետներում կկարողանա դուրս պրծնել այն գերությունից, որի մեջ հայտնվել է ձեր մոլորակը, և վերադառնալ հայրենի Տուն, որն արդեն կառուցված է Երկրի նուրբ պլանում և ձեր օգնության ու աջակցության կարիքն ունի։

Հենց Համբարձման Էգրեգորն է Սիրո այն գեներատորը, որը կսնուցի Հինգերորդ չափման Երկիրը, բայց դրա համար նրան հարկավոր է «վառելիք» ամենաբարձր թրթռանքի էներգիաների տեսքով, որ կհողեն այն մարդիկ, որոնք պիտի ապրեն այդ Տանը։

Չնայած Տիեզերքի Բարձրագույն Ուժերի, ձեր Գալակտիկական եղբայրների, Ագարտայի բնակիչների, Երկրի զուգահեռ աշխարհներում բնակվող մյուս քաղաքակրթությունների օգնությանն ու աջակցությանը, առանց ձեզ Համբարձման Էգրեգորը չի կարող գործել իր ամբողջ հզորությամբ։

Միայն ֆիզիկական մարմինների մեջ գտնվող և նուրբ ու հոծ էներգիաների համադրություն հանդիսացող մարդկանց էներգիաները կկարողանան առավելագույն լեցունություն ապահովել նրան և հաղորդել այն ուժն ու հզորությունը, որն ի զորու կլինի փոխակերպելու երկվության աշխարհի էներգիաները Սիրո մաքուր, միաբևեռ էներգիայի։

ՄԱՐԴՈՒ ԵՎ ԷԳՐԵԳՈՐԻ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Այսօր մենք ավարտում ենք զրույցը Համբարձման Էգրեգորի վերաբերյալ, որի մասին խոսվում էր իմ նախորդ ուղերձներում։

Եվ հիմա մենք առավել հանգամանորեն կանգ կառնենք մարդու և էգրեգորի փոխազդեցության բուն մեխանիզմի վրա, որպեսզի դուք ավելի լավ հասկանաք ձեր դերը, այսինքն՝ նաև ձեր

պատասխանատվությունը այն ամենի համար, որ կատարվում է ձեր մոլորակի հետ։

Էգրեգորներն առաջ են եկել և շարունակում են առաջ գալ որպես հետևանք Տիեզերքի Օրենքների գործունեության։

Կարելի է նույնիսկ ասել, որ նրանք այդ Օրենքների իրագործման գործիքն են։ Եվ ահա թե ինչու։

Համաձայն Անդրադարձման Օրենքի, ձեր արտանետած յուրաքանչյուր հույզ, որը որոշակի էներգիա է կրում, պետք է հետագայում վերադառնա ձեզ՝ համանման կամ նույնիսկ սաստկացած տարբերակով։

Բայց քանի որ այն վերադառնում է ոչ միանգամից, հարկավոր է տարածություն, որտեղ այն «կսպասի իր ժամին»։

Եվ այդ ժամը գալիս է, երբ ձեր Հոգին որոշում է, որ հենց տվյալ պահն է հատուցման պահը, երբ ձեր դասը կլինի առավելագույնս արդյունավետ և ակնառու։

Եվ այդ ժամանակ նա առաքում է անհրաժեշտ էներգիայի «պահանջարկ»-ազդակ, որն էլ իջնում է ֆիզիկական պլան որոշակի մարդու միջոցով, այնպիսի մեկի, որին հարկավոր է ներգրավված լինել տվյալ իրավիճակում՝ կարմայական կամ ինչ-որ ուրիշ պատճառներով։

Հենց դրա համար էլ արածի հատուցումը առավել հաճախ գալիս է անսպասելի կերպով և բնավ ոչ այն մարդուց, ումից սպասում եք։

Հավատացեք, զավակնե՛րս, ձեր ճակատագրի սարդոստայնը հյուսվում է շատ նրբորեն և հնարամտորեն՝ հարյուրավոր և հազարավոր գործոնների նկատառումով, որոնք անհրաժեշտ են ձեր Հոգու զարգացմանը։

Եվ տվյալ դեպքում էգրեգորները տարատեսակ էներգիաների պահեստարաններ են, որոնք որոշակի շրջապտույտ են ապահովում. դրանք ներծծում են այն ամենը, ինչ արձակում է մարդը, իսկ հետո նրան հետ են տալիս այդ էներգիաները։

Այդպես կյանքի է կոչվում հետևյալ ասացվածքը՝ «Ինչ ցանես՝ այն էլ կհնձես»։

Մի առանձնահատկություն էլ ունեն մարդկային հույզերի էգրեգոր-պահապանները։

Նրանք անչափ ճկուն են ու շարժուն։ Նրանք դյուրազգացորեն հակազդում են մարդկային կրքերի բոլոր նրբերանգներին՝ վայրկենաբար հարմարվելով դրանց։

Նրանք մագնիսի պես իսկույն ձգում են այն էներգիան, որն իր թրթռանքով արձագանքում է իրենց։

Եվ մարդու ուժից վեր է փոխել դա, որովհետև այդպես է կառուցված Տիեզերքը, որի մեջ ամեն ինչ ենթարկվում է նրա Օրենքներին։

Միակ բանը, որ կարող եք անել ձեր կյանքը բարելավելու համար, Երկրի նուրբ պլանին Լույսի և Սիրո բարձրաթրթիռ էներգիաներ մատակարարելն է՝ ցածր թրթռանքի էներգիաների փոխարեն, որ կրում են իրենց մեջ բացասական հույզերը։

Եվ այդ ժամանակ երկվության աշխարհի բոլոր էգրեգորները, որոնք ապրում են ցածրաթրթիռ էներգիաների հաշվին, կսկսեն արագորեն դատարկվել, մինչև որ իսպառ վերանան, և Երկրի շուրջը կշողարձակի **ՄԻԱԿ**, անասելի մեծ և հիասքանչ **ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԷԳՐԵԳՈՐԸ**՝ տոգորված ձեր Սիրով և Շնորհակալությամբ։

Եվ հենց որ դա կատարվի, ֆիզիկական պլանում կսկսեն տեղի ունենալ իսկական հրաշքներ, որովհետև մարդիկ, որոնք ապրում են նսեմ կրքերով, պարզապես կվերանան ձեր կյանքից, հետզհետե կհեռանան ուրիշ աշխարհներ։

Զգողության Օրենքով, Երկրի վրա կկարողանան գոյել միայն նրանք, ովքեր «սնվում են» Սիրո էներգիայով և կիսում այն ուրիշների հետ։

Սա իրադարձությունների զարգացման լավագույն սցենարն է, և միայն ձեզնից է կախված, զավակնե՛րս, թե որքան արագ կկարողանաք կյանքի կոչել։

Եթե մարդու գիտակցությունը սկսի փոխակերպվել բավականաչափ արագ, ձեզ կհաջողվի խուսափել բազմաթիվ ողբերգական դեպքերից, որոնք կոչված են արթնացնելու մարդուն և վերադարձնելու նրան առ Աստված։

Եվ դա ուտոպիա չէ, զավակնե՛րս։

Իր Աստվածային ծագումը վերհիշած մարդը ի զորու է ամե՛ն ինչ անելու։

Եվ ես օրհնում եմ ձեզ, որ այդպես լինի. . .

ԷՆԵՐԳԻԱՆԵՐԻ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ՄՈԼՈՐԱԿՈՒՄ

Այսօր ես ուզում եմ հանրագումարի բերել իմ ուղերձների ամբողջ շարքը՝ նվիրված Տիեզերքի Օրենքներին և էգրեգորներին, որոնք փոքր դեր չեն խաղում այդ Օրենքների կենսագործման մեջ։

Ինչպես տեսնում եք, այդ ամենը մի ամբողջական և բավական բարդ նուրբնյութական կառուցվածք է, որը սերտորեն կապված է Երկրի հոծ պլանի հետ, և նրանց միջև տեղի է ունենում անընդհատ էներգափոխանակություն։

Եվ ձեզնից յուրաքանչյուրն իր լուման է ներբերում նրա մեջ՝ դրական կամ բացասական, կախված այն բանից, թե ինչ էներգիաներ եք ճառագում դեպի դուրս։

Ընդ որում, Երկրի բոլոր բնակիչները կապված են միմյանց հետ անտեսանելի էներգետիկական թելերով, որոնք ձևավորվել են դարերի և հազարամյակների ընթացքում՝ կարմայական կապերի հետևանքով։

Սակայն հիմա Երկրի վրա ստեղծվել է մի բացառիկ իրավիճակ, երբ մոլորակ են իջել հսկայական թվով Հինավուրց Մեծ Հոգիներ, ընդ որում՝ իրենց հազարավոր մասնիկներով։

Այդ «Աստվածային ցանքի» նպատակը էներգիաների վերաբաշխումն է Երկրի ինչպես նուրբ, այնպես էլ հոծ պլանում։

Եվ Լուսավոր Հոգիների այդ զանգվածային գալուստը Երկիր կոչված է Լույսի կողմը թեքելու կշեռքի նժարը, քանի որ վերջին շրջանում իրավիճակը Երկրի վրա հասել էր այն կրիտիկական նիշին, երբ անդառնալիության կետն արդեն բոլորովին մոտ էր։

Այժմ հաջողվել է հաղթահարել այդ դրությունը, և էներգետիկական շեղումը դեպի Խավարը վերացվել է։

Հիմա թեև դանդաղ, բայց վստահորեն Երկիրը վերագտնում է իր երբեմնի շուքը և տեղափոխվում է Հինգերորդ չափման տարածություն, որտեղ և կենում էր ժամանակին։

Եվ որպեսզի արագացվի այդ պրոցեսը, ձեռնարկվեցին մինչ այժմ աննախադեպ միջոցներ. ձեզ օգնության եկան Տիեզերքի բոլոր Լուսավոր Ուժերը։

Այդ կերպ, Լույսը Երկիր է լցվում երկու կողմից՝ թե՛ նուրբ, թե՛ հոծ պլաններից։

Կարելի է ասել, որ Բարձրագույն Ուժերի մի մասը հիմա ինքնակամ մարմնավորվել է Երկրի վրա իր ֆիզիկական մարմնով, որպեսզի ապահովի անհրաժեշտ էներգափոխանակությունը։

Այդ Մեծագույն Հոգիները հրաշալի հասկանում են, որ առանց ներքևից ցուցաբերվող աջակցության, Բարձրագույն Ուժերը չեն լուծի նման վիթխարի խնդիր։

Եվ հիմա այդ մարմնավորված մասնիկներից շատերը դժվարին կացության մեջ են, որովհետև Երկիր իջնելով՝ մոռացել են իրենց առաքելությունը և շեղվել իրենց Հոգու ընտրած ճանապարհից։

Ոմանց անցկացնում են դաժանագույն փորձություններով, որովհետև դա միակ միջոցն է նրանց վերադարձնելու դեպի իրենց նախասահմանված ճանապարհը և փրկելու նրանց Հոգիներն անկումից հարյուրավոր մարմնավորումների ճանապարհով հասած իրենց բարձունքից։

Հենց այստեղից է ծագում արտահայտությունը, թե՝ «ամենամեծ փորձությունները Արարիչն ուղարկում է իր ամենասիրելի զավակներին»։

Եվ վերջին բանը, որ կուզեի ձեզ ասել այսօր։

Համբարձման ուղին բռնած յուրաքանչյուր մարդ հիրավի անգին է, քանի որ Երկրի վրա տեղի ունեցող իրադարձությունների իր ըմբռնումով միայն նա կարող է փոխել մարդկության հավաքական գիտակցությունը՝ հետզհետե շրջելով այն Խավարից դեպի Լույսը։

Եվ այդ գործընթացն օրեցօր ավելի ու ավելի է թափ առնում։

Հենց այդպես էլ տեղի է ունենում ուժերի էներգետիկական վերաբաշխումը Համբարձման ուղղությամբ։

Եվ այդպես էլ ստեղծվում է Հինգերորդ չափման Նոր՝ Համբարձման Էգրեգորը, որն աստիճանաբար կկլանի, իր մեջ կառնի ձեր ամբողջ մոլորակը։

Անսահման սիրող Բացարձակ-Հայրը խոսեց ձեզ հետ

Ընդունել է Մարթան 2018 թ. ապրիլի 29 – մայիսի 15

ԳԼՈՒԽ IV

ԻՆՉՊԵՍ ՊԱՇՏՊԱՆԵԼ ՍԵՓԱԿԱՆ ԷՆԵՐԳԱՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ՉԽԱԽՏԵԼՈՎ ՏԻԵԶԵՐՔԻ ՕՐԵՆՔՆԵՐԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԻՆՉՊԵՍ ՊԱՇՏՊԱՆԵՔ ԻՆՔՆԵՐԴ ՁԵԶ՝ ՉԽԱԽՏԵԼՈՎ ՏԻԵԶԵՐՔԻ ՕՐԵՆՔՆԵՐԸ

2. ԻՆՉՊԵՍ ՀԱՂԹՈՂ ԴՈՒՐՍ ԳԱԼ՝ ՉԽԱԽՏԵԼՈՎ ՏԻԵԶԵՐՔԻ ՕՐԵՆՔՆԵՐԸ

3. ԻՆՉՊԵՍ ՊԱՀԵՔ ՁԵԶ ԿԼՈՆՆԵՐԻ ՀԵՏ՝ ՉԽԱԽՏԵԼՈՎ ՏԻԵԶԵՐՔԻ ՕՐԵՆՔՆԵՐԸ

4. ԱՆՁՆԱԿԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

5. ԲԱՐԻԿԱԴԻ ՀԱԿԱՌԱԿ ԿՈՂՄԵՐՈՒՄ

6. ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ԱԶԱՏԱԳՐՈՒՄ (ՊՐԱԿՏԻԿԱ)

7. «ԱՆՁԻ ԵՐԿԱՏՈՒՄ» ՊՐԱԿՏԻԿԱՆ

8. ՀԱՍԿԱՆԱԼԻ ԼԵԶՎՈՎ

9. ԱԶԱՏԱԳՐՈՒՄ «ԿԵՆՎՈՐՆԵՐԻՑ» (ՊՐԱԿՏԻԿԱ)

ԻՆՉՊԵՍ ՊԱՇՏՊԱՆԵՔ ԻՆՔՆԵՐԴ ՁԵԶ՝ ՉԽԱԽՏԵԼՈՎ ՏԻԵԶԵՐՔԻ ՕՐԵՆՔՆԵՐԸ

ԱՇԽԱՐՀԻ ՄՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 28 ՕԳՈՍՏՈՍԻ 2017 Թ.

Ողջունում եմ ձեզ, իմ սիրասու՛ն զավակներ։

Այսօր ես ուզում եմ խոսել այն մասին, թե ինչպես կարող եք ճիշտ պաշտպանություն մշակել Մութ ուժերի դեմ և ինչպես պահեք ձեզ, եթե հանկարծ հարձակում զգաք նրանց կողմից։

Ես տեսնում եմ, որ այս հարցը վաղուց է հասունացել, առավել ևս՝ որ բոլորդ ականատես եղաք, թե ինչպիսի հզոր ներգործություն եղավ ձեր սիրելի կայքէջի վրա։ Տեսաք, որ այն պաշտպանելու ձեր համատեղ ջանքերն անգամ չտվեցին բավական արագ արդյունք։

Եվ հիմա ես կփորձեմ ձեզ հաղորդակից դարձնել Մութ ուժերի (ինչպես ընդունված է անվանել բոլոր այն էություններին, որոնք Լույսի էություններ չեն) հետ շփման բոլոր նրբություններին ու նրբերանգներին։

Այսօր մենք չենք անդրադառնա Մութ ուժերի աստիճանավորմանը, քանի որ այն հիրավի անսահման է, այլ մեր ուշադրությունը կսևեռենք այն բանի վրա, թե ինչն է նրանց բոլորին միավորում, որն է նրանց կենսակերպը, գոյության իմաստը։

Սկսենք նրանից, որ Երկրի վրա և նրա նուրբ պլանում ամեն կենդանի արարած ունի ապրելու իրավունք, որովհետև Աստծո ստեղծածն է և նրա մասնիկն է կրում իր մեջ։

Այո, զավակնե՛րս, ճիշտ այդպես, որովհետև մեր Արարիչն արտահայտված է ամեն ինչում, իր բոլոր հիպոստասներում՝ մեծի և փոքրի, գեղեցիկի և սարսափելիի, Հրեշտակների և Դևերի մեջ... Եվ դուք պետք է ըմբռնումով ու հարգանքով վերաբերվեք դրան։

Եվ քանի որ դուք անչափ երկար եք ապրել երկվության աշխարհում, այդ բաժանումը հասել է բարձրակետին իր թե՛ ներքին, թե՛ արտաքին դրսևորման մեջ։ Հենց այդտեղ է ողջ բարդությունը, սիրելինե՛րս։ Եվ հիմա ես կբացատրեմ, թե ինչու։

Ժամանակի հետ Մութ ուժերը, որոնք մեծ մասամբ աստրալ էություններ են՝ ձեր անմիջական հարևանությամբ ապրող և ձեր բացասական հույզերով սնվող, այնքան են հարազատացել ձեզ, որ դարձել են ձեր իսկ մի մասը կամ, ավելի ճիշտ, դուք դարձել եք նրանց հայելային արտացոլանքը։

Այդ փոխներթափանցումը տեղի է ունեցել աստիճանաբար, հարյուրամյակից հարյուրամյակ, մարմնավորումից մարմնավորում։ Այդ պատճառով էլ այժմ գործնականորեն անհնար է գտնել մի մարդու, որը կազմված լինի բացառապես Լույսից։ Յուրաքանչյուրիդ մեջ էլ Խավարի «պատառիկ» կա, մեկիդ մեջ շատ, մյուսիդ մեջ քիչ. . .

Իսկ հիմա եկեք տեսնենք, թե ինչ է կատարվում Երկրի նուրբ պլանում և ձեր սեփական նուրբ մարմիններում, երբ դուք սկսում եք «պայքարել» Մութ ուժերի դեմ։

Սկսենք նրանից, որ պայքարն ինքը արդեն իսկ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՉԷ, քանի որ կրում է իր մեջ բաժանում, հակառակություն, երկվություն։

Իսկ չէ՞ որ դուք հենց դրանից եք ցանկանում ազատվել, զավակնե՛րս։

Ավելին, մտնելով նման պայքարի մեջ, դուք ակամա «թեժացնում եք» նաև ձեր մութ կողմը՝ այդ կերպ սնուցելով այն։

Ուրեմն ինչպե՞ս վարվեք, զավակնե՛րս։ Ինչպե՞ս պահեք ձեզ, երբ զգաք Մութ ուժերի գրոհը։ Ինչպե՞ս պաշտպանեք ինքներդ ձեզ և մյուսներին։

Անշուշտ արդեն գլխի եք ընկնում, որ միակ հուսալի պաշտպանությունը կարող է լինել լոկ ՍԵՐԸ՝ ԱՆՊԱՅՄԱՆ ԵՎ ԱՆՍԱՀՄԱՆ, բոլոր սահմաններն ու տարբերությունները ջնջող, որը հզոր Աստվածային հորձանքով հորդում է ձեր սրտերից՝ ձեր Սիրո Բյուրեղից։

Իսկ ի՞նչ է այդ միջոցին կատարվում Մութ ուժերի հետ, որոնք բնակվում են ինչպես ձեր, այնպես էլ այն մարդկանց մեջ, որոնց գրոհին ենթարկվում եք։

Այստեղ ամեն ինչ կախված է լինում նրանց «խտությունից» կամ, այլ կերպ ասած, ասիճանավորումից, որի ընդգրկումը հիրավի հսկայական է։

Օրինակ, վերին, երբեմն էլ ստորին աստրալի էությունները կարող են որոշում ընդունել վերադառնալու դեպի Լույսը և անցնելու գոյության նոր մակարդակ։ Դուք նույնիսկ կարող եք խնդրել Արարչին՝ Լույսի Պորտալ բացել նրանց համար՝ միջանցք, որով կարող են Տուն վերադառնալ։ Այդ կերպ դուք կդառնաք նրանց փրկիչները և Խավարը Լույս կդարձնեք։

Ձեր սեփական մութ կողմը նույնպես կարող է փոխակերպվել ամենահեքիաթային ձևով, և դուք կազատվեք ձեր աններդաշնակ հատկություններից, որոնք խանգարում են ձեզ առաջանալ հոգևոր ուղիով։

Ինչ վերաբերում է այն ուժերին, որոնք իսկապես Խավարի մարմնացում են և վճռականորեն կմերժեն Լույսը, նրանց համար այդ բարձր հաճախության էներգիան կործանարար կլինի,- կդառնա «ճառագայթման» այն մահացու չափաբաժինը, որը լիովին կտարրալուծի նրանց։

Բայց դա կլինի նրա՛նց ընտրությունը, այլ ոչ թե ձեր։ Դուք տալիս եք դեպի Լույսը վերադառնալու հնարավորություն, և ձեր մեղքը չէ, որ նրանք չեն օգտվում դրանից։

Պաշտպանելով ձեզ՝ դուք չեք խախտում նաև **Ազատ կամքի օրենքը**, որն անսասան է համայն Տիեզերքում։

Միայն այդպե՛ս կարող եք զերծ պահել վտանգից թե՛ ձեզ, թե՛ ձեր շուրջը եղած էներգետիկական տարածությունը։

Եվ ես օրհնում եմ ձեզ, զավակնե՛րս, որ այդպես լինի։

Քնքշորեն սիրող Աշխարհի Մայրը խոսեց ձեզ հետ

ԻՆՉՊԵՍ ՀԱՂԹՈՂ ԴՈՒՐՍ ԳԱԼ՝ ՉԽԱԽՏԵԼՈՎ ՏԻԵԶԵՐՔԻ ՕՐԵՆՔՆԵՐԸ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 17 ՀՈՒՆՎԱՐԻ 2019 Թ.

Ողջունում եմ ձեզ, իմ սիրասու՛ն զավակներ։

Եվ այսպես, շարունակենք զրույցը ձեր նոր գիտակցության մասին, և այս անգամ խոսենք, թե որքան արդյունավետ կարող է փոխել այն և՛ ձեր սեփական կյանքը, և՛ մոլորակի կյանքը։

Տեսնում եմ՝ ձեզնից շատերը դեռ բավականաչափ վստահ չեն, որ դա իսկապես հնարավոր է։

Սակայն ժամանակն է, զավակնե՛րս, տեսությունից ընդհուպ անցնել պրակտիկային։

Այժմ ձեր մոլորակի ապագան կախված է յուրաքանչյուրիցդ, քանի որ հիմա առավել քան երբևէ ուժգնանում է սողունակերպների և մարդկանց հակադրությունը։

Եվ ես ուզում եմ, որ հասկանաք, թե որտեղով է անցնում սահմանը, որը բաժանում է ձեր Անպայման Սերը Երկրի ամենայն գոյի նկատմամբ՝ ձեր ինքնորոշման, իսկ ընդհանուր առմամբ՝ **ձեր կյանքի իրավունքից**։

Ես տեսնում եմ, որ ձեզ համար դժվար է գտնել այն ոսկե միջինը, որը թույլ կտա չընկնել ծայրահեղությունների մեջ և պահել բարձր թրթիռները՝ գիտակցելով, թե ինչ վտանգի եք ենթարկվում սողունակերպների կողմից։

<u>Նախ և առաջ</u>, դուք պետք է ընդունեք «խաղի կանոնները» առանց ագրեսիայի և դատապարտության։

Հազարամյակներ ի վեր սողունակերպներն ապրում են Երկրի վրա ձեզ հետ կողք-կողքի։

Նրանք նույնպես արդեն դարձել են Երկրի անբաժանելի մասը, բայց նրանց ենթագիտակցության մեջ ներդրված է սպառողական վերաբերմունքի ծրագիր ձեր մոլորակի նկատմամբ, որը տարածվում է նաև մարդկանց՝ նրա օրինական բնակիչների վրա։

Եվ ձեր խնդիրն է՝ ընդունելով սողունակերպներին որպես անխուսափելիություն, հաղթել նրանց այդ խաղում, պաշտպանելով ձեզ և ձեր սիրելի Երկիրը։

Եվ եթե նրանց կողմից մութ ուժերն են ու աստալ աշխարհը, ձեր կողմից Տիեզերքի Լուսավոր Ուժերն են և ձեր Գալակտիկական ընտանիքը։

Ուժերը ակնհայտորեն անհավասար են, որովհետև Լույսը միշտ ցրում է Խավարը։

Բայց որպեսզի դա կատարվի հնարավորինս արագ, Բարձրագույն Ուժերին Երկրի վրա հարկավոր են օգնականներ, մարդիկ, որ մարմնավորման մեջ են։

Բարեբախտաբար այդպիսի օգնականների թիվը օրըստօրե ավելի ու ավելի է մեծանում։

<u>Երկրորդ</u>, հարկ է, որ դուք խուսափեք այդ էակների հետ ուղղակիորեն հակադրվելուց, քանի որ մարդկանց կառավարման բոլոր լծակները՝ իշխանությունը, ֆինանսական հաստատությունները, ներկայումս սողունակերպների ձեռքում են։

Դուք կարող եք նրանց հաղթել միայն ԷՆԵՐԳԱՊԵՍ։

Մի՛շտ հիշեք, որ չնայած եռաչափ աշխարհում ունեցած իրենց բոլոր նվաճումներին և մարդկանց վրա սահմանած լիակատար վերահսկողությանը, **բարձրաթրթիռ էներգիաների մեջ նրանք դառնում են թույլ և անօգնական**, քանի որ չեն կարող գոյել դրանց մեջ իրենց «երկրային» ծագման պատճառով։

Իսկ դուք՝ սիրելինե՛րս, ուրիշ իշխանությամբ եք օժտված՝ Աստվածայի՛ն, և դա Անպայման Սիրո ձեր ունակությունն է, որը հզորագույն էներգիան է Տիեզերքում։

Եվ հիմա Երկրի վրա գալիս է բացառիկ մի ժամանակ, դա էներգիաների՝ հակադրության ժամանակն է, և ոչ թե ռազմական ուժի, քաղաքական կուսակցությունների կամ սոցիալական հեղափոխությունների։

Եռաչափ աշխարհի մեթոդներն այլևս չեն գործում, դրանք ընդամենը երկրային իշխանության տապալման կարճատև մի տարկետում են տալիս սողունակերպներին։

Բայց որպեսզի արագանա նրանց հեռացումը երկրային պլանից, յուրաքանչյուր մարդ պետք է առավելագույնս բարձրացնի իր թրթիռների մակարդակը, այնուհետև պահի դրանք կայուն՝ առանց թռիչքների ու անկումների։

<u>Եվ վերջին</u>։ Այդ թեմայով շատ մի՛ խոսեք, հատկապես անպատրաստ մարդկանց հետ, պարզապես լուռ ու աննկատելիորեն արե՛ք ձեր գործը՝ պահե՛ք ձեր բարձր թրթիռները՝ դրանցով ողողելով շուրջը եղած ամեն ինչ, շարունակ ավելի ու ավելի մեծացնելով այդ Աստվածային էներգիաների գործողության շառավիղը։

Հենց այդպես կարելի է դիմակայել սողունակերպների օտարածին ազդեցությանը ձեր կյանքի վրա՝ չվնասելով ոչ ոքի և միևնույն ժամանակ պաշտպանելով ձեզ և ձեր հարազատ մոլորակը։

ԻՆՉՊԵՍ ՊԱՀԵՔ ՁԵԶ ԿԼՈՆՆԵՐԻ ՀԵՏ՝ ՉԽԱԽՏԵԼՈՎ ՏԻԵԶԵՐՔԻ ՕՐԵՆՔՆԵՐԸ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 26 ՀՈՒՆՎԱՐԻ 2019 Թ.

Այսօր մենք կխոսենք, թե ինչպես վարվել մեկի հետ, հանձինս որի ճանաչել եք կլոնի, ինչպես պահեք ձեզ նրա հետ։

Անշուշտ, ոչ մի դեպքում չպետք է նրան ասեք, որ ինքը կլոն է։

<u>Նախ և առաջ</u>, նա ձեզ երբեք չի հավատա, որովհետև լիովին վստահ է, որ ինքը մարդ է։

<u>Երկրորդ</u>, լավագույն դեպքում ձեզ կմեղադրեն անձի անարգման մեջ, իսկ վատագույն դեպքում պարզապես խելագար կհամարեն։

Ո՛չ մեկը, ո՛չ մյուսը օգուտ չի բերի ո՛չ ձեզ, ո՛չ էլ «մարդ»-կլոնին։

Ուստի, զավակնե՛րս, դուք պետք է ձեր մեջ պահեք այդ իմացությունները և միևնույն ժամանակ հանգամանորեն մշակեք այդ էակի հետ շփվելու որոշակի ռազմավարություն։

Դուք պետք է ջանաք, առանց նրան վիրավորելու, նվազագույնի հասցնել շփումներն իր հետ։

Այդ կերպ, չխախտելով Տիեզերքի Օրենքները և ընդունելով Երկրի երեսին ապրող ամենայն կենդանի բան որպես գոյության իրավունք ունեցողի, դուք զերծ կպահեք ձեր էներգետիկական տարածությունը օտարածին ներխուժումից։

Եվ հիմա ես կտամ մի քանի խորհուրդ, թե ինչպես նվազագույն կորուստներով ազատվեք անցանկալի շփումից։

Հնարավորինս խուսափե՛ք նրա հետ հանդիպելուց՝ տարբեր պատրվակներ և պատճառներ բերելով։

Բանն այն է, որ կլոնները, ի տարբերություն մարդկանց և սողունակերպների, որոնք ունեն չակրային համակարգ, ունակ չեն հեռահար էներգետիկական փոխազդեցության։

Ձեր էներգիայով «սնվել» նրանք կարող են միայն ֆիզիկապես ձեր կողքին գտնվելով։

Իսկ եթե հնարավոր չէ խույս տալ շփումից, ամենաուժեղ պաշտպանությունը դրեք ձեզ վրա։

Դուք կտեսնեք, թե ինչ տարակուսանքի մեջ կլինի կլոնը, երբ չկարողանա էներգետիկական սնուցում ստանալ ձեզնից։

Նա չի կարողանա հասկանալ պատճառը, բայց բնազդաբար կսկսի խուսափել ձեզնից և սննդի այլ աղբյուր կփնտրի իր համար։

Եվ վերջին խորհուրդս։

Մի՛ փորձեք ինչ-որ բան բացատրել կլոնին՝ ճշմարիտ ուղու վրա բերել նրան, հաղորդակից դարձնել հոգևորին, սովորեցնել ապրել Տիեզերքի Օրենքներով։

Ցավոք, նա ի վիճակի չէ դա հասկանալու այն պատճառով, որ ստեղծվել է սողունակերպների կողմից բոլորովին այլ նպատակներով՝ ճիշտ դրանց հակառակ։

Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ կլոններով փոխարինել են լուսավոր, մաքուր, հոգևոր մարդկանց, որպեսզի թույլ չտան նրանց զարգանալ և իրենց հետևից տանել ուրիշներին։

Նրանցից շատերի մոտ կենդանի է մնում հիշողությունը իր «բնօրինակի» մասին, և նրանք սովորության համաձայն ձգվում են դեպի էզոթերիկ գիտելիքները։

Բայց հիմա նրանց այդ գիտելիքներն էլ «ռոբոտացված» են, այսինքն՝ հարմարեցված են որոշակի շաբլոնի. նրանք մեքենայաբար կրկնում են սովորածը, գործածելով ճիշտ, գեղեցիկ, հոգևոր խոսքեր, որոնք, ցավոք, զուրկ են որևէ էներգետիկայից։

Եվ ես կարծում եմ, որ այս ուղերձը կարդացողներից շատերը բախվել են նման բանի համացանցի տիրույթներում։

Ես հասկանում եմ, սիրելինե՛րս, թե որքան դժվար է ընդունել ու հասկանալ այդ ամենը, բայց եկել է ժամանակը, երբ դուք պարտավոր եք իմանալ Երկրի վրա տիրող իսկական իրավիճակը՝ առանց կեղծ գունավորումների։

Եվ դուք լարախաղացների պես պիտի սովորեք հավասարակշռություն պահել ցանկացած իրավիճակում, որ վերջին պահին չգահավիժեք եռաչափության «անդունդը», և ողջ ու անվնաս հասնեք բաղձալի նպատակին՝ Հինգերորդ չափման նոր Երկիր։

ԱՆՁՆԱԿԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 16 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019 Թ.

Ավարտելու համար զրույցը, թե ինչպես սովորեք ապրել եռաչափ աշխարհում՝ հետևելով ձեր Հոգու թելադրանքին, ես ուզում եմ մի **վերջին խորհուրդ** էլ տալ ձեզ։

Դուք պետք է միշտ հիշեք, որ ձեր կյանքի ցանկացած ոլորտում ունեք գործողությունների ազատության և ընտրության ազատության լիակատար իրավունք։

Ոչ ոք իրավունք չունի ներխուժելու ձեր անձնական էներգետիկական տարածություն։

Այն սուրբ է և անձեռնմխելի՝ Տիեզերքի Օրենքների տեսակետից, և միայն երկրային օրենքները, բարքերն ու ավանդույթներն են խախտում յուրաքանչյուր մարդու այդ անկապտելի իրավունքը։

Եվ հիմա, զավակնե՛րս, երբ արդեն գիտեք աշխարհիկ ու կրոնական իշխանության ողջ աստառը՝ թե ով և ինչպես է ձևավորել եռաչափ աշխարհի կանոններն ու օրենքները, ձեզ համար ավելի հեշտ կլինի կողմնորոշվել սեփական կյանքում, որովհետև հիմա դուք հրաշալի հասկանում եք ձեզ հետ կատարվող ամեն ինչի պատճառներն ու հետևանքները։

Ելնելով դրանից, դուք պետք է մշակեք ձեր սեփական կյանքի փոխակերպման սխեման՝ հաշվի առնելով նրա բոլոր գործոնները,- այժմյան՝ եռաչափ, և ապագա՝ հնգաչափ։

Դա հեշտ չէ, բայց հնարավոր է։

Դրա համար հարկավոր է համատեղել ամենայն լավը, որ կա ձեր ներկայիս կյանքում, և այն, ինչ սպասում է ձեզ Հինգերորդ չափման գալիք կյանքում։

Միաժամանակ պետք է ընդմիշտ ազատվեք այն ամենից, ինչ պահել է ձեզ եռաչափ կյանքում՝ թույլ չտալով շարժվել առաջ։

Դա նախ և առաջ երկրային կապվածություններն են, որոնց հիմքում սեփականատիրական, վերահսկման, կախվածության, վախի, հնազանդության, գոռոզության, ստրկամտության զգացումներն են. ցանկացած բան, միայն թե ոչ ազատ, իրավահավասար հարաբերություններ և Անպայման Սեր։

Երկրորդ տեղում նյութական կապերն են և վաստակածը կորցնելու երկյուղը։

Դուք պետք է գտնեք այն իդեալական հարաբերակցությունը նյութական բարեկեցության և նյութական զեխության միջև, որ ձեզ հնարավորություն կտա ձեռք բերել ներքին ազատություն՝ միաժամանակ չմտածելով օրվա հացի մասին։

Գործնականում դա կարող է արտահայտվել նրանով, որ դուք կսկսեք ողջամտորեն վերաբերվել ձեր պահանջմունքներին, ձեռք բերելով սոսկ այն, ինչ կենսականորեն անհրաժեշտ է, իսկ առաջնությունը տալ ձեր կյանքի հոգևոր կողմին։

Սակայն այստեղ էլ չարժե ի ցույց դնել ձեր վերաբերմունքը ձեզ արդեն օտար դարձած եռաչափ աշխարհի նկատմամբ։

Ամեն ինչ հարկավոր է անել մեղմ և շրջապատի համար անտեսանելի ձևով, չցուցադրելով ձեր նոր համոզմունքներն ու հոգևորությունը։

Այլապես դա կվերածվի նույն երկվության, ձեզ և ուրիշներին՝ տվյալ պահին նվազ հոգևոր մարդկանց, հակադրելու։

Այդպես, աստիճանաբար կսկսի փոխվել ձեր կյանքը։

Դուք այլևս չեք վատնի ձեր թանկարժեք ժամանակը ձեզ ոգով խորթ մարդկանց հետ շփվելու վրա, կազատվեք հոգեբանական կապանքներից և նյութական խոչընդոտներից։

Ձեր էներգետիկական տարածության մեծ մասը կազատեք ավելորդ բեռից և կկարողանաք լցնել Հինգերորդ չափման անգին էներգիաներով, որոնք կօգնեն ձեզ ամենասեղմ ժամկետներում

փոխակերպել ձեր գիտակցությունը եռաչափից հնգաչափի, իսկ ֆիզիկական մարմինը՝ հոծ մարմնից նուրբնյութականի՝ լուսային-բյուրեղայինի։

Եվ ես օրհնու՛մ եմ ձեզ, որ այդպես լինի։

ԲԱՐԻԿԱԴԻ ՀԱԿԱՌԱԿ ԿՈՂՄԵՐՈՒՄ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 22 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021 Թ.

Իմ այսօրվա ուղերձը նվիրված է ձեզնից նրանց, ովքեր դեռ չեն կարողացել վերջնականապես ազատվել էներգետիկական կախվածությունից իրենց այն մերձավորներից, որոնք չեն բաժանում ձեր հայացքները կյանքի և Երկրի վրա ստեղծված ներկայիս իրավիճակի մասին։

Ես տեսնում եմ, թե որքան դժվար է ձեզ համար հաղթահարել ձեր աշխարհայացքների անհամատեղելիության այդ խոչընդոտը։

Ու թեև արդեն բազմիցս խոսել ենք, որ ամեն հոգի ունի իր ճանապարհը և հոգևոր էվոլյուցիայի իր «առաստաղը»՝ տվյալ մարմնավորման համար, ձեզնից շատերն այնուամենայնիվ փորձում են անել անկարելին՝ իրենց հետևից ուժով դեպի պայծառ ապագա տանել դրան անպատրաստ հարազատներին ու ընկերներին։

Սակայն եկեք տեսնենք, թե ինչ է կատարվում ձեր այդպիսի փորձերի ժամանակ նուրբ պլանում, այսինքն էներգետիկական մակարդակում։

Ես ուզում եմ, որ դուք հասկանաք, թե ինչու հաճախ ձեր ջանքերը ոչ միայն ի զորու չեն օգնելու ձեր մտերիմներին, այլև կարող են հենց ձեզ էլ հետ քաշել եռաչափության մեջ՝ այդ կերպ առ ոչինչ դարձնելով ձեր ողջ բազմամյա հոգևոր աշխատանքը, որ տարել եք ինքներդ ձեզ վրա։

Եվ այսպես, վերցնենք ամենատարածված օրինակը, երբ ամուսինն ու կինը հոգևոր զարգացման տարբեր մակարդակներում են։

Ասենք՝ կինը հրաշալի հասկանում է, թե ինչ է կատարվում այժմ Երկրի վրա և անում է իրենից կախված ամեն ինչ, որ մնա Երկրի հետ միևնույն թրթիռային ալիքին՝ այդ կերպ օգնելով թե՛ մոլորակին, թե՛ իրեն կատարելու Անցումը։

Ինչպես արդեն գիտեք, նման մոտեցումը իրադարձությունների նկատմամբ բնորոշ է շատ հինավուրց և մաքուր հոգիներին, որոնք ներկայումս մարմնավորվել են ձեր մոլորակի վրա՝ ֆիզիկական մարմնով Համբարձման փորձը ձեռք բերելու համար։

Բայց միանգամայն հնարավոր է, որ ամուսինը երիտասարդ և անփորձ հոգի է, իսկ գուցե նաև ցածրաթրթիռ էակ՝ մարդկային մարմնի մեջ, այսինքն՝ լիովին նյութական մարդ, որն իրեն հիանալի է զգում երկվության աշխարհում, որտեղ ամեն ինչ նոր է իր համար և հետաքրքիր։

Այդ երկու մարդկանց թրթիռային տարբերությունն այնքան մեծ է, որ նրանց էներգիաները բառացիորեն վանում են միմյանց՝ անկարող լինելով փոխգործակցել այն ահռելի խզվածքի պատճառով, որ առկա է իրենց թրթիռների մակարդակների միջև։

Արտաքուստ դա դրսևորվում է միմյանց նկատմամբ ծնվող մշտական ջղայնությամբ, որն իրենք էլ հաճախ չեն կարողանում բացատրել։

Նրանց թվում է, որ վեճերը ծագում են դատարկ տեղը՝ առանց որևէ նկատելի պատճառի։

Սովորաբար ամեն ինչ տեղի է ունենում աստիճանաբար. իր հոգևոր զարգացմամբ զբաղվող մարդու թրթիռները բարձրանում են, իսկ եռաչափ աշխարհի ազդեցության տակ գտնվողինը՝ իր բոլոր ատրիբուտներով հանդերձ, ընկնում։

Դա հատկապես նկատելի է հիմա, երբ վախը սեփական կյանքի համար, կապված այսպես կոչված «համավարակի» հետ, իր գերին է դարձրել ջահել և տակավին չամրացած հոգիներին։

Ինչ վերաբերում է հին հոգիներին, նրանք հետզհետե սկսում են հասկանալ իր դարն ապրած եռաչափ աշխարհի հանգուցալուծման և վերջնական փլուզման մերձությունը։

Այդպես, ամեն առանձին ընտանիքում ծավալվում է Լույսի և Խավարի ուժերի միևնույն պայքարը՝ ինչպես արտաքուստ տեսանելի, այնպես էլ ներքին՝ անտեսանելի։

Տեղի է ունենում հենց այն շերտավորումը, որն անկարելի է դարձնում թրթռանքով խիստ տարբեր մարդկանց համակեցությունը այդ աշխարհում։

Եվ եթե ֆիզիկական պլանում տարաձայնությունների հաղթահարումն այլևս անկարելի է թվում, ապա էներգետիկական պլանում այն դեռ հնարավոր է։

Ուրեմն ինչպե՞ս պահել Միասնությունն ու Անպայման Սերը՝ կողք-կողքի ապրելով մի մարդու հետ, որը ձեզ վանում է գոյության բոլոր մակարդակներում։

Եվ այստեղ մեն-մի լուծում գոյություն ունի՝ էներգետիկորեն լիովին անջատվել տվյալ մարդուց։

Միայն դա կարող է ձեզ ազատել անառողջ, Տիեզերքի բոլոր Օրենքներին հակասող կախվածությունից՝ թույլ տալով գնալ ձեր ճանապարհով, այն՝ որ ընտրել է ձեր հինավուրց Հոգին, երազելով դուրս պրծնել եռաչափության գերությունից, իսկ դիմացինին թույլ տալ շարունակել իր ուղին, որ ընտրել է եռաչափ խաղերից դեռ չհոգնած նրա երիտասարդ Հոգին։

Եվ իմ հաջորդ ուղերձում ես ձեզ կտամ լիակատար էներգետիկական անջատման մեդիտացիա, որը թույլ կտա ազատվել կախվածության և ուրիշի հանդեպ ունեցած կեղծ պատասխանատվության ծանր բեռից։

ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ԱԶԱՏԱԳՐՈՒՄ (ՊՐԱԿՏԻԿԱ)

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 22 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021 Թ.

Եվ այսպես, որպես [իմ նախորդ ուղերձի](#) շարունակություն, եկե՛ք անցնենք մեդիտացիային, որի նպատակն է էներգետիկորեն լիովին անջատվել ուրիշից:

Կանվանենք այն **«Էներգետիկական ազատագրում»**:

Այն պահանջում է ժամանակ և լրիվ խորասուզում մեդիտատիվ վիճակի մեջ:

Կանչե՛ք այս մեդիտացիային Միքայել Հրեշտակապետին, ձեր բոլոր Երկնային օգնականներին և Տիեզերական Սիրո Կրակի էներգիան:

Երբ լիովին թուլանաք և կտրվեք բոլոր կողմնակի մտքերից, վիզուալիզացրե՛ք այն մարդուն, որի ազդեցությունից որոշել եք լիովին ազատվել:

Շատ կարևոր է, որ տվյալ պահին դուք ոչ մի զգացմունք չունենաք նրա նկատմամբ, ո՛չ դրական, ո՛չ էլ բացասական:

Միայն լիակատար անդատապարտության վիճակում կարելի է իսկապես արդյունավետորեն կատարել այս մեդիտացիան:

Եվ բացատրվում է դա նրանով, որ ձեր ցանկացած զգացմունքը կամ միտքը՝ ուղղված այդ մարդուն, աղավաղում կներբերի այն էներգետիկական տարածության մեջ, որում դուք անցկացնում եք ձեր պրակտիկան:

Ջանացեք պատկերացնել այդ մարդուն և ձեզ երկու համագույն և համաչափ ուրվապատկերների (սիլուետների) տեսքով, որոնք դեմ-դիմաց կանգնած են բավական մեծ հեռավորության վրա:

Այնուհետև ձեր գիտակցությամբ մտեք «ձեր» ուրվապատկերի մեջ, միաձուլվեք նրան ֆիզիկապես և էներգետիկորեն:

«Հարմար տեղավորվեք» նրանում, հարկ եղածին պես զգացեք ձեր բոլոր չակրաներն ու նուրբ մարմինները։

Եվ հետո պատկերացրեք, թե ինչպես են մյուս մարդուց դեպի ձեզ ձգվում հաղորդալարեր, որոնք խոր մխրճվում են ձեր չակրաների և նուրբ մարմինների մեջ։

Որպես կանոն, նման միացումներ նկատվում են հիմնականում ստորին՝ առաջինից հինգերորդ, չակրաներում։

Վերին չակրաների միացումը միշտ բարենպաստ է, որովհետև Միասնություն և Անպայման Սեր է կրում իր մեջ։

Միանգամայն հնարավոր է, որ ֆիզիկական պլանում դուք զգաք, թե ձեր չակրաներից որն է ամենաշատը տուժել այդ մարդու էներգետիկորեն ձեզ «միանալու» հետևանքով։

Շատ հաճախ նման լարերն իրենց ծայրերին ունենում են «ծծիչներ», որոնք օգնում են դրանց մնալ ուրիշի էներգետիկական տարածությունում՝ այդ կերպ մշտական «կապուղի» ապահովելով։

Հենց դրանք են ծակում մարդու նուրբ մարմինները՝ կպչելով հետո անցքերի եզրերին։

Եվ երբ հստակ կտեսնեք տեղի ունեցողի ողջ պատկերը, կանչեք Տիեզերական Սիրո Կրակը և խնդրեք նրան այրել բոլոր էներգետիկական «հաղորդալարերն» ու նրանց ծայրերի «ծծիչ»-թանձրուկները։

Հետևեք, թե ինչպես է բոցը աստիճանաբար, մեկը մյուսի հետևից այրում դրանք ամբողջ երկարությամբ՝ ձեր սեփական չակրաներից մինչև մյուս մարդու չակրաները։

Ոմանք կարող են նույնիսկ տեսնել իրենց նուրբ մարմինների մեջ բացված անցքերը, որոնք մնում են միացման տեղերում։

Երբ այդ ամբողջ գործողությունն ավարտվի, կանչեք Պլազմայի Տիեզերական Էներգիան և խնդրեք նրան «կարկատել» ձեր աուրայի անցքերը։

Զգացեք, թե ինչ քնքշությամբ և միևնույն ժամանակ վստահորեն է աշխատում այդ էներգիան՝ միակցելով անտեսանելի հյուսվածքները և հարթելով կարերը։

Ձեր նուրբ մարմինները աչքի առաջ ամբողջանում են, դառնում հավասար, ողորկ և ընդգրկուն։

Միևնույն բանը կատարվում է նաև մյուս մարդու նուրբ մարմինների հետ, որն էներգետիկորեն անջատվելով ձեզնից՝ նույնպես ձեռք է բերում ամբողջականություն։

Մեդիտացիայից դուրս եկեք միայն այն ժամանակ, երբ կտեսնեք երկու մաքուր և լիովին միմյանցից անջատ ուրվապատկերներ՝ առանց որևէ էներգետիկական կապի։

Այս մեդիտացիայի շնորհիվ դուք միանգամից երկու խնդիր եք լուծում՝ ինքներդ ազատվում եք էներգետիկական կախվածությունից և իր անկախությունն եք վերադարձնում մյուս մարդուն։

Հիմա ձեզնից ամեն մեկը կապրի այն էներգիաների մեջ, որոնք մոտ են իրեն, առանց մյուսին իր կողմը քաշելու, ինչը կործանարար կլիներ երկուսիդ համար էլ։

Իսկ ֆիզիկական պլանում կապրեք յուրաքանչյուրդ ձեր հետաքրքրություններով, չպարտադրելով մյուսին այն, ինչին նա դեռևս պատրաստ չէ։

Այդպես, ձեռք բերելով ներքին ազատություն և անկախություն, դուք կարող եք միանգամայն ներդաշնակորեն գոյակցել եռաչափ աշխարհում, լուծել ընդհանուր կենցաղային խնդիրներ՝ չշոշափելով «վտանգավոր» թեմաները, որոնք ամեն մեկդ յուրովի եք տեսնում։

«ԱՆՁԻ ԵՐԿԱՏՈՒՄ» ՊՐԱԿՏԻԿԱՆ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 23 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021 Թ.

Եվ այսպես, շարունակելով իմ նախորդ ուղերձը, այսօր ուզում եմ ձեզ տալ մի պրակտիկա, որը կօգնի մնալ բարձրաթրթիռ էներգիաների հոսքի մեջ՝ որտեղ էլ որ լինեք և ինչ էլ որ կատարվի ձեր շուրջը:

Այն փոքր-ինչ տարբերվում է նույն թեմայով բոլոր նախորդ պրակտիկաներից, և ամենից առաջ նրանով, որ հաշվի է առնում ձեր գիտակցության արդեն բոլորովին այլ մակարդակը:

Եթե նախկինում, առաջանալով Համբարձման ճանապարհով, երբեմն դեռ վախ կամ կասկած էիք զգում, որ առավելապես լինում էր ձեր շուրջը եղած մարդկանց ազդեցությամբ, ապա հիմա դուք վերջնականապես կողմնորոշվել եք ձեր ձգտումների մեջ, դրա համար էլ ոչ ոք և ոչինչ այլևս չի կարող ազդել ձեզ վրա:

Դուք հասել եք գիտակցականության այն մակարդակին, որ պատրաստ եք պաշտպանել ձեր հոգևոր մարդկային արժեքները նույնիսկ ձեր կյանքի գնով:

Եվ ես տեսնում եմ, որ այդպիսիք արդեն շատ են ձեր մեջ:

Հենց ձեզ էլ, զավակնե՛րս, հասցեագրված է տվյալ պրակտիկան:

Կանվանենք այն **«Անձի երկատում»**:

Այն չի պահանջում ո՛չ մեդիտատիվ վիճակ, ո՛չ էլ առանձնացում:

Դուք միանգամայն կարող եք կատարել այն հընթացս, նույնիսկ գտնվելով բազմության մեջ:

Սակայն պետք է սովորեք հարկ եղած պահին կենտրոնանալ ձեր ներքին վիճակի վրա, «անջատվելով» արտաքին գրգռիչներից:

Դրա համար ընտրե՛ք ձեզ հարմար որևէ բանաձև:

Օրինակ, կարող եք մտովի պարփակել ձեզ անթափանց, այլոց համար անտեսանելի գնդի մեջ՝ արտաքին հայելային պատերով, նման այն գնդին, որ կիրառում եք պաշտպանության համար։

Իսկ ոմանց համար ավելի հեշտ կլինի օգտվել էներգետիկական «ծխածածկույթից», որը կթաքցնի ձեզ կողմնակի աչքից։

Մի խոսքով, ձեզ շրջապատող տարածությունից մեկուսանալու ամեն միջոց հարմար կլինի։

Ինչու՞ է դա այդքան կարևոր։

Ամենից առաջ՝ որովհետև դուք այդ կերպ նշում եք ձեր սեփական սահմանը երրորդ և Հինգերորդ չափումների միջև։

Նշանակում է՝ ձեր բոլոր հետագա գործողությունները տեղի կունենան արդեն եռաչափ աշխարհի սահմաններից դուրս՝ յուրօրինակ «թաքստոցից»։

Տվյալ դեպքում «թաքստոցում» կմնան ձեր բարձրաթրթիռ գիտակցությունը և Հոգին, որոնք ղեկավարում են «սահմանի» մյուս կողմում գտնվող իրենց ֆիզիկական կրողին։

Եվ քանի որ հենց նրանք են առաջ մղում հոգևոր մարդու մտքերը, զգացմունքներն ու արարքները, դեռևս եռաչափ աշխարհում գտնվելով անգամ դուք ձեզ կզգաք և կպահեք ինչպես Հինգերորդ չափման մարդ։

Առաջին հերթին դա կարտահայտվի եռաչափ աշխարհի մարդկանց տեսանկյունից ձեր ոչ համարժեք հակազդեցությամբ (реакция)՝ ի պատասխան շուրջը կատարվող իրադարձություններին։

Դուք այլևս ունակ չեք լինի տրվելու հոտային զգացումին, վախին, խուճապին, ագրեսիային, ջղագրգռությանը։

Դուք կդառնաք իմաստության, համբերանքի և հանգստության հենց այն «ժայռը», որին բախվելով կփշրվեն բացասական էներգիայի բոլոր «ալիքները»։

Ձեզ անհնար կլինի հանել հավասարակշռությունից, որովհետև ձեր գիտակցությունն արդեն կգտնվի ուրիշ իրականության մեջ՝ ուրիշ էներգետիկական տարածությունում, որը ենթակա չէ եռաչափ աշխարհի էներգիաներին։

Իհարկե, զավակնե՛րս, նման հմտությունը միանգամից չի գալիս։

Բայց ես վստահ եմ, որ եթե այժմ սեթ այն կիրառեք ձեր առօրյա կյանքում, շատ արագ կյուրացնեք և ճշմարիտ հավատ ձեռք կբերեք ձեր ուժերի նկատմամբ, որ այնքան կարևոր է հիմա ձեզ համար։

Մի՛ վշտացեք, եթե առաջին անգամից չհաջողվի։

Սա արդեն եռաչափ աշխարհ իջած Աստվածամարդու պրակտիկա է, և շտապողականությունն այստեղ բնավ տեղին չէ։

Սակայն հետագային թողնել նույնպես չի կարելի, որովհետև իրականությունը սկսում է արագորեն փոխվել, և դուք պետք է քաջազեն լինեք՝ միաժամանակ օրինակ տալով և վստահություն ներշնչելով մյուսներին, որ շատ շուտով դուք բոլորդ միասնաբար հաղթանակ կտանեք Չարի Ուժերի նկատմամբ։

Օրհնու՛մ եմ ձեզ և անսահման սիրում. . .

ՀԱՍԿԱՆԱԼԻ ԼԵԶՎՈՎ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021 Թ.

Այսօր մենք կշարունակենք զրույցը, թե ինչպես պետք է ձեզ պահեք երրորդ խտության աշխարհում՝ գիտակցությամբ լինելով արդեն Հինգերորդ չափման մեջ։

Այս ուղերձը կդառնա «Անձի երկատում» պրակտիկայի յուրօրինակ շարունակությունը, բայց այս անգամ շեշտը կդրվի ձեր ֆիզիկական գործողությունների վրա։

Ինչպես գիտեք, եռաչափ աշխարհն ապրում է իր օրենքներով և վարքագծային շաբլոններով։

Այդ իսկ պատճառով, որպեսզի ձեր գործողություններն այդ աշխարհում լինեն արդյունավետ, հարկ է, որ դրանք ինչ-որ չափով սպասելի լինեն։

Եթե ձեր վարքը չափից ավելի անհամարժեք՝ անսովոր լինի շրջապատի մարդկանց համար, դուք ոչ միայն չեք կարողանա դեպի ձեզ տրամադրել նրանց, այլև հակառակը՝ կխրտնեցնեք և կվանեք ձեզնից։

Որպեսզի դա տեղի չունենա, հարկավոր է ձեր գործողությունները համաչափ դարձնել տիրող իրավիճակին և այն մարդկանց գիտակցության մակարդակին, որոնց հետ գործակցում եք։

Եկեք քննենք այսպիսի մի օրինակ։

Այժմ դուք հաճախ կարող եք հայտնվել վտարյալի վիճակում, եթե հանկարծ պատվաստված մարդկանց խմբի մեջ լինեք։

Եվ եթե հարց ծագի, թե ինչու չեք հետևել նրանց օրինակին, դուք պետք է շատ լավ մտածեք՝ ինչ պատասխանել, հաշվի առնելով տվյալ իրավիճակի բոլոր առանձնահատկությունները։

Օրինակ, եթե լրիվ անծանոթ մարդիկ են, որոնց գիտակցության մակարդակը ձեզ հայտնի չէ, պետք է «ներկայացնել» ձեր հրաժարվելու մի այնպիսի պատճառ, որը ծանրակշիռ կլինի ցանկացած մարդու տեսանկյունից. օրինակ՝ որ բժիշկն է արգելել այդ պրոցեդուրան ձեր օրգանիզմի ինչ-ինչ առանձնահատկությունների պատճառով։

Այստեղ կարևորը այդ մարդկանց հնարավոր ագրեսիայի մարումն է։

Իսկ եթե ընկերների խմբում եք, ապա իմանալով յուրաքանչյուրի բնավորության գծերը, կարող եք կատակի տալ և բերել ձեր հրաժարվելու ինչ-որ «ծիծաղաշարժ» պատճառ, բայց այնպես, որ խուսափեք հավանական համոզումներից և «ծանրակշիռ» փաստարկներից՝ պատվաստման օգտին։

Մի խոսքով՝ հասկացրեք նրանց, որ դեռ «չեք հասունացել» նման լուրջ «պրոցեդուրայի» համար։

Սակայն թե՛ առաջին, թե՛ երկրորդ դեպքում հարկ չկա տվյալ խնդրի ձեր իմացություններով վախեցնել մարդկանց, որոնք արդեն կատարել են այդ անդառնալի քայլը։

Հիմա դա օգուտ չի բերի ո՛չ ձեզ, ո՛չ նրանց։

Պարզապես փոխեք խոսակցության թեման, մնալով ընկերական և սրտաբաց՝ ցանկացած այլ թեմայով զրույցի համար։

Հենց նման իրավիճակներում է դրսևորվում ձեր գիտակցության մակարդակը, որը թույլ է տալիս ձեզ գործել Տիեզերական Օրենքների համաձայն՝ երրորդ խտության աշխարհում։

Դուք չեք ճնշում ուրիշ մարդու կամքը, չեք դատում նրան, ագրեսիա չեք զգում նրա նկատմամբ, այլ անվերապահորեն ընդունում եք նրան այնպիսին, ինչպիսին կա, միաժամանակ անձեռնմխելի պահելով սեփական ազատությունն ու աշխարհընկալումը՝ ոչ ոքի թույլ չտալով մտքով կամ զգացմունքով ներխուժել ձեր էներգետիկական տարածություն։

Դուք մտովի «եզրագծել եք» ձեր գիտակցության և Հոգու կեցության սահմանները Հինգերորդ չափման աշխարհում, բայց ձեր գործողությունները եռաչափ տարածության մեջ էլ չեն խախտում համընդհանուր նորմերը։

Այդպես դուք կկարողանաք պահպանել հարգանքը թե՛ ձեր, թե՛ շրջապատի մարդկանց նկատմամբ։

Որպես կանոն, ագրեսիան և ջղագրգռությունը ձեր նկատմամբ դրսևորվում են լոկ այն ժամանակ, երբ ջնջվում են ձեր արթնացած գիտակցության և ֆիզիկական պլանում ձեր գործողությունների միջև գծված սահմանները, որը բերում է ձեր թրթիռների կտրուկ անկման։

Այդ դեպքում դուք դյուրին «որս» եք դառնում ցածրաթրթիռ մարդկանց համար՝ հաճախ իջնելով գիտակցության և վարքի նրանց մակարդակին։

Դրա համար էլ խնդրում եմ, զավակնե՛րս, սովորե՛ք որոշել երկու աշխարհները զատող սահմանները՝ դրսևորելով ձեզ միաժամանակ և՛ մեկում, և՛ մյուսում, բայց տարբեր հիպոստասներով։

Եվ թող դա դառնա ձեր սովորությունը, որովհետև մի աշխարհից Անցումը ուրիշ աշխարհ մի ժամվա բան չէ, և ինչ-որ ժամանակ դուք պետք է ապրեք այդ աշխարհների հատման կետում, բայց արդեն նոր՝ Տիեզերական Օրենքներով։

Եվ ես օրհնում եմ ձեզ, որ այդպես լինի. . .

ԱԶԱՏԱԳՐՈՒՄ «ԿԵՆՎՈՐՆԵՐԻՑ» (ՊՐԱԿՏԻԿԱ)

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021 Թ.

Այսօր մենք միասին կքննենք ևս մի ասպեկտ, որն առնչվում է նոր բարձրաթրթիռ էներգիաներ ընդունելու մարդու ունակությանը։

Եվ խոսքը կվերաբերի այն մարդկանց, որոնց մարմնում երկու հոգի կա։

Քանի որ նման մարդիկ Երկրի վրա քիչ չեն, ես ուզում եմ նրանց տալ մի հատուկ պրակտիկա, այն կօգնի ազատվել կենվոր-հոգուց, որն իր նուրբնյութական կառույցի պատճառով ունակ չէ ընդունելու նոր բարձրաթրթիռ էներգիաները։

Այդպես, ազատվելով անցանկալի հարևանությունից, այդ մարդիկ կվերագտնեն իրենց Աստվածայնությունը լիովին, այլ ոչ թե մասնակիորեն՝ «երկու աթոռի նստած», ինչպես եղել է առաջ։

Ես խորհուրդ եմ տալիս, զավակնե՛րս, որ ձեզնից ամեն ոք անի այս պրակտիկան, և ահա թե ինչու։

Նույնիսկ եթե դուք միակ և մաքուր մարդկային Հոգու տեր եք, միանգամայն հնարավոր է, որ ձեր էներգետիկական տարածությունում հաստատված լինի աստրալ աշխարհի մի կենվոր, որն արգելակում է ձեր հոգևոր զարգացումը, այսինքն՝ նաև նոր Աստվածային էներգիաների լիարժեք ընդունումը, որոնք այժմ գալիս են Երկիր։

Սա ունիվերսալ պրակտիկա է, որն ուղղված է թե՛ ձեր էներգետիկական տարածությունից և թե՛ ֆիզիկական մարմնից քշելու ցանկացած օտարածին բնակչի, հոգի լինի թե էություն։

Կանվանենք այն **«Ազատագրում “կենվորներից”»**։

Նախ և առաջ հարկավոր է կանչել ձեր բոլոր Երկնային օգնականներին և մտնել բավական խոր մեդիտատիվ վիճակի մեջ։

Այնուհետև կանչե՛ք Տիեզերական Սիրո Կրակը և խնդրե՛ք մանրակրկտորեն և մեթոդաբար սքանավորել ձեր ամբողջ էներգետիկական տարածությունը, որն իր մեջ ներառում է ձեր բոլոր նուրբ մարմիններն ու ֆիզիկական մարմինը։

Մի՛ շտապեք, ջանացե՛ք զգալ այդ էներգիայի աշխատանքը ձեր էության բոլոր մակարդակներում։

Ընդ որում, չներգրավե՛ք ձեր երևակայությունը, ձգտե՛ք մտնել լիակատար անմտքության վիճակի մեջ։

Դա անչափ կարևոր է, որովհետև ինքը պրակտիկան ենթադրում է օտարածին հյուրերի առկայություն ձեզ մոտ, այսինքն, ներգրավելով ձեր Միտքը, դուք կարող եք ձեր մտքերով ու վախերով դեպի ձեզ ձգել աստրալ էություններին, նույնիսկ եթե մինչ այդ դրանք չեն եղել ձեր էներգետիկական տարածության մեջ։

Համարե՛ք այս պրակտիկան ձեր Հոգու և բոլոր նուրբ մարմինների մաքրությունը երաշխավորող պրոֆիլակտիկա։

Եվ այսպես, զգալով Տիեզերական Սիրո Կրակի աշխատանքը ձեր էներգետիկական տարածության մեջ, այնուհետև դիմե՛ք Միքայել Հրեշտակապետին՝ խնդրելով քշել ձեր ֆիզիկական մարմնից ոչ

աստվածային հոգուն, որը հանիրավի գրավել է այն, ինչպես նաև աստրալ էություններին, եթե այդպիսիք թափանցել են ձեր նուրբ մարմինների մեջ։

Խնդրե՛ք ձեր բոլոր Երկնային օգնականներին մասնակցել այդ աշխատանքին, որպեսզի ձեր ֆիզիկական մարմինը և բոլոր նուրբ մարմինները վերագտնեն իրենց նախնական Աստվածային մաքրությունը։

Դարձյալ ձգտեք լիովին անջատել ձեր Միտքը՝ չխառնվելով Լույսի Ուժերի այդ սրբազան աշխատանքին և նրա մեջ չներմուծելով ձեր մտքերը, զգացմունքներն ու թրթիռները։

Զգացե՛ք ձեզ ինչպես մի Աստվածային անոթ, որ ժամանակավորապես տվել եք Լույսի Ուժերին մաքրման և նորացման նպատակով, որն անհրաժեշտ է ձեզ կեցության նոր՝ ավելի բարձր մակարդակ տեղափոխվելու համար։

Լիովի՛ն վստահեք նրանց, և նրանք կվերադարձնեն այն ձեզ նորացված, մաքուր, շողշողուն և բարձրաթրթիռ։

Եվ երբ զգաք, որ հոսանքը հանդարտվել է, կանչե՛ք Համբարձման Էներգիան և պարարե՛ք նրանով ձեր «անոթը», որն ավելի պայծառ կշողա նրա ծիածանագույն ճաճանչների մեջ։

Իսկ որպեսզի ամրապնդեք այդ սրբազան աշխատանքի արդյունքները, չմոռանա՛ք, զավակնե՛րս, մշտապես գտնվել Համբարձման Էներգիայի պաշտպանական գնդի մեջ և ամենակարևորը՝ չծակծկե՛ք այն ներսից ձեր բացասական մտքերով ու զգացմունքներով, որը կարող է ոչ միայն ի չիք դարձնել այս Աստվածային պրակտիկայի արդյունքները, այլև կրկին ձեր էներգետիկական տարածության և ֆիզիկական մարմնի մեջ ներձգել անցանկալի հյուրերին։

Օրհնում եմ ձեզ և անսահման սիրում. . .

Բացարձակ-Հայրը խոսեց ձեզ հետ

ԳԼՈՒԽ V

ՏԻԵԶԵՐՔԻ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՈՒ ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԵՐՔՆԵՐԻ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Բացարձակ-Հոր ուղերձները, թելադրվել են 2019 Թ. հուլիսի 5 – 11

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՄԱՐԴՈՒ ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԵՐՔՆԵՐԻ ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

2. ԵՐԿՐԻ ՏԱՐԵՐՔԸ ԵՎ ՄԱՐԴԸ

3. ՋՐԻ ՏԱՐԵՐՔԸ ԵՎ ՄԱՐԴԸ

4. ՕԴԻ ՏԱՐԵՐՔԸ ԵՎ ՄԱՐԴԸ

5. ԿՐԱԿԻ ՏԱՐԵՐՔԸ ԵՎ ՄԱՐԴԸ

6. ՍԻՐՈ ՏԱՐԵՐՔԸ ԵՎ ՄԱՐԴԸ

7. ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՌՆՈՒՄ (ՊՐԱԿՏԻԿԱ)

ՄԱՐԴՈՒ ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԵՐՔՆԵՐԻ ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Ողջունում եմ ձեզ, իմ սիրասու՛ն զավակներ։

Այսօր մենք կխոսենք մարդու և բնության տարերքների էներգետիկական փոխազդեցության մասին։

Ես ուզում եմ բացել ձեզ այդ փոխազդեցության նրբագույն մեխանիզմները, որը կօգնի կարգավորել ձեր փոխհարաբերություններն այնպես, որ հավասարակշռված բնույթ կրեն՝ առանց այս կամ այն կողմ շեղվելու։

Եվ ահա թե ինչ նկատի ունեմ ես։

Եռաչափ աշխարհում ապրող մարդը տեսնում է Երկրի վրա տեղի ունեցող իրադարձությունների «պատկերի» միայն մի մասը,- առավելապես այն, ինչ կատարվում է իր շուրջը և վերաբերվում է անձամբ իրեն։

Շատ քչերին է տրված հասու լինել բնության պրոցեսների և նրանց փոխադարձ կախվածության ողջ «բազմաչափությանը»։

Բնության Տարերքները նույնպես ապրում են Տիեզերքի Օրենքներով, բայց ի տարբերություն մարդու՝ նրանց ներդաշնակեցնում է ինքը բնությունը, քանի որ նրանք իր անբաժանելի մասն են։

Նրանց հավասարակշռությունը խախտվում է միայն այն ժամանակ, երբ իրենց էներգետիկական տարածություն են ներխուժում ցածր թրթռանքի էներգիաներ։

Իսկ եթե դրանք ուղեկցվում են նաև ամենաբացասական բնույթի ֆիզիկական դրսևորումներով, բնության տարերքը «հիվանդանում է», ճիշտ ինչպես մարդը, որը քայքայում է իրեն բացասական զգացմունքներով, որոնք իրենց հետ բերում են ֆիզիկական հիվանդություններ։

Սակայն եթե մարդու էներգետիկական տարածությունը սահմանափակվում է նրա նուրբ մարմինների շրջանակով, ապա բնական տարերքների էներգետիկական տարածությունը սփռվում է ձեր ամբողջ մոլորակով մեկ։

Հողը, Օդը, Ջուրը, Կրակը, Սերը սահմաններ չեն ճանաչում։

Նրանք իրենց էներգետիկական տարածությունների մեջ են ներառում ամբողջ Երկիրը և Երկրի յուրաքանչյուր բնակչի։

Նրանք անքակտելիորեն կապված են միմյանց և ձեր մոլորակի վրա բնակվող ամեն մի կենդանի արարածի հետ։

Եվ եթե բնական տարերքները կարող են հրաշալի գոյատևել իրենք իրենցով, Երկրի բնակիչները լիովին կախված են նրանցից յուրաքանչյուրից։

Դա վերաբերվում է բոլորին՝ բույսերին, կենդանիներին, մարդկանց։

Խոտի ոչ մի ցողունիկ չի կարող աճել առանց հողի, ջրի, օդի և արևի։

Ինչպես և՝ մարդը, որն ապրում է միայն նրանց շնորհիվ։

Եվ բոլորի վրա իշխում է Սիրո տարերքը, որը մեծագույն իմաստն է հաղորդում Երկրի վրա ապրող բոլոր կենդանի էակների գոյությանը։

Բոլոր հինգ բնական տարերքներն արդեն ապրում են միմյանց հետ Միասնության մեջ, այսինքն՝ միաբևեռ աշխարհում։

Իսկ հիմա պատկերացրեք, թե որքան ցավագին է խոցում մարդու անմիտ ու բարբարոս ներխուժումը այդ չքնաղ, ներդաշնակ, Աստվածային աշխարհ. . .

Իմ հաջորդ ուղերձներում ես հանգամանորեն կպատմեմ բնական տարերքներից յուրաքանչյուրի հետ ձեր էներգետիկական փոխազդեցության և այն մասին, թե ինչպես կարող եք ներդաշնակ ապրել նրանց հետ։

ԵՐԿՐԻ ՏԱՐԵՐՔԸ ԵՎ ՄԱՐԴԸ

Եվ այսպես, ես կսկսեմ իմ պատմությունը **Երկրի (Հողի) Տարերքից**։

Ինչպիսի՞ն է մարդու հետ ունեցած նրա փոխազդեցության էներգետիկական մեխանիզմը։

Մարդկության արշալույսին, երբ Երկիրը և մարդիկ միաբևեռ աշխարհում էին և Սիրո միասնական էներգետիկական տարածության մեջ, նրանք միմյանց հետ լիակատար ներդաշնակության մեջ էին ապրում։

Կլիման փափուկ էր և ապրելու համար հարմարավետ։ Հողը կերակրում էր մարդկանց իր բարիքներով, իսկ մարդիկ դրա դիմաց իրենց Սերն ու Շնորհակալությունն էին պարգևում Հողին։

Այն ժամանակներում մարդիկ Երկիրն անվանում էին ոչ այլ կերպ, քան Կերակրող մայր և Գեղեցկուհի մայր. . .

Նրանք տոնահանդեսներ էին անում Երկրի պատվին, դիմում էին նրան որպես բարձրագույն բանական էակի։

Մարդկանց համար նա շատ մտերիմ էր, հարազատ, կենդանի, շռայլ ու բարեբեր։

Սակայն մարդու՝ եռաչափ աշխարհ իջնելու համեմատ, որտեղ տիրում էին արդեն երկվության էներգիաները, մարդու և Երկրի հարաբերությունները սկսեցին սրընթաց փոխվել։

Այդ աշխարհում արդեն գերիշխում էր մարդկային Էգոն, որը բարձր էր դասում իրեն Երկրի վրա եղած բոլոր կենդանի էակներից, այդ թվում նաև հենց իրենից՝ Երկրից։

Երկվության օտարոտի էներգիաները ցավալիորեն խոցում էին Երկրի Տարերքին։

Դրանք հետզհետե նստում էին նրա նուրբ մարմինների վրա և, ավելի ու ավելի ցած իջնելով, հետզհետե աղտոտում էին նրա եթերային

մարմինը, ճիշտ այնպես, ինչպես լինում է նսեմ կրքերով բռնված մարդու հետ։

Սակայն այս դեպքում ողջ չարիքը գալիս էր դրսից, քանի որ ինքը՝ Երկրի Տարերքը, Աստվածային է և մաքուր։

Այդպես, աստիճանաբար, Երկրի եթերային մարմնի ցավը սկսեց իջնել նրա ֆիզիկական մարմնի վրա և քայքայել այն արդեն ներսից։

Ձեր մոլորակում «առաջադեմ» տեխնոլոգիաների ի հայտ գալով Երկրի տառապանքը դարձավ անտանելի։

Մարդը սկսեց անխնա շահագործել նրան, թունավորել քիմիկատներով, պայթեցնել մակերևույթը՝ օգտակար հանածոներ հայթայթելու նպատակով, աղտոտել տոննաներ կշռող արդյունաբերական թափոններով։

Եվ որպեսզի ինչ-որ կերպ պաշտպանի իրեն, Երկիրը ստիպված եղավ դիմադրել, ինչպես ֆիզիկական, այնպես էլ էներգետիկական մակարդակում։

Ֆիզիկական մակարդակում դա դրսևորվեց հողի ուժասպառության և անպտղության, երկրաշարժների և սողանքների տեսքով, իսկ էներգետիկական մակարդակում՝ մարդկանց էին վերադառնում այն էներգիաները, որ նրանք ուղարկում էին Երկրին։

Երբեմն մարդիկ չէին հասկանում, ինչու էր իրենց պատժում Մայր Երկիրը, քանի որ նրանց թվում էր, թե իրենք ոչ մի վնաս չէին հասցնում նրան։

Բայց, ինչպես արդեն ասվել է [իմ նախորդ ուղերձում](), Երկրի (Հողի) Տարերքը միասնական օրգանիզմ է, որն իր էներգետիկական դաշտով ընդգրկում է ձեր ամբողջ մոլորակը, դրա համար էլ նրա հիվանդությունը, որի պատճառը մարդու դաժան և բարբարոս վերաբերմունքն է, կարող է ի հայտ գալ նրա ցանկացած «օրգանում»՝ երկրագնդի ցանկացած վայրում։

Եվ քանի դեռ մարդիկ չեն գիտակցել իրենց պատասխանատվությունը ոչ միայն իրենց, սեփական ընտանիքի, քաղաքի, երկրի, այլև ՈՂՋ

ԵՐԿՐԻ ՀԱՄԱՐ ընդհանրապես, Երկրի Տարերքը կտառապի և կստիպի տառապել միլիոնավոր մարդկանց։

Եվ դա տեղի է ունենում ոչ թե նրա դաժանության պատճառով, այլ որովհետև այդպես են գործում Տիեզերքի Օրենքները։

Իզուր չէ, որ նույնիսկ ձեր ամենատարածված ասացվածքը՝ «Ինչ ցանես, այն էլ կհնձես», կապված է Մայր Երկրի հետ, բայց նրա իմաստը տվյալ դեպքում շատ ավելի լայն է ու խորունկ՝ ինչպես վերաբերվես Երկրի Տարերքին, այն էլ կստանաս նրանից ի պատասխան։

Մի՛շտ հիշեք այս մասին, զավակնե՛րս...

ՋՐԻ ՏԱՐԵՐՔԸ ԵՎ ՄԱՐԴԸ

Իսկ հիմա եկեք խոսենք Ջրի Տարերքի մասին՝ նրա հետ ունեցած ձեր էներգետիկական փոխազդեցության մասին։

Ջրի Տարերքն ապրում է յուրաքանչյուրիդ մեջ, որովհետև փաստացի ջրից է բաղկացած ձեր ամբողջ օրգանիզմը, իսկ դա նշանակում է, որ ձեր փոխգործակցությունը նրա հետ ավելի սերտ է։

Իմ ուղերձներում արդեն բազմիցս խոսվել է ջրի հետ ունեցած ձեր փոխազդեցության և այն մասին, որ կախված էներգիաներից, որոնցով մարդը տոգորում է ջուրը, փոխվում է ջրի մոլեկուլային կազմը. ձեր հղած մտքերով և զգացմունքներով դուք կարող եք թե՛ թունավորել, թե՛ սրբագործել այն։

Բայց հիմա մենք շեշտը կդնենք ջրի՝ ձե՛ր վրա ունեցած էներգետիկական ազդեցության վրա։

Եվ այստեղ ձեզ սպասում են բազմաթիվ անակնկալներ, քանի որ մինչ այժմ մարդու մտքով անգամ չի անցել, թե որքան նուրբ ու անդառնալի պրոցեսներ են տեղի ունենում ցածր թրթիռներով հագեցած ջրի մեջ։

Սկսենք նրանից, որ ամեն անգամ, երբ դուք ցածրաթրթիռ էներգիաներ եք արտածում դուրս, Ջրի Տարերքի այն մասնիկը, որն ապրում է ձեր օրգանիզմում, փոխում է իր կազմը, այսինքն՝ թերություններ են առաջանում ամբո՛ղջ Ջրի Տարերքի նուրբ մարմիններում։

Իսկ հիմա պատկերացրեք Երկրի միլիարդավոր բնակիչներին, երկվության աշխարհում, որտեղ բացասական էներգիաներն արդեն դարձել են կյանքի նորմ, իսկ ոմանց համար էլ՝ գոյության միջոց։

Ջրի Տարերքի էներգետիկական մարմինն արդեն այնքան «վիրավոր» է, որ իր գոյությունը նա պահում է սոսկ մարդկային հոգևոր մաքրության,- ներքին և արտաքին,- Երկրի վրա դեռևս մնացած «կղզյակների» շնորհիվ։

Ներքին մաքրությունը ենթադրում է Սիրո էներգիայի գերակշռության մարդու մեջ, իսկ արտաքին մաքրությունը՝ հոգատար վերաբերմունք ջրային ռեսուրսների նկատմամբ։

Այն, ինչ կատարվում է մեծ քաղաքների մերձակա գետերի, լճերի, ծովերի և օվկիանոսների հետ, չի կարելի անվանել այլ կերպ, քան բարբարոսություն։

Ինքն էլ չիմանալով՝ մարդը դառնում է ինքնասպան, որովհետև, զրկելով իրեն խմելու ջրի մաքուր աղբյուրներից, նա ինքն իրեն դատապարտում է անխուսափելի և տանջալից մահվան։

Մարդկանց մեծ մասը չի էլ մտածում այդ մասին։ Նրանց թվում է, թե Երկրի ջրային պաշարներն անսպառ են։ Իրականում, մարդկանց ճառագած բացասական էներգիաների կրիտիկական զանգվածը, երկրային ջրամբարների անխնա աղտոտման հետ համատեղ, վաղուց սպառնում է հատել անդառնալիության գիծը։

Եվ Ջրի Տարերքը, ըմբոստանալով, սկսում է ի հայտ բերել իր բողոքը արդեն ֆիզիկական պլանում, ինչն էլ տեղի է ունենում ներկայումս համատարած կերպով։

Հիվանդ և վիրավոր՝ նա հեղվում է Երկրի վրա հորդ անձրևների տեսքով, առաջ բերելով ջրհեղեղներ, ծնունդ տալով ցունամիների, որոնք սրբում են իրենց ճանապարհին ամեն ինչ։

Նա ծածկում է Երկիրը ձյունով ու կարկտով երբեմն շատ անսպասելիորեն՝ տեղի և եղանակի տեսանկյունից։

Եվ դա տեղի է ունենում միևնույն պատճառով. Ջրի Տարերքը սահման չի ճանաչում, ո՛չ տարածական, ո՛չ ժամանակային։

Նա իր մեջ ընդգրկում է բովանդակ Երկիրը, Երկրի բոլոր բնակիչներին։

Հետևաբար, նրա հիվանդությունը, որի պատճառը մարդիկ են՝ իրենց էգոիզմով և նսեմ կրքերով, կարող է դրսևորվել ձեր մոլորակի ցանկացած կետում։

«Բումերանգի» օրենքը ոչ ոքի չի խնայում, որքան էլ անբացատրելի և անարդարացի թվա դա անհաղորդ մարդու տեսանկյունից։

Եվ միայն մարդկանց անսահման Սերն ու Շնորհակալությունը Ջրի Տարերքի նկատմամբ կարող է բուժել այն սարսափելի հիվանդությունը, որը տիրել է նրան և որի դրսևորումները դուք տեսնում եք հիմա ձեր ամբողջ մոլորակում։

ՕԴԻ ՏԱՐԵՐՔԸ ԵՎ ՄԱՐԴԸ

Այսօր մենք կխոսենք Օդի Տարերքի հետ ունեցած ձեր փոխազդեցության մասին։

Ինչպես ինքներդ էլ հասկանում եք, այն նույնքան ուժեղ է, որքան Ջրի Տարերքի հետ ունեցած ձեր փոխազդեցությունը, որովհետև մարդը մի քանի րոպե անգամ չի կարող ապրել առանց շնչելու։

Օդի Տարերքը հիրավի մեծ է և ամենակարող, քանի որ ընդգրկում է ոչ միայն Երկրի ամբողջ տարածքը, այլև երկրամերձ տարածությունը,

որտեղ նա փոքր-ինչ ուրիշ որակ է ձեռք բերում, որովհետև ավելի նոսր է դառնում։

Հենց Օդի Տարերքի օրինակով կարելի է հրաշալի տեսնել, որ Երկրի վրա եղած ցանկացած սուբստանցի էներգետիկական և ֆիզիկական բոլոր պարամետրերը կախված են մեկը մյուսից։

Ինչպես որ թրթիռների բարձրանալու հետ նոսրանում են մարդու նուրբ մարմինները, այնպես էլ օդն է ավելի ու ավելի նոսրանում՝ առավել մաքուր էներգիաների տիրույթում հայտնվելու համեմատ։

Դա հրաշալի գիտեն լեռնագնացներն ու լեռնադահուկորդները։

Եվ եթե մարդու համար դժվար է շնչել նոսրացած օդում, ինչը թուլացնում է նրա օրգանիզմը, ապա իր՝ Օդի Տարերքի համար դա իսկական փրկություն է, որովհետև այդ Տարերքն իրեն իսկապես առողջ և երջանիկ է զգում միայն Երկրի էներգապես մաքուր վայրերում, որպիսին, օրինակ, լեռներն են։

Հենց այնտեղ է տեղի ունենում նրա ինքնամաքրումը ծանր, կեղտոտ շոգիներից, որոնցով ներծծված են մեծ քաղաքները։

Դա կատարվում է այդ Տարերքի օդային զանգվածների վերաբաշխման՝ դրանց միախառնման և աղտոտվածության ցուցանիշի որոշակի միջինացման շնորհիվ։

Ավելի լավ պատկերացնելու համար այդ պրոցեսի էներգետիկական մեխանիզմը, Երկիրը պատկերացրեք փուչիկի տեսքով։

Օդի Տարերքը, որը դրա ներսում է, ՄԻԱՄՆԱԿԱՆ Է ԵՎ ԱՆՏՐՈՀԵԼԻ, այդ պատճառով էլ թունավոր նյութերի արտանետումը մթնոլորտ, ձեր մոլորակի ցանկացած հատվածում, ազդում է փուչիկի մեջ եղած ողջ օդային տարածության վրա։

Նույն բանը կատարվում է նաև «թունավոր» բացասական էներգիաների հետ, որ իրենց մեջ արտադրում են միլիարդավոր մարդիկ, շնչառության պրոցեսում իրենց միջով անցկացնելով օդի հսկայական քանակություն։

Այս առումով մարդկությունը նման է օդը էներգապես փոխակերպող մի ահռելի վերամշակման «գործարանի»։

Ոմանք դուրս են բերում մաքրամաքուր «արտադրանք»՝ զտված Սիրո էներգիայով, ոմանք էլ է՛լ ավելի են աղտոտում այն իրենց բացասական մտքերով և զգացմունքներով՝ արտաշնչելով իրենց իսկ ապականած թունավոր օդը։

Սրան հավելեք արդյունաբերական և ատոմային ձեռնարկությունները, և կտեսնեք իր կենսագործունեության բոլոր դրսևորումներում մարդու և Օդի Տարերքի միջև եղած անընդհատ, կործանարար էներգափոխանակության անմխիթար պատկերը։

Բոլոր մրրիկները, փոթորիկներն ու պտտահողմերը, որ վերջին ժամանակներս անցնում են ամբողջ Երկրով մեկ, ոչ այլ ինչ են, եթե ոչ Օդի Տարերքի հակազդեցությունը իր նկատմամբ դրսևորված բարբարոսական վերաբերմունքին։

Եվ կանգնեցնել այդ պրոցեսը կարող է միայն մարդն ինքը՝ ոգեպես մաքրվելով և փոխելով վերաբերմունքը իր Երկրի, հետևաբար նաև Օդի Տարերքի նկատմամբ։

ՄԻԱՅՆ էներգապես մաքուր փոխանակությունը՝ տոգորված Սիրով և Շնորհակալությամբ ձեզ կյանք տվող այդ Տարերքի նկատմամբ, կարող է կանգնեցնել Երկրի վրա ներկայումս ընթացող ավերիչ պրոցեսները։

Եվ ես օրհնում եմ ձեզ, որ այդպես լինի, զավակնե՛րս. . .

ԿՐԱԿԻ ՏԱՐԵՐՔԸ ԵՎ ՄԱՐԴԸ

Այսօր մենք կխոսենք Կրակի Տարերքի հետ ունեցած ձեր փոխազդեցության էներգետիկական մեխանիզմի մասին։

Սակավաթիվ մարդիկ են իրենց հաշիվ տալիս, թե որքան սերտորեն եք դուք բոլորդ կապված այս Տարերքի հետ, դրա համար էլ ես ուզում եմ ավելի մանրամասնորեն պատմել նրա մասին։

Ի՞նչ է Կրակի Տարերքը։

Եթե շատ համառոտ ձևակերպենք, այն Արեգակի էներգիան է՝ տարածության մեջ բեկված և հարմարեցված Երկրի վրա ապրող բոլոր կենդանի էակներին։

Եվ ինչպես ամեն էներգիա, այն փոփոխվում է՝ կախված նրանից, թե ում դաշտում է հայտնվում՝ ինչ թրթիռների է դիպչում։

Ինչու՞ է մարդը տենդի մեջ ընկնում զայրույթի, խանդի, ագրեսիայի պոռթկումից։

Լոկ այն պատճառով, որ նման ուժգին բացասական հույզերի արտազեղումների հետևանքով հավասարակշռությունից դուրս է գալիս Կրակի Տարերքը, որի մասնիկն ապրում է յուրաքանչյուր մարդու օրգանիզմում։

Երբ մարդը հանգիստ, հավասարակշիռ վիճակում է, նրա մարմնում պահպանվում է հավասար և իր համար հարմարավետ ջերմաստիճան, քանի որ նրա թրթիռները ռեզոնանսի մեջ են մտնում Կրակի Տարերքի հետ իր իդեալական՝ Երկրի վրա մարդու կյանքի համար հարմարեցված վիճակում։

Ջերմությունը, որ պարգևում է ձեզ Կրակի Տարերքը, նույնպիսի կարևոր բաղադրիչ է ձեր օրգանիզմի կենսագործունեության համար, ինչպես Ջուրը և Օդը։

Առանց ջերմության մարդը կմեռնի։

Բայց նա կմեռնի նաև չափից ավելի ջերմությունից։

Թե՛ առաջինը, թե՛ երկրորդը լինում է նրանից, որ Կրակի Տարերքը այս կամ այն պատճառով ելնում է հավասարակշռությունից, ինչը հանգեցնում է մարդու համար կործանարար հետևանքների։

Կրակն իր մաքուր վիճակով մահ է բերում մարդուն։ Եվ, իհարկե, այն հայտնվում է ոչ պատահաբար։

Վերջին ժամանակներս Երկրի վրա առաջացող անկանոն տապը և բնական հրդեհները գլխավոր ախտանշաններն են այն բանի, որ մարդկությունը լուրջ հիվանդ է։

Երկրի այդ «տենդը» ցույց է տալիս մարդկանց, որ նրանց ճառագած բացասական էներգիաներն արդեն անցել են բոլոր թույլատրելի սահմանները, և Կրակի Տարերքն ապստամբել է՝ չունենալով ոչ մի ուրիշ հնարավորություն ցույց տալու մարդկանց, թե որքան ցած են ընկել նրանք։

Այս «մաքրումը կրակով» կոչված է վերածնելու մարդկանց մեջ նրանց բնատուր մաքրությունն ու հոգևորությունը։

Եվ իսկապես, հաճախ է պատահում, որ հրդեհներից հետո, որոնք երբեմն բերում են մարդկային զոհերի և կացարանի կորստի, մարդիկ, կարծես ուշքի գալով թմբիրից, սկսում են այլ կերպ նայել իրենց կյանքին։

Ցավոք, լոկ իսկական ողբերգություններից հետո է մարդկանց մեջ տեղի ունենում արժեքների վերարժևորում, և առաջին պլան է ելնում այն հավերժականը, Աստվածայինը, որ ապրում է ամեն մարդու մեջ, բայց որին կլանում է եռաչափ աշխարհն իր արհեստական, մարդկային Հոգուն օտարոտի արժեքներով։

Եվ ես տեսնում եմ, որ ձեզնից շատերն արդեն հասկացել են, որ Երկրի վրա ավելացող բնական աղետները ոչ այլ ինչ են, եթե ոչ ձեր մոլորակի մաքրում, ավելի ճիշտ՝ մարդկային գիտակցության մաքրում Երկրի, Ջրի, Օդի և Կրակի Տարերքներով։

Այդ կերպ բնական տարերքները փորձում են ձեզ ցույց տալ, թե ինչքան ՄԻԱՄՆԱԿԱՆ ԵՔ ԴՈՒՔ ԲՈԼՈՐԴ և ինչքան ԿԱԽՎԱԾ ԵՔ ԷՆԵՐԳԱՊԵՍ ՄԵԿԴ ՄՅՈՒՍԻՑԴ։

Հավատացե՛ք, զավակնե՛րս, այդ տարերքներն ամենևին էլ չեն ուզում ցավ ու տառապանք պատճառել ձեզ, սակայն ոչ ոք չի կարող կասեցնել Տիեզերքի Օրենքների աշխատանքը։

Ինչ ցանես, այն էլ կհնձես. . .

Ես շատ եմ ուզում, սիրելինե՛րս, որ դուք ցանեք միմիայն Սեր և Բարություն։

Եվ այդ ժամանակ բոլոր բնական տարերքները ձեզ նույն կերպ կպատասխանեն. Երկիրը կդառնա առատաձեռն ու բերրի, Ջուրը և Օդը՝ մաքուր ու վճիտ, իսկ Արեգակը՝ քնքուշ ու գորովալից։

Մի՛շտ հիշեք, որ իսկական հրաշքներ կարող են արարել միայն Սերն ու Շնորհակալությունը։

ՍԻՐՈ ՏԱՐԵՐՔԸ ԵՎ ՄԱՐԴԸ

Այսօր մենք կզրուցենք Սիրո Տարերքի մասին, որը ամենահզորն է ոչ միայն Երկրի վրա, այլև բովանդակ Տիեզերքում։

Ինչու՞ եմ ես տարերք կոչում նրան։

Լոկ այն պատճառով, որ նա, ինչպես մյուս չորս տարերքները՝ Երկրի, Ջրի, Օդի և Կրակի, էներգետիկորեն փոխգործակցում է Երկրի և նրա բոլոր բնակիչների հետ։

Բայց ի տարբերություն մյուս տարերքների, նրա փոխազդեցությունը ձեզ հետ փոքր-ինչ այլ բնույթ է կրում։

Սիրո Տարերքը մի՛շտ մնում է իրադրությունից ՎԵՐ՝ միտք ու զգացմունք լինի, թե որոշակի գործողություն։

Նա ոչ մի դեպքում չի կարող իջեցնել իր թրթռանքը, քանի որ ի սկզբանե գոյություն է ունեցել որպես Տիեզերքում եղած ամենայն բանի միավորիչ Աստվածային սկիզբ։

Այդպիսով, նա կարող է և՛ պարարել ձեզ իր էներգիայով, և՛ Սիրո էներգիա ընդունել ձեզնից։

Ցածր թրթռանքի էներգիաները ոչ մի պարագայում ունակ չեն հասնելու նրան. դրանք պարզապես կլուծվեն նրա ճառագայթների մեջ։

Դուք կարող եք հարցնել ինձ՝ «Իսկ ինչու՞ այդ ամենազոր էներգիան չի կարող լուծել իր մեջ Երկրի վրա եղած ողջ չարիքը, երբ կանչում ենք նրան մեր մեդիտացիաներին»։

Նա անկարող է դա անել այն պարզ պատճառով, որ Տիեզերքի Օրենքների տեսակետից դա կդիտվի որպես միջամտություն մարդկության ազատ կամքին։

Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է մարդկության հավաքական գիտակցությանը, որը տակավին չի բարձրացրել իր թրթռանքն այնքան, որ հատի երկվության աշխարհը ավելի բարձր չափումների աշխարհից զատող սահմանը։

Այլ կերպ ասած, մարդկանց հավաքական գիտակցությունը դեռևս պատրաստ չէ ընդունելու Սիրո էներգիայի՝ իր համար այդչափ ուժեղ «ճառագայթման չափաբաժինը»։

Այդ իսկ պատճառով էլ Սիրո Տարերքն իր Աստվածային էներգիայից ուղարկում է յուրաքանչյուրիդ անհատական լիցք, որպիսին տվյալ պահին ունակ կլինեն յուրացնելու ձեր գիտակցություն ու մարմինները։

Նա երբեք չի սխալվում, որովհետև դուք բոլորդ իր զավակներն եք՝ սիրելի և անկրկնելի, իր հարազատ մասնիկները, որոնց հրաշալի զգում է ինքը։

Նա գիտի ձեր բոլոր արժանիքներն ու թերությունները, ուրախություններն ու վշտերը, ձեր երազանքներն ու իղձերը։

Նա օգնում է ձեզ ամեն ինչում, բայց այն չափով, որը պատշաճում է ձեր հոգևոր զարգացման տվյալ փուլին՝ հարգելով Ազատ Կամքի Օրենքը և Աստվածային Նպատակահարմարության Օրենքը։

Լինելով «կողմնակի դիտորդ», նա հրաշալի տեսնում է Երկրի վրա տեղի ունեցող էներգետիկական պրոցեսների բոլոր նրբությունները, այդ թվում նաև մարդկության և Երկրի, Ջրի, Օդի ու Կրակի Տարերքների փոխազդեցության պրոցեսները։

Եվ «խաղի մեջ է մտնում» միայն այն ժամանակ, երբ մարդն ինքն է խնդրում նրան՝ իր բոլոր մարմինների միջով անցկացնելով նրա բուժիչ էներգիան, այդ կերպ հողանցելով և առավելագույնս ուժգնացնելով այն։

Հենց դա է, զավակնե՛րս, ձեր էներգետիկական փոխազդեցությունը Սիրո Տարերքի հետ։

Նա միշտ ձեր կողքին է, միշտ սպասում է, որ հիշեք իրեն և կանչեք ձեզ մոտ։

Այդպիսով դուք կօգնեք ձեզ և ամբողջ Երկրին մաքրվելու ապականությունից՝ բոլոր ցածրաթրթիռ էներգիաներից, որոնք ավերում են ձեր չքնաղ մոլորակը և իր բնակիչների հոգիները։

Օրհնու՛մ եմ ձեզ, զավակնե՛րս, և անսահման սիրում. . .

ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՌՆՈՒՄ (ՊՐԱԿՏԻԿԱ)

Այսօր ես կուզենայի հանրագումարի բերել այն ամենը, ինչ ասվել է տարերքներին վերաբերող իմ ուղերձներում։

Հուսով եմ՝ հիմա հասկանում եք, որ բոլոր հինգ տարերքներն էլ ապրում են յուրաքանչյուրիդ մեջ, և դուք սերտորեն կապված եք նրանց ոչ միայն էներգապես, այլև ֆիզիկապես։

Հենց այդ պատճառով էլ մարդկության՝ «երկվություն» անունը կրող հիվանդության վերջին փուլում դրա ախտանշանները ձեր մոլորակում սկսել են ի հայտ գալ Երկրի (Հողի), Ջրի, Օդի և Կրակի ըմբռնացած բնական տարերքների տեսքով։

Եվ միայն հինգերորդ՝ Սիրո Տարերքը կարող է ապաքինել ձեզ բոլորիդ, իր Աստվածային բուժիչ էներգիաներում տարրալուծելով մարդկանց գիտակցության մեջ դարերով կուտակված ամեն բացասական բան, որը ներկայումս ոչնչացման եզրին է հասցրել մարդկությանը։

Այժմ ես կտամ ձեզ մի հզոր պրակտիկա, որը կօգնի ներդաշնակեցնել ձեր մարմիններում և գիտակցության մեջ ապրող բոլոր բնական տարերքները։

Կանվանենք այն «Էներգետիկական վերաբեռնում»։

Կանչեք ձեր բոլոր Երկնային Օգնականներին, մտեք մեդիտատիվ վիճակի մեջ, խոր շնչեք և լիովին թուլացեք։

Այնուհետև ջանացեք ձեր մեջ զգալ բոլոր բնական տարերքները՝ բոլոր մակարդակներում՝ էներգետիկական և ֆիզիկական։

Երկրի (Հողի) Տարերքը կդրսևորվի ձեր մարմիններում իր հզորությամբ, ձգողության ուժով. . .

Դուք կարող եք բառիս բուն իմաստով զգալ նրա մարմինը, հատկապես եթե այս մեդիտացիան անեք բնության գրկում։

Խնդրեք Երկրի Տարերքին իր ուժը ներարկել ձեր մեջ։

Եվ դուք անպայման կզգաք, որ սկսում եք լցվել այդ ուժով ձեր առաջին չակրայի միջոցով։

Այնուհետև դիմեք **Ջրի Տարերքին** և զգացեք նրա ներկայությունը ձեր օրգանիզմում։

Նա կարձագանքի ձեր կանչին ալիքներով, որ կանցնեն ձեր ամբողջ մարմնով՝ քնքշորեն շոյելով այն։

Ամբողջ սրտով շնորհակալություն հայտնեք նրան կենարար հեղուկի համար, որը կյանք է պարգևում ձեզ, և խնդրեք այդ տարերքին Միրով լվանալ իրենով ձեր մարմնի ամեն մի բջիջը:

Դրանից հետո կանչեք ձեր մարմնում ապրող **Օդի Տարերքին**:

Դուք կզգաք նրան՝ խոր շնչելով և արտաշնչելով այդ տարերքի մասնիկը, որը կյանք է պարգևում ձեր օրգանիզմին:

Ողջ հոգով շնորհակալություն հայտնեք նրան և խնդրեք հավասարապես և ներդաշնակորեն լցնել ձեզ իրենով:

Այնուհետև կանչեք **Կրակի Տարերքին** և զգացեք, թե ինչպես է ջերմությունը ողողում ձեր ամբողջ մարմինը:

Խնդրեք այդ տարերքին ապրել ձեզ հետ ներդաշնակության մեջ, ապահովելով ձեր մարմինը ձեզ համար լավագույն հարմարավետ ջերմաստիճանով:

Եվ հենց որ լիովին զգաք բոլոր չորս տարերքները, որոնց մասնիկներն ապրում են ձեր էներգետիկական տարածության և ձեր ֆիզիկական մարմնի մեջ, կանչեք **Միրո Տարերքին**:

Մի շտապեք... Լիովին զգացեք նրան...

Զգացեք, ինչպես է նա պարարում ձեր մարմինը բարեբեր Աստվածային էներգիայով, ինչպես է լիուլի լցնում նրանով ձեր բոլոր չակրաները, բոլոր նուրբ մարմինները...

Եվ այդ երանության գագաթնակետին խնդրեք նրան մաքրել և միմյանց հետ ներդաշնակեցնել ձեր էներգետիկական տարածության և ֆիզիկական մարմնի մեջ ապրող Երկրի (Հողի), Ջրի, Օդի և Կրակի տարերքները:

Այն, ինչ կզգաք, նման կլինի փոքրիկ պայթյունի, որը հրավառության պես կժայթքի ձեր սրտի չակրայից և հետո դանդաղ կնստի՝ լցնելով ձեր ամբողջ էությունը պսպղուն ոսկեշող էներգիայով:

Ձեր օրգանիզմի ամեն բջիջը անհագորեն կներծծի այն, ճանաչելով իր ամենասիրելի և հարազատ էներգիան, որից ծնունդ է առել ամենայն կենդանի բան ոչ միայն Երկրի վրա, այլև համայն Տիեզերքում։

Դուք կզգաք ձեր ամբողջ էության, բոլոր բնական տարերքների էներգետիկական վերածնունդը, որոնք այժմ ապրում են ձեզանում լիակատար Ներդաշնակության և լիակատար Միասնության մեջ ձեր Հոգու, գիտակցության և մարմինների հետ։

Դուք դառնում եք Լույսի Աստվածային էակ և ընդմիշտ մնում եք այդպիսին. . .

Մնացեք մեդիտացիայի մեջ որքան կարելի է երկար և, դուրս գալով, ընդմիշտ պահեք Աստվածամարդու ձեզ համար նոր, իսկ ավելի ճիշտ՝ մոռացված ձեր այդ վիճակը։

Օրհնում եմ ձեզ, զավակնե՛րս, և անսահման սիրում. . .

Բացարձակ-Հայրը խոսեց ձեզ հետ

Ընդունել է Մարթան 2019 թ. հուլիսի 5-11

ԳԼՈՒԽ VI

ՎԵՐԱԲԵՄՈՒՆՔԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ՝ ՏԻԵԶԵՐՔԻ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԻՆՉՊԵՍ ԿԱՌՈՒՑԵԼ ՆՈՐ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

2. ԱՊԱԳԱՅԻ ՍԵՐՈՒՆԴԸ

3. ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ԽԱՂ

4. ԹՎԱՅՆԱՑՎԱԾ ՍԵՐՈՒՆԴ

5. ԶՐՈՒՅՑ ՀԱՎԱՍԱՐԸ ՀԱՎԱՍԱՐԻ ՀԵՏ

6. ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ՝ ԵՐԵԽԱՅԻ ԱՉՔԵՐՈՎ

7. ՌԻՍԿԻ ԽՈՒՄԲ

8. Ո՛Չ ՄԻ ՊԱՅՄԱՆՈՎ

9. ԶԱՎԱԿՆԵՐԻ ԵՎ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ

10. ՄԻԱԲԵՎԵՌ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԵՐՈՒՆԴ (ՊՐԱԿՏԻԿԱ)

ԻՆՉՊԵՍ ԿԱՌՈՒՑԵԼ ՆՈՐ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

(ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ)

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 2016 Թ. ՄԱՅԻՍԻ 5

Ողջունում եմ ձեզ, իմ սիրասու՛ն զավակներ։

Մենք կշարունակենք մեր զրույցը նոր հասարակության կառուցման վերաբերյալ, և այսօր ես ուզում եմ անդրադառնալ ձեր երեխաների դաստիարակության հարցերին։ Չէ՞ որ նրանք պիտի ապրեն արդեն բոլորովին այլ պայմաններում, և, անշուշտ, երկվության աշխարհում գոյություն ունեցող դաստիարակությունն ու կրթությունը չեն կարող նրանց տալ այն գիտելիքները, որոնք անհրաժեշտ կլինեն Հինգերորդ չափման Երկրում։

Դուք արդեն գիտեք, զգում եք ձեր երեխաներով և թոռնիկներով, որ նրանք ուրիշ են, շատ տարբեր են ձեզնից, այնպիսին չեն, ինչպիսին եղել եք դուք ձեր մանկության տարիքում։ Նրանք այս աշխարհ են եկել արդեն լրիվ ուրիշ թրթռանքով։ Եկել են ուրիշ նպատակներով։ Նրանք գիտեն Համբարձման մասին, սակայն դեռ չեն կարողանում պատմել ձեզ այդ մասին։

Նրանց ինտուիցիան այնքան զարգացած է, որ թվում է, թե ապրում են միաժամանակ երկու աշխարհներում՝ թե՛ նուրբ, թե՛ հոծ։ Նրանք զգում են մարդկանց այնպես, ինչպես կան։ Նրանցից հնարավոր չէ որևէ բան թաքցնել, նրանց հնարավոր չէ խաբել, որովհետև տեսնում են մարդու ներսը՝ նրա իսկական էությունը, հոգին։

Իսկ հիմա պատկերացրեք նման երեխային սովորական դպրոցում, որտեղ տիրում է հավասարեցման և հնազանդության մթնոլորտ, որտեղ բոլորին ուզում են «մի սանրի կտավ սարքել», որտեղ ճնշվում է ազատ կամքը, որտեղ չկա անհատական մոտեցում մարդուն՝ որպես բացառիկ, անկրկնելի անձնավորության։

Այդպիսի բյուրեղային մանկիկի համար դա կարող է իսկական ողբերգության վերածվել։ Դաստիարակության այդ համակարգը, որ հաստատվել է երկվության աշխարհում բազմաթիվ դարեր ապրելու ընթացքում, կարող է լոկ խեղել նրա հոգին, սպանել նրա վառ արտահայտված Աստվածային սկիզբը։

Ուրեմն ի՞նչ պետք է անեք, զավակնե՛րս։ Ինչպե՞ս կարող եք եռաչափ աշխարհի ազդեցությունից պաշտպանել այդ նոր հոգիներին, որոնք այժմ Երկիր են գալիս մեծ քանակությամբ։

Դուք պետք է մտածեք և ստեղծեք կրթության լիովին նոր համակարգ, որի հիմքը կկազմեն փոքրիկ մարդու ազատ կամքի, անձի հարգման սկզբունքները, նրա ինքնաարտահայտումը և նախասահմանման ու տաղանդի բացահայտումը զարգացման ամենավաղ փուլում։

Մեծահասակների և երեխաների հարաբերությունները պետք է կառուցվեն ոչ թե «ուսուցիչ - աշակերտ» սկզբունքով, այլ հավասար՝ ընկերական հենքի վրա, որովհետև այժմ երեխան հաճախ շատ ավելի հին ու իմաստուն հոգի է, քան իր ուսուցիչը։ Նա ի ծնե արդեն գիտի Տիեզերքի Օրենքները և թե ինչպես պետք է ապրել Հինգերորդ չափման պայմաններում։

Իհարկե, ոչ բոլոր երեխաներն են բյուրեղային, բայց նրանց մեծամասնությունն այդպիսին է, և նման երեխաներին կարելի է ճանաչել շատ նշաններով, որոնցից գլխավորը սրանք են.

- նրանք խելացի են և հետաքրքրասեր,

- տանել չեն կարող ենթարկվելը. նրանց կարելի է լոկ համոզել, իսկ ուժով ստիպել ինչ-որ բան անել՝ բոլորովին հնարավոր չէ,

- մեծ, խորունկ աչքեր ունեն, որ կարծես դարերի իմաստությունն են հավաքել իրենց մեջ,

- անչափ քնքուշ են ու մեղմ,

- նրանց մտածողությունն արտասովոր է, արտահայտությունները՝ հասարակ մարդու համար անսպասելի,

- դյուրահավատ են և անվախ։

Որպես կանոն, նման երեխաները ծնվում են այնպիսի ծնողներից, որոնք իրենց հերթին եղել են ինդիգո-երեխաներ՝ նոր սերնդին նախորդող ալիքը, որը երկիր է եկել մոլորակի՝ Հինգերորդ չափում տեղափոխվելու «նախապատրաստական աշխատանքների» համար։

Եվ իհարկե դա պատահական չէ, որովհետև հենց այդպիսի ծնողներն են ի վիճակի հասկանալու և զգալու իրենց երեխաներին. նրանք Աստվածային կապ ունեն իրենց երեխաների հետ և ավելորդ ճնշում չեն գործադրի՝ խաթարելով նրանց հոգեբանությունը։

Սակայն հետո այդ երեխաները պետք է խորասուզվեն սոցիալական կյանքի մեջ, և այստեղ կարող են ծագել լրջագույն խնդիրներ, եթե նրանք «օտար» ձեռք ընկնեն, եթե չստեղծվեն այնպիսի դպրոցներ, որտեղ ուսուցիչները հոգեհարազատ մարդիկ կլինեն՝ ունակ հասկանալու և ընդունելու նրանց այնպիսին, ինչպիսին կան։

Իսկ ամենակարևորը՝ պետք է ստեղծվեն բոլորովին ուրիշ կրթական ծրագրեր, որոնց հիմքը կկազմեն ոչ թե երկվության աշխարհի, այլ Տիեզերական Օրենքները, որտեղ ուսուցիչների ու աշակերտների հարաբերությունները կկառուցվեն փոխադարձ սիրո և հարգանքի, փոխըմբռնման և վստահության հենքի վրա, որտեղ կդասավանդվեն առարկաներ, որոնք կոչված են բացելու տիեզերքի հիմքերը և զինելու երեխային գիտելիքներով, որոնք կօգնեն նրան ազատ և վստահ ընթանալու կյանքի ճանապարհով, նաև դառնալու օրինավոր, ազնիվ և բարձր հոգևոր հատկանիշներ ունեցող մարդ, կսովորեցնեն շփման արվեստը, որի հիմքում պետք է լինի ուրիշի կարծիքի հարգումը և խոսակցին լսելու ունակությունը։

Դրանք պիտի լինեն այնպիսի դպրոցներ, որտեղ երեխան իրեն կզգա ինչպես իր տանը, կհաճախի հաճույքով, ուր հետաքրքիր կլինի իր համար և իրեն կզգա որպես անհատականություն։

Եվ դա պետք է դառնա ձեր առաջնահերթ խնդիրը, զավակնե՛րս։ Սկսե՛ք ստեղծել կրթության նոր համակարգ, հատկապես նրանք, ովքեր անմիջական առնչություն ունեն դրա հետ։

Օրհնում եմ ձեզ, զավակնե՛րս, և անչափ սիրում...

Բացարձակ-Հայրը խոսեց ձեզ հետ՝ սիրելի դստեր միջոցով

ԱՊԱԳԱՅԻ ՍԵՐՈՒՆԴԸ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 4 ՄԱՐՏԻ 2021 Թ.

Ողջունում եմ ձեզ, իմ սիրասու՛ն զավակներ։

Ամփոփելու համար մեր զրույցը, թե ինչ դեր եք դուք հատկացնում ձեզ Հինգերորդ չափման Երկրում, ես ուզում եմ այսօր խոսել ձեր երեխաների մասին, որովհետև հենց նրանք պիտի կառուցեն կյանքը ձեր մոլորակի վրա արդեն նոր սկզբունքներով։

Այժմ Երկիր եկող բյուրեղային երեխաների դաստիարակությունն ու կրթությունը պահանջում է բոլորովին ուրիշ մոտեցում։

Եվ այսօր ես ուզում եմ ընդգծել ծնողների դերը այդ փոքրիկների անհատականության կայացման մեջ, որոնց մեծ մասը արդեն ի ծնե օժտված է բոլորովին այլ գիտակցությամբ և հենց այդ պատճառով էլ նրանց վարքը տարբերվում է ձեր վարքից, որ ունեիք դուք մանուկ տարիքում։

Այլ կերպ ասած, տվյալ դեպքում դուք չեք կարող նրանց դաստիարակելիս ղեկավարվել ձեր սեփական փորձով, դա կբերի սոսկ փոխադարձ անըմբռնողության։

Երեխաների հետ ունեցած ձեր հարաբերությունների հիմքում, անկախ նրանց տարիքից, պետք է լինեն վստահությունը, հարգանքը և հետաքրքրությունը նրանց ներաշխարհի նկատմամբ։

Վերաբերվե՛ք նրանց, ինչպես հավասարը՝ հավասարին, քանի որ տվյալ դեպքում «մեծահասակ» և «երեխա» հասկացությունները շատ հարաբերական են։

Սովորե՛ք լսել ձեր երեխաներին և զգալ նրանց վարքագծի դրդապատճառները։

Երբեմն այն, ինչ թվում է կամակորություն ու անհնազանդություն, իրականում այլ բան չէ, քան նրանց ազատ կամքի դրսևորում և ինքնուրույն որոշումներ կայացնելու ցանկություն։

Իհարկե, ամեն ինչ պետք է լինի ողջամտության սահմաններում, և բավական դժվար է կոնկրետ ցուցումներ տալ, այնքան որ յուրօրինակ է ամեն մի երեխա։

Եվ կարևոր է նրա նկատմամբ գտնել այնպիսի մոտեցում, որը թույլ կտա ձեզ դառնալ ոչ թե փոքրիկի վարքի «հսկիչը», այլ հետաքրքրասեր և բարյացակամ կողմնակի դիտորդ։

Դա կօգնի թե՛ ձեզ, թե՛ նրան անձեռնմխելի պահել ձեր էներգետիկական տարածությունը և միևնույն ժամանակ փոխանակել ձեր դիտարկումներն ու դատողությունները։

Ընդ որում, անչափ կարևոր է չպարտադրել երեխային ձեր կարծիքը, այլ միայն բարձրաձայնել ձեր դատողությունը և հետո հարցնել փոքրիկին՝ «Իսկ դու՞ ինչ ես կարծում»։

Վստահ եմ, որ կլսեք անսպասելի պատասխաններ, որովհետև բյուրեղային երեխաները Երկիր են եկել իրենց պաշարով և հաճախ բոլորովին ուրիշ՝ ավելի բարձր չափումներից։

Այդ իսկ պատճառով էլ եռաչափ աշխարհում գոյություն ունեցող դաստիարակությունն ու կրթությունը անբնական և կործանարար են նման երեխաների համար, քանի որ հակասում են Տիեզերքի Օրենքներին, որոնցով նրանք ապրել են նախորդ մարմնավորումներում։

Որպես կանոն, այդ նոր երեխաների մեջ շատ շուտ են բացահայտվում իրենց տաղանդներն ու ունակությունները, հետևաբար ուշադիր և սիրող ծնողների համար դժվար չի լինի ի հայտ բերել դրանք։

Եվ իհարկե պետք է անել ամեն հնարավոր բան դրանք զարգացնելու և կատարելագործելու համար։

Ցավոք, այժմ հաճախ են հանդիպում այսպես կոչված աուտիզմի դեպքեր։

Եվ դա կապված է այն բանի հետ, որ շատ բարձր չափումներից Երկիր եկող հոգիները չեն հաղթահարել ահռելի թրթիռային տարբերությունը և եռաչափ աշխարհում զգում են իրենց օտար, միայնակ և անհասկանալի։

Սակայն նրանց շուրջը եղած մարդկանց թրթիռների բարձրանալու համեմատ այդ երեխաները կհալվեն և կբացվեն չքնաղ ծաղիկների նման։

Աուտիզմի մեկ այլ պատճառ էլ օտարածին և վնասակար պատվաստանյութերի բարբարոս ներխուժումն է երեխայի օրգանիզմ, որոնք միտումնավոր մշակվել են խորքային պետությանը ենթական դեղագործական ձեռնարկություններում, որպեսզի կյանքի կոչեն Երկրի բնակչության կրճատման և նրա գիտակցության վերահսկման անմարդկային ծրագիրը։

Ուստի, զավակնե՛րս, սովորեք պաշտպանել ձեր երեխաներին, ոչ մի պարագայում թույլ չտալով նրանց օրգանիզմ ներարկել այդ մահաբեր պատրաստուկները, ով և ինչպես էլ որ համոզի և ինչ փաստարկներ էլ որ բերի։

Իմացե՛ք, որ այսօր ձեր աշխարհում գոյություն չունի ՈՉ ՄԻ պատվաստանյութ, որ չխեղի մարդուն և չհանգեցնի անդառնալի հետևանքների մարդու ֆիզիկական և հոգեկան առողջության համար։

Այսքանով կսահմանափակվենք այսօր։

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ԽԱՂ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 6 ՄԱՐՏԻ 2021 Թ.

Այսօր ես ուզում եմ շարունակել զրույցը երեխաների մասին, որոնց վիճակված է մեծանալ Երկրի՝ նոր չափում Անցում կատարելու այս դժվարին փուլում։

Ներկայումս, երկու ժամանակաշրջանների հանգուցակետում, տեղի է ունենում ոչ միայն մարդկային գիտակցության, այլև ամբողջ կրթական համակարգի բեկում, որովհետև հինն այլևս չի կարող գոյություն ունենալ նոր Երկրի վրա, իսկ նորը դեռևս չի ստեղծվել։

Ուստի, պաշտպանելու համար երեխայի հոգեբանությունը դպրոցական ծրագրերի անհամապատասխանությունից և այն իրական դեպքերից, որ կսկսեն ծավալվել ձեր մոլորակում արդեն առաջիկա տարիներին, ծնողները պետք է ստեղծեն այնպիսի պայմաններ իրենց երեխաների համար, որոնք թույլ կտան նրանց ճիշտ և ներդաշնակ կերպով կատարելու այդ Անցումը։

Եվ առաջին հերթին այդ անհամապատասխանությունը դրսևորվում է էներգետիկական մակարդակում։

Քանի որ երեխաները շատ ավելի նրբորեն են որսում թրթիռային երանգները, հաճախ, չկարողանալով դա բացատրել՝ անհամարժեք ձևով են հակազդում մեծահասակների վարքին, որովհետև տեսնում են, որ նրանց խոսքերն ու գործերը տարբերվում են նրանից, ինչ զգում են իրենք նուրբ պլանում։

Այլ խոսքով, եթե օդն արդեն «ողողված է» Սիրո, Ազատության և Միասնության էներգիաներով, իսկ ուսուցիչը շարունակում է ապրել և գործել եռաչափ աշխարհի ծրագրերի համապատասխան՝ առաջին տեղում դնելով հնազանդությունն ու վերահսկողությունը, ապա երեխան, ինտուիցիայով ներքուստ ընդդիմանալով դրան,

արտաքուստ իր բողոքը դրսևորում է կա՛մ ագրեսիայով, կա՛մ էլ լիովին անտեսելով ուսուցչին։

Տվյալ դեպքում բոլորն էլ ունենում են դժվարություններ, թե՛ ուսուցիչները, որոնք ունակ չեն նորովի վերակառուցելու իրենց գիտակցությունը ցածր թրթռանքի պատճառով, թե՛ երեխաները, որոնք Երկիր են եկել արդեն նոր թրթիռային ներուժով։

Ուրեմն ի՞նչ անել, զավակնե՛րս, երբ տեսնում եք, որ ձեր երեխան տանջվում է ուսուցիչների անըմբռնողությունից և հրաժարվում է դպրոց գնալ։

Նախ և առաջ՝ քննադատություններով չհարձակվել ուսուցչի վրա, դա է՛լ ավելի կմեծացնի երեխայի տառապանքը, որը կտեսնի, որ իր ծնողներն էլ են դատապարտում իրեն։

Ինչու՞ է դա կարևոր։

Որովհետև այդպիսով դուք սոսկ կմեծացնեք անդունդը ձեր երեխայի և ուսուցչի միջև, այսինքն՝ կբազմացնեք երկվությունը։

Ավելի լավ կլինի ջանալ բացատրել երեխային, որ ուսուցիչն այդպես է վարվում ոչ թե չարությունից դրդված, այլ որովհետև ինքն էլ հենց այդպես է դաստիարակվել, և դա կյանքի կանոն է նրա համար։

Փորձեք պարզ ու հասկանալի ձևով հասկացնել ձեր երեխային Տիեզերքի Օրենքները, իսկ շատ ավելի լավ կլինի, եթե դա վերածեք զվարճալի խաղի։

Իր հարաբերությունները ուսուցչի հետ կարող են հրաշալի «մարզասարք» դառնալ իր համար, ակներև օրինակ, թե ինչպես են ֆիզիկական պլանում դրսևորվում այդ Օրենքները։

Եթե երեխան սովորի բացահայտել իր աշխատանքի արդյունքները և տեսնի, թե ինչպես է ուսուցիչը փոխում վերաբերմունքը իր նկատմամբ, կախված այն բանից, թե ինչ էներգիա է ինքը առաքում նրան և ինչպես է պահում իրեն, ապա դա կդառնա սովորություն, և նա կսկսի ապրել Տիեզերքի Օրենքներով, այսինքն՝ սահուն անցում կկատարի դեպի Հինգերորդ չափման մարդու նոր վիճակը։

Իրականում դա այնքան էլ դժվար չէ, զավակնե՛րս։

Սակայն, անկասկած, հարկավոր է սկսել ձեզնից, անձնական օրինակով ցույց տալով ձեր երեխաներին, թե ինչպես եք ինքներդ աշխատում էներգիաների հետ՝ փոխելով իրականությունը մտքի և դիտավորության ուժով։

Այդպես դուք ինքներդ էլ կզարգանաք և ոգեպես կաճեք ձեր երեխայի հետ միասին՝ ճանապարհ բացելով ձեզ համար դեպի նոր Երկիր և միասին հաղթահարելով չափումների միջև եղած թրթիռային տարբերությունը, որն անխուսափելի է անցումային փուլում։

Եվ ձեր համատեղ ջանքերը կտան հրաշալի արդյունքներ, որովհետև, ակամա, հոգևոր աճի կդրդեն նաև ձեր ամբողջ շրջապատին։

Այդպես, փոխելով իրեն, ձեր երեխան կտեսնի, թե ինչպես է փոխվում շուրջը եղած ամեն բան, իսկ չէ՞ որ հենց դա է կազմում Հինգերորդ չափման մարդու գոյության հիմքը։

Օրհնում եմ ձեզ, զավակնե՛րս, և անսահման սիրում. . .

ԹՎԱՅՆԱՑՎԱԾ ՍԵՐՈՒՆԴ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 17 ՕԳՈՍՏՈՍԻ 2021 Թ.

Այսօր ես ուզում եմ ուշադրության առնել ձեր երեխաներին, ավելի ճիշտ՝ թե ինչպես պիտի ձեզ պահեք նրանց հետ առաջիկա բացահայտումների առնչությամբ, որոնք շուտով կկատարվեն ամբողջ աշխարհում։

Իհարկե, փոքրիկները դեռ փոփոխություն չեն նկատի իրենց շուրջը, բայց դեռահասները, որոնք ձեզ հետ միասին անցել են բոլոր սահմանափակումներով և կարանտինային միջոցներով, կարող են շատ ցավոտ հակազդել այն բանին, որ այդ ամենը իզուր է եղել։

Դրա համար հարկավոր է մանրամասնորեն մտածել ձեր զրույցը նրանց հետ, որպեսզի հասկացնեք ճշմարտությունը մատչելի խոսքերով, որոնք չեն վախեցնի նրանց, այլ, ընդհակառակը, կամրապնդեն հավատը, որ ամենասարսափելին արդեն ետևում է, իսկ առջևում սպասում է նոր, հրաշալի կյանքը, որը պիտի կառուցեք նրանց հետ միասին։

Ամենամեծ խնդիրն այն է, որ երիտասարդ սերունդը աշխարհի բոլոր երկրներում, սողունակերպների անխոնջ ջանքերի շնորհիվ, իր մեջ է ներծծել թթվայնացման ողջ «թույնը», որը պարտադրվել է ամենավաղ մանկությունից։

Դեռահասներն այլևս չեն պատկերացնում իրենց գոյությունը առանց էլեկտրոնային սարքերի, որոնք յուրատեսակ թմրանյութ են դարձել նրանց համար։

Շատերն արդեն ապրում են ոչ թե իրական, այլ պատրանքային աշխարհում, որ նրանց համար կառուցել են տարատեսակ խաղերի, գովազդային հոլովակների, սոցիալական ցանցերի ստեղծողները, որոնք խիտ «սարդոստայնով» են պարուրել ձեր երեխաների դեռ չամրացած գիտակցությունը՝ զրկելով նրանց կենդանի շփման անգին փորձից։

Նրանց գիտակցությունն արդեն վաղուց է կառավարվում, այդ պատճառով էլ բազմաթիվ երիտասարդներ հլու-հնազանդ դրեցին դիմակները և անմռունչ գնացին պատվաստման։

Եվ դա բացատրվում է նրանով, որ աշխարհում ամենից շատ նրանք վախենում են զրկվել իրենց սովորական կյանքից՝ ճամփորդելու, դիսկոտեկներ և ակումբներ հաճախելու, համերգների և սպորտային միջոցառումների մասնակցելու հնարավորությունից։

Նրանք արդեն ապրում են հաստատված ծրագրով, մտածում ու գործում են կարծրատիպերով՝ ինչպես բոլորը, այդ պատճառով էլ պարտադիր պատվաստումը ոչ մի կասկած չառաջացրեց նրանց մոտ։

Դա հատկապես վերաբերվում է այն դեռահասներին և երիտասարդներին, որոնց ծնողներն ապրում են եռաչափ աշխարհի

համանման ծրագրերով, չմտածելով, թե ով և ինչու է իրեն իրավունք վերապահել տնօրինելու իրենց կյանքն ու առողջությունը։

Սակայն հիմա եկել է ժամանակը երիտասարդների ուշադրությունն ուղղելու այն նոր իրողությունների վրա, որոնք սպասում են Երկրին և նրա այն բնակիչներին, որոնք կկարողանան մոլորակի հետ միասին փոխադրվել նոր դարաշրջան։

Եվ հարկավոր է դա անել այնպես, որ նրանք կենդանի հետաքրքրություն ցուցաբերեն գալիք իրադարձությունների նկատմամբ և ընդունեն դրանք որպես ուշագրավ մի արկած, շատ ավելի հետաքրքիր և գրավիչ, քան ներկայիս վիրտուալ կյանքը։

Իհարկե, դա հեշտ խնդիր չէ, սակայն դեռահասները, ի տարբերություն ավագ սերնդի, որի համար դժվար է նորովի վերակառուցել իր գիտակցությունը, այդուհանդերձ ավելի ճկուն են և ենթարկվող։

Եռաչափ աշխարհի ծրագրերը դեռևս չեն հասցրել նստվածք տալ և թանձրանալ նրանց ենթագիտակցության մեջ, չնայած կառավարող վերնախավի բոլոր ջանքերին։

Եվ հիմա, զավակնե՛րս, դուք պետք է վերածրագրավորեք ձեր երեխաների գիտակցությունն այնպես, որ նրանք ամեն ինչի նայեն ուրիշ հայացքով, իրենց զգալով սեփական կյանքի տերը, և ոչ թե հնազանդ տիկնիկը սպառողական հասարակության, որի մեջ իրենց խցկել են անտեսանելի տիկնիկավարները։

Եվ հաջորդ անգամ մենք ավելի հանգամանորեն կխոսենք այդ մասին։

ԶՐՈՒՅՑ ՀԱՎԱՍԱՐԸ ՀԱՎԱՍԱՐԻ ՀԵՏ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 19 ՕԳՈՍՏՈՍԻ 2021 Թ.

Եվ այսպես, շարունակենք զրույցը, թե ինչպես պիտի պահեք ձեզ դեռահասների հետ, որոնց գիտակցությունն արդեն շատ առումներով ենթարկված է եռաչափ աշխարհի ծրագրերին։

Աճող սերնդի գիտակցության վրա ներգործելը առաջնահերթ խնդիր է դարձել գլոբալիստների համար, քանի որ նրանք հրաշալի հասկանում են, որ մարդու աշխարհայացքի ձևավորումը պետք է սկսվի որքան կարելի է շուտ։

Հենց դրա համար էլ աշխարհի բոլոր երկրների դպրոցական ծրագրերում նրանք ներդնում են իրենց «արժեքները», որոնք հեռու են ոչ միայն հոգևոր, այլև պարզապես համամարդկային արժեքներից։

Մանուկների չամրացած գիտակցությունը, որոնք սովոր են հավատալ մեծահասակներին և հատկապես ուսուցիչներին, այդ ամենն ընդունում է իբրև բացարձակ ճշմարտություն։

Այդ պատճառով էլ շատ դպրոցականներ, որոնք հնազանդորեն սկսեցին դիմակներ կրել, հավատալով, թե այդպես փրկում են թե՛ իրենց, թե՛ մյուսներին «սարսափելի» հիվանդությունից, ինչպես որ ներկայացվում էր դպրոցներում, նույն հնազանդությամբ կընդունեն պատվաստվելու՝ ուսուցիչների առաջարկը։

Հարկ է նկատի առնել նաև այն փաստը, որ երեխան շատ հակված է հոտային զգացումին. նա ուզում է նման լինել իր հասակակիցներին, իսկ որևէ քննադատություն կամ ծաղր նրանց կողմից՝ ընդունում է անչափ ցավագին, երբեմն էլ ողբերգական կերպով։

Հենց դրա վրա էլ խաղադրույք են անում սողունակերպները, որոնք ջանում են բոլոր ուժերով մեծացնել պատվաստման կողմնակիցների թիվը երիտասարդների մեջ։

Այդպես, շատերը դիմում են իրենց համար կործանարար այդ քայլին սոսկ ընկերներից հետ չմնալու համար, նույնիսկ չմտածելով հետևանքների մասին։

Ես տեսնում եմ, զավակնե՛րս, թե որքան դժվար է լինում խոսել ձեր դեռահաս երեխաների հետ, որվհետև հաճախ ընկերների հեղինակությունը նրանց համար շատ ավելի մեծ է ծնողների հեղինակությունից։

Նրանք ուզում են ազատություն, և ոչ թե հնազանդություն, ինքնուրույնություն, և ոչ թե վերահսկողություն։

Եվ ահա նրանց հենց այդ առանձնահատկությունն էլ դուք կարող եք օգտագործել, եթե ձեզ հաջողվի իմաստուն կերպով նրանց բերել այն մտքին, որ իրենք ճիշտ չեն մեկնաբանում Տիեզերքի ամենակարևոր Օրենքներից մեկը՝ Ազատ Կամքի Օրենքը։

Ինչի՞ց պիտի սկսեք։

Առաջին և ամենակարևոր բանը՝ ոչ մի դեպքում չխոսեք դեռահասների հետ հրամայական տոնով, որը սոսկ հակառակության ոգի կարթնացնի նրանց մեջ, և նրանք ամեն ինչ կանեն իրենց ուզածով՝ արդեն պարզապես ի հեճուկս ձեզ, որպեսզի ցուցադրեն իրենց մեծ լինելն ու ինքնուրույնությունը։

Երեխայի հետ բոլոր տարիքներում հարկավոր է շփվել ինչպես ընկերոջ հետ՝ հավասարը՝ հավասարի, առավել ևս, որ շատ բաներ նա զգում է ավելի նրբորեն և լավ, քան դուք, որ երկար ժամանակ ապրում եք եռաչափ աշխարհում և ձեր մեջ ներծծել եք նրա «հրաշալիքները» մտածողության և վարքի բազմաթիվ կարծրատիպերի տեսքով։

Եվ իհարկե, ցանկացած զրույց այժմյան հրատապ հարցերի շուրջ հարկավոր է վարել հանգիստ կամ ավելի լավ է՝ կատակային տոնով, քանի որ ցանկացած մարդ ավելի մեծ վստահությամբ ընդունում է հումորը, քան թե լուրջ խրատները։

Համաձայնե՛ք, որ զվարճալի շատ բան կարելի է գտնել ներկայիս իրադարձությունների հիրավի սյուրռեալիստական պատկերում, երբ

այդքան մարդ դիմակով է, և նույնիսկ դեմքերը չեք տեսնում նրանց, որոնց հետ շփվում եք։

Իհարկե, պետք չէ միանգամից վախեցնել երեխային, թե Երկրի իշխանությունը զավթել են ոճրագործները, նպատակ ունենալով ոչնչացնել մոլորակի բնակչության մեծ մասին։

Ավելի լավ կլինի սկսել հեռվից՝ պատմելով այն մասին, որ Երկրի վրա հիմա վճռորոշ փուլ է մտել դիմակայությունը լոկ հարստանալու մասին մտածող օլիգարխների մի փոքր խմբի և այն ազնիվ անհատների միջև, որոնք իսկապես բարին են կամենում մարդկանց։

Կարելի է պատմել դեղագործական հսկա կազմակերպությունների մասին, որոնք արհեստականորեն խեղդում են բուժման այլընտրանքային միջոցները։

Մանրամասն պատմեք այն մասին, որ դարեր ի վեր մարդիկ բուժվել են բնության շնորհներով, այսինքն՝ այդ դեղամիջոցները եղել են անվճար և յուրաքանչյուրին մատչելի։

Սակայն հետզհետե այդ գիտելիքները դուրս են մղվել մարդկանց հավաքական հիշողությունից, քանի որ այդ հարուստներին ավելի ձեռնտու էին հիվանդությունները, որոնց շնորհիվ իրենք կարող են ահռելի գումարներ վաստակել՝ ամենուր լայնորեն գովազդելով իրենց թանկարժեք քիմիական պատրաստուկները։

Եվ հատկապես մեծ շահույթներ են բերում պատվաստանյութերը, որոնք իրականում սոսկ բազմապատկում են հիվանդությունները, այլ ոչ թե փրկում են դրանցից։

Կարող եք պատմել այն ազնիվ բժիշկների և գիտնականների մասին, որոնք ջանում են ճշմարտությունը հասցնել մարդկանց, և թե ինչ դաժանությամբ են նրանց հետ հաշվեհարդար տեսնում օլիգարխները, որոնք չեն ցանկանում զրկվել իրենց շահույթներից։

Ներկայացրեք այդ ամենը թեթև ու մատչելի ձևով, ինչպես հետաքրքիր ֆիլմի կամ արկածային վեպի սյուժե։

Բայց ավելի լավ կլինի, եթե գտնեք կոնկրետ օրինակներ և խոսեք արդեն անուններով, թե՛ անվեհեր գիտնականների և բժիշկների, թե՛ դեղագործական արդյունաբերության ղեկավարների:

Դա ավելի մեծ վստահություն կներշնչի երեխաներին ձեր պատմությունների նկատմամբ:

Թող դա դառնա առաջին քայլը Բացահայտման ճանապարհին մի ընտանիքի շրջանակում, որը կասկած կսերմանի երեխայի հոգում, և նա արդեն այդքան հեշտորեն չի տրվի իր հասակակիցների մղումներին:

ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ՝ ԵՐԵԽԱՅԻ ԱՉՔԵՐՈՎ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 20 ՕԳՈՍՏՈՍԻ 2021 Թ.

Եվ այսպես, [շարունակենք զրույցը](), թե ինչպես կարող եք բացատրել դեռահասներին այն ամենը, ինչ ներկայումս տեղի է ունենում ձեր մոլորակում:

Եվ այսօր ես կպատմեմ, թե ինչպես թեթև և նրանց ըմբռնմանը մատչելի ձևով մատուցեք նրանց Տիեզերքի գլխավոր Օրենքներից մեկը՝ **Ազատ Կամքի Օրենքը**:

Ամենից առաջ հարկավոր է վստահեցնել երեխային, որ դուք ոչ մի դեպքում չեք ուզում ճնշել նրան կամ ստիպել անելու ինչ-որ բան իր կամքին հակառակ հենց ա՛յն պատճառով, որ ինքներդ էլ անվերապահորեն հարգում եք Ազատ Կամքի Օրենքը:

Ձեր նպատակն է լոկ ցույց տալ նրան տեղի ունեցողի իսկական պատկերը, պատմել այն, ինչ նա չի լսի ո՛չ հեռուստացույցի էկրանից, ո՛չ ընկերներից, քանի որ ճշմարիտ տեղեկատվությունը թաքցվում է ժողովրդից և արգելափակվում համացանցային աղբյուրներում:

Ջանացեք հաղորդել նրան ամեն ինչ, որ գիտեք ինքներդ, բայց ավելի խնայող տարբերակով, հաշվի առնելով դեռահաս տարիքի փխրուն և խոցելի հոգեբանությունը։

Հարկավոր է ոչ թե վախեցնել նրան, այլ հուշել խնդրի լուծման միջոցը՝ ինչպես պաշտպանվել, թույլ չտալով ոչ ոքի՝ ով էլ որ լինի, խախտելու իր ազատ կամքը։

Օգնեք ձեր երեխային ձեռք բերել սեփական արժանապատվության զգացում, որը թույլ կտա նրան ունենալ իր կարծիքը, այլ ոչ թե շարժվել իր շուրջը եղած մարդկանց ցուցումներով, որքան էլ որ նա լավ վերաբերվի նրանց։

Շատ կարևոր է, որ «Ազատ Կամք» բառերն ինքնին ձեր զավակների համար ձեռք բերեն կենդանի միս ու արյուն և չվերածվեն ինչ-որ անհոգի ցուցանակային արտահայտության։

Եվ դրա համար դուք պետք է գտնեք ձեր երեխայի հոգու՝ իր բոլոր անկրկնելի առանձնահատկություններով, անհատական «բանալին»։

Իհարկե, շատ բան կախված է նաև տարիքից։

Մինչև 10 – 12 տարեկան փոքրիկներին այդ Օրենքը կարելի է մատուցել հեքիաթների տեսքով, որոնցում հեշտորեն կարելի է գտնել նրա գործադրման բազմաթիվ օրինակներ։

Ավագ տարիքի երեխաների հետ արդեն կարելի է խոսել մեծի պես, օրինակներ բերելով ինչպես սեփական, այնպես էլ ծանոթների և ընկերների կյանքից։

Կարևորը՝ որ բացահայտեք նրանց տվյալ օրենքի էությունը և հասկացնեք այն միտքը, որ մեծամասնությունը միշտ չէ, որ ճիշտ է լինում, և որ հոսանքին հակառակ լողալը խիզախության և Ոգու ուժի նշան է, չէ՞ որ հենց այնպես չի ծագել այս խոսքը՝ «Կռվի դաշտում մի հոգին էլ Ռազմիկ է»։

Բացատրեք նրան այդ արտահայտության իմաստը։ Բերեք պատմական փաստեր, երբ մի հոգու հաջողվել է փոխել

իրադարձությունների ընթացքը՝ համոզելով մարդկանց հետևել իր օրինակին։

Աստիճանաբար բերեք ձեր երեխային այն մտքին, որ մարդու Ոգու Ուժը սահմաններ չի ճանաչում, սակայն նրանք, որոնց հարկավոր էր թույլ ու ստրկամիտ մարդ, ստիպել են նրան մոռանալ բնությունից իրեն շնորհված այդ գանձի կիրառումը։

Բացատրեք, որ Ազատ Կամքը ընտրության ազատությունն է և իրավունքը՝ ինքնուրույն որոշելու, թե ինչպես վարվել այս կամ այն դեպքում, այլ խոսքով՝ ստանձնելու սեփական կյանքի պատասխանատվությունը՝ չլսելով ոչ մեկի խորհուրդները։

Սակայն տնօրինել այդ ազատությունը կարելի է տարբեր կերպ՝ հօգուտ կամ ի վնաս իրեն և ուրիշներին։

Եվ մարդու Հոգին միշտ կհուշի՝ կարձագանքի նրա այս կամ այն որոշմանը։

Նա կա՛մ «կբացի թևերը» և երանությամբ կպարարի մարդուն, երբ վերջինս իր որոշումը կայացնի համաձայն իր խղճի, կա՛մ կուչ կգա ու քարի պես կծանրանա նրա սրտին, եթե որոշումը ճիշտ չլինի Աստվածային տեսակետից։

Սովորեցրեք ձեր երեխային ականջ դնել իր ներքին զգացողություններին, համագործակցել իր հոգու հետ։

Գուցե կմտածեք, թե դեռահասներին նման խոսակցությունը կարող է տարօրինակ և անհասկանալի թվալ։

Բայց եթե դուք գտնեք ճիշտ խոսքերը և նպաստավոր պահը, ինքներդ էլ կզարմանաք, թե ինչ թեթևությամբ ձեր երեխան կընկալի այդ գիտելիքները, որովհետև նա պիտի սոսկ վերհիշի դրանք՝ թոթափի եռաչափության «փոշին», որը պատել է իր գիտակցությունը այդ մոլորակի վրա ապրած իր կարճատև կյանքի ընթացքում։

Մի՛ վախեցեք, զավակնե՛րս, խոսել ձեր երեխաների հետ լուրջ բաների մասին։

Հավատացեք, նրանք կընդունեն դրանք միանգամայն համարժեքորեն և շնորհակալությամբ, քանի որ հաճախ հենց իրենք են ամաչում հարցնել ձեզ այն, ինչ անհասկանալի է իրենց, և գիտելիքներ են քաղում կեղծ աղբյուրներից, որոնցով հիմա լիքն է համացանցը, ինչպես նաև մարդկանցից, որոնք հեռու են ոգեկան արժեքներից և այժմյան իրականության ըմբռնումից։

Թո՛ղ ձեր երեխաների Ազատ Կամքը բխի աշխարհում տեղի ունեցող դեպքերի իրական պատկերից, որոնց մասին միայն դուք կարող եք պատմել նրանց։

Օրհնում եմ ձեզ և անչափ սիրում. . .

ՌԻՄԿԻ ԽՈՒՄԲ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 21 ՕԳՈՍՏՈՍԻ 2021 Թ.

Այսօր ես ուզում եմ շարունակել զրույցը դեռահասների մասին, որովհետև այժմ հենց նրանք են գլոբալիստների հարվածի տակ, նույնիսկ առավել, քան փոքրիկները։

Եթե փոքրիկները դեռևս գտնվում են իրենց ծնողների պաշտպանության տակ և լիովին կախված են նրանցից, անցումային տարիքի երեխաները հայտնվել են երկու կրակի արանքում. ձգտելով դուրս գալ մեծերի խնամակալության տակից՝ նրանք ընկնում են համակարգի ազդեցության տակ, որը փորձում է ճզմել նրանց բոլոր հնարավոր միջոցներով։

Այն, ինչ տեղի է ունենում հիմա կրթության հետ աշխարհի երկրների մեծ մասում, չի կարելի անվանել այլ կերպ, քան հանցագործություն երեխաների դեմ։

Եվ այդ չարիքի արմատները նույնն են. այդպես իրագործվում են համաշխարհային կառավարության պլանները, որը ջանում է երեխաների դեռ չամրացած գիտակցության մեջ ներդնել ի՛ր «արժեքները» և այն աշխարհայացքը, որը թույլ կտա իրեն ղեկավարել այդ նոր սերնդին։

Եվ հարկավոր է ասել, որ դրա համար այժմ նրանք ավելի մեծ հնարավորություններ ունեն, քանի որ համացանցի ի հայտ գալով և զարգանալով ամեն ինչ արդեն արվում է կենտրոնացված և կանխամտածված ձևով։

Այդպես, աննկատելիորեն, մանկական բարի հեքիաթներն ու ֆիլմերը, որոնց մեջ ամփոփված են խորիմաստ մտքեր և Տիեզերքի Օրենքները, փոխարինվում են արդեն բոլորովին այլ ֆիլմերով, թե՛ մուլտիպլիկացիոն, թե՛ գեղարվեստական։

Դրանց հերոսներն իրենց մեջ կրում են աղավաղված համամարդկային գաղափարներ և բարոյական արժեքներ։

Այդպես, կամաց-կամաց, տարվում է սպառողական և հարստացման հասարակության, էգոիզմի և մրցակցության քարոզչություն, տղամարդու և կնոջ միջև եղած սահմանների փոխակերպում և ջնջում։

Գեղեցկությունը փոխարինվում է այլանդակությամբ, բարին՝ չարով, անկեղծությունը՝ կեղծավորությամբ...

Հրաշալի հասկանալով, որ երեխան սպունգի նման ներծծում է ամեն նոր բան, գլոբալիստները ջանում են երեխաների գիտակցության մեջ ներմուծել այն ամենը, ինչ հարկավոր է իրենց՝ մարդու լիակատար ստրկացման համար։

Ավելին, բոլոր այդ այլանդակ և անբնական կերպարները հետո տիրաժավորվում են խաղալիքներով, կոմիքսներով, էլեկտրոնային խաղերով, այդ կերպ ամրապնդելով արդյունքը և սովորեցնելով երեխաներին նոր իրողությունների։

Ինչու՞ եմ ես այսպես մանրամասնորեն խոսում այդ մասին։

Միայն այն նպատակով, որ դուք, զավակնե՛րս, հասկանաք, թե որքան վտանգներ են դարանակալում ձեր երեխային ամեն քայլափոխին և որ միայն դուք կարող եք դրանցից զերծ պահել նրանց։

Եվ եթե փոքրիկների համար ինքներդ կարող եք ընտրել, թե ինչ դիտի և ինչ կարդա, ապա դեռահասների պարագայում բանն այլ է։

Եթե հենց սկզբից ինչ-որ բան աչքաթող եք արել նրանց դաստիարակության մեջ՝ չներդնելով ամուր բարոյական հիմք, ապա հայտնվելով ընկերների, ուսուցիչների, զանգվածային լրատվության միջոցների, համացանցի ազդեցության տակ՝ նրանք լիովին կարող են հայտնվել ռիսկի խմբում։

Այդ խմբին է պատկանում Երկրի բնակչության ողջ չարթնացած մասը, որի գիտակցության հետ ձեռնածում են ստվերային կառավարության իշխանավոր խամաճիկները։

Եվ հիմա, երբ ավագ սերնդի մեծամասնությունն արդեն կոտրվել է՝ ենթարկվելով պարտադիր պատվաստման պահանջներին, հերթը հասել է երիտասարդներին ու դեռահասներին։

Եվ միայն դուք կարող եք հետ պահել նրանց այդ կործանարար քայլից, գործի դնելով ձեր ողջ պերճախոսությունը, իմաստությունն ու համբերատարությունը։

Մի՛ վախեցեք պատմել նրանց Երկրի նոր չափում Անցնելու և այն հրաշալի հեռանկարների մասին, որ բացվում են մարդկության առջև։

Պարզ և մատչելի լեզվով բացատրեք նրանց, թե ինչու են այդքան շտապում իշխանությունները՝ պատվաստելու հնարավորինս շատ մարդկանց և խանգարելու նրանց տեղափոխվել նոր դարաշրջան։

Թո՛ղ մոլորակի Համբարձումը վերածվի ձեր երեխաների համար մի իրական հեքիաթի, որի գլխավոր հերոսները հենց իրենք են դառնալու։

Բայց որպեսզի այդ հեքիաթը երջանիկ ավարտ ունենա, նրանք նույնպես պետք է ջանք թափեն՝ մարտնչելով Խավարի Ուժերի դեմ և պաշտպանելով ազատության իրենց իրավունքը։

Օգնեք նրանց, բայց այնպես, որ նրանք ինքները դառնան այդ գործընթացի մասնակիցները։

Եվ այդ ժամանակ նրանք լիովին կըմբոշխնեն հաղթանակի համը, որը կգա նրանց սեփական ջանքերի արդյունքում, քանի որ իրենք խիզախել են դեմ գնալ մեծամասնությանը, համակարգին, ունենալով իրենց սեփական կարծիքն ու հայացքները կյանքի մասին։

Դարձեք նրանց բարի օգնականներն ու ուսուցիչները։

Օրհնում եմ ձեզ և անսահման սիրում. . .

Բացարձակ-Հայրը խոսեց ձեզ հետ

***

Ո՛Չ ՄԻ ՊԱՅՄԱՆՈՎ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 24 ՕԳՈՍՏՈՍ 2021 Թ.

Ողջունում եմ ձեզ, իմ սիրասու՛ն զավակներ։

Այսօր ես ուզում եմ հանրագումարի բերել մեր զրույցը, թե ինչպես հետ պահեք երեխաներին ու դեռահասներին այսպես կոչված պատվաստումից։

Առաջին։ Ոչ մի պայմանով մի՛ հանձնեք ձեր փոքրիկ երեխաներին օտարի ձեռքը, այսինքն՝ պետական ուսումնական հաստատություններ, որտեղ կարող են վերևից իջած հրահանգով նրանց ներարկել առողջության և կյանքի համար կործանարար այդ պատրաստուկը։

Հենց այդ նպատակով են տրվել ուսուցիչների և բոլոր մանկական հաստատությունների աշխատողների պարտադիր պատվաստման հրամանները. դարձնել նրանց ուրիշի կամքի հլու կատարողներ, որպեսզի հետո, նույնիսկ առանց ծնողների համաձայնության, կարողանան պատվաստել երեխաներին:

Բայց, ինչպես գիտեք, կորոնավիրուսի դեմ ստեղծված «պատվաստանյութի» բոլոր տեսակները, ինչ տեսքով էլ մատուցվեն, պարունակում են օտարածին գեն, որը լիովին փոխում է մարդու ԴՆԹ-ն:

<u>Երկրորդ</u>: Ինչ վերաբերում է դեռահասներին, նրանց արդեն կարելի է մատչելի ձևով բացատրել, թե ինչ է հիմա կատարվում աշխարհում և ինչ ծրագրեր է փորձում իրագործել համաշխարհային կառավարությունը բնակչության համատարած պատվաստման ճանապարհով:

Սակայն հարկավոր է ասել այնպես, որ չվախեցնեք նրանց և տեղիք չտաք ագրեսիայի, որը անցանկալի հետևանքների կբերի:

Հարկավոր է նրանց սովորեցնել, թե ինչպես պահեն իրենց և համարժեքորեն հակազդեն դպրոցի ղեկավարության պարտադիր պատվաստման պահանջի դեպքում:

Եվ ամենակարևորը՝ նրանք պիտի հստակ յուրացնեն, որ այդ թեմայով ցանկացած բանակցություն պետք է վարեն ծնողները, որոնք կկարողանան իրավաբանորեն հիմնավորել և ճիշտ ձևակերպել պատվաստումից հրաժարվելը:

Բարեբախտաբար, հիմա ասպարեզ են գալիս ավելի ու ավելի շատ ազնիվ ու անկաշառ իրավաբաններ և փաստաբաններ, որոնք անվճար ստանձնում են երեխաների և նրանց ծնողների իրավունքների պաշտպանությունը. նրանք ոչ միայն կտրամադրեն ողջ պետք եղած տեղեկատվությունը, այլև անհրաժեշտության դեպքում ձեռնամուխ կլինեն ձեր պաշտպանությանը դատարանում:

Մի՛ վախեցեք ոչ մի բանից, որովհետև իշխանությունների բոլոր հրահանգները ապօրինի են, և դա հեշտորեն կապացուցի ցանկացած փորձառու իրավաբան։

Սակայն ձեր գործի հաջողության համար անչափ կարևոր է, որ միավորվեք խմբերով. փնտրեք այնպիսի ծնողների, որոնք ձեզ նման պատրաստ են գնալու մինչև վերջ՝ պաշտպանելով իրենց զավակներին այդ հրեշավոր փորձարկումից։

Ձեզ սպասում է հիրավի ոսկերչի հոգեբանական աշխատանք ձեր երեխայի հետ, որովհետև ձեր հակառակությունը իշխանություններին և դպրոցի ղեկավարությանը չպետք է վախի, ագրեսիայի, խուճապի և դատապարտության հողմապտույտի մեջ ներքաշի նրան։

Ջանացեք ամեն բան մատուցել հումորով, ինչպես մի արկած, դետեկտիվ սյուժեով ֆիլմ, որը վառ և բովանդակալից է դարձնում ձեր կյանքը՝ հնարավորություն տալով փորձելու ձեր ամրությունը, ստուգելու սեփական իրավունքները պաշտպանելու ձեր կարողությունը։

Այդ ժամանակ ձեր երեխան իրեն կզգա այդ հետաքրքրաշարժ գործողության մասնակիցը, կոգեշնչվի և կձգտի հաղթանակի, ինչը կկոփի նրա բնավորությունը, իսկ դուք նրա աչքում կդառնաք իսկական հերոս և ազատության անվեհեր մարտիկ։

Դա շատ կարևոր է, զավակնե՛րս, քանի որ ճշմարտությունը կարելի է պաշտպանել տարբեր ձևերով՝ անվստահությամբ, վախով և ագրեսիայով կամ՝ վստահորեն, հանգիստ և ուրախ։

Եվ եթե առաջին դեպքում ծանր, ցածրաթրթիռ էներգիաները «կարգելակեն» արդյունքը, ապա երկրորդի դեպքում դուք արագ և թեթև կհասնեք նրան։

Նույնը վերաբերում է նաև խմբերի մեջ միավորվելուն՝ համակարգի հետ հետագա պայքարի համար։

Ջանացեք գտնել թրթռանքով ձեզ մոտ մարդկանց, որոնց հետ ամեն հարցում նույն ալիքի վրա կլինեք, այսինքն՝ կգործեք ներդաշնակ և փոխհամաձայնեցված կերպով։

Ամեն ինչում առաջնորդվեք ձեր ինտուիցիայով, որը միշտ կհուշի ճիշտ որոշումը և կուղղորդի դեպի հարկ եղած մարդիկ։

Եվ նոր Աստվածային էներգիաները, որոնք շռայլ հորձանքով ողողում են հիմա Երկիրը, կդառնան ձեր հավատարիմ օգնականները՝ իրենց ճանապարհին ջնջելով այն ամենը, ինչ հնացած է, ժամանակավրեպ, եռաչափ, ցածրաթրիռ։

Օրհնում եմ ձեզ, զավակնե՛րս, և անսահման սիրում...

ԶԱՎԱԿՆԵՐԻ ԵՎ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 2 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021 Թ.

Այսօր ես ուզում եմ շոշափել ձեզ համար հույժ հրատապ մի թեմա։

Շատերը հարց են տալիս իրենց. «Ինչպե՞ս կարող եմ ես անտարբեր լինել իմ երեխայի ճակատագրի նկատմամբ։ Ինչպե՞ս կարող եմ թողնել նրան բախտի քմահաճույքին»։

Շատ հաճախ ծնողներն իրենց ողջ կյանքում այդպես էլ ազատ չեն արձակում իրենց զավակներին ո՛չ մտովի, ո՛չ զգացմունքայնորեն, ո՛չ էլ էներգապես։

Նրանց թվում է, թե լոկ իրենք գիտեն՝ որն է լավագույնը իրենց որդու կամ դստեր համար, փորձելով միջամտել նրանց կյանքին երբեմն բավական կոպիտ և կպչուն ձևով։

Ընդ որում, նրանք անկեղծորեն կարծում են, թե այդպես արտահայտվում է իրենց սերը զավակների հանդեպ։

Իրականում դա ոչ այլ ինչ է, քան հենց այն «կապանքները», որոնց մասին խոսվեց իմ նախորդ ուղերձում։

Ուրեմն ինչպիսի՞ն պիտի լինեն զավակների և ծնողների հարաբերությունները Աստվածային տեսակետից։

Նախ և առաջ, դրանց հիմքը պիտի կազմեն Տիեզերքի Օրենքները, որոնց խախտումը միշտ աղավաղում է պարունակում իր մեջ թե՛ էներգետիկական, թե՛ ֆիզիկական պլանում։

Եվ ինչպես արդեն գիտեք, Տիեզերքի գլխավոր Օրենքներից մեկը **Ազատ Կամքի Օրենքն** է։

Նրա խախտումը իր հետ մեքենայաբար բերում է բազմաթիվ այլ խախտումներ, քանի որ այդ բոլոր օրենքները փոխկապակցված են և բխում են միմյանցից։

Եկե՛ք դա դիտարկենք կոնկրետ օրինակով։

Շատ հաճախ ծնողների գիտակցության մեջ որոշակի պատկեր է կազմված լինում հաջողակ կյանքի և դրան տանող ուղիների վերաբերյալ։

Նրանք ամենաբարի մղումներով փորձում են ստիպել զավակին ապրել ԻՐԵՆՑ ծրագրով՝ իրենց համոզմունքների և կյանքի մասին ունեցած պատկերացումների համաձայն կառուցելով նրա ճակատագիրը։

Բայց երբեմն պատահում է, և վերջին ժամանակներս առանձնապես հաճախ, որ խորապես եռաչափ գիտակցությամբ ծնողներից ծնվում են երեխաներ, որոնք աշխարհ են գալիս բոլորովին ուրիշ նպատակներով և կյանքային առաջնահերթություններով։

Դա հենց այն Աստվածային ցանքն է, որը ձեր Երկիր է իջել օգնելու մարդկանց իրագործելու Անցումը և կառուցելու Հինգերորդ չափման հասարակություն։

Նրանք իրենց ծննդից ի վեր բոլորովին ուրիշ են: Եվ եթե ծնողները մանկուց սկսում են «կոտրել» նրանց հոգեկան աշխարհը՝ հարմարեցնելով իրենց, խախտելով Տիեզերքի բոլոր Օրենքները, ապա փոքրիկ մարդը կարող է չդիմանալ նման ճնշմանը, և դրա հետևանքով նա կա՛մ կհիվանդանա, կա՛մ կվերածվի անկառավարելի, հոգեպես անհավասարակշիռ մարդու:

Դա հատկապես վերաբերում է նրա կյանքի առաջին տարիներին, որովհետև մինչև 13-14 տարեկանը երեխան դեռևս սերտորեն կապված է ծնողների հետ՝ գտնվելով նրանց էներգետիկական տարածության մեջ:

Ուստի, ձեր երեխաների հետ Տիեզերքի Աստվածային Օրենքներին համապատասխան ներդաշնակ հարաբերություններ կառուցելու համար դուք պետք է սովորեք ՀԱՐԳԵԼ նրանց իրենց կյանքի առաջին իսկ օրվանից՝ չվերաբերվելով նրանց որպես ձեր սեփականության, որը պարտավոր եք վերահսկել և որը կարող եք տնօրինել սեփական հայեցողությամբ:

Ես գիտեմ, որ զավակների նկատմամբ այդպիսի վերաբերմունքի անհրաժեշտության հիշատակությունն իսկ կոտրում է ձեր գիտակցության մնայուն կարծրատիպերը, թեև շատերը դեռևս պատրաստ չեն խոստովանելու դա:

Մարդիկ հաճախ ծայրահեղության մեջ են ընկնում կա՛մ չափազանցված հոգատարությամբ, կա՛մ լիակատար թողտվությամբ, որ ունեն սեփական երեխայի նկատմամբ, քանզի բավական բարդ է գտնել ոսկե միջինը զավակների հետ հարաբերության մեջ:

Իրականում դրանց հիմքում պիտի լինեն ԱՆՊԱՅՄԱՆ ՍԵՐԸ և ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՐԳԱՆՔԸ, ընդ որում՝ անկախ ձեր երեխայի տարիքից:

Եվ եթե կարողանաք ձեր զավակների հետ կառուցել նման հարաբերություններ ոչ թե խոսքով, այլ գործով, վերահսկողությունն ու ազատ կամքի ճնշումը երկուստեք կդառնան անկարելի՝ այդչափ ցածրաթրթիռ էներգիաների և Սիրո ու Հարգանքի Աստվածային էներգիաների անհամատեղելիության պատճառով:

Ինչպես տեսնում եք, սիրելինե՛րս, մարդկային բոլոր հարաբերությունների հիմքում միշտ ընկած է էներգետիկական բաղադրիչը։

Եվ եթե ձեր հարաբերությունները զավակների հետ կառուցեք ձեր վերին՝ Աստվածային չակրաների մակարդակում, ավելի ցածր մակարդակի էներգետիկական փոխկախվածությունը կդառնա անհնարին՝ ձեր ընդհանուր բարձր թրթիռներին անհարիր լինելու պատճառով։

ՄԻԱԲԵՎԵՌ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԵՐՈՒՆԴ

(ՊՐԱԿՏԻԿԱ)

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 28 ՄԱՐՏԻ 2022 Թ.

Եվ վերջին բանը, որին կուզեի հրավիրել ձեր ուշադրությունը, ձեր երեխաների դաստիարակությունն է արդեն նոր՝ միաբևեռ էներգետիկական «ձևաչափով», որի մեջ անկարող են ներգրվել եռաչափ աշխարհի ծրագրերը՝ իրենց ցածր թրթռանքի պատճառով։

Սակայն դա հնարավոր կդառնա միայն այն ժամանակ, երբ դուք ինքներդ ազատվեք այդ ծրագրերի ազդեցությունից։

Իհարկե, դա շատ ավելի հեշտ կլինի նրանց համար, որոնց երեխաները չեն հաճախում դպրոց կամ մանկապարտեզ, ուր իշխում է արդեն հաստատված դաստիարակչական համակարգ, որի հիմքում աշխարհի երկվութենական ըմբռնումն է և դրան համապատասխանող շփման կանոնները։

Եվ այդուհանդերձ, դուք կարող եք համահարթել այդ ծրագրերը՝ մատչելի ձևով բացատրելով փոքրիկներին Տիեզերքի Օրենքները և

բոլոր իրադարձությունների պատճառա-հետևանքային կապերը թե՛ իրենց սեփական կյանքում, թե՛ ամբողջ աշխարհում։

Հիմա դա անչափ կարևոր է, որովհետև Երկիր եկող նոր բարձրաթրթիռ էներգիաները չեն ներդաշնակում իրականության՝ եռաչափ աշխարհին բնորոշ երկվութենական ընկալման հետ։

Եվ եթե նման ծրագրերն արդեն ամրացած են ավագ սերնդի մարդկանց ենթագիտակցության մեջ, ապա երեխաները երկընտրանքի առաջ են, հատկապես բյուրեղային երեխաները, որոնք այժմ ծնվում են Երկրի վրա։

Նրանց գիտակցությունը, որ ի սկզբանե մաքուր է և պատրաստ Հինգերորդ չափման միաբևեռ աշխարհում ապրելուն, ենթարկվում է հին ծրագրերով ապրող մեծահասակների սաստկագույն էներգետիկական գրոհներին։

Եվ քանի որ երեխան չի կարող բացատրել, թե ինչ է կատարվում իր հետ, հաճախ իրեն պահում է մեծահասակների տեսակետից անհամարժեք ձևով, որոնք սովոր են գնահատել ուրիշների վարքը՝ ելնելով սեփական փորձից։

Իրականում երեխան իրեն անհարմար է զգում հենց էներգապես, քանի որ նրա ի բնե մաքուր էներգիան ամեն քայլափոխին հակասության մեջ է մտնում եռաչափ աշխարհի էներգիայի հետ, որը դեռ չի վերացել ձեր մոլորակից։

Այդպիսին է փոքրիկների ճակատագիրը, որոնք ծնվել են էներգապես անհամատեղելի երկու դարաշրջանների հանգուցակետում։

Սակայն երկրային կեցության նման դժվարին փորձը նրանց Հոգիներն են ընտրել։

Բարեբախտաբար, նրանց հետ միաժամանակ ձեր մոլորակի վրա ապրում է և ինդիգո սերունդը, որը եկել է նոր Երկրի ռահվիրաների հաջորդ ալիքին՝ բյուրեղային երեխաներին օգնելու համար։

Սակայն սուզվելով եռաչափ աշխարհի մեջ, նրանցից ոչ բոլորն են վերհիշել, թե ինչի համար են եկել, և ոչ բոլորն են բռնել Ծառայության

ուղին, ինչպես որ պլանավորել էին իրենց Հոգիները մարմնավորումից առաջ։

Այդ իսկ պատճառով հիմա յուրաքանչյուր արթնացած մարդ, որը գիտակցում է տվյալ պահի կարևորությունը, կարող է հոգևոր ուսուցիչ և հովանավոր դառնալ իր ճանապարհին հանդիպած ամեն երեխայի համար։

Եվ առաջին օգնությունը, որ կարող եք բերել երկու չափումների սահմանագծին հայտնված երեխաներին, նրանց հոգեկան վիճակի էներգետիկական հավասարեցումն է։

Եվ ահա թե ինչպես կարելի է դա անել։

Կանչեք ձեր բոլոր Երկնային օգնականներին, Հրեշտակներին և Հրեշտակապետերին, ձեր Գալակտիկական քույրերին և եղբայրներին և խնդրեք իրենց հովանավորության տակ առնել չամրացած մանկական հոգիները։

Աշխատեք ոչ միայն ձեր երեխաների և թոռների հետ, այլև ողջ մոլորակի մանուկների, որոնք հայտնվել են իրենց համար այսքան ծանր և հակասական էներգետիկական իրավիճակում։

Պարուրեք բոլոր մանուկներին Համբարձման Էներգիայով և խնդրեք նրան հավասարակշռության բերել նրանց նուրբ զգայական օրգանները, որպեսզի փոքրիկները հարմարավետ և ներդաշնակ զգան իրենց այս անցումային բարդ ժամանակաշրջանում. որպեսզի չկոտրվի նրանց հոգեկան աշխարհը, չխաթարվի առողջությունը, և նրանք բարեհաջող Անցում կատարեն նոր չափում։

Որքան կարելի է հաճախ կատարեք այդ մեդիտացիան, զավակնե՛րս, որովհետև նման երեխաների բազմաթիվ ծնողներ անչափ հեռու են Երկրի վրա տեղի ունեցող համամոլորակային իրադարձությունների ըմբռնումից, ինչպես և այն ամենից, ինչ կատարվում է իրենց սեփական երեխաների հետ՝ վերջիններիս հոգեկան ցավն ընդունելով որպես սովորական կամակորություն։

Օրհնում եմ ձեզ և անսահման սիրում. . .

ԳԼՈՒԽ VII

ԻՆՉԻ Է ՀԱՆԳԵՑՆՈՒՄ ՏԻԵԶԵՐՔԻ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԱՆՏԵՍՈՒՄԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԲԱՐԻՆ՝ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ

2. ՉԱՐԸ՝ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ

3. ՆԱԽԱՆՁ ԵՎ ՎԻՐԱՎՈՐԱՆՔ

4. ՎԻՐԱՎՈՐԱՆՔՆԵՐԸ՝ ՁԵՐ ԵՆԹԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ

5. ՏԻԵԶԵՐՔԻ Ո՞Ր ՕՐԵՆՔՆ Է ԽԱԽՏՎԵԼ

6. ՀՐԵՇՏԱԿԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

7. ԱՎԵՐԻՉ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

8. ԱԿԱՄԱ ԱԶԳԱԿԱՆՆԵՐ

9. ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ ԵՎ ՏԻԵԶԵՐՔԻ ՕՐԵՆՔՆԵՐԸ

10. ՆՈՐ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ

ԲԱՐԻՆ՝ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 22 ՀՈՒԼԻՍԻ 2019 Թ.

Ողջունում եմ ձեզ, իմ սիրասու՛ն զավակներ։

Այսօր ես ուզում եմ շարունակել զրույցը, թե ինչպիսին պետք է լինի Աստվածամարդու իդեալական փոխհարաբերությունը ուրիշ մարդկանց հետ։

Եվ այժմ մենք կխոսենք, թե ինչ է ԲԱՐՈՒԹՅՈՒՆԸ մարդկային և Աստվածային տեսակետներից։ Տեսնում եմ, որ շատերդ այդպես էլ լիովին չեք գիտակցել դրանց առանձնահատկությունները։

Երկվության աշխարհում բարության հակառակ կողմը չարն է, և հաճախ այն ի հայտ է գալիս ամենատարբեր ձևերով։

Սակայն բանն այն է, որ յուրաքանչյուր ոք իր սեփական իմաստն է ներդնում այդ երկու հասկացությունների մեջ։

Դրա պատճառն այն է, որ մարդիկ հետևում են բարու և չարի համընդհանրորեն ընդունված պատկերացումներին՝ չիմանալով դրանց Աստվածային էությունը։

Իսկական ԲԱՐՈՒԹՅՈՒՆԸ ոչ թե դիմացինի ապրումները կիսելն է կամ զգացմունքայնությունը, այլ ունակությունը՝ օգնելու մարդուն տեսնել իր տառապանքների և անհաջողությունների պատճառները և ելք գտնել բարդ իրավիճակից՝ ղեկավարվելով Տիեզերքի Օրենքներով։

Իսկ դա շատ ավելի դժվար է, քան արցունք թափել նրա հետ միասին, այդ կերպ հուզականորեն է՛լ ավելի բորբոքելով իրավիճակը։

Բարության Աստվածային բաղադրիչը գործուն, ստեղծարար օգնությունն է մարդկանց, որը թույլ է տալիս նրանց ելնել հոգևոր զարգացման ավելի բարձր մակարդակի։

Եվ այդպիսի օգնությունը կարող է ցուցաբերվել ինչպես էներգետիկական, այնպես էլ ֆիզիկական պլանում։

Եթե արդեն սովորել եք աշխատել էներգիաներով, կարող եք սեանս անել փորձանքի մեջ ընկած մարդու համար և ներդաշնակեցնել նրա վիճակը, կամ էլ պարզապես նրան հղել հոգին ջերմացնող Սիրո էներգիան:

Ինչ վերաբերում է բառերին, շատ կարևոր է, զավակնե՛րս, սովորել զորակցել մարդուն այնպես, որ նրա վիշտն ավելի չմեծանա, ինչպես լինում է հաճախ, այլ դուրս բերել նրան տառապանքի «գոտուց»՝ որևէ կերպ շեղելով ցավից և ստեղծագործական հունով տանելով նրա մտքերը:

Ինչու՞ է դա այդքան կարևոր:

Այդ կերպ դուք թույլ չեք տալիս տառապանքի էգրեգորին իր գերին դարձնել անախորժության մեջ հայտնված մարդուն, այսինքն՝ դուք էներգապես դուրս եք բերում նրան ցածրաթրթիռ էներգիաների հարվածի տակից և բարձրացնում եք ուրիշ էներգետիկական մակարդակ:

Եթե դժբախտությունը պատահել է ձեր մերձավորներից մեկին, կարող եք նույնիսկ ժամանակավորապես ձեր սեփական էներգետիկական դաշտի մեջ առնել նրան:

Սակայն դա կարելի է միայն այն դեպքում, եթե ուժ և վստահություն եք զգում ձեր մեջ, որ ինքներդ էլ չեք իջնի տառապանքի ցածր էներգիաների մեջ, այլ կկարողանաք նրա՛ն բարձրացնել ձեր ավելի բարձր թրթիռների մեջ:

Դա կարող է միջանկյալ փուլ դառնալ նրա համար, որոշակի կամրջակ՝ գիտակցելու կատարվածը արդեն ոչ թե կենցաղային՝ ֆիզիկական, այլ հոգևոր՝ Աստվածային տեսակետից:

Հավատացեք, զավակնե՛րս, որ լռելյայն գրկելով մարդուն և զետեղելով նրան ձեր բարձրաթրթիռ դաշտում, դուք նրա համար կանեք շատ ավելին, քան մեկը, որ հեղեղում է ցավակցական բառերով, այդ կերպ վերստին «թաղելով» նրան ծանր հուշերի մեջ, այսինքն՝ ստիպելով կրկին ու կրկին վերապրել կատարվածի կսկծալի պահերը:

Իսկ առօրյա կյանքում շատերն անկեղծորեն կարծում են, թե Բարությունն այն է, որ ամեն ինչում օգնես մերձավորներիդ ու ընկերներիդ՝ երբեմն նույնիսկ ի վնաս ինքդ քեզ։

Վարքագծի այդ կարծրատիպը բնորոշ է հատկապես կանանց, որոնք տարրալուծվում են իրենց ընտանիքների կյանքի մեջ՝ մոռանալով իրենց։

Եվ իհարկե, Աստվածային տեսակետից նման վարքագիծը ոչ մի ընդհանրություն չունի Բարության հետ, որովհետև այլասերում է այն մարդկանց հոգիները, որոնց մասին այդպես համառորեն և չափից ավելի հոգ են տանում։

Իսկ մարդն ինքը կորցնում է կապը իր սեփական Հոգու հետ, այսինքն՝ զրկվում է իր անհատականությունից և ապրում ոչ իր կյանքով։

ՉԱՐԸ՝ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 23 ՀՈՒԼԻՍԻ 2019 Թ.

Այսօր մենք կխոսենք, թե ինչ է Չարը Աստվածային տեսակետից։

Չեզ կարող է տարօրինակ թվալ, սակայն Չարը նույնպես Աստվածային ծագում ունի։

Բանն այն է, որ ցածրաթրթիռ աշխարհների համար, որպիսին նաև երրորդ չափումն է, ուր ապրում եք դուք, այն անխուսափելի է, որովհետև երկվության աշխարհում ամեն ինչ ունի իր հակառակը։

Անշուշտ, այդ հասկացության տակ ես նկատի չունեմ ցածրաթրթիռ հույզերը, օրինակ՝ ագրեսիան, ատելությունը, ագահությունը, խանդը, նախանձը և մյուս բացասական էներգիաները, որոնց ծնունդ են տալիս մարդիկ։

Չարը, Աստվածային տեսակետից, մարդու համար անբարենպաստ կյանքային հանգամանքներն են և նրա ճանապարհին ծառացող դժվարությունները, որոնք կոչված են կոփելու նրա Ոգին, սովորեցնելու ՄԻՇՏ մնալ մաքուր՝ սրտով և հոգով։

Ինչու՞ է մարդը իր կյանքի բարդ, երբեմն էլ ողբերգական իրավիճակներն ընդունում որպես Չարիք։

Ամենից հաճախ՝ որովհետև դրանից տառապում է նրա Էգոն, քանի որ չեն իրականանում նրա երազանքներն ու ցանկությունները, որպես կանոն՝ նյութական և էգոիստական բնույթի։

Իհարկե դա տարածվում է նաև մարդկանց հետ ունեցած հարաբերությունների վրա։

Այն ամենը, ինչ ըմբռնում չի գտնում իր կողմից, այդ թվում՝ նաև մարդիկ, որոնց հայացքները խորթ են իրեն, ինչ չի համապատասխանում իր պահանջներին ու ցանկություններին, մարդն ընդունում է որպես Չարիք։

Սակայն մենք արդեն շատ ենք խոսել, զավակնե՛րս, որ սովորել Անպայման Սիրուն, այսինքն՝ հասնել Աստվածամարդու վիճակին, կարելի է միայն դժվարին պայմաններում, որոնցում փորձարկվում է **ձեր Ոգու ուժը, ինչպես և ունակությունը՝ ապրելու Տիեզերքի՛ Օրենքներով**, այլ ոչ թե երկվության աշխարհի համամարդկային օրենքներով, որտեղ գոյատևում է ամենաուժեղը, իսկ առավել հաճախ՝ գործնական և անսկզբունք մարդը։

Շատ ավելի դժվար է հաղթել Սիրո ուժով, քան՝ եռաչափության «գործիքներով», որոնցից է խորամանկությունը, ճարպկությունը, քծնանքը, սուտը, խաբեությունն ու դաժանությունը այլոց նկատմամբ . . .

Մարդուն ի սկզբանե հատուկ է Բարությունը, որովհետև մարդը ստեղծվել է իմ պատկերով ու նմանությամբ։

Եվ միայն հայտնվելով օտարոտի ցածր թրթիռների մեջ, մարդը բախվում է Չարին՝ իր բոլոր դրսևորումների մեջ։

Սակայն հենց այդպես է ստուգվում ձեր Ոգու ամրությունը, որ չՁԱՐանաք ոչ մի պարագայում, այլ պահեք ձեր Աստվածային էությունը:

Դրա համար էլ դուք կրկին ու կրկին իջնում եք ավելի ցածր թրթիռների աշխարհները, որ ձեռք բերեք այդ դժվարին, բայց ձեր Հոգու համար անչափ կարևոր փորձը:

Դա կարելի է համեմատել սուզորդի՝ իր շնչառական համակարգը մարզելու հետ, որն ամեն անգամ ավելի խոր սուզվելով, նորից ու նորից դուրս է լողում և վերադառնում Լույսին:

Ոմանք, ճիշտ չհաշվելով իրենց ուժերը, կարող են և չելնել ջրի երես՝ ընդմիշտ մնալով ցածր թրթիռների «հատակում», ինչի մասին ես խոսել եմ իմ նախորդ ուղերձներում:

Բայց ձեր Երկրի համար վճռորոշ այս ժամանակաշրջանում այստեղ են եկել բազում լուսավոր, մաքուր ու հինավուրց հոգիներ, և ես հավատում եմ, դուք բոլորդ միասնաբար կհաղթահարեք ձեր կյանքում անխուսափելիորեն հանդիպող «չարը», ինչ տեսքով էլ որ գա ձեզ մոտ, և կհաղթեք ձեր Սիրո ուժով:

Անսահման սիրում եմ ձեզ, զավակնե՛րս, և օրհնում, որ այդպես լինի...

Բացարձակ-Հայրը խոսեց ձեզ հետ

ՆԱԽԱՆՁ ԵՎ ՎԻՐԱՎՈՐԱՆՔ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՁԸ, 22 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2016 Թ.

Ողջունում եմ ձեզ, իմ սիրասու՛ն զավակներ։

Որպեսզի լիակատար պատկերացում տամ այն էներգիաների մասին, որոնք ավերիչ ներգործություն ունեն, և զերծ պահեմ ձեզ դրանց ազդեցությունից, ուզում եմ այսօր պատմել, թե ինչ են վիրավորանքն ու նախանձը էներգետիկական տեսանկյունից։

Նախ խոսենք նախանձի մասին, որը այս կամ այն չափով զգացել է յուրաքանչյուր ոք։ Որտե՞ղ են նրա ակունքները, և ինչու՞ է այն այդպես քայքայիչ։

Նախանձը եռաչափ աշխարհի ամենաբնորոշ ծնունդն է։ Այն երկվության մարմնավորումն է՝ իր բոլոր դրսևորումներով։ Նախանձը նաև մարդկային էգոյի էներգետիկական «վառելանյութն» է։

Եկեք տեսնենք, թե ինչ է կատարվում նախանձով համակված մարդու հետ։ Վերցնենք մի այսպիսի օրինակ։

Ձեր շրջապատում կա մեկը, որ շատ հաջողակ է կյանքում։ Թվում է, թե ամեն ինչ ինքն իրեն է տրվում նրան՝ առանց մի ջանք թափելու։ Նա միշտ բարձր տրամադրություն ունի, միշտ գոհ է ամեն բանից։ Ապրում է իր կյանքը թեթև ու զվարթ։

Իսկ դուք, ի տարբերություն նրա, «քաշում եք ձեր լուծը»՝ հաղթահարելով անվերջանալի դժվարությունները, որոնք ամեն կողմից թափվում են ձեր գլխին։

Հետզհետե դուք սկսում եք նախանձել այդ մարդուն։ Ձեզ գրգռում է նրա հաջողությունը, ինքներդ ձեզ զգում եք նվաստացած, պակասավոր, իսկական անհաջողակ՝ նրա համեմատությամբ։

Իսկ ինչ է կատարվում այդ ժամանակ ձեր նուրբ մարմինների հետ։ Ունենալով շատ ցածր թրթռանք, նախանձի էներգիան դիսոնանսի մեջ

է մտնում ձեր նուրբ մարմինների հետ և աստիճանաբար քայքայում։ Դրանք դառնում են ցանցի պես ծակոտկեն, քանի որ մշտապես ենթարկվում են էներգետիկական հարվածների։

Եվ քանի որ այդ հարվածները գալիս են հենց ձեզնից, ապա դա նման է լինում փոքրիկ պայթյունների, որոնք առաջանում են ձեր մեջ կուտակված բացասական էներգիայի մեծ խտությունից։

Տեղի է ունենում բառիս բուն իմաստով մարդու ինքնաքայքայում։ Եվ որքան շատ է նա նախանձում, այնքան ավելի է քայքայում իրեն։

Այդ զգացմունքը կարող է աճել այնպիսի չափերի, որ մարդը ներքուստ տառացիորեն «ուտի» ինքն իրեն։ Հենց այստեղից է գալիս «նրան նախանձն է կրծում» արտահայտությունը։

Նմանատիպ «կրծող» էներգիա է նաև վիրավորանքը, որը ազգակից է նախանձին, չէ՞ որ նախանձելով՝ մարդը նեղանում է ճակատագրից, այն մարդուց, որի կյանքում, ի տարբերություն իրեն, ամեն ինչ կարգին է, ինքն իրենից և շուրջը եղած բոլոր մարդկանցից, որովհետև նրան թվում է՝ բոլորը տեսնում են, թե ինչ անհաջողակ է ինքը։

Եվ եթե նա չկարողանա ժամանակին կանգ առնել ու գիտակցել, թե ինչ է կատարվում իր հետ, դա կվերաճի լրջագույն հիվանդության։ Վիրավորանքի և նախանձի ախտորոշումը քաղցկեղն է, որ խժռում է հարյուր հազարավոր մարդկանց, որոնք անկարող են եղել տիրապետելու իրենց զգացմունքներին։

Իսկ հիմա ես կպատմեմ, թե ինչպես կարելի է ազատվել այդ զգացմունքներից և ձեռք բերել հոգեկան անդորր։

Փորձեք նայել ձեզ և այդ մարդուն Աստծու աչքերով։ Ի՞նչ նկատի ունեմ ես։

Մի՛ համեմատեք իրար հետ, մի՛ գնահատեք, մի՛ դատեք, այլ փորձեք թափանցել իրերի էության մեջ, այսինքն՝ հասկանալ տեղի ունեցողի խորքային պատճառները՝ առաջնորդվելով Տիեզերքի գլխավոր Օրենքով, որն ասում է՝ արտաքինն արտացոլում է ներքինը։

Ջանացեք զգալ հաջողակ մարդու հոգեկան վիճակը և հասկանալ, թե հատկապես ինչն է դեպի նա առնգում հաջողությունը։

Իսկ հետո խորասուզվեք ձեր ներքին ապրումների՝ ձեր հոգեկան վիճակի մեջ, որպեսզի տեսնեք իրադարձությունների պատճառա-հետևանքային կապերը։

Եթե անեք դա գիտակցաբար, ինքներդ ձեզ հասկանալու և նախանձի ու վիրավորանքի ավերիչ զգացումներից ազատվելու անկեղծ ցանկությամբ, անպայման կտեսնեք տեղի ունեցողի իրական պատկերը. որ հաջողակ մարդու գլխավոր հատկությունը նրա ներդաշնակ վիճակն է, որն էլ դրսևորվում է նրա հրաշալի տրամադրության և մարդկանց հանդեպ ունեցած բարյացակամության տեսքով, նրա անկեղծությունն ու բացությունը, վախի և անհանգստության բացակայությունը։

Նա ապրում է վստահությամբ աշխարհի նկատմամբ, և աշխարհը նրան պատասխանում է նույն կերպ։

Եվ այդ ժամանակ, զավակնե՛րս, դուք կհասկանաք, որ պետք է ընդամենը փոխեք ձեր ներքին վիճակը, ձեր վերաբերմունքը կյանքի նկատմամբ, որ հարկավոր է ոչ թե նախանձել այդ մարդուն, այլ շնորհակալ լինել իր ակամա տված դասի համար, որ սովորեցրել է ձեզ ապրել ներդաշնակության մեջ։

Հետևեք նրա օրինակին՝ վստահեք կյանքին, սովորեք հրճվել ձեր կեցության ամեն ակնթարթով, շնորհակալ լինել ձեր ունեցած ամեն ինչի համար, տեսնել միայն լավը և աչք փակել վատի վրա, և այդ ժամանակ ձեր ներդաշնակ ներքին վիճակը կսկսի դեպի ձեզ առնգել կյանքի բարիքները։

Ինքներդ էլ կզարմանաք, թե ինչպես կսկսի փոխվել ձեր իրականությունը և ինչ զարմանալի արագ են գործում Տիեզերքի Օրենքները։

Ամեն բան ձեր ձեռքում է, զավակնե՛րս։ Դուք ինքներդ եք ձեր կյանքի արարիչները։

Անսահման սիրող Բացարձակ-Հայրը խոսեց ձեզ հետ

ՎԻՐԱՎՈՐԱՆՔՆԵՐԸ՝ ՁԵՐ ԵՆԹԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 22 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018

Ողջունում եմ ձեզ, իմ սիրասու՛ն զավակներ։

Այսօր ես ուզում եմ շոշափել շատերիդ համար բավական ցավոտ մի թեմա, այն առնչվում է **ձեր վերաբերմունքին այն մարդկանց նկատմամբ, որոնք ժամանակին սաստիկ վիրավորել են ձեզ**։

Ես տեսնում եմ, որ շատերը, որոնք համարում են, որ արդեն վաղուց ներել են իրենց վիրավորողին, իրականում սոսկ քշել են այդ ցավը իրենց ենթագիտակցության ամենահեռավոր անկյունը։

Իսկ եթե ձեր կյանքում եղել են մի քանի կամ նույնիսկ տասնյակ այդպիսի վիրավորողնե՞ր։

Պատկերացնու՞մ եք, թե ինչ ծանր բեռ է կրում ձեր ենթագիտակցությունն իր «ուսերին»։

Հենց դա էլ կատարվում է շատ-շատերի հետ։

Նրանց լուսավորված գիտակցությունն արդեն մաքրվել է վիրավորանքի նսեմ էներգիաներից, բայց «ֆանտոմային ցավերը» դեռ մնացել են, ինչպես անդամահատված վերջույթով մարդկանց մոտ, որոնք նուրբ պլանում դեռ շարունակում են զգալ այն։

Հենց այդպես են զգում այդ ցավը ձեր նուրբ մարմինները և հատկապես՝ զգացմունքային մարմինը, որը հիմնական հարվածի կրողն է։

Ուրիշ մարդկանց հասցրած այդ վերքերը, որոնք չեն ապաքինվել մինչև վերջ, «սպիների» տեսքով ամրակայվում են ձեր ենթագիտակցության մեջ, որն իր մեջ է առնում մարդու նուրբ մարմինների մեջ տևականորեն մնացած բոլոր «կարծրացած» մտաձևերն ու հույզերը։

Ինչու՞ է այդպես լինում։

Առաջին հերթին այն պատճառով, որ ցանկացած վիրավորանք այնպիսի ուժգնության բացասական էներգիայի թանձրուկ է, որը կարելի է համեմատել ջուրը նետված քարի հետ, որն անցնելով բոլոր շերտերը՝ հասնում է հատակին և այլևս անշարժ մնում այնտեղ։

Եվ եթե պատկերացնենք մարդու մարմինը որպես ջուր, իսկ հատակը՝ նրա ենթագիտակցությունը, կհասկանաք, թե որքան «քարեր» են հայտնվում այնտեղ ողջ կյանքի ընթացքում։

Եվ ձեր ենթագիտակցության մաքրումը եռաչափ աշխարհի բոլոր բացասական ծրագրերից, այդ «քարերի» ջրի երես դուրս բերումն է, մինչև որ հատակին չմնա ոչ մի «մանրախիճ», անգամ ամենափոքր փշուրը։

Ինչու՞ հենց վիրավորանքն է այդքան ցավագին խոցում մարդում։

<u>Առաջին հերթին՝</u> որովհետև այն նվաստացնում է մարդու սեփական արժանապատվության զգացումը, որը հատուկ է բացարձակապես բոլոր մարդկանց։

Հենց սեփական արժանապատվության զգացումն է մարդկային անձի հիմքը։ Եվ ցանկացած անարգանք այդ անձի նկատմամբ, ավերիչ էներգիաներ է կրում իր մեջ։

<u>Երկրորդ՝</u> ինտուիտիվ մակարդակում մարդը միշտ զգում է, որ խստագույն բաժանում է գնում իր և իրեն վիրավորողի միջև, այսինքն՝ երկվությունն ի հայտ է գալիս խտացած տեսքով։

<u>Երրորդ՝</u> ցանկացած վիրավորանք դավաճանություն է պարունակում իր մեջ՝ այս կամ այն տեսքով, այսինքն՝ ավերում է մարդկանց փոխադարձ վստահությունը։

<u>Եվ չորրորդ՝</u> այն զրկում է մարդուն իր նկատմամբ ունեցած վստահության զգացումից և ընդհանրապես աշխարհի նկատմամբ ունեցած վստահությունից։

Այդ կերպ, ցանկացած վիրավորանք պատին է դեմ անում մարդում՝ հանում է նրան հավասարակշռության վիճակից։

Այսքանով կսահմանափակվենք այսօր։

ՏԻԵԶԵՐՔԻ Ո՞Ր ՕՐԵՆՔՆ Է ԽԱԽՏՎԵԼ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 10 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018 Թ.

Ավարտելու համար զրույցը, թե ինչու վիրավորեցին ձեզ, ես կուզեի, որ ինքներդ ձեզ տաք **վերջին** <u>հարցը</u>.

Տիեզերքի ո՞ր Օրենքի խախտումն է ինձ բերել տվյալ վիրավորանքին։

Եթե արդեն սովորել եք գործնականորեն կիրառել Տիեզերքի Օրենքները, ապա դա դժվար չի լինի ձեզ համար։

Հարկավոր է ի հայտ բերել դրդապատճառները, որոնցով շարժվել է ձեզ վիրավորող մարդը։

Իսկ հետո՝ հասկանալ, թե Տիեզերքի Օրենքներից ո՞րն եք ԴՈՒՔ խախտել։

Եկեք դա դիտարկենք կոնկրետ օրինակով։

Ենթադրենք, դուք ձեր տեսանկյունից անհարկի նկատողություն եք ստացել վերադասից, որ սաստիկ խոցել է ձեր ինքնասիրությունը։

Եվ եթե դուք, ձեր վիրավորանքը կրկին ու կրկին վերապրելու փոխարեն, ինչով է՛լ ավելի կբորբոքեք ինքներդ ձեզ, պարզեք տեղի ունեցածի իրական պատճառը և ողջ սրտով ընդունեք,

էներգետիկական պլանում գրեթե վայրկենապես տեղի կունենան փոփոխություններ, որոնց կհետևի բախման չեզոքացումը ֆիզիկական պլանում:

Ենթադրենք, ձեզ կշտամբել են, որ դուք ամեն ինչ անում եք հապճեպորեն և վերջին րոպեին, ինչը հարվածի տակ է դնում ձեզնից կախված մարդկանց աշխատանքի արդյունքները:

Եթե դուք հանգիստ վերաբերվեք քննադատությանը, ընդունելով այն փաստը, որ իսկապես անկազմակերպ եք և չեք կարողանում առաջնահերթություններ դնել ձեր աշխատանքում, ապա արագ կշտկեք իրադրությունը՝ սկսելով դրականորեն փոխվել:

Իսկ եթե ջանաք արդարանալ և ի պատասխան բերել բազմաթիվ փաստարկներ ձեր աշխատառճը պաշտպանելու համար, բախումը խրոնիկական բնույթ կընդունի՝ անախորժություններ պատճառելով թե՛ ձեզ, թե՛ ձեր գործընկերներին:

Այդ դեպքում Տիեզերքի ո՞ր Օրենքն եք դուք խախտում:

Գրեթե բոլոր:

Միասնության Օրենքը, քանի որ հակադրում եք ձեզ մյուսներին. ես աշխատում եմ այնպես, ինչպես ձեռնտու է ինձ, և ցանկություն չունեմ հարմարվելու մյուսներին:

Իրականում դուք զրկում եք ձեր գործընկերներին հոգեկան հարմարավետությունից, որովհետև նրանք, ի տարբերություն ձեզ, սովորել են բաշխել իրենց ժամանակն այնպես, որ աշխատանքն ավարտեն ժամկետին և հնարավորություն ունենան հանգիստ ստուգելու ու վերստուգելու արվածը:

Անդրադարձման օրենքը, քանի որ ձեր գոռոզությունը (гордыня) և շուրջը եղած մարդկանց հետ հաշվի նստելու անկարողությունը դեպի ձեզ են առձգել վերադասի նկատողությունը՝ ձեզ համար վիրավորական ձևով:

Պատճառա-հետևանքային կապի Օրենքը, քանի որ ձեզ շրջապատողների դժգոհության հիմքում աշխատանքի հանդեպ ունեցած ձեր մոտեցումն է, որն անընդունելի է մյուսների համար։

Եվ վերջապես՝ **Զգողության Օրենքը**, քանի որ աշխատանքը ժամանակին չհասցնելու ձեր մշտական վախն էլ հենց ձգել-բերել է «պատիժը»՝ ձեզ հասցված վիրավորանքի տեսքով։

Եվ, իհարկե, միակ ճշմարիտ լուծումը կլինի ընդունել, որ դուք իսկապես չեք կարողանում տնօրինել ձեր ժամանակը, ինչը հանգեցնում է թե՛ ձեր, թե՛ աշխատանքի բերումով ձեզ հետ կապված գործընկերների մշտական սթրեսին ու լարվածությանը։

Այնուհետև հարկավոր է անել ամեն ինչ իրավիճակի ներդաշնակեցման համար, ընդունելով սեփական սխալները և անկեղծորեն հայտնելով ձեր մտադրությունը՝ փոխելու ձեր աշխատառճն այնպես, որ մյուսները չտուժեն դրանից։

Այդպիսի մոտեցումը ձեզ հասցված ցանկացած վիրավորանքին, ձեզ կօգնի ոչ միայն բացահայտել դրա սկզբնապատճառը, այլև գտնել բախման հանգուցալուծման բանալին ի բարձրագույն բարօրություն բոլորի։

Եվ ես օրհնում եմ ձեզ, որ այդպես լինի, զավակնե՛րս։

ՀՐԵՇՏԱԿԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 6 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020 Թ.

Իսկ այժմ կխոսենք երկրորդ սկզբունքի մասին, որ ընկած է Միքայել Հրեշտակապետի Երկնային զորքի գործունեության հիմքում՝ **Աստվածային նպատակահարմարության սկզբունքի**։

Հենց այս սկզբունքն է բոլոր Լուսավոր Ուժերի և երրորդ խտության աշխարհներում մարմնավորված հոգիների փոխգործակցության գլխավոր մեկնակետը։

Եվ Երկիրը նույնպես բացառություն չի կազմում։

Ինչպես արդեն գիտեք, Ազատ Կամքի Օրենքը հարգվում է Բարձրագույն աշխարհներում բնակվող անխտիր բոլոր էակների կողմից։

Այդ իսկ պատճառով ցանկացած միջամտություն մարդու էներգետիկական տարածքին, առավել ևս՝ ճակատագրին, Լույսի Ուժերի համար շատ նրբախնդիր և զգայուն հարց է։

Նախքան այդպիսի միջամտությունը, նրանք հաշվարկում են իրադարձությունների զարգացման բոլոր հնարավոր տարբերակները, և միայն եթե մարդուն սպառնում է իրական վտանգ և նա ինքը կամ իր Պահապան Հրեշտակը օգնություն է խնդրում, այդ օգնությունը գալիս է, և գալիս է հենց այն տեսքով, որը համապատասխանում է այդ նույն Աստվածային նպատակահարմարությանը։

Որպեսզի ավելի լավ պատկերացնեք մարդու և Միքայել Հրեշտակապետի Լույսի Ռազմիկների փոխգործակցության մեխանիզմը, եկեք քննենք դա կոնկրետ օրինակով։

Երբեմն Ծառայության ելած, այսինքն՝ Մութ Ուժերի համար ուղղակի սպառնալիք ներկայացնող մարդը ենթարկվում է նրանց սաստկագույն գրոհներին։

Որպես կանոն, սկզբում այդ մարդը փորձում է ինքը պաշտպանել իրեն՝ մաքրելով իր էներգետիկական տարածությունը, ներդաշնակեցնելով չակրային համակարգը, ջանալով դրական հոգեբանական տրամադրվածք պահպանել իր ներսում։

Բայց եթե գրոհները չեն դադարում և նա զգում է, որ ի վիճակի չէ ինքնուրույն դիմակայելու, օգնության է կանչում Միքայել Հրեշտակապետին։

Ի՞նչ է կատարվում այնուհետև։

Կախված նրանից, թե բացասական էներգիայի ո՞ր տեսակն է կազմում գրոհի հիմքը, դեպի մարդն է ձգվում Միքայել Հրեշտակապետի Երկնային Գվարդիայի այս կամ այն «զորահրամանատարը»՝ իրավիճակը գնահատելու համար։

Եվ դա անչափ կարևոր պահ է, քանի որ Մութ Ուժերի գրոհները կարող են տարատեսակ էներգիաներ բովանդակել՝ վիրավորանք, նախանձ, խանդ, չարություն, ագրեսիա, ատելություն . . .

Օրինակ՝ ուժեղ վիրավորանքի էներգիան համանման է ագրեսիային և ատելությանը, և կարող է մահացու լինել նրա համար, ում դեմ ուղղված է։

Այդ իսկ պատճառով Լույսի Ուժերը սկսում են իրենց աշխատանքը որոշելով չարի աղբյուրը՝ բացասական էներգիայի տեսակը, որ պետք է չեզոքացնեն, և ի հայտ բերելով այն էություններին, որոնք ծնունդ են տալիս դրան։

Սակայն մի՛շտ հարկավոր է հիշել, որ մարդն ինքը որպես Աստվածային էակ ունակ չէ վնաս հասցնելու որևէ մեկին։

Բոլոր էներգետիկական գրոհները իրագործում են տարբեր տեսակների և մակարդակների աստրալ էությունները, որոնց իր

էներգետիկական տարածություն է մտցնում այդ մարդը իր բացասական մտքերով ու հույզերով։

Եվ Լույսի Ուժերի պայքարը հենց աստրալ էությունների հետ է, և ոչ թե մարդու, թեև այդ գրոհն սկսելու «մեղքը», իսկ ավելի ճիշտ՝ պատասխանատվությունը ընկնում է հենց նրա վրա։

Եվ այսպես, որոշելով, թե տվյալ դեպքում Երկնային Գվարդիայի որ զորամասը պիտի մարտնչի, Լույսի Ուժերը գործի են անցնում, և նուրբ պլանում տեղի է ունենում իսկական աստրալ ճակատամարտ, որի ելքը մեծապես կախված է նրանից, թե ինչ վիճակում է օգնություն խնդրող մարդը։

Եթե նա համակված չէ ոչ մի տեսակի բացասական էներգիայով, ճակատամարտի ելքը, որպես կանոն, կանխորոշված է լինում հօգուտ Լույսի Ուժերի։

Իսկ եթե նա ինքն էլ է ծնունդ տալիս ցածրաթրթիռ էներգիաների՝ այդ կերպ սնուցելով Խավարի Ուժերին, նրա պաշտպանությունը նուրբ պլանում զգալիորեն թուլանում է։

Հիմա հասկանում եք, զավակնե՛րս, ինչու եմ այսքան հաճախ կրկնում, որ **չի՛ կարելի ագրեսիային պատասխանել ագրեսիայով, վիրավորանքին՝ վիրավորանքով**։

Այդպես դուք ձեր ուժը տալիս եք Խավարին՝ զրկելով ձեզ Լույսի Ուժերի լիարժեք պաշտպանությունից։

Մի՛շտ հիշեք այս մասին և ճակատագրի ցանկացած հարված ընդունեք որպես հերթական փորձություն, որը կանցնեք արագ և անցավ միայն այն դեպքում, եթե չսնուցեք ձեր բացասական էներգիաներով, այսինքն՝ եթե թույլ տաք Միքայել Հրեշտակապետի Լույսի Ռազմիկներին հնարավոր առավելագույն օգնությունը ցուցաբերել ձեզ Երկրի նուրբ պլանից։

Օրհնում եմ ձեզ և անսահման սիրում։

Բացարձակ-Հայրը խոսեց ձեզ հետ

ԱՎԵՐԻՉ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 29 ՄԱՅԻՍԻ 2021 Թ.

Այսօր ես ուզում եմ անդրադառնալ ձեր հոգևոր ուղու փուլերի շուտափույթ հաղթահարման գործողությունների պլանի **չորրորդ կետին**։

Եվ այսպես, դուք այլևս չեք դիտում ու լսում պաշտոնական լրատվամիջոցները, աշխատել եք ձեր վախերի հետ՝ քշելով ձեր գիտակցությունից ու ենթագիտակցությունից, սովորել եք պաշտպանել ձեր էներգետիկական տարածությունը արտաքին ազդեցություններից և յուրացրել եք ամենատարբեր մարդկանց հետ շփվելու սկզբունքները։

Սակայն դուք պետք է անշուշտ հասկանաք, որ ձեր կատարելագործման պրոցեսը վերջ չունի, հետևաբար դուք պետք է մշտապես հսկեք ձեզ, գիտակցաբար վերաբերվեք ինքներդ ձեզ, որովհետև ստիպված եք կրկին ու կրկին հանձնել «ամրության ստուգարքները», որ ձեզ համար կկազմակերպեն կյանքն ու մերձավորները։

Եվ հիմա եկել է ժամանակը խոսելու **ձեր ներքին տարածության պաշտպանության մասին արդեն ոչ թե արտաքին ազդեցություններից, այլ հենց ձեզնից**, այսինքն՝ ձեր Էգոյից և տարիներով ձեռք բերված սովորություններից։

Ու թերևս հենց դա է փորձաքար դառնում շատերիդ համար՝ ձեր հոգևոր ճանապարհի ընթացքում։

Ինչու՞ է այդչափ դժվար լինում ազատվել սեփական վատ սովորություններից։

Նախ և առաջ այն պատճառով, որ աննկատ են ձեզ համար, քանի որ դարձել են արդեն ձեր երկրորդ բնավորությունը։

Եկեք դիտարկենք, օրինակ, մերձավորների մասին հոգ տանելու սովորությունը, որ եռաչափ աշխարհի մարդու տեսանկյունից հրաշալի հատկություն է համարվում։

Իսկ ի՞նչ կա թաքնված այդ՝ թվում է թե լավ սովորության տակ։

Շատերը, հատկապես կանայք, այնքան են սովորել վերահսկել մերձավորներին, որ չեն էլ նկատում դա։

Որպես հետևանք, էներգետիկական մակարդակում տեղի են ունենում այսպիսի պրոցեսներ։

Զգտելով ամեն ինչ իմանալ իրենց որդու, դստեր, ամուսնու կամ կնոջ, ծնողների, ընկերների, գործընկերների յուրաքանչյուր քայլի մասին, նման մարդիկ մշտապես գտնվում են նրանց դաշտում՝ առանց քաշվելու ներխուժելով ուրիշի էներգետիկական տարածություն։

Եվ նույնիսկ եթե նման ներխուժման նպատակը հոգածությունն է և օգնելու, ինչ-որ բանից պաշտպանելու, կյանքը թեթևացնելու ցանկությունը, այնուամենայնիվ դա **Ազատ Կամքի Օրենքի** խախտում է։

Եվ ահա թե ինչու։

Այդ մարդկանց թվում է, թե հենց իրե՛նք գիտեն՝ ինչպես և ինչ պետք է անեն ուրիշները, ինչը կլինի նրանց համար ավելի լավ, ավելի օգտակար, ապահով, ձեռնտու. . .

Դրա հետևանքով տեղի է ունենում այն մարդու անձի ճնշում, որին շարունակ փորձում են օգնել՝ թույլ չտալով ինքնուրույն որոշումներ ընդունել և ձեռք բերել իր սեփական փորձը։

Չէ՞ որ եթե անգամ այդ փորձը բացասական լինի, այն կլինի սեփական, այլ ոչ թե ուրիշի փորձը։

Բացի այդ, նման հարաբերություններում տեղի է ունենում մշտական էներգետիկական փոխազդեցություն, որը բերում է անասելի տխուր հետևանքների, քանի որ հանգեցնում է այն մարդու դիմազրկմանը, որի զգացմունքները, մտքերն ու արարքները վերահսկվում են։

Նրա էներգետիկական տարածության մեջ ամուր հաստատվում է ուրիշի էներգիան և, ինչը առավել ցավալի է, **ուրիշի կարման**։

Այսպես, օրինակ, եթե մարդուն ճակատագրով նախասահմանված է իր մտածած գործը հասցնել բարեհաջող ավարտին, իսկ մերձավորներից մեկը, ելնելով սեփական փորձից, խոչընդոտում է դրան, մարդու կյանքի ողջ սցենարն արդեն գնում է սխալ՝ իր համար չնախատեսված ճանապարհով։

Եվ ցավոք սրտի, եռաչափ աշխարհում դա պատահում է ամեն քայլափոխին։

Օրինակ, հաճախ ծնողներն են ընտրում իրենց զավակների մասնագիտությունը, կյանքի ընկերոջը, կեցության երկիրը, տունը և շատ ուրիշ բաներ՝ ղեկավարվելով իրենց տեսանկյունից լավագույն նկատառումներով, իսկ իրականում այդ կերպ խեղելով նրանց կյանքը։

Ինչու՞ ես հենց ա՛յդ օրինակը բերեցի։

Որովհետև հենց այդտեղ կարելի է հրաշալի տեսնել գործողությունների շարժառիթները թե՛ նրանց, ովքեր միջամտում են ուրիշի կյանքին, թե՛ նրանց, ովքեր ընդունում են նման «հոգատարությունը»։

Տվյալ դեպքում տեղի է ունենում «խաչաձև» ազդեցություն մեկմեկու վրա և միաժամանակ մարդու ներքին հատկությունների ներգործություն իր իսկ վրա, այսինքն՝ նաև իր հոգևոր ուղու վրա։

Այդպես, «հովանավորը» կամ «վերահսկիչը», մշտապես մյուսին պարտադրելով իր կարծիքը, սնուցում է իր Էգոն ու գոռոզությունը, իսկ նա, ով ենթարկվում է նրան, ցուցաբերում է թուլություն և անվստահություն ինքն իր նկատմամբ։

Արդյունքում երկուսն էլ խախտում են Ազատ Կամքի Օրենքը. առաջինը՝ պարտադրելով այն ուրիշին, երկրորդը՝ վախենալով այն դրսևորել։

Իսկ ընդհանուր առմամբ, թե՛ մեկին, թե՛ մյուսին ղեկավարում է **Վախը**՝ իր այլազան դրսևորումներով։

Առաջինի մոտ՝ մերձավորների վերահսկողության կորստի վախն է, երկրորդի մոտ՝ ինքնուրույն որոշում ընդունելու վախը։

Ինչպես տեսնում եք, զավակնե՛րս, յուրաքանչյուր բացասական էներգիայի կամ աններդաշնակ մտքի հիմքում միշտ Վախն է, որը ծնունդ է տալիս անվստահության իր և շուրջը եղած մարդկանց նկատմամբ, ինչն էլ վերջիվերջո հանգեցնում է բացասական հետևանքների։

ԱԿԱՄԱ ԱԶԳԱԿԱՆՆԵՐ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 8 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021 Թ.

Շարունակելով իմ նախորդ ուղերձը, այսօր կխոսենք ձեր գիտակցության գլխավոր կարծրատիպերից մեկի մասին՝ որ դուք ձեզ պատասխանատու եք համարում ձեր մերձավորների կյանքի և բարօրության համար։

Եկեք փորձենք որոշել այն սահմանը, որը զատում է հոգատարությունն ու սրտագին ջերմությունը, որոնք մարդու Աստվածային հատկություններից են, վերահսկողությունից և ուրիշի կամքի ճնշումից։

Եթե առաջինը Սիրո բնական դրսևորում է, ապա երկրորդը նույն երկվության ծնունդն է, և նա թելադրում է ձեզ իր կանոնները, որոնց հիմքում ձե՛ր հասկացողությունն է, թե ինչն է ավելի լավ ու օգտակար ձեր մտերիմներին։

Այդպես, միջամտելով ձեր հարազատների կյանքին,- երեխաների, թոռների, ծնողների, ամուսնու, կնոջ, երբեմն էլ՝ ընկերների,- դուք ակամա ներխուժում եք նրանց ներաշխարհը, որը ջանում եք հարմարեցնել ձեզ՝ կյանքի ձեր ըմբռնմանը։

Եվ այստեղ անչափ կարևոր է հիշել, որ դուք բոլորդ եկել եք տարբեր աշխարհներից, չափումներից և մոլորակներից։

Այդ պատճառով էլ յուրաքանչյուրդ ունի ի՛ր Հոգու խնդիրները։

Երբեմն դրանք այնքան տարբեր են, որ եռաչափ աշխարհի մարդու համար չափազանց դժվար, երբեմն էլ՝ անհնարին է դա գիտակցել։

Թերևս ամենացավալին ծնողների և զավակների փոխադարձ անըմբռնողությունն է։

Ձեզ թվում է, թե ձեր երեխան պարզապես չի կարող մտածել այլ կերպ, քան դուք, չէ՞ որ նա ձեր միս ու արյունն է, ամենահարազատ էակը, և եթե ձեր կարծիքները ինչ-որ բանում չեն համընկնում, դուք անում եք հնարավոր ամեն ինչ նրա մտքերն ու հույզերը ՁԵԶ ցանկալի հունով տանելու համար։

Սակայն եթե նայեք իրավիճակին բարձրագույն կարգի էակի աչքերով, որն արդեն դուրս է եկել երրորդ խտության աշխարհից, կտեսնեք բոլորովին այլ պատկեր։

Դուք կհասկանաք, որ չնայած ձեր հարազատ մասնիկը լինելուն, ձեր որդին կամ դուստրը միանգամայն ինքնուրույն էակներ են, որոնք այլ կերպ են նայում կյանքին սոսկ այն պատճառով, որ այդպես է խնդրում իրենց Հոգին, որը եկել է այս Երկիրը իր սեփական դասերն անցնելու համար։

Հավանաբար ձեզնից յուրաքանչյուրը կարող է հիշել օրինակներ սեփական կյանքից կամ ծանոթների կյանքից, երբ ծնողները լավագույն դիտավորություններով ստիպել են իրենց զավակներին ընտրել «հուսալի» և լավ վարձատրվող մասնագիտություն, քանի որ անկեղծորեն համարել են, որ դա երջանկություն և բարօրություն կբերի իրենց սիրելի երեխային։

Արդյունքում, նա, ով լսել է իր ծնողներին և դեմ գնացել սեփական Հոգու ցանկությանը, ամբողջ կյանքում զբաղվել է չսիրած գործով՝ այդ կերպ զրկելով իրեն կեցության ուրախությունից։

Իսկ եթե երիտասարդին հաջողվել է պաշտպանել ընտրելու իր իրավունքը և անել այն, ինչ ինքն է ուզել, և ոչ թե իր ծնողները, ապա անհաջողության դեպքում անգամ դա թույլ է տվել նրան կենսափորձ ձեռք բերել և ինքնուրույն շարունակել իր կյանքը։

Երախտամոռ չերևալու համար երեխաները հաճախ գնում են փոխզիջման և ի սեր ծնողների ավարտում ինչ-որ բուհ, սակայն հետո վերադառնում են իրենց սիրած գործին։

Ուրեմն ինչպե՞ս ազատվեք, զավակնե՛րս, մերձավորների մասին հոգ տանելու՝ ձեր աշխարհում այնքան տարածված այդ կարծրատիպից։

Ամենից առաջ հարկավոր է հասկանալ, որ այս կյանքում դուք «մերձավոր» եք դարձել պատահաբար՝ միմյանց ձգվելով ձեր Հոգիների նպատակների և խնդիրների համաձայն, որոնք դեռ նախքան ծնունդը որոշել են, որ հենց այդպիսի «հարազատությունը» կլինի իրենց համար ամենաարդյունավետ և օգտակար «մարզասարքը», որը թույլ կտա լավագույն ձևով անցնել իրենց պլանավորած դասերը տվյալ մարմնավորման ընթացքում։

Եվ որքան բարդ են հարաբերությունները ինչ-որ ընտանիքում, այնքան օգտակար է փորձը, որ ձեռք է բերում բախման մասնակիցներից յուրաքանչյուրը։

Սովորաբար դժվարն այն է, որ պաշտպանելով սեփական շահերը, նրանցից յուրաքանչյուրը առաջնորդվում է իր Խելքով, որը մարդու ղեկավարն է եռաչափ աշխարհում, ինչպես նաև Էգոյով, որը սնունդ է տալիս Խելքին՝ ձեռնածելով նրան իր շահերին համապատասխան։

Սակայն հենց որ մարդը սկսում է արթնանալ և դուրս գալ երկվության սահմաններից, առաջին պլան են ելնում նրա Աստվածային գիտակցությունը և սրտի «խելքը», որը ղեկավարվում է արդեն բոլորովին այլ նկատառումներով։

Սրտի «խելքի» իմաստությունն այն է, որ մերձավոր մարդը ընդունվում է ձեր կողմից այնպիսին, ինչպիսին կա, այլ ոչ թե այնպիսին, ինչպես դուք կուզեիք նրան տեսնել, այսինքն՝ վերահսկումը և սեփական

կամքի պարտադրումը դառնում է այլևս անկարելի՝ նրա անհատականության և անկրկնելիության գիտակցման շնորհիվ։

Անսահման սիրող Բացարձակ-Հայրը խոսեց ձեզ հետ

ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ ԵՎ ՏԻԵԶԵՐՔԻ ՕՐԵՆՔՆԵՐԸ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 30 ՄԱՅԻՍԻ 2019 Թ.

Ողջունում եմ ձեզ, իմ սիրասու՛ն զավակներ։

Ավարտելու համար զրույցը կենդանական աշխարհի մասին, ես կպատմեմ այսօր նրա այն ներկայացուցիչների մասին, որոնք ոչ միայն ուրախություն չեն պատճառում մարդուն, այլև երբեմն վախեցնում կամ խորշանք են առաջացնում։

Դրանք և՛ սողուններն են, և՛ մանր կրծողները, և՛տարատեսակ միջատները, ինչպես օրինակ՝ տզերը, մոծակները, մորեխները։

Ձեզ երբեմն թվում է, թե նրանք ստեղծվել են միայն ձեր կյանքը թունավորելու համար։

Սակայն, իհարկե, այդպես չէ, զավակներս։ Բնության մեջ ամեն ինչ ներդաշնակ է, և եթե ինչ-որ բան դուրս է գալիս սովորական սահմաններից, ապա միշտ կա պատճառ, այն է՝ մարդը խախտել է հավասարակշռությունը իր կյանքի որևէ բնագավառում, բնական աշխարհի որևէ հատվածում։

Եվ դրա շատ վառ օրինակն է Չինաստանը, որը ժամանակին զանգվածաբար ոչնչացրեց ճնճղուկներին՝ այդ կերպ խախտելով բնական հավասարակշռությունը, ինչի արդյունքում արդեն միջատները սկսեցին զանգվածաբար ոչնչացնել տեղի ցանքերը։

Ցավոք, մարդու միջամտությունը բնական աշխարհին միշտ գալիս է խելքից։

Նրանք, ովքեր անհաղորդ են Տիեզերքի Օրենքներին, որոնց հիմքում Աստվածային նպատակահարմարության սկզբունքն է, վնասից բացի ուրիշ ոչինչ չեն կարող բերել բնական կամ կենդանական աշխարհին, ինչ բարի մտադրություններով էլ որ քողարկվեն կամ ինչ գործնական նկատառումներով էլ որ ղեկավարվեն։

Նույնիսկ մեծ քաղաքների պատուհասը դարձած մկների, առնետների և ուտիճների զանգվածային արշավանքը հետևանքն է այն բանի, որ մարդիկ թաղվել են անմաքրությունների մեջ, որոնք ի վիճակի չեն պատշաճորեն վերամշակելու։

Ցանկացած բնական հավասարակշռության խախտում վայրկենաբար անդրադառնում է կենդանական աշխարհի հետ ունեցած ձեր հարաբերությունների վրա և, իհարկե, ամեն ինչ սկսվում է էներգետիկական «շեղումից», որի արդյունքում իր ուժի մեջ է մտնում Անդրադարձման Օրենքը։

Եվ դրսևորվում է այն հաճախ շատ անսպասելի ձևով։ Այդպես, ոչնչացնելով կենդանիների մի տեսակը, դուք պատասխան հակահարված եք ստանում ուրիշ տեսակներից, որոնց կարծես թե չէիք նեղացրել, ինչպես եղավ չինական ճնճղուկների պատմության մեջ։

Բայց հիմա Երկրի վրա ի հայտ են եկել բազում այդպիսի օրինակներ. ձեր մոլորակի վրա ոչնչացվում և անհետանում են կենդանիների ամբողջ տեսակներ, և դրա հատուցումն անխուսափելի է, քանի որ ոչ ոք ի զորու չէ վերացնելու կամ մեղմելու Տիեզերքի Օրենքները, որոնք դրսևորվում են Երկրի վրա ապրող որևէ կենդանի էակի կամքից անկախ։

Այդ Օրենքները տարածվում են ոչ միայն ձեր մոլորակի, այլև ամբողջ Տիեզերքի էներգետիկական տարածության վրա։

Նրանց են ենթարկվում ձեր ամեն մի շունչը, ամեն մի միտքը՝ նույնիսկ թռուցիկ, ամեն հույզն ու արարքը։

Ամեն ինչ վաղ թե ուշ բումերանգի պես վերադառնում է ձեզ։

Սակայն դուք պետք է պարզ հասկանաք, զավակնե՛րս, որ այդ բոլոր Օրենքները գործում են ոչ միայն առանձին մարդու կամ որևէ այլ կենդանի էակի էներգետիկական սահմաններում, այլև՝ ընտանիքի, աշխատանքային կոլեկտիվի, քաղաքի, երկրի, մայրցամաքի և ողջ մոլորակի։

Այդ անտեսանելի կապն այնքան բարդ է, նուրբ և միևնույն ժամանակ ամուր, որ ի հայտ է գալիս երկրագնդի ամեն մի անկյունում, հաճախ ամենաանսպասելի վայրերում, որոնք, թվում է, չեն ենթարկվել մարդկանց կործանարար ազդեցությանը։

Դրա պատճառն այն է, որ Երկրի վրա չի կարող իսկապես երջանիկ ապրել ոչ մի մարդ, որտեղ էլ որ գտնվի, եթե միևնույն ժամանակ մոլորակում տառապում ու մեռնում են նրա միլիոնավոր այլ մասնիկներ, քանի որ **ԴՈՒՔ ԲՈԼՈՐԴ ՄԵԿ ԱՄԲՈՂՋՈՒԹՅՈՒՆ ԵՔ՝ ՄԻԱՄՆԱԿԱՆ ԵՎ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ**։

Եվ դա վերաբերում է ոչ միայն մարդկանց, այլև ողջ կենդանական և բուսական աշխարհին, բնության բոլոր տարերքներին։

Դուք բոլորդ գոյում եք միասնական էներգետիկական դաշտում, որը ներկայումս այնքան անհավասարակշռված է, որ Երկրին մնում է միայն մեկ ելք՝ դուրս պրծնել նրանից նոր մաքուր բարձրաթրթիռ տարածության մեջ՝ լիովին չկործանվելու և թույլ չտալու, որ կործանվեն մարդկության լավագույն ներկայացուցիչները, ինչպես նաև Երկրի բացառիկ և չքնաղ բնական և կենդանական աշխարհը։

Անսահման սիրող Բացարձակ-Հայրը խոսեց ձեզ հետ

ՆՈՐ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 6 ԱՊՐԻԼԻ 2021 Թ.

Ողջունում եմ ձեզ, իմ սիրասու՛ն զավակներ:

Այսօր մենք կսկսենք նոր թեմա, որը պայմանականորեն կարելի է անվանել **«Նոր իրականության դրսևորումը»**:

Ու թեև արդեն շատ ենք խոսել նոր հասարակության կառուցման սկզբունքների մասին, այժմ, երբ դուք արդեն կանգնած եք Երկրի վրա ներկայումս տիրող քաոսից դեպի մաքրման գոտի Անցնելու ճիշտ շեմին, ժամանակն է մանրամասնել աշխարհում ընթացող բոլոր պրոցեսները և ստեղծագործ հունի մեջ բերել ձեր գիտակցությունը:

Բայց նախ եկեք խոսենք, թե ինչ նկատի ունեմ ես **«մաքրման գոտի»** արտահայտության ներքո:

Դա ձեր ամբողջ հասարակության վերակառուցավորման փուլն է՝ սկսած նրա հավաքական գիտակցությունից և վերջացրած նոր հասարակական կառուցվածքների ստեղծմամբ, որոնք կփոխարինեն այժմյան իշխանական հաստատություններին:

Իհարկե, ամենադժվարը մարդկության հավաքական գիտակցության մաքրումն է:

Դուք ինքներդ էլ համոզվել եք արդեն, զավակնե՛րս, թե որքան դժվար էր ձեզ համար աշխատել ձեր ենթագիտակցության հետ, որը բառիս բուն իմաստով «ոսկրացել է» դարերով իր մեջ ներդրված ծրագրերից, որոնց նպատակը եղել է մարդկանց մտածողության և վարքի որոշակի շաբլոնների ստեղծումը:

Եվ հիմա դուք պետք է պլանաչափ կերպով մեկ առ մեկ ազատվեք այդ շաբլոններից՝ այդ կերպ փոխելով նաև համայն մարդկության հավաքական գիտակցությունը:

Երկվությունն արդեն այնպես է սերտաճել ձեր էության մեջ, որ **համեմատելը** դարձել է առաջին և ամենաբնական ազդակը, որից սկիզբ է առնում մարդու մտածական պրոցեսի ողջ հետագա շղթան։

Այդ իսկ պատճառով էլ առաջին բանը, որից կսկսենք, հետևյալն է՝ սովորել չհամեմատել ձեզ ուրիշների հետ, այսինքն՝ չգնահատել ուրիշին՝ ղեկավարվելով կյանքի մասին ունեցած ձեր հայացքներով։

Ես տեսնում եմ, որ դեռևս շատ քչերիդ է հաջողվել հաղթահարել այս խնդիրը։

Պատճառները շատ են, բայց ամենագլխավորն այն է, որ բազում դարերի և հազարամյակների ընթացքում Երկրի վրա արմատավորվել է մարդկանց ՏԱՐԱՆՋԱՏՈՒՄԸ ըստ «Բաժանիր և տիրիր» սկզբունքի։

Եվ հիմա դա հասել է իր բարձրակետին. մի բուռ ՈՉ-մարդիկ ստիպել են, որ իրենց ենթարկվի ձեր մոլորակի փաստորեն ողջ բնակչությունը, նրան պարտադրելով ամենաանհեթեթ և անբնական վարքականոններ՝ կապված այդ նպատակների համար արհեստականորեն ստեղծված «համավարակի» հետ։

Եվ դրա մեղավորը մարդկանց գիտակցության միևնույն տարանջատումն է՝ որպես բարենպաստ հող, որի մեջ գցվեց կասկածի և վախի սերմը սեփական կյանքի համար։

Եթե մարդկության հավաքական գիտակցությունը միասնական լիներ, Երկրի վրա կազմակերպված այդ զանգվածային պսիխոզն անհնարին կլիներ։

Այդ ժամանակ կգործեր մարդկանց հավաքական ինտուիցիան, և նրանք կզգային, որ ԻՐԱԿԱՆ վտանգը գալիս է ոչ թե վիրուսից, այլ նրանցից, ովքեր ստեղծել են այդ վիրուսը և փորձում են նրա գործադրմամբ կյանքի կոչել Երկրի բնակչության կրճատման իրենց անմարդկային ծրագիրը։

Այն, ինչ տեղի է ունենում հիմա, և շատ առումներով ձեր ջանքերի շնորհիվ, ձեր մոլորակի իսկական իրադրության հասկացման «հավաքումն է մի կետում», ինչը կենդանի հոսանք է ներմուծում

մարդկության ոսկրացած հավաքական գիտակցության մեջ, այդ կերպ տարրալուծելով նրանում օտարածին ծրագրերի դարավոր «նստվածքները»։

Եվ որքան շատ մարդ ներգրավվի այդ պրոցեսի մեջ, այնքան արագ կմաքրվի ձեր հավաքական գիտակցությունն այդ ծրագրերից, այդպիսով վերադարձնելով իր Աստվածային մաքրությունը, որ ներդրված է եղել իր մեջ ի սկզբանե։

Եվ նրա գլխավոր բաղադրիչներից մեկը **ՄԻԱՄՆՈՒԹՅՈՒՆՆ** է, որի հիմքում ընկած է արդեն ոչ թե երկվության, այլ միաբևեռ մտածողությունը, որը տարածվում է ամեն ինչի վրա և առաջին հերթին՝ մարդկանց փոխհարաբերությունների։

Այսքանով կսահմանափակվենք այսօր։

Անսահման սիրող Բացարձակ-Հայրը խոսեց ձեզ հետ

ԳԼՈՒԽ VIII

ՏԻԵԶԵՐՔԻ ՕՐԵՆՔՆԵՐԸ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՉԱՓՈՒՄՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԻՆԳԵՐՈՐԴ ՉԱՓՄԱՆ ՄԱՐԴՈՒ ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ԿԱԶՄԻՉԸ

2. ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԵՋ

3. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՉԱՓՄԱՆ ԵՐԿՐՈՒՄ

4. ԵՎ ԻՆՉ ԹԱՔՈՒՆ ԷՐ՝ ՀԱՅՏՆԻ ԿԴԱՌՆԱ

5. ՆՅՈՒԹԱԿԱՆ ԲԱՐԻՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ

6. ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ (ԿՈՈՐԴԻՆԱՑԻՈՆ) ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՆՈՐ ԵՐԿՐՈՒՄ

7. ԵՐԿՈՒ ՀՈԳԻՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

8. ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՉԱՓՄԱՆ ԵՐԿՐՈՒՄ

9. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ ՆՈՐ ԵՐԿՐՈՒՄ

10. ՀԻՆԳԵՐՈՐԴ ՉԱՓՄԱՆ ԵՐԿՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ1
. ԱՆՀԱՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԼԱՆ

11. ՄՈԼՈՐԱԿԻ ՀԵՏ ՄԻԱՄՆԱԲԱՐ

12. ԲՈՒՅՍԵՐԸ՝ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՉԱՓՄԱՆ ԵՐԿՐՈՒՄ

13. ՋՐԻ ՏԱՐԵՐՔԸ՝ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՉԱՓՄԱՆ ԵՐԿՐՈՒՄ

14. ՕԴԻ ՏԱՐԵՐՔԸ ԵՎ ՄԱՐԴԸ՝ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՉԱՓՄԱՆ ԵՐԿՐՈՒՄ

15. ԿՐԱԿԻ ՏԱՐԵՐՔԸ ԵՎ ՄԱՐԴԸ՝ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՉԱՓՄԱՆ ԵՐԿՐՈՒՄ

16. ՀԻՆԳԵՐՈՐԴ ՉԱՓՄԱՆ ԵՐԿՐԻ ԿԵՆՍՈԼՈՐՏԸ (ԲԻՈՍՖԵՐԱՆ)

17. ՊԱՐԿԵՇՏՈՒԹՅՈՒՆ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՉԱՓՄԱՆ ՄԱՐԴՈՒ ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ԿԱԶՄԻՉԸ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 4 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2020 Թ.

Ողջունում եմ ձեզ, իմ սիրասու՛ն զավակներ։

Այսօր մենք կխոսենք Հինգերորդ չափման մեջ ձեր կեցության էներգետիկական կազմիչի մասին, որը սերտորեն կապված է ձեր ներքին վիճակի հետ։

Ինչպես արդեն գիտեք, ձեր յուրաքանչյուր միտքն ու հույզը էներգիա է, որը այս կամ այն կերպ ի հայտ է գալիս։

Չնայած Հինգերորդ չափումը միաբևեռ աշխարհ է, էներգապես այն շատ բազմազան է։

Սակայն այդ բազմազանությունը խիստ տարբերվում է երկվության աշխարհի էներգետիկական փոխներգործությունից, որտեղ ամեն հույզ (էներգիա) ունի իր հակադրությունը։

Հենց այդ պատճառով էլ այդ աշխարհը կոչվում է երկվության աշխարհ։

Նրանում տիրում է հակադրությունների պայքարը, որովհետև ամեն մի հույզ երրորդ խտության աշխարհում թրթիռապես հագեցած է, այսինքն մեծ էներգետիկական խտություն ունի։

Ո՞րն է դրա պատճառը։

Առաջին հերթին՝ որովհետև այդ ցածրաթրթիռ աշխարհը թանձր է, այսինքն ձեր հույզերը, ինչպես և ձեր մարմինները, «թանձր են»։

Իսկ ի՞նչ է կատարվում մարդու հետ Երկրի թրթռանքի բարձրացման և ավելի նոսրացած էներգետիկական տարածություն տեղափոխվելու հետ։

Այդ ժամանակ նրա գիտակցությունը «ապաթանձրանում է», ինչպես և՝ ֆիզիկական մարմինը։

Ի՞նչ կերպ է դա դրսևորվում։

Ձեր գիտակցությունը էներգետիկորեն ընդարձակվում է, որի արդյունքում դուք սկսում եք տեսնել և, ամենակարևորը, գիտակցել ոչ թե ձեր շուրջը կատարվող դեպքերի սոսկ փոքրիկ «թանձր» պատառիկները, այլ ամբողջ «ապաթանձրացած» պատկերն ընդհանրապես, այս կամ այն արդյունքին հանգեցրած ողջ պատճառա-հետևանքային շղթան։

Հենց դա է հիմա տեղի ունենում Երկրի շատ բնակիչների հետ, որոնց հաջողվել է բարձրանալ առօրեականությունից և, հարմարվելով ձեր մոլորակի նոր թրթիռների հետ, ելնել իրադարձությունների հասկացման նոր մակարդակ։

Դրանով էլ բացատրվում է ժամանակակից հասարակության ահռելի շերտավորումը «արթնացածների» և «խոր քնածների»։

Եթե «արթնացածները» տեսնում են Երկրի իշխանությունների՝ իրենց ժողովրդի նկատմամբ գործադրած հանցագործ քայլերի ողջ աստառը և գիտակցում են նրանց իսկական նպատակները, ապա «խոր քնածները» տեսնում ու լսում են միայն այն, ինչ հրամցնում են պաշտոնական լրատվության աղբյուրները, իսկ վախը սեփական կյանքի համար դրդում է հլու հնազանդ կատարել իշխանությունների բոլոր հրահանգներն ու ցուցումները։

Եվ դա տեղի է ունենում այն պատճառով, որ առաջինների «ապաթանձրացած» գիտակցությունն արդել ելել է Երկրի նոր թրթիռների մակարդակին, իսկ երկրորդների գիտակցությունը այդպես էլ մնացել է «թանձր»՝ ցածրաթրթիռ, գտնվելով միևնույն մակարդակի վրա նրանց հետ, ովքեր տակավին կառավարում են ձեր աշխարհը։

Այդպես, «արթնացած» մարդիկ արդեն իրենց նոր թրթիռների պատճառով այլևս ունակ չեն խաղալու սողունակերպների կանոններով. նրանց Հոգին, նրանց ողջ էությունը ընդդիմանում է մարդու նկատմամբ գործադրվող այդ հանցագործ քայլերին։

Իսկ «խոր քնածները» նույնիսկ իրենց առողջության և բնականոն մարդկային գոյության համար կործանարար ցուցումները ընդունում են որպես միանգամայն պատշաճ և, ավելին, որպես փրկչական։

Այդպես է գործում Տիեզերքի հիմնական Օրենքներից մեկը՝ «Նմանը նմանին է ձգում»։

Այն, ինչ հիմա տեղի է ունենում Երկրի վրա, երկվության ամենավառ դրսևորումն է, նրա բարձրակետը՝ դիմակայությունը Բարու և չարի, Ազատության և ստրկության, Ազատախոհության և հլության, եռաչափ աշխարհի բոլոր կարծրատիպերից ազատագրված Գիտակցության և «խուփ աչքերով», շաբլոնային, կառավարվող գիտակցության։

Եվ օրեցօր ձեր մոլորակի բնակիչների այդ շերտավորումը գնալով կահագնանա։

Այդպես տեղի է ունենում բնական ընտրություն ըստ թրթռանքի, երբ ամեն ոք ընտրություն է կատարում իր գիտակցության մակարդակի համաձայն։

Մեծ մասն այն մարդկանց, որոնք պատրաստ են Երկրի հետ միասին անցնելու Հինգերորդ չափում, արդեն կատարել է իր ընտրությունը։

Եվ հիմա մնացել է բնակչության մի նոսր շերտ, որը դեռ շանս ունի «ցատկելու հեռացող գնացքի վերջին վագոնը», և ես շատ եմ ուզում, որ դա հաջողվի նրանց։

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԵՋ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 1 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2020 Թ.

Այսօր մենք կշարունակենք ապագայի մարդու թեման, որին սպասում է կյանքը Հինգերորդ չափման աշխարհում։

Եվ այս անգամ կխոսենք **որոշումներ ընդունելու ձեր ինքնուրույնության** մասին։

Իրականում դա ձեր գոյության վճռորոշ գործոնն է, որը լիովին փոխում է ձեր գիտակցությունը։

Եթե վերլուծեք ձեր սեփական կյանքը, կհասկանաք, թե որքան քիչ որոշումներ կան, որ իսկապես ինքներդ եք ընդունել, և դուք մեղք չունեք դրանում։

Այդպիսին է եռաչափ աշխարհը, որտեղ ամեն ինչ հանգում է մարդուն Ազատ Կամքից և ընտրության իրավունքից զրկելուն։

Մանկուց ի վեր ձեզ սովորեցրել են, որ հարկավոր է ենթարկվել ծնողներին, ուսուցիչներին, վերադասներին, կառավարությանը և առհասարակ հանգամանքներին։

Հիշեք սովորական արտահայտությունները՝ «Հանգամանքների զոհ», «Այդպես դասավորվեցին հանգամանքները»։

Իսկ ինչու՞ են հանգամանքներն այդպես դասավորվել։

Ձե՞ր ցանկությամբ։

Թե՞ ինչ-որ մեկը խարդախորեն դրանք այնպես էր խառնել, որ ձեզ չմնար այլ բան, քան ընդունել առանց ձեր գիտության արդեն իսկ դասավորված այդ հանգամանքները։

Շատ հաճախ դուք չեք էլ մտածում այդ մասին, ուրիշների որոշումներն ընդունելով իբրև միանգամայն պատշաճ, նույնիսկ եթե դրանք անմիջականորեն ձեզ են վերաբերվում։

Ինչու՞ է այդպես լինում։

Նախ և առաջ՝ որովհետև դարերով մարդու մեջ մշակվել է ենթարկվելու սովորություն, և ձեր կյանքի բոլոր մակարդակներում կառուցվել է որոշակի հիերարխիա։

Այդպես, շատ ժողովուրդների ընտանեկան ավանդույթների մեջ եղել և մնում է ավագների խոսքի իրավունքը։

Արդյունքում՝ ծնողներն են որոշում իրենց զավակների ճակատագրերը նրանց փոխարեն, ընդհուպ այն, որ իրենք են իրենց հայեցողությամբ կյանքի ընկեր ընտրում նրանց համար՝ չհարցնելով անգամ նրանց համաձայնությունը։

Սակայն բացի անցյալի այդ մնացուկներից, այսպես կոչված ժամանակակից հասարակության մեջ էլ բավական շատ օրինակներ կան, երբ մարդը ստիպված է լինում ակամա ենթարկվել ուրիշների որոշումներին։

Հաճախ դա կատարվում է իր իսկ բարի կամքով՝ պարտքի, խղճահարության, երախտագիտության, մեղքի, ինքնազոհողության զգացումին տեղի տալով։

Ցավոք սրտի, զավակներս, եռաչափ աշխարհում մարդու ամենամաքուր դիտավորություններն անգամ հաճախ օգտագործվում են շահադիտական նպատակներով, որովհետև խիստ բազմազան է ձեր մոլորակի բնակչության կազմը, և էներգետիկական փոխանակությունը նրանց միջև միանշանակ չէ։

Ոմանք տալիս են իրենց էներգիան գիտակցաբար կամ անգիտակցաբար, ոմանք էլ, դարձյալ գիտակցաբար կամ անգիտակցաբար, օգտագործում են այն։

Այլ խոսքով, միջմարդկային հարաբերությունները եռաչափ աշխարհում կառուցվում են անիրավահավասարության հիմքի վրա։

Եվ դա բացատրվում է նրանով, որ այստեղ ամեն ինչ ներծծված է երկվությամբ՝ էներգետիկական, ֆիզիկական, հոգեբանական, ինչի հետևանքով գոյության բոլոր մակարդակներում ուժեղը ճնշում է թույլին։

Սակայն նույնիսկ ուժեղը ազատ չէ իր որոշումների մեջ, որովհետև նրանից վեր միշտ կա ավելի ուժեղն ու ազդեցիկը, որը կարող է ճնշել նրա կամքը։

Այդ իսկ պատճառով էլ եռաչափ աշխարհում շատ քչերին է հաջողվում դուրս պրծնել երկվութենական հարաբերությունների այդ կախարդված շրջանից և ձեռք բերել ներքին ազատություն, որը թույլ է տալիս ինքնուրույն որոշումներ ընդունել և կերտել սեփական ճակատագիրը սեփակա՛ն ցանկությամբ, այլ ոչ թե ազգականների, ընկերների, վերադասների, իշխանությունների կամքով. . .

Հաճախ նման մարդուն անվանում են ինքնակամ, էգոիստ, տարօրինակ, աննորմալ, այլ կերպ ասած՝ նա ենթարկվում է տարատեսակ քննադատության, որովհետև «դուրս է մնում հոտից», համարձակվում է ինքնուրույն որոշումներ ընդունել՝ հաշվի չնստելով իրեն շրջապատող մեծամասնության կարծիքի հետ։

Սակայն հենց այդպիսի վարքագիծն է ամենանորմալն ու բնականը միաբևեռ աշխարհում, որտեղ մարդուն ղեկավարում է ոչ թե իր Էգոն, այլ Հոգին։

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՉԱՓՄԱՆ ԵՐԿՐՈՒՄ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 19 ՀՈՒՆԻՍԻ 2020 Թ.

Այսօր մենք կխոսենք Հինգերորդ չափման Երկրում միջմարդկային շփման նոր սկզբունքի մասին։

Եվ հիմա կանդրադառնանք ոչ թե հեռազգացական (телепатический) շփմանը, այլ թե ինչպես կփոխանակեն իրենց փորձը, կհամագործակցեն զանազան ասպարեզներում և կկրթեն երեխաներին մարդիկ, մի խոսքով՝ ձեր առօրյա կյանքին՝ նոր պայմաններում։

Բայց նախ եկեք տեսնենք, թե որն է մարդու կյանքի գլխավոր տարբերությունը երրորդ և Հինգերորդ չափումներում։

Ինչպես արդեն բազմիցս ասել ենք, երկվության աշխարհում, որի հիմքում սեփական անձի համեմատությունն է ուրիշների հետ, մարդը մշտապես ստիպված է ինքնահաստատվել և ապացուցել բոլորին ու ինքն իրեն, որ ուրիշներից վատը չէ։

Եվ ամեն ոք դա անում է ըստ իր հնարավորությունների և բարոյական սկզբունքների. մեկը՝ ուրիշների հաշվին, մեկն էլ ամեն ինչին հասնում է ազնիվ ու տքնաջան աշխատանքով։

Սակայն թե՛ առաջին, թե՛ երկրորդ դեպքում մարդկանց նպատակը մեկն է՝ համապատասխանել որոշակի սոցիալական ստանդարտների, իսկ լավագույն դեպքում՝ գերազանցել դրանք։

Որպես կանոն, մարդիկ իրենց առջև դնում են զուտ նյութական նպատակներ, բայց նույնիսկ եթե խոսքը վերաբերում է ստեղծագործությանը կամ իրենց կյանքի հոգևոր ոլորտին, հաճախ այդ նպատակին ևս դրդողը գոռոզության զգացումն է, փառաբանվելու ցանկությունը։

Այդպիսով, երկվության աշխարհում որոշակի տաղանդներով օժտված մարդն անգամ բավական հաճախ դիտում է դրանք որպես ճանաչում ձեռք բերելու և հարստանալու միջոց։

Երբեմն նման մարդիկ մեռնում են չքավորության մեջ, իսկ համբավը գալիս է լոկ մահվանից հետո։

Բայց հենց ադպիսի մարդիկ են ներկայացնում բարձրագույն չափումների էակների նախատիպարը, որովհետև նույնիսկ գտնվելով անողորմ եռաչափ աշխարհում, նրանք ի զորու են եղել են անսալու իրենց Հոգու ձայնին և կատարելու այն նախասահմանումը, որի համար աշխարհ են եկել։

Նրանք չեն գնացել փոխզիջման, որ հավանաբար փորձել է պարտադրել իրենց Էգոն՝ ստիպելով անել մի բան, որ իրենց սրտով չի եղել, բայց կարող էր բերել թե՛ փառք, թե՛ դրամ։

Գերադասել են արտահայտման ազատությունը իր բոլոր դրսևորումներով։

Իսկ հիմա պատկերացրեք, որ միայն այդպիսի մարդիկ պիտի բնակվեն Հինգերորդ չափման տարածությունում, քանի որ մյուսները պարզապես չեն կարողանա այնտեղ հայտնվել իրենց գիտակցության ցածր մակարդակի պատճառով։

Նոր Երկրի վրա ըստ սահմանման չեն կարող լինել պատեհապաշտներ, հարմարվողներ, կարիերիստներ, վերադասներ և ենթականեր. . .

Այնտեղ կապրեն ԱՐԱՐԻՉՆԵՐ թե՛ մեծ, թե՛ փոքր բաների, որոնք սիրով կանեն իրենց գործը, չնայելով ուրիշներին և չհամեմատելով իրենց ոչ մեկի հետ։

Նախանձին կփոխարինի ուրախությունը մերձավորի համար։

Ագահությանը՝ ունեցած լավագույնը մերձավորի հետ կիսելու ձգտումը։

Աչքի ընկնելու ցանկությանը՝ Միասնության զգացումը Երկրի երեսին եղած ամենայն գոյի հետ։

Իշխելու ցանկությանը՝ Սիրո և Կարեկցության զգացումը։

Այդպես, Հինգերորդ չափման բարձրաթրթիռ տարածությունը կհալեցնի մարդու ենթագիտակցության մեջ ներդրված բացասական զգացմունքների և հույզերի բոլոր մնացորդները՝ փոխակերպելով Անպայման Սիրո էներգիայի։

Հենց նա՛ կկազմի մարդկանց փոխհարաբերությունների հիմքը և կդառնա ոգեշնչման մշտնջենական աղբյուր մարդկանց համար։

Սակայն արդեն իսկ, զավակներս, դուք կարող եք ապրել շատ դեպքերում ղեկավարվելով այդ սկզբունքներով, որը կօգնի ձեզ թեթև ու բնականորեն անցնել Նոր Երկրի շփման նորահայտ ձևերին։

Եվ ես օրհնում եմ, որ այդպես լինի. . .

ԵՎ ԻՆՉ ԹԱՔՈՒՆ ԷՐ՝ ՀԱՅՏՆԻ ԿԴԱՌՆԱ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 21 ՀՈՒՆԻՍԻ 2020 Թ.

Այսօր կշարունակենք զրույցը, թե ինչպես կձևավորվեն միջմարդկային հարաբերությունները Հինգերորդ չափման Երկրում։

Քանի որ այդ նոր բարձրաթրթիռ տարածության մեջ մարդու բոլոր մտքերն ու զգացմունքները կդառնան «թափանցիկ», այլևս հնարավոր չի լինի որևէ այլ հարաբերություն, բացի վստահությամբ տոգորված ու բաց հարաբերություններից։

Խորամանկությունը, կեղծավորությունը, ագահությունը, շողոքորթությունը և նմանատիպ հույզերը իրենց ցածր թրթռանքի պատճառով ի զորու չեն լինի ոչ թե դրսևորվելու, այլ նույնիսկ ծնվելու, որովհետև դրանք հրահրող և մշտապես սնուցող աստրալ էությունները «նավից դուրս» կլինեն։

Սակայն այս անցումային շրջանում, որը պայմանականորեն կարելի է անվանել չորրորդ չափում, դուք արդեն իսկ կարող եք տեսնել, թե ինչպես է «թաքուցյալը դառնում հայտնի»։

Դուք կտեսնեք աշխարհը կառավարողների իսկական էությունը, որոնք կջանան ամեն կերպ «պահել իրենց լավ տեսքը՝ խաղը տանուլ տալով հանդերձ», ինչը արդեն տեղի է ունենում ձեր ողջ մոլորակում։

Ով ուշի-ուշով հետևում է կորոնավիրուսի հետ կապված դեպքերի զարգացմանը, տեսնում է, թե ինչպես իշխանությամբ օժտված մարդիկ և իրենց ենթակա զանգվածային լրատվամիջոցները փորձում են զրպարտել ու ծաղրուծանակի ենթարկել բոլոր նրանց, ովքեր ճշմարտությունն են բացահայտում՝ ներկայացնելով անհերքելի ապացույցներ համաշխարհային կառավարության հանցագործությունների, մարդկանց վերջնականապես հլու խամաճիկների վերածելու նրա դիտավորության մասին։

Ու թեև դա արվում է կոպտորեն, լկտիաբար ու ապաշնորհ ձևով, շատ մարդիկ այդպես էլ մնում են նրանց իշխանության տակ, որովհետև իրենց գիտակցությունը զուրկ է ինքնուրույնությունից և այնքան կուրացած, որ ունակ չէ զատելու սպիտակը սևից, ճիշտը ստից, կեղծավորությունը օգնելու անկեղծ ցանկությունից։

Բայց դրա հետ մեկտեղ Երկրի վրա ի հայտ են գալիս ավելի ու ավելի շատ մարդիկ՝ եռաչափության թմբիրից արթնացած, որոնց համար վերջապես «երևակվում է» աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների հստակ պատկերը, և նրանք սկսում են տեսնել համաշխարհային վերնախավի իսկական դրդապատճառները։

Այդպես հետզհետե, զավակնե՛րս, բոլոր դիմակները կընկնեն, և որքան էլ իշխանությունից կառչեն «Երկրի պարահանդեսը վարողները», նրանք այլևս անկարող կլինեն հետ շրջել ձեր մոլորակում սրընթաց կերպով թափ հավաքող նոր էներգետիկական պրոցեսները։

Անձի ճնշման դաժան ու անմարդկային օրենքներին, որ վաղուց ի վեր սահմանել էին Երկրում սողունակերպները, կփոխարինեն Տիեզերքի Օրենքները, որոնցով ապրում են բոլոր զարգացած քաղաքակրթությունները և որոնցով այսուհետ պետք է ապրեն այն մարդիկ, որոնք կկարողանան Երկրի հետ մեկտեղ տեղափոխվել Հինգերորդ չափում։

Այդ ամենը կկատարվի բավական արագ, շնորհիվ այն բանի, որ ձեր մոլորակում կան լիդերներ, որոնք պատրաստ են «իրենց ձեռքն առնել ղեկանիվը» և կտրուկ փոխել Երկիր կոչվող «նավի ուղղությունը»։

Դրանք մեծ հոգիների այն բազմաթիվ մասնիկներն են, ինչպես և զարգացած քաղաքակրթությունների ներկայացուցիչները, որոնք մարմնավորվել են մարդկային մարմիններում՝ նոր չափում Անցում կատարելիս մարդկանց օգնելու նպատակով։

Նրանցից շատերն արդեն ելել են Ծառայության, բայց քանի դեռ իշխանությունը սողունակերպների և իրենց համախոհների ձեռքին է, չեն կարող բացեիբաց հանդես գալ ավելի լայն մասշտաբներով։

Շատ կարևոր է, որ հավաքվի մարդկանց այն կրիտիկական զանգվածը, որը ունակ կլինի զգալու էներգիան, և ոչ թե կդատի մարդու մասին ըստ խոսքերի, որոնք հաճախ քողարկում են հանցագործ մտադրություններ։

Եվ երբ դա կատարվի, վերջնականապես կընկնի այն «վարագույրը», որը ծածկում է Խավարը Լույսից, և մարդիկ վերջնականապես կհամոզվեն, որ «թագավորը ոչ միայն մերկ է, այլև զուրկ է մարդկային կերպարանքից»։

Շատերի համար այդ պայծառացումը անասելի ցավոտ կլինի, քանի որ աչքի առաջ կփլուզվի իրենց սովորական աշխարհը և տեսանելի կդառնան աշխարհի նախկին և ներկա լիդերների իսկական դեմքերը, լիդերներ, որոնց վստահել են իրենք, բայց որոնք գործել են այն աստիճանի անմարդկային ոճիրներ, որ շատերի գիտակցությունը կհրաժարվի հավատալ դրան։

Սակայն լոկ այդպես՝ ընդունելով ճշմարտությունը՝ որքան էլ սոսկալի լինի այն, դուք կարող եք թևակոխել ձեր զարգացման նոր շրջապտույտը։

Եվ ամենակարևորը, որ հարկ է միշտ հիշել՝ դուք պետք է ընդունեք այդ ճշմարտությունը առանց ագրեսիայի և դատապարտության, որպես դժվարին ու տխուր մի դաս, որ բաժին էր ընկել արդեն ոչ թե առանձին մարդկանց, այլ համայն մարդկությունը, որը հիմա, թոթափելով այդ բեռն իր ուսերից, փոխադրվում է իր գոյության նոր մակարդակը Հինգերորդ չափման տարածության մեջ։

ՆՅՈՒԹԱԿԱՆ ԲԱՐԻՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 25 ՀՈՒՆԻՍԻ 2020 Թ.

Եվ այսպես, շարունակենք զրույցը Հինգերորդ չափման հասարակության կառուցվածքի մասին։

Եվ հիմա կխոսենք, թե ինչպիսին պիտի լինի նյութական բարիքների նոր բաշխումը և ինչ կերպ կարելի է գործարկել Երկրի վրա արդեն իսկ գոյություն ունեցող սոցիալական և արդյունաբերական կառույցները։

Ինչպես արդեն գիտեք, գրեթե բոլոր առաջատար արդյունաբերական ճյուղերը այժմ ստվերային կառավարության և իր դրածոների ձեռքում են։

Դրա պատճառով էլ այդ ճյուղերի աշխատողներից գրեթե ոչինչ կախված չէ։

Բոլոր որոշումները, ինչպես սովորաբար ասում եք դուք, «իջնում են վերևից», թեև սովորական մարդկանցից շատ քչերը գաղափար ունեն, թե ովքեր են ամենավերևում։

Եվ նույնիսկ եթե առանձին դեպքերում լրիվ անհեթեթ որոշումները բողոք են առաջացնում մարդկանց մոտ, այն շատ արագ ճնշվում է ինչ-որ միջոցով կամ գտնվում է այնպիսի փոխզիջում, որը ձեռնտու է լինում հենց նույն ղեկավարությանը, իսկ մարդկանց այդ նվազագույն զիջումները՝ ի պատասխան իրենց պահանջների, հրամցվում է որպես մեծագույն բարերարություն։

Երկրում ապրելու բազում դարերի ընթացքում սողունակերպները մեծ հաջողության են հասել մարդու գիտակցության ձեռնածման արվեստում՝ հմտորեն կիրառելով «մահակի և բլիթի» մեթոդը։

Սակայն Երկրի Հինգերորդ չափում Անցնելու հետ ամեն ինչ կսկսի սրընթաց փոխվել, քանի որ հին աշխարհակարգը այլևս անկարող կլինի գոյատևել նոր բարձրաթրթիռ էներգիաներում։

Եվ երբ սողունակերպներն այլևս չկարողանան իրենց ձեռքում պահել իշխանությունն ու ֆինանսները, նրանց տարիներով ստեղծած արդյունաբերական ինֆրակառուցվածքը կփոխանցվի մարդկանց։

Եվ այդ ժամանակ արդեն մարդկանցից կախված կլինի, թե ինչպես տնօրինել այն։

Երկրում ներկայումս ընթացող պրոցեսները կարելի է համեմատել հեղափոխության հետ, միայն թե համաշխարհային մասշտաբով։

Եվ եթե նախկինում բոլոր հեղափոխություններն ավարտվել են շատ անփառունակ կերպով, քանի որ ԷՆԵՐԳԱՊԵՍ մարդիկ պատրաստ չեն եղել նոր հասարակության կառուցման, որը պիտի հիմնված լիներ Տիեզերքի Օրենքների, այլ ոչ թե եռաչափ աշխարհի օրենքների վրա, ապա հիմա իրադրությունն արմատապես փոխվել է։

Հինգերորդ չափման նոր էներգետիկական տարածությունում երկվութենական մտածողությամբ մարդիկ այլևս չեն կարողանա գոյատևել այն պարզ պատճառով, որ նրանց թրթիռները չեն համապատասխանի մոլորակի նոր թրթիռներին։

Այդ իսկ պատճառով նոր կառույցների ղեկը, ինչպես սոցիալական, այնպես էլ արդյունաբերական, կստանձնեն միայն այն մարդիկ, որոնց գիտակցությունը լիովին կձերբազատվի երկվության բեռից և որոնց թրթռանքը համահունչ կլինի Երկրի թրթիռներին։

Եվ այդ մարդիկ կկարողանան իրագործել հարկ եղած ճյուղային «վերագործարկումը»՝ նոր ռելսերի վրա դնելով արդյունաբերությունը, որտեղ գլխավոր առաջնահերթությունը կտրվի մարդկանց հետաքրքրություններին ու իսկական պահանջմունքներին, այլ ոչ թե ձեռնարկատերերի հեքիաթային շահույթների մրցավազքին։

Հետզհետե ձեր Երկրից կվերանան արհեստականորեն մարդկանց պարտադրված արժեքները, որոնց կփոխարինեն հոգևոր արժեքներ,

իսկ նոր տեխնոլոգիաները թույլ կտան պահպանել ձեր մոլորակը իր նախաստեղծ մաքրությամբ և գեղեցկությամբ։

ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ (ԿՈՈՐԴԻՆԱՑԻՈՆ) ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՆՈՐ ԵՐԿՐՈՒՄ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 26 ՀՈՒՆԻՍԻ 2020 Թ.

Այսօր մենք կխոսենք, թե ինչպիսին կարող է լինել համակարգման կենտրոնը Հինգերորդ չափման Նոր Երկրում։

Քանի որ սահմաններ այլևս չեն լինի որպես այդպիսին, աշխարհը սկզբնական շրջանում այնուամենայնիվ կպահպանի ազգային կրթությունները՝ լեզվական և մշակութային ժառանգությամբ միավորված։

Դա հնարավորություն կտա մարդկանց սահուն ու ներդաշնակ ձևով հաղթահարելու նոր իրականություն Անցնելու փուլը՝ մնալով իրենց համար հարազատ և սովորական միջավայրում։

Բացի այդ, ոչ բոլորը կկարողանան արագ յուրացնել հեռազգացական շփումը, որը ջնջում է լեզվական խոչընդոտները՝ թույլ տալով տարբեր ազգությունների մարդկանց հեշտորեն հաղորդակցվել միմյանց հետ։

Հենց այդ նպատակով էլ անցումային շրջանում պետք կլինի Միասնական Համակարգման Կենտրոն, որի կազմում կընդգրկվեն տարբեր ազգությունների մարդիկ՝ քաջատեղյակ իրենց տարածաշրջանների կարիքներին ու պահանջներին։

Այն կարող է ստեղծվել, օրինակ, Միավորված Ազգերի Կազմակերպության հիմքի վրա, որտեղ արդեն կան մշակված համակարգման կառույցներ։

Սակայն այս Կազմակերպության աշխատանքի սկզբունքը արդեն բոլորովին այլ կլինի, և նրա հիմքը կկազմեն իսկական հավասարությունն ու եղբայրությունը, ինչպես և ի սկզբանե մտածվել էր ՄԱԿ-ի ստեղծման ժամանակ, բայց և այլասերվել նույն համաշխարհային կառավարության անդամների կողմից, որոնք տարեցտարի իրենց դրածոներին էին նշանակում այդ միջազգային կազմակերպության կարևորագույն պաշտոններում:

Հենց որ այդ Կազմակերպություն մտնեն իմաստուն ու տաղանդավոր ղեկավարներ, որոնց կընտրեն իրենց ժողովուրդները, նրանք կկարողանան կարգավորել ՄԱԿ-ի աշխատանքը բոլոր ազգությունների և աշխարհագրական հանրությունների շահերին համապատասխան, ընդ որում ղեկավարվելով Տիեզերքի Օրենքներով, որոնք Հինգերորդ չափման նոր Երկրում կդառնան հիմնարար՝ կյանքի բոլոր ոլորտներում:

Այդ Կազմակերպության կառուցվածքային բաժանմունքներում կաշխատեն նեղ մասնագետներ, որոնց պարտականությունների մեջ կմտնի նյութական բարիքների վերաբաշխումն այնպես, որ ոչ մի ժողովուրդ ոտնահարված չտեսնի իր իրավունքները և չտառապի այս կամ այն տեսակի արտադրանքի անբավարարությունից:

Այդպես, նոր Երկրում կտիրեն իսկական հավասարությունն ու եղբայրությունը, կվերանան սովն ու աղքատությունը, ազգային տարբերություններն ու ռասայական խտրականությունները:

Մեծ մասամբ դա տեղի կունենա նաև այն պատճառով, որ երկվութենական մտածողությամբ մարդիկ այլևս անկարող կլինեն գոյատևել նոր իրողություններում, հետևաբար՝ տեղերում նույնպես, և աշխարհի այն տարածաշրջաններում, ուր կառաքվեն անհրաժեշտ արտադրանքները, դրանք կբաշխվեն ողջամիտ ու արդար կերպով:

Եվ դրա համար յուրաքանչյուր այդպիսի տարածաշրջանում, իր հերթին, կստեղծվեն արդեն սեփական վիճակագրական և բաշխման կենտրոնները, որոնք հաշվի կառնեն տեղային պայմաններն ու առանձնահատկությունները, որոնց համապատասխան էլ կկազմվեն գլխավոր բաշխման Կենտրոն ներկայացվող պատվերները:

Իհարկե, ես ձեզ տվեցի նոր հասարակության կառուցման բավական ընդհանուր մի սխեմա, բայց գլխավոր շեշտը ուզում եմ դնել նրա վրա, որ Երկրի նոր թրթիռների մեջ մարդիկ, որոնք կունենան Աստվածամարդու գիտակցություն, միանգամայն ունակ կլինեն կառուցելու ձեր անուրջների հասարակությունը, որի մասին միշտ երազել են ձեր մոլորակում մարմնավորված մաքուր ու լուսավոր հոգիները։

Այսօր կսահմանափակվենք այսքանով։

ԵՐԿՈՒ ՀՈԳԻՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 30 ՀՈՒՆԻՍԻ 2020 Թ.

Այսօր մենք կխոսենք, թե ինչպիսին կլինեն ընտանեկան հարաբերությունները Հինգերորդ չափման աշխարհում։

Սկսենք նրանից, որ դրանք կլինեն ազատ, բայց ոչ այն իմաստով, որ հասկանում են եռաչափ աշխարհի մարդիկ՝ հաճախակի փոխելով այսպես կոչված զուգընկերներին, այլ այն իմաստով, որ դրանք չեն լինի պաշտոնապես ձևակերպված։

Քանի որ տղամարդու և կնոջ հարաբերությունները ի սկզբանե սրբագործված են, դրանք չեն պահանջում ոչ մի հաստատում կամ գրանցում պետության կողմից։

Իսկ դուք երբևէ մտածե՞լ եք, թե ինչու եռաչափ աշխարհում գոյություն ունի ամուսնություն, որը կնքվում է պետական հաստատություններում կամ եկեղեցիներում։

Անկասկած, դա թաքուն իմաստ է բովանդակում իր մեջ, այն է՝ աշխարհիս ուժեղները պետք է վերահսկեն իրենց «հոտը» ամեն պարագայում,- նույնիսկ անձնական կյանքում։

Սակայն այստեղ նվազ կարևոր չէ նաև նյութական կողմը, որը ժամանակի հետ ամուսնությունը վերածել է նույնպիսի առուծախի առարկայի, ինչպես և մնացած ամեն ինչ։

Այստեղից էլ՝ անհավասար ամուսնությունները՝ շահավետ և ոչ շահավետ, ստիպողական և հարկադրված, երբ մարդիկ բառացիորեն վաճառել են իրենց և ապրել ոչ միայն չսիրած, այլ հաճախ ատելի մարդու հետ։

Եվ այդ ամենը հիմնականում հրամցվում է բարերարության, երախտագիտության, հնազանդության գունագեղ փաթեթավորմամբ. . .

Թերևս սա սողունակերպների ամենասարսափելի հանցագործություններից է մարդկության հանդեպ, այլասերելով նույնիսկ մաքուր և մարդու համար բնական այն զգացումը, որպիսին տղամարդու և կնոջ սերն է։

Սակայն վերադառնանք նրան, թե ինչպիսին կլինեն այդ հարաբերությունները նոր Երկրում։

Քանի որ էներգետիկորեն Հինգերորդ չափման տարածությունում այլևս անհնար կլինեն բաժանման, համեմատության, շահախնդրության մտքերը, ապա մարդիկ կձգվեն միմյանց ըստ թրթռանքի։

Իրենց բարձրագույն ասպեկտների հետ կապը վերականգնած տղամարդիկ և կանայք ականջալուր կլինեն իրենց Հոգուն, որը չի կարող խաբել կյանքի ընկերոջ ընտրության մեջ։

Արդեն ոչ թե իրենք, այլ իրենց Հոգիները կփնտրեն իրենց երկրորդ կեսին, իսկ նոր Երկրի տարածությունը կդառնա նրանց օգնականը՝ այնպես ձևավորելով իրականությունը, որ նրանք կարողանան հնարավորինս շուտ հանդիպել իրար։

Ասես որսալով նույն ալիքը և լինելով միևնույն թրթիռային «դիապազոնում», մարդիկ ինտուիցիայով կգտնեն են դեպի իրար

բերող ճանապարհը և հանդիպելով՝ վայրկենապես կճանաչեն իրենց երկրորդ կեսին։

Այդպիսի բան կատարվում է նաև երրորդ չափման Երկրում, բայց խիստ հազվադեպ, և նույնիսկ այդ դեպքում տղամարդուն ու կնոջը ոչ միշտ է հաջողվում ընտանիք կազմել՝ բազմաթիվ պայմանականությունների ու կարծրատիպերի պատճառով։

Նոր Երկրում, դրանց բացակայության պայմաններում, զույգերը ազատ կլինեն իրենց ընտրության մեջ, իսկ նրանց կազմած ընտանիքները կլինեն իսկապես ներդաշնակ ու երջանիկ։

Եվ կարիք չեն ունենա իրենց միությունը «ամրագրող» ոչ մի փաստաթղթի, քանի որ այն «կամրանա» իրենց Հոգիներով և սրտերով։

Այսօր կսահմանափակվենք այսքանով։

ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՉԱՓՄԱՆ ԵՐԿՐՈՒՄ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 1 ՀՈՒԼԻՍԻ 2020 Թ.

Այսօր մենք կխոսենք, թե ինչպիսին կլինի ուսուցումը Հինգերորդ չափման Երկրում։

Իրականում վերաբերմունքը կրթության նկատմամբ արդեն իսկ սկսել է փոխվել, բայց դա սոսկ մի կաթիլ է ծովում, որովհետև ուսուցման նոր համակարգը հենվում է այն մարդկանց խանդավառության վրա, որոնք գիտեն Երկրի՝ Հինգերորդ չափում Անցնելու մասին, ինչպես և՝ այն երեխաների յուրահատկության, որոնք այս ժամանակաշրջանում եկել են Տիեզերական Օրենքների հիման վրա նոր հասարակություն կառուցելու համար։

Դրանք հիմնականում ոչ մեծ, մասնավոր դպրոցներ են, ուր ընդունում են իրենց երեխաներին հոգևոր զարգացման արդեն բավական բարձր մակարդակ ունեցող ծնողները։

Սակայն հետզհետե այդպիսի դպրոցները կսկսեն տարածվել ձեր ողջ մոլորակում, քանի որ գնալով ի հայտ կգա ավելի ու ավելի շատ տեղեկատվություն, թե որքան կեղծված են եղել ձեր գիտելիքների հիմնական աղբյուրները՝ պատմությունը, աշխարհագրությունը, կենսաբանությունը, ֆիզիկան։

Տիեզերական տեղեկատվական «շտեմարանում» պահպանվող ճշմարիտ գիտելիքների բացահայտման հետ, կփոխվի կրթության ամբողջ համակարգը, որի հիմքը կկազմի արդեն այդ նոր՝ հավաստի տեղեկատվությունը։

Սակայն բոլոր դպրոցական ծրագրերում հիմնական առաջնահերթությունը կտրվի Տիեզերքի Օրենքներին, որոնցով այսուհետ պիտի ապրեն նոր Երկրի բոլոր բնակիչները։

Եվ որպեսզի հնարավորինս արագ կենսագործվեն նման ուսումնական ծրագրերը, հարկավոր կլինեն նաև նոր կազմակերպվածքով մանկավարժներ, որոնց գիտակցությունն արդեն ելած կլինի երկվության շրջանակներից և որոնք ունակ կլինեն վերաիմաստավորելու այն ամենը, ինչ դասավանդվել է իրենց, զատելով ցորենը որոմից։

Հենց այդ նպատակով է Երկիր եկել ինդիգո երեխաների մեծաթիվ ջոկատը, որոնք արդեն հասել են այն տարիքին, որ կարող են ուսուցիչներ դառնալ իրենց հետևից Երկիր եկած բյուրեղային երեխաների համար։

Եվ հասակ առնելով՝ այդ երեխաները պետք է դառնան նոր հասարակության հիմնադիրները Հինգերորդ չափման Երկրում, քանի որ նրանց գիտակցությունը լիովին կմաքրվի կյանքի երկվութենական ընկալումից, իսկ գիտելիքները նրանք կքաղեն արդեն մաքուր Տիեզերական աղբյուրից։

Նրանցից շատերի մոտ կբացվի այդպիսի տեղեկատվություն ստանալու կապուղի, իսկ նոր դպրոցներում հեռազգացական շփումը կդասավանդվի որպես առանձին առարկա, և փոքրիկների հետ կաշխատեն մաքուր ու հին Հոգիները, որոնք մշտական կապի մեջ կլինեն Տիեզերքի Բարձրագույն Ուժերի հետ։

Սակայն արդեն իսկ շատ կարևոր է, զավակներս, ուշադիր հետևել ձեր երեխաներին, թոռնիկներին, նրանց ընկերներին, որպեսզի զգաք այդ փոքրիկների Հոգիները, բացահայտեք նրանց տաղանդներն ու ունակությունները և անեք ամեն ինչ, որ դրանք կատարելապես դրսևորվեն ամենակարճ ժամկետներում։

Հենց երեխաների անհատական ունակությունների ի հայտ բերումն էլ կդառնա կրթական նոր համակարգի երկրորդ առաջնահերթությունը։

Դա կօգնի նրանց հետագայում ընտրել իրենց հոգուն հաճելի մասնագիտություն, այսինքն՝ ապրել լիարժեք երջանիկ կյանքով, որից զուրկ են եղել եռաչափ աշխարհի միլիոնավոր մարդիկ, որոնց դաստիարակությունն ու կրթությունը իրականացվել է ասես «պատճենահանումով»՝ նպատակ ունենալով դիմազրկել նրանց, որպեսզի հեշտ լինի կառավարել և ստիպել մարդկանց ապրել սողունակերպների սահմանած կանոններով ու օրենքներով։

Իրադարձությունները Երկրում կծավալվեն բավական արագ, և որպեսզի կրթության փոփոխությունները կատարվեն նույնքան արագ ու բարեհաջող, հարկավոր է իսկույն ևեթ սկսել աշխատել այդ ուղղությամբ։

Եվ ես խնդրում եմ բոլոր նրանց, ովքեր ունեն մանկավարժական շնորհ և, կարևորը, նոր հոգևոր գիտելիքներ, հնարավորինս շուտ ձեռնամուխ լինեն այդ գրավիչ զբաղմունքին՝ նոր սերնդի երեխաների ուսուցման ծրագրերի մշակմանը։

Եվ ձեզ համար լավ օժանդակություն կլինեն մանկական հեքիաթները, որոնք իրենց մեջ պահում են ձեզ անհրաժեշտ բոլոր գիտելիքները՝ հետաքրքիր և գրավիչ ձևով մատուցված։

Ձեզ կմնա միայն զուգահեռներ տանել նրանց մեջ դրված իմաստի և ռեալ իրականության միջև, և երեխաների, ինչպես նաև ձեր անձնական օրինակով ցույց տալ, թե ինչպես են գործում Տիեզերքի հավիտենական և անխախտ Օրենքները, որոնցով պիտի ապրեն բոլոր մարդիկ Հինգերորդ չափման նոր Երկրում։

Եվ ես օրհնում եմ ձեզ, որ այդպես լինի. . .

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ ՆՈՐ ԵՐԿՐՈՒՄ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 4 ՀՈՒԼԻՍԻ 2020 Թ.

Այսօր ես ուզում եմ խոսել նոր Երկրի մշակութային կյանքի և մշակույթի մասին որպես այդպիսին։

Եռաչափ աշխարհում սողունակերպների ջանքերով ձեր կյանքից սկսեց հեռանալ ամենայն գեղեցիկը, որ Աստվածային սկիզբ է բովանդակում իր մեջ։

Եվ դա վերաբերում է բացարձակապես ամեն ինչին՝ ճարտարապետությանը, կերպարվեստին, երաժշտությանը, թատրոնին, գրականությանը, լեզվին, հագնվելու կերպին, մարդկանց փոխհարաբերությանը. . .

Իսկական մշակույթը համատարած կերպով փոխարինվում էր կեղծ մշակույթով, և դա արվում էր դարձյալ նույն նպատակով՝ առավելագույնս իջեցնել Երկրի և մարդկության հավաքական գիտակցության թրթիռները։

Եվ հիմա սողունակերպների արհեստականորեն ստեղծած արժեքները ամեն քայլափոխին հետապնդում են մարդուն. դրանք հեղվում են մարդկանց վրա քաղաքների փողոցների գովազդային

վահաններից, հեռուստաէկրաններից, համացանցից, թերթերից ու ամսագրերից. . .

Դրանք թափանցում են մարդու ենթագիտակցության մեջ և ժանգի նման կրծում ներսից։

Իսկականն ու գեղեցիկը փոխարինվում է ստահոդ ու այլանդակ բաներով, և այդ ամենը մարդկանց հրամցվում է որպես մոդայիկ, ժամանակակից, առաջադեմ. . .

Այժմ այդ ամենը հասել է իր բարձրակետին և սկսել է տեսանելի դառնալ նույնիսկ անհաղորդ, բարձր թեմաներից հեռու մարդկանց։

Սակայն սոսկ այդ կերպ՝ անհեթեթության հասցնելով կարելի էր արթնացնել եռաչափ աշխարհի մեջ խորասուզված մարդուն։

Հաստատապես համոզվելով իրենց անպատժելիության մեջ, սողունակերպները կորցրեցին չափի զգացումը, և մարդու Աստվածային գիտակցության ստրկացման մեքենան, որ գործի դրեցին նրանք, սկսեց աշխատել իրենց իսկ դեմ։

Եվ հիմա այդ պրոցեսն այլևս անկարելի է կանգնեցնել։

Երկրի՝ նոր չափում Անցնելու շրջանում գեղեցկությունը, հոգևորությունն ու իսկական մշակութային արժեքները կսկսեն վերադառնալ ձեր կյանք։

Այլանդակ և դիմազուրկ բետոնե տուփերի փոխարեն, որոնցով լցված են քաղաքները, կսկսեն հայտնվել գեղեցիկ շինություններ փափուկ, մեղմ ու բնական ձևերով։

Գռեհկության ու անդեմության փոխարեն, որոնց կուլ է գնացել ժամանակակից էստրադան, կսկսեն հայտնվել գեղեցիկ երաժշտական ստեղծագործություններ՝ Լույսով ու Սիրով լեցուն, ինչպես նաև տաղանդաշատ կատարողներ, որոնք իսկական հոգևոր արժեքներ կբերեն մարդկանց։

Նոր բովանդակությամբ կլցվեն թատերական բեմադրություններն ու կինոնկարները, որովհետև նրանց հեղինակներն ու կատարողները կդառնան մարդիկ, որոնց գիտակցությունն արդեն դուրս կլինի

եռաչափության շրջանակներից և որոնք կկարողանան ներշնչանք քաղել Աստվածային Տիեզերական աղբյուրից։

Նույնը վերաբերում է և գրականությանն ու ընդհանրապես լեզվին, որը վերջին տասնամյակներին անխղճորեն աղավաղվել ու կրճատվել է՝ իջեցնելով մարդկանց թրթիռները և զգալիորեն ցածրացնելով նրանց շփման մշակութային մակարդակը։

Կփոխվի մոդայի աշխարհը։ Միատեսակ ու անսեռ հագուստին կփոխարինեն պարզ ու հարմարավետ զգեստները՝ առնականությունն ու կանացիությունն ընդգծող, այլ ոչ թե ջնջող, ինչպես հաճախ է կատարվում այսօր։

Ամեն ինչ հետզհետե կվերադառնա ի շրջանս յուր՝ դեպի այն Ոսկեդարը, որից մի ժամանակ դուրս եք եկել դուք։

Սակայն դուք արդեն իսկ կարող եք մոտեցնել այն, զավակնե՛րս, շրջապատելով ձեզ գեղեցիկ, հոգևոր, բնական իրերով և ազատվելով այն ամենից, ինչ տգեղ է, պարզունակ ու արհեստական։

Այդպես դուք կսկսեք նոր իրականություն ստեղծել ձեր մոլորակի վրա՝ վերադարձնելով իսկական մշակույթը, որը բնահատուկ է մաքուր մարդկային հոգիներին։

Եվ ես օրհնում եմ ձեզ, որ այդպես լինի. . .

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՉԱՓՄԱՆ ԵՐԿՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 27 ՓԵՏՐՎԱՐԻ 2021 Թ.

Ողջունում եմ ձեզ, իմ սիրասու՛ն զավակներ։

Այսօր մենք կխոսենք, թե ինչ կլինի քաղաքական համակարգը Հինգերորդ չափման Երկրում։

Սակայն նախ եկեք տեսնենք, թե ինչ է թաքնված հենց «քաղաքականություն» բառի տակ։

Այն ծագել է հունարեն «քաղաք, պետություն» բառից և իր նախնական իմաստով ենթադրվել է «քաղաքային կառուցվածք» կամ «պետական կառուցվածք»։

Հենց այս նախնական իմաստին էլ հանգում է քաղաքականությունը բարձր չափումներում։

Իսկ ինչ է Ավագների Խորհուրդը։

Քաղաքական մարմին, որը համաձայնեցնում է մարդկանց գործողությունները քաղաքի, պետության կամ ողջ մոլորակի կյանքի բոլոր ոլորտներում՝ ի բարձրագույն բարօրություն բոլորի։

Իսկ թե ինչի են վերածել քաղաքականությունը եռաչափ աշխարհում, հրաշալի հայտնի է բոլորիդ։

Շատ երկրներում այդ բառը հոմանիշ է դարձել մարդկանց նկատմամբ կատարվող ամենակեղտոտ և հանցավոր արարքներին, իսկ քաղաքական գործիչները հաճախ ամենամեծ կոռուպցիոներներն են, որ օգտագործում են իշխանությունը սեփական շահադիտական նպատակներին հասնելու, բայց ոչ երբեք ժողովրդի շահերին ծառայելու համար։

Այլ խոսքով, քաղաքականությունը եռաչափ աշխարհում մարդկանց շահերը պաշտպանող պետական մարմնից վերածվել է իր հակապատկերին՝ վերահսկման և մարդու կամքի ճնշման իշխանական կառույցի։

Նույնիսկ զանազան քաղաքական կուսակցությունների առկայությունը, ինչ գեղեցիկ կարգախոսներով էլ որ քողարկվեն, իրականում սոսկ կռիվ է իշխանության համար։

Եվ դա կատարվում է ամբողջ աշխարհում՝ խիստ հազվագյուտ բացառություններով։

Ինչպես արդեն գիտեք, այդ ամենը հետևանքն է այն բանի, որ ձեր մոլորակում վաղուց ի վեր տեր ու տիրական են դարձել իշխանությունը զավթած Դրակոսողունակերպները և նրանցից ծնունդ առած սողունակերպները, որոնք ապրում են բոլորովին այլ՝ ոչ Աստվածային օրենքներով և բնավ հետաքրքրված չեն մարդկանց երջանիկ ու բարեկեցիկ կյանքով։

Ճիշտ հակառակը՝ նրանց նպատակն է ամեն տեսակ բացասական էներգիաների հրահրումը մարդկանց մեջ, ինչը և անում են հազարամյակներ շարունակ։

Բայց երբ Երկիրն անցնի իր զարգացման նոր մակարդակը, որտեղ այլևս տեղ չեն ունենա այդ մութ էներգիաները, այնպիսի մի հասկացություն, ինչպիսին «քաղաքականությունն» է, կվերացնի իր նախասկզբնական իմաստը, իսկ քաղաքական գործիչները կդառնան հենց այն «Ավագները», որոնք հմուտ ձեռքով կուղղորդեն մարդկանց գործունեությունը կյանքի բոլոր ասպարեզներում՝ ելնելով բացառապես ժողովրդի շահերից և գործելով ի բարօրություն մոլորակի յուրաքանչյուր բնակչի։

«Կոռուպցիայի» նման հասկացությունն այնտեղ չի կարող լինել արդեն այն պատճառով, որ յուրաքանչյուր ոք կունենա ամեն բան, որի անհրաժեշտությունն իրոք կունենա, և այդ կարիքները կթելադրվեն մարդու Հոգով, և ոչ թե անհագուրդ Էգոյով։

Թերևս Հինգերորդ չափման Երկրի քաղաքական կառուցվածքը համեմատելի կլինի համայնքային կարգի հետ, քանի որ մարդիկ կսկսեն ապրել ըստ հետաքրքրությունների ձևավորված համայնքներով:

Եվ դա տեղի կունենա ոչ թե ստիպողաբար, այլ բնական գործընթացի արդյունքում՝ համաձայն Ձգողության Տիեզերական Օրենքի, ինչպես նաև՝ Միասնության Օրենքի, որն իր մեջ բովանդակում է նպատակների Միասնությունը:

Այդպես, հետզհետե կձևավորվեն գյուղատնտեսական, գիտահետազոտական, կրթական, գեղարվեստական, երաժշտական, ճարտարապետական, ծառայությունների ոլորտի և շատ ու շատ ուրիշ համայնքներ:

Նրանցից յուրաքանչյուրը իր պետության Ավագների Խորհրդի համար կընտրի իր ամենաշնորհալի, իմաստուն և բոլորի հարգանքը վայելող ներկայացուցչին:

Այդ կերպ Երկրում կկազմավորվեն կառավարման նոր քաղաքական կառույցներ, որոնց հիմնական խնդիրը կդառնա հասարակության ներդաշնակ զարգացումը և նյութական բարիքների ողջամիտ բաշխումը:

ՄՈԼՈՐԱԿԻ ՀԵՏ ՄԻԱՍՆԱԲԱՐ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 9 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2020 Թ.

Այսօր մենք կշարունակենք զրույցը Հինգերորդ չափման մարդու մասին և կխոսենք նրա փոխհարաբերությունների մասին նորոգված Երկրի բնության, տարերքների, կենդանական և բուսական աշխարհի հետ:

Ինչպես արդեն գիտեք, ձեր կյանքը նոր բարձրաթրթիռ տարածության մեջ արմատապես կփոխվի ոչ միայն հոգևոր պլանում, ձեր ֆիզիկական գոյությունը նույնպես կընթանա արդեն բոլորովին այլ պայմաններում։

Մարդն իր ուսերից կթոթափի անցյալի բեռը՝ եռաչափ աշխարհի բոլոր բացասական էներգիաներն ու ծրագրերը։

Երկիրը նույնպես երկրորդ շնչառություն ձեռք կբերի՝ շնորհիվ մարդկանց կիրառած այլմոլորակային զարգացած տեխնոլոգիաների՝ իրենց կյանքի բոլոր ոլորտներում։

Նրա մարմինն այլևս չեն խոշտանգի օգտակար հանածոներ հայթայթելու համար, օդը չի թունավորվի քիմիական ձեռնարկությունների թունավոր գոլորշիներով, նրա ջրերը, արդյունաբերական թափոններով չաղտոտվելով, կվերագտնեն իրենց նախաստեղծ մաքրությունը։

Դրա շնորհիվ ձեր մոլորակը կվերածնվի և հրաշվանք կպատճառի մարդկանց իր գեղեցկությամբ և բնության պարգևներով։

Եվ իհարկե դրանում մեծ դեր կխաղա Հինգերորդ չափման մարդու վերաբերմունքը իր կերակրող մոր՝ Երկրի նկատմամբ։

Անցումը հաղթահարած մարդիկ իրենց մոլորակի հետ կապրեն լիակատար Միասնության մեջ։

Նրանք կզգան իրենց մոլորակը ինչպես իրենք իրենց. նրա էներգիան, նրա կարիքները, նրա Հոգին...

Եվ նման էներգետիկական ու հոգևոր Միասնությունը կվերածվի Երկրի և իր զավակների ներդաշնակ Աստվածային միության։

Հողի հետ կաշխատեն մարդիկ, որոնք ոչ միայն սիրում են հողը, այլև պահպանում են այն ցանկացած վնասակար ազդեցությունից։

Նրանց և Երկրի միջև տեղի կունենա որոշակի էներգետիկական փոխգործակցություն և փոխըմբռնում ինտուիցիայի մակարդակում։

Մարդիկ կսկսեն հաղորդակցվել հեռազգացորեն, և նույն կերպ էլ «կխոսեն» Երկրի հետ՝ նրանից ստանալով իրենց հարցերի պատասխանները պայծառատեսության կամ պայծառիմացության տեսքով։

Հողագործությունը կդառնա հիրավի մոգական գործունեություն, որին կմասնակցեն և՛ մարդիկ, և՛ Երկիրը։

Երկիրը նշաններ ու հուշումներ կտա, որոնք վայրկենապես կորսան մարդիկ և արդեն դրանց համապատասխան կկարգավորեն իրենց հետագա գործողությունները։

Արդյունքում մարդկությունը նվազագույն ֆիզիկական ծախսերով կունենա ընտիր հատիկավորների, բանջարեղենի և մրգերի հարուստ բերք։

Ի հայտ կգան բույսերի ու պտուղների նոր, դեռևս ձեզ անհայտ սորտեր, ինչը զգալիորեն կհարստացնի ձեր սննդի օրաբաժինը, որն այդուհետ կլինի պրանայական և բուսական։

Ի՞նչ է պրանայական սնունդը։

Դա պարտադիր հրաժարում չէ ուտելիքից, ինչպես շատերը պատկերացնում են։

Համաձայնեք, զավակնե՛րս, որ կերակուրը ձեր կյանքի գլխավոր հաճույքներից է, և ամենևին չարժե, որ ձեզ զրկեք այդ հաճույքից նոր Երկրում։

Սակայն հողագործության առողջ, մաքուր ու բարձրաթրթիռ արտադրանքները արդեն իսկ պարունակում են պրանա՝ Աստվածային էներգիա, որով ներծծված է Հինգերորդ չափման ողջ տարածությունը։

Բնության բարիքները մաքուր պրանայի և հենց պտուղների համակցություն են, որ պարգևում է մարդկանց ոչ միայն հրաշալի համային զգացումներ, այլև ուժ ու առողջություն։

Հինգերորդ չափման մեջ մարդն ինքը կարող է ընտրել՝ սնվել միայն պրանայով, որ հարմար կլինի կերակրի նկատմամբ անտարբեր

մարդկանց, թե վայելել Երկրի բարիքները, որն իսկական դրախտ կդառնա նրբաքիմք մարդկանց և ընտիր խորտիկներ պատրաստել սիրողների համար։

Այդպիսով, նույնիսկ կերակրի նկատմամբ ունեցած վերաբերմունքի մեջ կդրսևորվի Ազատ ընտրությունը ըստ ձեր անձնական նախապատվությունների։

Այսօր կսահմանափակվենք այսքանով։

ԲՈՒՅՍԵՐԸ՝ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՉԱՓՄԱՆ ԵՐԿՐՈՒՄ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 9 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2020 Թ.

Այժմ մենք կշարունակենք զրույցը Հինգերորդ չափման մարդու և նորոգված Երկրի փոխազդեցության մասին, կանդրադառնանք նրա և բույսերի փոխհարաբերություններին։

Դուք արդեն գիտեք, զավակնե՛րս, որ նույնիսկ եռաչափ աշխարհում այդ փոխհարաբերությունները զգալիորեն տարբերվում են և մեծապես կախված են մարդու էներգիայից։

Ոմանք «թեթև ձեռք» ունեն, ինչպես սովորաբար ասում եք դուք, ոմանք էլ՝ «ծանր»։

«Թեթև ձեռք» ունեն բարձրաթրթիռ մարդիկ՝ ուժեղ էներգետիկայով, որոնց դաշտը ավելի նոսր է լինում։

Եվ հակառակը՝ «ծանր» բացասական էներգիա ունեցող մարդկանց աուրան առավել խիտ է։

Բոլոր կենդանի էակները, որոնցից են նաև բույսերը, հրաշալի զգում են դա և յուրովի են հակազդում տարբեր էներգետիկաներով մարդկանց։

Ոմանց մոտ նույնիսկ հիվանդ ծաղիկներն են ծաղկում և հիանալի զգում իրենց, իսկ ոմանց ներկայությամբ առողջ ու ուժեղ բույսերն անգամ սկսում են թոշնել։

Ինչու՞ է այդպես պատահում։

Ինչպիսի՞ն է այդ փոխազդեցության էներգետիկական մեխանիզմը։

Առաջին հերթին, այն վառ օրինակ է, թե ինչպես են գործում Տիեզերքի Օրենքները, օրինակ՝ «Նմանը նմանին է ձգում», Միասնության Օրենքը, ինչպես նաև Պատճառի և հետևանքի Օրենքը։

Ցանկացած բույս ռեզոնանսի մեջ է մտնում իրեն խնամող կամ պարզապես իր մոտ գտնվող մարդու դաշտի հետ։

Ու քանի որ իր սեփական բնական թրթիռները միշտ բարձր են, հպվելով մարդու նույնպիսի բարձր թրթիռներին, էներգապես դառնում է ավելի ուժեղ։

Իսկ հայտնվելով մարդու ցածրաթրթիռ դաշտում, բույսը ենթարկվում է սրա սաստկագույն էներգետիկական գրոհին, ինչը ավերում է բույսի աուրան և կործանում նրան։

Նույնը կատարվում է և բույսերի սերմերի հետ։

«Թեթև ձեռքով» մարդկանց մոտ դրանք արագ ծլարձակում են և առատ բերք տալիս, իսկ «ծանր ձեռքով» մարդկանց մոտ հաճախ մեռնում են։

Իսկ հիմա պատկերացրեք Հինգերորդ չափման Երկրի հասարակությունը, որտեղ մարդիկ և բույսերը գոյում են Միասնական բարձրաթրթիռ տարածությունում, ուր տեղ չունի և ոչ մի բացասական էներգիա։

Ի լրումն դրա, այդ նորոգված մոլորակում հողագործությամբ և այգեգործությամբ կզբաղվեն անսալով Հոգու կոչին. դրանք կլինեն այն մարդիկ, որոնք հենց դա կընտրեն որպես իրենց կյանքի գլխավոր գործը։

Երևակայեք, թե ինչպիսի Սիրով կպարուրեն յուրաքանչյուր բույսի սերմերն ու ծիլերը և ինչպիսի հոգածությամբ կվերաբերվեն իրենց ստացած բերքին։

Նույն կերպ կփոխվի նաև մարդկանց վերաբերմունքը վայրի բնության նկատմամբ։

Մարդու և ամեն թփի, ամեն ծաղկի, ամեն ծառի բարձր թրթիռները ռեզոնանսի մեջ կմտնեն միմյանց հետ, և այդ կերպ կկատարվի մշտական էներգետիկական փոխհարստացում։

Երկիրն ու իր բնակիչները կգոյեն Սիրո և Շնորհակալության միասնական էներգետիկական տարածությունում, այսինքն՝ միմյանց հետ լիակատար ներդաշնակության մեջ։

Այսքանով կսահմանափակվենք այսօր։

ՋՐԻ ՏԱՐԵՐՔԸ՝ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՉԱՓՄԱՆ ԵՐԿՐՈՒՄ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 14 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2020 Թ.

Այսօր մենք կխոսենք, թե ինչպիսին կլինի կլիման Հինգերորդ չափման մոլորակում և ինչպես կգոյակցեն մարդը և բնության հինգ տարերքները։

Սկսենք նրանից, որ հինգերորդ տարերքը՝ Սիրո Տարերքը, ընդհանուր ֆոն կդառնա նոր Երկրում, նրա էներգիայով ներծծված կլինի բացարձակապես ամեն ինչ՝ բնությունը, մարդիկ, կենդանիները, թռչունները և, իհարկե, մյուս չորս տարերքները՝ Երկրի/Հողի, Ջրի, Օդի և Կրակի։

Մարդու և Երկրի հարաբերությունների մասին մենք արդեն խոսել ենք իմ նախորդ ուղերձում, հիմա ավելի հանգամանորեն կխոսենք ձեր և

Ջրի Տարերքի հարաբերությունների մասին, որի մի մասն էլ ինքը մարդն է։

Նրա նոր լուսային բյուրեղային մարմինը, ինչպես և եռաչափ աշխարհի մարդու մարմինը, հիմնականում կազմված կլինի ջրից։

Սակայն այդ ջուրը կունենա արդեն բոլորովին այլ՝ Աստվածային էներգետիկական կառուցվածք։

Հիշեք ջրի հետ կատարված փորձերը, թե ինչպես է նա հակազդում տարատեսակ խոսքերին և էներգիաներին։

Ամենակատարյալ ձևը նրա բյուրեղիկներն ընդունում են այն ժամանակ, երբ նրանց հովում է Սիրո և Շնորհակալության էներգիա։

Ու քանի որ հենց այդ էներգիայով թափանցված կլինեն Հինգերորդ չափման ողջ տարածությունն ու իր բնակիչները, մարդու՝ հիմնականում ջրից կազմված մարմնի բյուրեղիկները կունենան նույնպիսի կատարյալ ներդաշնակ ձև։

Շատ առումներով հենց դրա շնորհիվ էլ դուք ոչ միայն չեք հիվանդանա, այլև կկարողանաք մտքի ուժով ձևափոխել ձեր մարմինները։

Ձեր նոր մարմինների հենց ջրային բաղադրիչը թույլ կտա նրանց լինել գեղեցիկ և ճկուն։

Այլ խոսքով, ձեր նոր մարմինների էներգապես փոփոխված ջրի բաղադրությունն էլ մարդու և Ջրի Տարերքի գլխավոր կապող օղակն է։

Բացասական էներգիաների բացակայության պարագայում, որոնք երրորդ չափման աշխարհում աղտոտում էին ձեր մարմինները՝ խախտելով ձեր օրգանիզմի ջրային կառուցվածքը, ինչը բերում էր զանազան հիվանդությունների, ձեր նոր մարմինները, լիակատար ներդաշնակության մեջ լինելով Ջրի Տարերքի հետ, այլևս ո՛չ հիվանդություն կիմանան, ո՛չ էլ տառապանք։

Այդպես, ձեզ միավորող Սիրո Տարերքի շնորհիվ, դուք ռեզոնանսի մեջ կմտնեք նաև Ջրի Տարերքի հետ, որն այնքան կարևոր է մարդու կյանքի համար։

Նույնը կկատարվի նաև գետերի, լճերի, ծովերի, օվկիանոսների հետ։

Էներգապես մաքրվելով՝ նրանք կփոխեն իրենց բյուրեղային կառուցվածքը, այսինքն կճառագեն Սիրո և Շնորհակալության էներգիաներ։

Ձեռք բերելով իրենց բնատուր մաքրությունը, նրանք կվերագտնեն նաև կորսված ներդաշնակությունը։

Դրա շնորհիվ անցյալում կմնան փոթորիկներն ու ջրհեղեղները, ցունամիներն ու կարկուտը, որոնցից տառապում էր ոչ միայն մարդը, այլև հենց ինքը՝ Ջրի Տարերքը։

Այդպես, հետևելով Տիեզերքի Օրենքներին, մարդու ներդաշնակ վիճակը կանդրադառնա նաև Ջրի Տարերքի ներդաշնակ վիճակի վրա իր բոլոր դրսևորումներում։

Այսքանով կսահմանափակվենք այսօր։

ՕԴԻ ՏԱՐԵՐՔԸ ԵՎ ՄԱՐԴԸ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՉԱՓՄԱՆ ԵՐԿՐՈՒՄ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 17 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2020 Թ.

Այսօր մենք կխոսենք, թե ինչ հարաբերություններ կունենա մարդը Օդի Տարերքի հետ Հինգերորդ չափման նոր Երկրում։

Օդը, ինչպես և ջուրը, մարդու համար կենսականորեն կարևոր տարր է, և շնչած օդից կախված է նրա ֆիզիկական և հոգեբանական վիճակը։

Այլ կերպ ասած, օդի որակը մարդու հոգևոր առողջության գլխավոր բաղադրիչներից է։

Եվ դրա վառ ապացույցը ներկայիս բացարձակապես անթույլատրելի իրավիճակն է՝ կապված դիմակներ կրելու հետ։

Արդեն շատ է ասվել, որ վնասից բացի դրանք ոչինչ չեն կարող բերել մարդուն, և ամսեամիս դա ավելի է հաստատվում։

Ի՞նչ է տեղի ունենում մարդու օրգանիզմի հետ, երբ նա չի կարողանում շնչել բնական ճանապարհով, երբ բառիս բուն իմաստով խցում են իր բերանն ու քիթը։

Բացի թթվածնային քաղցից, որը կործանարար ազդեցություն է ունենում մարդու մարմնի բոլոր օրգանների համար, վրա է հասնում նաև այսպես կոչված էներգետիկական քաղց, որը բերում է ծանր հոգեբանական շեղումների՝ մարդու մոտ հրահրելով խոր ընկճախտ, խուճապային վախ կամ, հակառակը, ագրեսիա։

Ինչու՞ է այդպես լինում։

Նախ և առաջ՝ որովհետև բնական շնչառական պրոցեսի խանգարման դեպքում շղթայական ձևով խանգարվում է նաև մարդու օրգանիզմի մյուս բոլոր ֆունկցիաների աշխատանքը, ինչի հետևանքով նրա էներգետիկական տարածությունը աղճատվում ու թանձրանում է։

Դա հանգեցնում նրան, որ աղճատվում ու թանձրանում է նաև մարդու գիտակցությունը։

Այլ խոսքով, կտրուկ ընկնում են նրա թրթիռները, ինչի արդյունքում մարդը սկսում է դեպի իրեն առձգել ամեն տեսակի բացասական էներգիաներ։

Հենց այդ նպատակն էլ հետապնդում էին նրանք, ովքեր հարկադրեցին դիմակներով շրջել Երկրի ողջ բնակչությանը։

Եվ վերջին ամիսներին հաճախացած զանազան հոգեկան խանգարումների ու ինքնասպանությունների դեպքերը վառ ապացույցն են այն բանի, որ շատ առումներով նրանց հաջողվեց հասնել իրենց նպատակին։

Իսկ ի՞նչ կկատարվի մարդու շնչառության հետ Հինգերորդ չափման բարձրաթրթիռ տարածությունում։

Այնտեղ շնչառական պրոցեսը մարդու համար կդառնա այնքան բնական, որ նա պարզապես չի նկատի այն։

Եվ դա կկատարվի այն պարզ պատճառով, որ Օդի Տարերքը և մարդը կգոյեն միասնական բարձրաթրթիռ տարածությունում՝ այն աստիճան ռեզոնանսի մեջ լինելով միմյանց հետ, որ փաստորեն կդառնան Մեկ Ամբողջություն։

Եթե երրորդ չափման աշխարհում գոյություն ունեն բազմաթիվ շնչառական պրակտիկաներ ու վարժություններ, ապա Հինգերորդ չափման աշխարհում դրանք այլևս հարկավոր չեն լինի ձեզ։

Մարդու ընդհանուր ներդաշնակ վիճակը երաշխիք կլինի, որ իր մարմնի հագեցումը թթվածնով կատարվի ինքնակարգավորման ռեժիմով։

Եվ դա բացատրվում է նրանով, որ մարդու նոսրացած լուսային բյուրեղային մարմինը ունակ կլինի ազատորեն անցկացնելու իր միջով օդային հոսանքներ ցանկացած խտության, որ անհրաժեշտ կլինի մարդուն տվյալ պահին և իդեալական կլինի նրա համար։

Որպեսզի լավ հասկանաք այդ մեխանիզմը, պատկերացրեք, որ մագլցում եք մի բարձր լեռ, բայց շնչահեղձ չեք լինում, ինչպես պատահում է երրորդ չափման Երկրում, այլ շնչում եք նույնքան թեթև ու ազատ, ինչպես հարթավայրում զբոսնելիս։

Եվ դա բացատրվում է նրանով, որ ձեր նոր, նոսրացած մարմինը ֆիզիկական ծանրաբեռնվածություն չի զգում։

Դուք արդեն ունակ եք կառավարելու այն ձեր մտքի ուժով, այսինքն՝ այն դառնում է թեթև, օդեղեն, օդում ճախրող, և դուք ունակ կլինեք բարձրանալու ցանկացած լեռան գագաթ առանց ջանքերի, այսինքն՝ նաև առանց շնչառության խախտումների։

Այդպես դուք բառիս բուն իմաստով կմիաձուլվեք Օդի Տարերքի հետ՝ ձեր մարմնի յուրաքանչյուր բջջով ռեզոնանսի մեջ մտնելով նրա հետ։

Փոխազդեցության այդ նույն սկզբունքը կտարածվի նաև ձեզ շրջապատող ողջ տարածության վրա՝ այդ կերպ ներդաշնակեցնելով բնության երևույթները։

Քանի որ մարդը և Օդի Տարերքը կապրեն Սիրո էներգիայի Միասնական տարածության մեջ, մարդկանց կյանքից ընդմիշտ կվերանան փոթորիկներն ու պտտահողմերը, որոնք այնքան դժբախտություն էին բերում երրորդ չափման Երկրում։

Այսքանով կսահմանափակվենք այսօր։

ԿՐԱԿԻ ՏԱՐԵՐՔԸ ԵՎ ՄԱՐԴԸ՝ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՉԱՓՄԱՆ ԵՐԿՐՈՒՄ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 18 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2020 Թ.

Այսօր մենք ավելի մանրամասն կխոսենք Կրակի Տարերքի մասին, և թե ինչպես կդրսևորվի նա Հինգերորդ չափման Երկրում։

Եվ այս անգամ կդիտարկենք այդ տարերքը մարդու ներսում ունեցած իր ներկայության տեսանկյունից։

Որպեսզի ավելի լավ պատկերացնեք, թե որքան սերտ եք դուք կապված նրա հետ, վերհիշեք արտահայտությունները՝ «ձեր Հոգու կրակը», «բոցավառ սիրտ», «այրվել կրքից», «միտքը եռում է»...

Դրանց բոլորի հիմքում Կրակի Տարերքն է, որը Ջրի Տարերքի և Օդի Տարերքի հետ համահավասար անբաժանելի մասն է մարդու կյանքի։

Այդպես, ջերմությունը,- փափուկ, քնքուշ, հաճելի,- ուրախություն ու հարմարավետ գոյություն է պարգևում մարդուն։

Հենց այդպիսի վիճակում է լինում մարդը, երբ հոգում տիրում է խաղաղություն և ինքն էլ ֆիզիկապես բացարձակ առողջ է։

Իսկ ի՞նչ է կատարվում մարդու հետ, երբ կրքերն են ալեկոծում նրան՝ համակելով հոգին ու մարմինը քայքայող նսեմ էներգիաներով։

Նրա բանականությունն ու մարմինը սկսում են բորբոքվել, շիկանալ։

Նա սկսում է ՏԱՔԱՆԱԼ։

Դրա հետևանքով խախտվում է մարդու և իր մեջ ապրող Կրակի Տարերքի հավասարակշռությունը։

Նրանց հարաբերությունները դառնում են աններդաշնակ, քանի որ բարձրանում է կրքերի թեժացման աստիճանը, որոնք ներքուստ «այրում են» մարդուն։

Նրան համակում է տենդը, դեմքը կարող ծածկվել կարմիր բծերով, որոնք կարծես դուրս պրծած «բոցի լեզուներ» լինեն, գիտակցությունն այնքան է բորբոքվում, որ նա այլևս հաշիվ չի տալիս իր գործողությունների համար։

Սակայն լինում է և ուրիշ հակազդեցություն՝ ի պատասխան կյանքի անախորժ իրադարձություններին։

Մարդը կարող է «սառչել սարսափից», «մարմնով սարսուռ» անցնել, նրա գիտակցությունը դառնում է «սառած»։

Դա նույնպես հավասարակշռությունից դուրս եկած կրակի տարերքի դրսևորումն է մարդու օրգանիզմում, նրա հակազդեցությունը տվյալ ցնցմանը։

Թե՛ առաջին, թե՛ երկրորդ դեպքում հետևանքները շատ անմխիթար են, որովհետև ցանկացած ցնցում այս կամ այն կերպ անդրադառնում է մարդու ֆիզիկական և հոգեբանական վիճակի վրա, ընդհուպ զանազան հիվանդությունների և օրգանիզմի ֆունկցիաների խանգարման առաջացումը։

Ավելին, հազարավոր, երբեմն էլ միլիոնավոր մարդկանց հոգիների «բոցավառումը» եռաչափ աշխարհում հաճախ իր արտացոլանքն է

գտնում դրսում՝ հրդեհների, պայթյունների, հրաբխային ժայթքումների տեսքով, քանի որ մարդու և Երկրի փոխազդեցությունը միասնական էներգետիկական մեխանիզմ է՝ անմիջականորեն կապված Կրակի Տարերքի հետ։

Իսկ հիմա պատկերացրեք Հինգերորդ չափման միաբևեռ աշխարհը, որտեղ ցածր թրթռանքով էներգիաները պարզապես չեն կարող գոյություն ունենալ։

Այդ բարձրաթրթիռ տարածության մեջ Երկիրն ու իր բնակիչները, ներդաշնակության մեջ լինելով միմյանց և բոլոր բնական տարերքների հետ, կապրեն իրենց համար հարմարավետ վիճակում։

Ձեր մոլորակի կլիման կլինի տաք ու փափուկ, իսկ մարդու մարմինը կունենա այն ջերմաստիճանը, որը տվյալ պահին իդեալական կլինի նրա համար։

Իսկ նրա խառնվածքի «կրակոտությունը» կարտահայտվի լոկ ոգեշնչման պահերին, այսինքն՝ մի գրգիռով, որը կապված չէ բացասական էներգիաների հետ, այլ՝ այն հուզական վերելքի, որն անհրաժեշտ է իր ստեղծագործական ներուժի լիակատար բացահայտման համար։

Դա կլինի հենց այն հաճելի գրգիռը, որում կենում է մարդը երջանկության և հրճվանքի պահերին։

Այսքանով կսահմանափակվենք այսօր։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՉԱՓՄԱՆ ԵՐԿՐԻ ԿԵՆՍՈԼՈՐՏԸ (ԲԻՈՍՖԵՐԱՆ)

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 19 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2020 Թ.

Ավարտելու համար զրույցը նոր Երկրի մարդու և բնության տարերքների փոխազդեցության մասին, ես ուզում եմ ձեզ պատմել, թե ինչ է Հինգերորդ չափման Երկրի կենսոլորտը։

Եթե շատ համառոտ ասենք, այն մի էներգետիկական տարածություն է, որը տարանջատում է մոլորակը տիեզերքից և պարունակում է իր մեջ բոլոր այն տարրերը, որոնք անհրաժեշտ են Երկրի վրա ամենայն կենդանի բանի հարմարավետ գոյության համար։

Չնայած բոլոր բարձր զարգացած քաղաքակրթություններն էլ գոյում են Սիրո էներգիայի միաբևեռ աշխարհում, ընդսմին, նրանց միջև կան նաև տարբերություններ։

Դա բացատրվում է նրանով, որ մոլորակներից յուրաքանչյուրի տեղադրությունը Գալակտիկայում «ամրագրված է» ըստ նրա յուրահատկությունների և բացառիկ բնութագրի։

Այդ կերպ պահպանվում է ամեն մի մոլորակի ինքնատիպությունը, ինչը փոխլրացնում ու հարստացնում ամբողջ Գալակտիկայի կյանքը։

Ինչ վերաբերում է Երկրին, այն ամենաբացառիկ արարչությունն է ոչ միայն այս Գալակտիկայի, այլև բովանդակ Տիեզերքի։

Իսկ ինչո՞վ է այն եզակի։

Ամենից առաջ ֆլորայի և ֆաունայի բացառիկ բազմազանությամբ։

Համայն Տիեզերքում ոչ մի մոլորակ չի կարող պարծենալ կենդանիների, բույսերի, հանքերի տեսակների նման բազմաքանակությամբ և ստորջրյա աշխարհի նման հարստությամբ։

Սակայն նրա գլխավոր տարբերությունն այն է, որ իր վրա վրա ապրում է ռասաների և ժողովուրդների ահռելի քանակություն, որոնք կրում են իրենց մեջ բազում այլ քաղաքակրթությունների գեները և, խաչասերվելով միմյանց հետ, ստեղծում են եզակի մարդկային հիբրիդներ։

Սակայն, ինչպես արդեն հայտնի է ձեզ, երբ այդ վիթխարի փորձին միջամտեցին Օրիոնցիներն ու Դրակոսողունակերպները, էվոլյուցիան Երկրում գնաց դեգրադացման ճանապարհով՝ ընդհուպ միչև մարդու՝ որպես Աստվածային էակի լիակատար բնաջնջում։

Այդ իսկ պատճառով, Հինգերորդ չափում Անցումից հետո Երկրի կենսոլորտը կձևափոխվի և կփոխակերպվի այնպես, որ ցածր թրթռանքով և ոչ մի էակ այլևս չկարողանա թափանցել բարձրաթրթիռ էներգետիկական վարագույրի միջով, որը զատելու է ձեր մոլորակը մնացած տիեզերքից։

Դա երաշխիք կհանդիսանա, որ Երկիր մոլորակը անմատչելի դառնա ցածրաթրթիռ աշխարհների նվաճողների համար, ինչպես եղել է նախկինում, և կենսոլորտը հուսալի պաշտպանական թաղանթ կդառնա նրա համար։

Այդպիսով, Երկիր այցելել կկարողանան լոկ բարձրաթրթիռ քաղաքակրթությունների այն ներկայացուցիչները, որոնց թրթիռները ցածր չեն Հինգերորդ չափումից։

Իսկ ինչ վերաբերում է Երկրի հետ միասին Հինգերորդ չափման տարածություն տեղափոխված մարդկանց, նրանք կդառնան այդ կենսոլորտի մի մասը, քանի որ նրանց թրթիռները լիակատար ռեզոնանսի մեջ կմտնեն նրա հետ, այսինքն՝ Մեկ Ամբողջություն կկազմեն ոչ միայն նորոգված Երկրի, այլև նրա պաշտպանական թաղանթի հետ։

Դա թույլ կտա նրանց հեշտորեն թափանցել այդ թաղանթի միջով ոչ միայն իրենց գիտակցությամբ, այլ նաև մարմիններով՝ ճամփորդելու համար այլ աշխարհներ ու չափումներ, որոնց որ կկարողանան ձգվել իրենց թրթիռներով։

Նույնը վերաբերվում է և ուրիշ քաղաքակրթությունների ներկայացուցիչներին. նրանք, որոնց թրթիռները թույլ կտան, կկարողանան այցելել ձեր մոլորակ՝ թափանցելով Երկրի բարձրաթրթիռ պաշտպանական թաղանթի միջով։

Այդպես, գոյության նոր մակարդակ Անցում կատարելու հետ կփոխվի նաև Երկրի կենսոլորտը, որը ձեռք կբերի Հինգերորդ չափման էներգետիկական բնութագծեր։

Այն կարելի է պայմանականորեն անվանել Երկրի նուրբ մարմիններ՝ արդեն ավելի նոսրացած, որոնք կհամապատասխանեն բոլոր պարամետրերին, որ անհրաժեշտ են ձեր մոլորակը այն բարձունքին պահելու համար, ուր ելել է նա Անցման շնորհիվ, և միաժամանակ պահպանել նրա բոլոր բացառիկ հատկություններն ու ինքնատիպությունը։

Եվ ամեն բան տեղի կունենա միաժամանակ. կբարձրանան և՛ Երկրի ու իր կենսոլորտի, և՛ նոր, ավելի բարձր չափման մեջ գոյելու ունակ բոլոր կենդանի էակների թրթիռները։

ՊԱՐԿԵՇՏՈՒԹՅՈՒՆ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁԸ, 10 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021 Թ.

Այսօր ես ուզում եմ խոսել ձեզ հետ երկվության աշխարհի շատ տարածված ևս մեկ կարծրատիպի մասին, որը վերաբերում է ձեզնից յուրաքանչյուրին։

Եկեք հասկանանք, թե ինչ է ենթադրվում «պարկեշտ մարդ» հասկացության ներքո։

Երկվության աշխարհում դա, որպես կանոն, օրինապահ մարդն է, որի կենսակերպը լիովին ներգրվում է վարքի սոցիալական նորմերի սահմանած շրջանակներում։

Ինչու՞ ես որոշեցի հենց հիմա հրավիրել ձեր ուշադրությունը դրա վրա։

Միայն այն պատճառով, որ Հինգերորդ չափման աշխարհում դուք պետք է ապրեք բոլորովին այլ՝ Աստվածային օրենքներով, որոնք սահմանում է ձեր սեփական Հոգին։

Եվ դրանում հսկայական տարբերություն կա։

Եթե մարդու վարքի և մտածողության կարծրատիպերը եռաչափ աշխարհում ստեղծվել են արհեստական ձևով, կառավարող վերնախավի պահանջմունքներին համապատասխան, ապա բարձր չափումներում «պարահանդեսը վարում են» Տիեզերքի Օրենքները, որոնք Միասնական են բոլոր մոլորակների և քաղաքակրթությունների համար։

Այդ իսկ պատճառով պարկեշտության հասկացությունը, օրինակ, Հինգերորդ չափումում խիստ տարբերվում է երկվության աշխարհում ընդունված պարկեշտության հասկացությունից։

Այդպիսով, միևնույն իրավիճակում ձեր մոլորակի բնակիչը և Հինգերորդ չափման քաղաքակրթության ներկայացուցիչը իրենց բոլորովի այլ կերպ կպահեն։

Օրինակի համար եկեք վերցնենք երրորդ չափման մարդու և բարձր աշխարհների բնակչի վերաբերմունքը դաստիարակության և կրթության նկատմամբ։

Եռաչափ աշխարհում դպրոցական ծրագիրը կազմվում է այնպես, որ մարդու մտածողությունն ու աշխարհայացքը հարմարեցվեն «պարկեշտության» միասնական ստանդարտին։

Որպես կանոն, այն իր մեջ ներառում է պատասխանատվության զգացումը, հասարակության մեջ վարքային կանոնների պահպանումը, հնազանդությունն ու հարգանքը վերադասների նկատմամբ։

Մարդկանց հենց այդ որակներն են թույլ տալիս համաշխարհային վերնախավին սեփական հայեցողությամբ ղեկավարել զանգվածներին։

Բոլոր նրանք, ովքեր դուրս են մնում այդ ստանդարտից, հասարակական կարգի խախտողներ են, այսինքն՝ անպարկեշտ մարդիկ։

Իսկ ինչի՞ վրա է հիմնված դաստիարակությունն ու կրթությունը բարձր աշխարհներում։

Այնտեղ պարկեշտության գլխավոր չափանիշը Տիեզերական Օրենքների պահպանումն է, որոնք թույլ են տալիս մարդուն, պահելով իր ներքին ազատությունը, ապրել Միասնության և Սիրո մեջ հասարակության բոլոր անդամների հետ։

Երկվության բացակայությամբ մարդը բնավ կարիք չունի սահմանների և վարքի նորմերի, քանի որ չի կարող ոչ ոքի վնասել այն պարզ պատճառով, որ իր գոյության հիմքը կազմում են Միասնությունն ու Անպայման Սերը։

Եվ որպեսզի այժմ ևեթ առավելագույնս մերձենաք այդպիսի վիճակին, աշխատեք, զավակնե՛րս, ձեր ամեն մի գործողությունը դիտարկել Տիեզերական Օրենքների տեսանկյունից, հետզհետե հեռանալով եռաչափ աշխարհի մարդկանց բնորոշ կարծրատիպային վարքագծից։

Դա հատկապես առնչվում է ձեր վերաբերմունքին այսպես կոչված «պատվաստման» նկատմամբ, քանի որ աշխարհի շատ երկրների իշխանությունների ներկայացուցիչները հենց «պարկեշտություն» հասկացությունն են գործի դնում իբրև լծակ՝ ճնշելու նրանց, ովքեր հրաժարվում են այդ կործանարար պրոցեդուրայից։

Նրանք խղճմտանքի և «պարկեշտության» կոչ են անում այդ մարդկանց, հանդիմանելով, որ չկատարելով իշխանությունների ցուցումները՝ նրանք չեն հարգում մյուսներին և իրենց համառության պատճառով վտանգի են ենթարկում նրանց։

Այդպիսի մարդկանց, իշխանությունները, ի լուր բոլորի, հայտարարում են կարգազանցներ և հասարակության վտանգավոր անդամներ։

Իրականում այդ մարդիկ, անսալով իրենց Հոգուն և չենթարկվելով մեծամասնության կարծիքին, արդեն դուրս են գալիս եռաչափ աշխարհի «պարկեշտության» շրջանակներից, պահելով իրենց ներքին ազատությունն ու իրավունքը՝ ինքնուրույն վճռելու իրենց հետագա ճակատագիրը։

Հենց այդ մարդիկ էլ իրենց հետևից կտանեն մյուսներին՝ դուրս պրծնելով եռաչափ աշխարհի ճիրաններից և այժմ սկսելով ապրել Տիեզերքի Օրենքներով։

Եվ ես հավատում եմ, որ նման մարդկանց թիվը օրըստօրե կմեծանա։

Օրհնում եմ ձեզ, զավակնե՛րս, և անսահման սիրում...

Բացարձակ-Հայրը խոսեց ձեզ հետ

ԳԼՈՒԽ IX

ՆՈՐ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ

Բացարձակ-Հոր ուղերձները, ընդունել է Մարթան 2021 Թ. հուլիսի 24 – օգոստոսի 13
(«ԿՅԱՆՔԸ ՆՈՐ ԵՐԿՐՈՒՄ» շարքի մի մասը)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՄԻԱՄՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՏԱՆՈՂ ՈՒՂԻՆ

2. ՄԻԱՄՆՈՒԹՅՈՒՆ ՈԳՈՒ ԵՎ ՀԱՎԱՏԻ ՄԵՋ

3. ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՄԻԱՄՆՈՒԹՅՈՒՆ (ՊՐԱԿՏԻԿԱ)

4. ՆՄԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ ԵՎ ԲՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

5. ՆՄԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

6. ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՄԱԳՆԻՍ (ՊՐԱԿՏԻԿԱ)

7. ՄԻԱՄՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՄԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ

8. ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԽՈՀՆԵՐ

9. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՐՁԻԿ (ՊՐԱԿՏԻԿԱ)

10. ՀԱՅԵԼԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆ

11. ԲՈՒՄԵՐԱՆԳԸ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ Է

12. ԶՈՀ ԵՎ ԴԱՀԻՃ

13. ԱՆՆՎԱՃՆԵՐԸ

14. ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

15. ՊԱՏՃԱՌԻ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔԻ «ՎԵՐԱԾՐԱԳՐԱՎՈՐՈՒՄ»

16. ՓՈԽԵԼՈՎ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԴ՝ ՓՈԽՈՒՄ ԵՍ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԴ

17. ՌԻԿՈՇԵՏԻՑ ԽՈՒՍԱՓԵԼՈՒ ՀԱՄԱՐ (ՊՐԱԿՏԻԿԱ)

18. ՈՐՔԱՆ ՇԱՏ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ, ԱՅՆՔԱՆ ՀՈՒԺԿՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ

ՄԻԱՄՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՏԱՆՈՂ ՈՒՂԻՆ

Ողջունում եմ ձեզ, իմ սիրասու՛ն զավակներ։

Այսօր մենք կանցնենք նոր թեմայի, որը վերաբերվում է **նոր իրականության ձեր ընկալմանը**, և այդ հարցին կմոտենանք **Տիեզերական Օրենքների տեսանկյունից**։

Ինչպես արդեն ասվել է իմ նախորդ ուղերձներում, ձեր գոյության իդեալական տարբերակը ձեր գիտակցության մեջ օբյեկտիվ և սուբյեկտիվ իրականությունների ներդաշնակ համադրությունն է։

Հենց դա է ձեզ թույլ տալիս գործել համարժեքորեն, այսինքն լսելով ձեր Հոգուն՝ օգտագործել ձեր Մտքի ունակությունները։

Այլ կերպ ասած, Հոգին ստեղծում է ձեր օբյեկտիվ իրականությունը, իսկ Միտքը՝ սուբյեկտիվ, ինչը թույլ է տալիս ներդաշնակորեն ընդգրկվել ներկայիս իրականության մեջ՝ չնայած վերջինիս ողջ քաոսայնությանն ու անկանխատեսելիությանը։

Իսկ հիմա եկեք տեսնենք, թե ինչպես են ազդում ձեր կյանքի բոլոր գործընթացների վրա Տիեզերքի Օրենքները։

Եվ սկսենք **Միասնության Օրենքից**, որն առաջին պլան է ելնում ձեր մոլորակի համար բախտորոշ այս շրջափուլում։

«Վիշապին» հաղթել մարդկությունը կարող է լոկ միավորվելով Ոգու մեջ։

Եվ այդ միավորումը օրըստօրե նկատելի է դառնում։

Այն արդեն թևածում է օդում և, իջնելով ֆիզիկական պլան, դրսևորվում զանգվածային բողոքի ակցիաների մեջ՝ ընդդեմ Երկրի վրա Մութ Ուժերի կազմակերպած կորոնավիրուսային խրախճանքի։

Մարդիկ միավորվում են բոլոր մակարդակներում՝ մասնագիտական, սոցիալական, քաղաքական։

Նրանք սկսում են իրենց գիտակցել որպես ազատ անձնավորություններ, որոնց անհնար է ստիպել անելու մի բան, որ հակասում է իրենց կենսական սկզբունքներին ու շահերին։

Եվ դրա հետ մեկտեղ հասկանում են, որ միայնակ գործելով շատ դժվար է արդյունքի հասնել, քանի որ չափազանց անհավասար են իշխանության գլուխ կանգնածների և իշխանություն չունեցողների ուժերը։

Իրականում, զավակնե՛րս, ցանկացած իշխանություն բացարձակապես անզոր է մարդկանց Ոգու Միաբանման դեմ։

Հենց որ դադարում է գործել դարերով ձեր գիտակցության մեջ ներդրված «բաժանիր և տիրիր» սկզբունքը, ղեկավարները, բոլոր մակարդակներում, կատարելապես անօգնական են դառնում։

Նրանք անկարող են իշխել միասնական մղումով համախմբված մարդկանց, որոնք, ազատվելով իշխանությունների վախից, կարող են մինչև արյան վերջին կաթիլը պաշտպանել ազատության իրենց իրավունքը, որը տրված է այս մոլորակի վրա ծնվելու իրավունքով։

Եվ այն, ինչ կատարվում է հիմա աշխարհի երկրների մեծ մասում, հենց դրա վառ ապացույցն է։

Մարդիկ հոգնել են վախենալուց, ենթարկվելուց, նվաստանալուց։

Նրանք հասկացել են, որ մարդուն անարժան այդ զգացմունքները չեն օգնում գոյություն պահպանել, այլ ավելի են պատին դեմ տալիս՝ զրկելով բնականոն կյանքի հույսից և սպանելով իրենց մեջ սեփական արժանապատվության զգացումը։

Ինչպես տեսնում եք, դա աստիճանաբար ի հայտ եկավ, և Երկրում տիրող քաոսը պետք է հասներ իր եռման կետին, որպեսզի արթնացներ մարդու մեջ ազատության, անկախության և ինքնահարգանքի բնատուր ձգտումը։

Եվ հիմա ձեզ պարտադրվող սահմանափակումներից ազատագրվելու այդ գործընթացը գնալով կուժգնանա, որովհետև հասարակության ղեկավարման հնացած համակարգի քանդման թափանիվը արդեն ողջ սաստկությամբ գործի է դրվել։

Հենց այդպես էլ դրսևորում է իրեն հավերժական և անխախտ **Միասնության Տիեզերական Օրենքը** ֆիզիկական պլանում։

Եվ ապրելով այդ օրենքի համաձայն, Ոգու մեջ միավորված, մարդկությունն ունակ է դառնում տապալելու ցանկացած իշխանություն, ցանկացած, համակարգ, որն ուղղված է ընդդեմ ծնունդից ի վեր իրեն տրված իրավունքի՝ դրսևորելու իր Ազատ Կամքը և տնօրինելու իր ճակատագիրն այնպես, ինչպես կհուշի իր Հոգին, այլ

ոչ թե Երկրի իշխանությունը զավթած մի բուռ ՈՉ-մարդիկ, որոնք սոսկ իրենց շահադիտական նպատակներն են հետապնդում։

Եվ ես տեսնում եմ, զավակնե՛րս, որ Միասնության զգացումը թևավորում է ձեզ, տալիս աներևակայելի ուժ, ներշնչանք ու հնարավորություն՝ հաղթահարելու ցանկացած դժվարություն, որ ծնվում է դեպի լույսը տանող ձեր ճանապարհին՝ դեպի Հինգերորդ չափման նոր հասարակության կառուցումը ձեր չքնաղ մոլորակի վրա։

ՄԻԱՄՆՈՒԹՅՈՒՆ ՈԳՈՒ ԵՎ ՀԱՎԱՏԻ ՄԵՋ

Այսօր ես կուզեի շարունակել զրույցը, թե ինչպես է ազդում **Միասնության Օրենքը** ձեր օբյեկտիվ և սուբյեկտիվ իրականության վրա։

Եվ հիմա մենք կդիտարկենք դա էներգետիկական տեսանկյունից։

Ի՞նչ է կատարվում նուրբ պլանում, երբ շատ ու շատ մարդկանց մտքեր սկսում են գործել միևնույն ուղղությամբ։

Ինչպես արդեն գիտեք, ցանկացած հուզախառն միտք նախ և առաջ էներգիա է՝ այս կամ այն որակի։

Եվ երբ միասեռ մտքերը, Նմանության Օրենքի համաձայն, ձգվում են միմյանց, ստեղծվում է էգրեգորի նման մի բան, որոշակի էներգետիկական կուտակիչ, որը համանման հույզեր ճառագող ամեն նոր մարդու հետ ավելի է ամրանում ու մեծանում։

Հավանաբար բոլորդ էլ բազմիցս նկատել եք այդ երևույթը, հատկապես մեծ բազմության մեջ եղած ժամանակ։

Նկատել եք, թե որքան արագ կարող է «կրակ բռնկվել» այս կամ այն հույզի գեթ մեկ «կայծից», ընդ որում՝ ինչպես դրական, այնպես էլ բացասական։

Դա վառ դրսևորվում է նաև աշխատանքային կոլեկտիվներում, որտեղ երբեմն մեկ մարդը բավական է ողջ կոլեկտիվի հուզական վեկտորը թեքելու թե՛ քայքայման, թե՛ կառուցողական ուղղությամբ։

Ձեր մոլորակի իշխող վերնախավը հրաշալի տեղյակ է Տիեզերքի Օրենքներին, սակայն կիրառում է դրանք ոչ թե ի բարօրություն մարդկության, այլ բացառապես սեփական շահադիտական նպատակներով։

Մարդկանց տեղեկացնելով իրենց գործողությունների մասին երբեմն քողարկված, երբեմն էլ բացահայտ տեսքով, նրանք ձևականորեն պահում են Ազատ Կամքի Օրենքը՝ թույլ տալով մարդկանց ինքնուրույն որոշել՝ հետևել սողունակերպների առաջարկած կյանքային դրույթներին, թե ոչ։

Սակայն նույնպիսի ակտիվությամբ նրանք օգտվում են նաև Միասնության Օրենքից՝ միավորելով մարդկանց սեփական կյանքի, մերձավորների համար ունեցած վախի, աշխատանքը կորցնելու՝ այսինքն նյութական բարեկեցությունից զրկվելու վախի հիման վրա։

Զանգվածային լրատվության բոլոր միջոցները գործի դնելով, մարդկային հասարակության մեջ նրանք ակտիվորեն ստեղծում են վախի Միասնություն և հնազանդության Միասնություն՝ հիմնված այդ նույն վախի վրա։

Իսկ հիմա, զավակնե՛րս, ի հակակշիռ Դրակոսողունակերպների ջանքերի, դուք պետք է ստեղծեք ձե՛ր Միասնությունը, հիմնված արդեն բոլորովին այլ մտաձևերի և հույզերի վրա։

Դուք ոչ միայն պետք է ստեղծեք, այլև մշտապես անձեռնմխելի պահեք Ոգու ուժի, Անվախության, ձեր և ձեր մոլորակի գեղեցիկ ու լուսավոր ապագայի նկատմամբ ունեցած Հավատի Միասնությունը։

Ի՞նչ է հարկավոր դրա համար։

Նախ և առաջ՝ հավատալ ինքներդ ձեզ, քանի որ առանց այդ Հավատի դուք ի զորու չեք լինի ձեր հետևից տանելու մյուսներին։

Ինչպես արդեն գիտեք, մարդիկ ոչ այնքան հավատում են բառերին, որքան ենթագիտակցական մակարդակում կարդում են այդ բառերի պարունակած էներգիաները։

Այդ պատճառով էլ ոմանց դուք հավատում եք անվերապահորեն, իսկ այլոց նկատմամբ, որքան էլ որ գեղեցիկ ու ճիշտ խոսքեր ասեն, անտարբեր եք մնում։

Դա բացատրվում է նրանով, որ այդ մարդկանց ներքին էներգետիկական լիցքը չի համապատասխանում իրենց ասածին։

Այդ իսկ պատճառով, իսկական Միասնությունը Ոգու մեջ պետք է ամուր հիմնված լինի Լույսի ճանապարհն ընտրած յուրաքանչյուր մարդու՝ իր նկատմամբ ունեցած Հավատի վրա։

Հենց այդ անսասան Հավատն էլ, որի մեջ չի մնացել վախի ու կասկածի և ոչ մի նշույլ, ունակ է պատշաճ մակարդակի վրա պահելու նրա սեփական թրթիռները, որոնք, միաձուլվելով նույնպիսի ուրիշ մարդկանց բարձր թրթիռների հետ, կստեղծեն ա՛յն Ոգու Միասնությունը, որն ունակ կլինի փշրելու եռաչափ աշխարհի փտած համակարգը և դուրս բերելու մարդկությանը իր զարգացման նոր շրջափուլ։

Եվ հիմա այդ գործընթացն առաջ է գնում իր ամբողջ թափով։

ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆ (ՊՐԱԿՏԻԿԱ)

Ավարտելու համար մեր զրույցը, թե ինչպես է ազդում **Միասնության Տիեզերական Օրենքը** Երկրի ներկայիս իրադրության վրա, ուզում եմ այսօր մի պրակտիկա տալ ձեզ, որը կօգնի կյանքի կոչել այն արդեն ֆիզիկական պլանում, այլ խոքով՝ խարսխել այն, ինչ կատարվում է նուրբ մակարդակում։

Պրակտիկայի իմաստն այն է, որ միավորի Լույսի Ուժերի ջանքերը, որոնք այժմ անդադրում տքնում են ի բարօրություն մարդկանց, և հենց իր՝ մարդու ջանքերը, որը մարմնավորված է ֆիզիկական մարմնում։

Ինչպես արդեն բազմիցս ասվել է իմ ուղերձներում, դուք ինքներդ, անցկացնելով ձեր միջով բարձր թրթիռներով էներգիաներ, դրանց կուտակիչներն եք և, միևնույն ժամանակ, գեներատորները։

Դուք ունակ եք հազարապատիկ ուժգնացնելու այդ էներգիաները, սակայն դա տեղի է ունենում միայն այն դեպքում, երբ ինքներդ դրանց հետ միևնույն ալիքի վրա եք, այսինքն թրթռում եք նույն հաճախությամբ, ինչ Լույսի Ուժերը, որոնք Երկիր են առաքում այդ էներգիաները՝ անցկացնելով իրենց միջով։

Դա տեղի է ունենում հետևյալ կերպ. Համբարձյալ Վարպետները, Հրեշտակներն ու Հրեշտակապետերը, զարգացած քաղաքակրթությունների ներկայացուցիչները, որոնք մտնում են Լույսի Գալակտիկական Ֆեդերացիայի կազմի մեջ, որսալով Տիեզերքի Ակունքից եկող բարձրաթրթիռ էներգիաները, անցկացնում են դրանք իրենց միջով, առաքելով հետո Երկիր՝ ֆիզիկական մարմինների մեջ մարմնավորված մարդկանց, և արդեն դուք վերջնականապես խարսխում եք դրանք։

Այլ կերպ ասած, դուք ընդունում եք էստաֆետը ձեր Երկնային օգնականներից, և դա տեղի է ունենում շնորհիվ այն բանի, որ ինքներդ ունակ եք դարձել «յուրացնելու» այդ էներգիաները, — թրթռանքի չափազանց մեծ տարբերությունը կործանարար ձևով կանդրադառնար ձեր ֆիզիկական մարմինների վրա, որոնք դեռևս եռաչափ աշխարհում են։

Լույսի Ուժերը նուրբ պլանում հարմարեցնում են դրանք ձեզ՝ փոքր-ինչ ցածրացնելով հաճախությունները։

Սակայն, իհարկե, նույնիսկ նման տեսքով այդ էներգիաներն ընդունելու ունակ են լոկ այն մարդիկ, որոնք կարողացել են հոգևոր առումով իրենց «ձգել-հասցնել» թրթիռների այդքան բարձր մակարդակի։

Իսկ խորապես եռաչափ գիտակցությամբ մյուս մարդկանց համար այդ էներգիաները միջաթափանց կանցնեն կգնան, որպեսզի չվնասեն և թույլ տան նրանց գնալու իրենց ճանապարհով:

Ինչու՞ եք դուք ձեզ լուսատտիկներ անվանում: Անշուշտ, դա պատահական չէ:

Լույսի Ուժերի համար համար դուք հենց այդպես էլ երևում եք. ճրագների պես լույս եք տալիս անդեմ մոխրագույն զանգվածի ֆոնին, որ ներկայացնում են ձեր մոլորակի ցածրաթրթիռ բնակիչները:

Եվ ձեր Լույսը ըստ Նմանության Օրենքի ձգում է այն էներգիաները, որոնք դուք այնուհետև խարսխում եք Երկրում:

Ես տալիս եմ այս գործընթացի մանրամասն նկարագրությունը, որպեսզի դուք ավելի հեշտ յուրացնեք պրակտիկան, որ պատրաստվում եմ առաջարկել:

Կանվանենք այն **«Էներգետիկական Միասնություն»**:

Այն չի պահանջում մեդիտատիվ դրություն: Սա հենց պրակտիկա է, որը կարող եք անել հընթացս՝ ամեն տեղ և ամեն ժամանակ:

Պարզապես որքան կարելի է հաճախ պատկերացրեք շողշողուն Աստվածային էներգիայի հոսանքը, որը Երկնքից հեղվում է Երկիր և մտնում ձեր թագի չակրայով:

Զգացեք, ինչպես է նա քնքշորեն և խնամքով պարուրում այն, հետզհետե իջնելով ձեր չակրաներով վար և հետո շարունակում իր ընթացքը դեպի Երկրի կենտրոն:

Զգացեք ձեզ Լույսի «սյուն»՝ կապուղի, որով այդ Աստվածային էներգիան, արդեն անցած լինելով ձեր մոլորակի Երկնային հովանավորների նոսրացած մարմիններով և ձեր սեփական ֆիզիկական մարմնով, մտնում է Երկրի մարմինը՝ մաքրելով նրան և իր բոլոր բնակիչներին եռաչափ աշխարհի բացասական էներգիաներից և ծրագրերից:

Դուք պետք չունեք կանչելու որևէ կոնկրետ էներգիա, քանի որ ձեզնից ամեն մեկն ունի իր թրթիռային մակարդակը և հնարավոր է՝ չկարողանաք ճիշտ հաշվարկել ձեր ուժերը։

Դուք կարող եք ընտրել ձեզ համար հետևյալ ձևակերպումը. «Ես Աստվածային էներգիայի մաքուր կապուղի եմ և անցկացնում են այն իմ էներգետիկական տարածությամբ՝ պարարելով Երկիրը նրանով ի բարձրագույն բարօրություն բոլորի»։

Եվ հավատացեք, զավակնե՛րս, ձեր կանչին կարձագանքի հենց այն էներգիան և Լույսի Ուժերի այն ներկայացուցիչները, որոնք առավելագույնս մոտ են ձեր ներկայիս թրթիռներին։

Արեք այս պրակտիկան հնարավորինս հաճախ, օգնեք ձեր Մայր Երկրին և իր զավակներին փափուկ ու անցավ ավարտելու Ացման դժվարին փուլը։

Եվ ես օրհնում եմ ձեզ, որ այդպես լինի...

ՆՄԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ ԵՎ ԲՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Այսօր մենք կխոսենք ևս մեկ Տիեզերական Օրենքի՝ **Նմանության Օրենքի** մասին, և թե ինչպես է այն ներգործում մարդկանց վրա ձեր մոլորակի ներկայիս խրթին իրավիճակում։

Այս Օրենքը սերտորեն կապված է Միասնության Օրենքի հետ, որովհետև նրա շնորհիվ մեկտեղ են համախմբվում այն Հոգիները, որոնք կարողանում են բարձրացնել իրենց թրթիռները ընդհուպ այն մակարդակը, որը թույլ է տալիս նրանց կատարել Անցումը։

Իհարկե, այս օրենքը ճիշտ նույն կերպ ազդում է նաև նրանց վրա, ովքեր պատրաստ չեն դրան և առաջվա պես թրթռում են եռաչափ աշխարհի հաճախություններով։

Եվ դուք կարող եք դա տեսնել այսօրվա իրականության մեջ։

Չնայած մարդկանց ահագնացող շերտավորմանն ըստ թրթռանքի, միաժամանակ ամրապնդվում է և նրա՛նց Միասնությունը, ովքեր պատրաստ են մինչև վերջ հետամուտ լինելու իրենց պայքարին ընդդեմ խորքային պետության և իրենց պարտադրված կեղծ համավարակի։

Այլ խոսքով, Նմանության Օրենքը հիմա առավել վառ է դրսևորվում, քանի որ ձեր կյանքի պայմաններն արդեն այնպիսին են, որ յուրաքանչյուր մարդ ստիպված է իր ընտրությունը կատարել. այլևս ոչ ոքի չի հաջողվի խույս տալ դրանից։

Եվ այդ պայմանները պատահական չեն ստեղծվել Երկրում։

Երկու ժամանակաշրջանների միացման կետում տեղի է ունենում մարդկանց գիտակցության ահռելի բեկում, և ամեն ոք ընտրում է ինչ ճանապարհով գնալ՝ Լույսի, թե Խավարի։

Երրորդ ճանապարհ հիմա տրված չէ, և դա հսկայական պատասխանատվություն է դնում յուրաքանչյուրիդ վրա, քանի որ ձեր Հոգու էվոլյուցիան է դրված բախտախաղին։

Բայց քանի որ մարդը չափազանց բարդ ու նուրբ հոգեկերտվածքով էակ է, նրա աշխարհն էլ չի կարող լինել սոսկ սև ու սպիտակ։

Գոյություն ունեն մարդու մտքերի և հույզերի հսկայական քանակությամբ նրբերանգներ ու երանգներ։

Եվ այդ «երանգներից» յուրաքանչյուրը էներգետիկորեն ինքնուրույն է, այսինքն՝ Նմանության Օրենքի համաձայն դեպի իրեն է ձգում ուրիշ մարդկանց մտքերն ու հույզերը, որոնք թրթռանքով նման են իրեն։

Այդպես ձևավորվում են միատեսակ էներգիաների որոշակի էգրեգորներ։

Եկեք դա դիտարկենք կոնկրետ օրինակով։

Ներկայումս շատերը համարում են, որ իրենց գիտակցությունն արդեն այնքան է փոխակերպվել, որ իրենք պատրաստ են Անցման։

Սակայն, ինչպես հասկանում եք, բոլորը չեն կարող թրթռալ միևնույն հաճախությամբ, քանի որ մարդկանցից յուրաքանչյուրն ունի իր կենսափորձը և իր կարմայական բեռը։

Ոմանց պակասում է հավատը սեփական ուժերի նկատմամբ, ոմանք ունակ չեն իսպառ ազատվելու իրենց և մերձավորների համար ունեցած վախից, ոմանք էլ չեն կարողանում դուրս պրծնել եռաչափ աշխարհի ծրագրերի ճիրաններից։

Եվ քանի որ մարդը միշտ ցանկություն ունի ինչ-որ մեկի հետ կիսելու իր մտքերն ու ապրումները, այդպիսի մարդիկ որոնում են իրենց նմաններին։

Եվ գտնում են, որովհետև ձգում են իրար իրենց թրթիռներով։

Դրանք այսպես կոչված «էներգետիկական համախոհներ» են, որ փոխանակում են իրենց վախերը, կասկածներն ու անհանգստությունները։

Բայց դրա հետ մեկտեղ նրանց միավորում է և ընդհանուր նպատակը՝ Երկրի Անցումը Հինգերորդ չափում։

Եվ նրանք անկեղծորեն ձգտում են դրան։

Սակայն այս դեպքում չի կարելի խոսել այդ մարդկանց՝ Ոգու մեջ Միավորվելու մասին, քանի որ նրանց թրթիռները տարասեռ են։

Դա Միավորում է Մտքի մակարդակում, այլ ոչ թե Հոգու,- հենց այն դեպքն է, երբ մարդը ցանկալին իրականի տեղ է ընդունում։

Նա ինքն իրեն համոզում է, որ պատրաստ է Անցման, մինչդեռ թերահավատությունն իր ուժերի նկատմամբ և ապագայի վախը ցածրացնում են իր թրթիռները՝ այդ կերպ դանդաղեցնելով իր հոգևոր աճն ու առաջընթացը Համբարձման ճանապարհով։

Բարեբախտաբար, այդ միկրո-էգրեգորներն անկայուն են, որովհետև դուք տեղում չեք մնում։

Դուք կարող եք էներգետիկորեն «հոսել» մի խմբից մյուսի մեջ՝ միաժամանակ մնալով Համբարձման էգրեգորում, որ ընտրել է ձեր Հոգին։

Այդպես ոմանք ազատվում են իրենց հանդեպ ունեցած թերահավատությունից, ոմանք կասկածներից, ոմանք էլ վախից, այսինքն՝ ձգվում են արդեն դեպի ավելի բարձր թրթիռներ ունեցող խմբերը։

Նրանք կարծես բարձրանում են մի սանդուղքով, որ տանում է դեպի Հինգերորդ չափման աշխարհը։

Բայց երբ իրենց հաջողվի արմատախիլ անել բոլոր բացասական հույզերը, Ոգու մեջ կմիավորվեն նրանց հետ, ովքեր արդեն վերջնականապես «թոթափել են» եռաչափ աշխարհի թմբիրը և, իրենց գիտակցությամբ հիմնավորապես «ամրանալով» չորրորդ չափման մեջ, արդեն կանգնած են ընդհուպ Հինգերորդի շեմին։

Եվ ես մաղթում եմ ձեզ, զավակներս, որ դա կատարվի յուրաքանչյուրիդ հետ, և հնարավորինս արագ։

ՆՄԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Այսօր մենք կշարունակենք զրույցը **Նմանության Օրենքի** մասին, որպեսզի դուք սովորեք այն կառավարել։

Իրականում, չնայած իրենց հավերժական և անխախտ լինելուն, Տիեզերական Օրենքները միանգամայն եթակա են մարդու իշխանությանը։

Եվ դա հատկապես վերաբերում է **Նմանության Օրենքին**, որն ասում է՝ **«նմանը նմանին է ձգում»**։

Սակայն չէ՞ որ ձեզնից է կախված ստեղծել այն «նմանը», որին կձգվեն թրթռանքով իրեն նման էներգիաները։

Այն կարող է լինել ինչպես դրական, այնպես էլ բացասական։

Սակայն ձեր հոգևոր աճի հետ փոխվում են և ձեր նախապատվություններն ու կյանքային հայացքները, այսինքն՝ ձեր մտքերի ու հույզերի էներգետիկան։

Եվ եթե նախկինում դուք սոսկ «խաղալիք էիք» այդ Օրենքի «ձեռքում», ապա հիմա եկել է ժամանակը կառավարելու այն ներքին պրոցեսներով՝ արդեն յոթմղոնանոց քայլերով առաջ գնալու համար։

Եվ այսպես, սկսենք նրանից, որ հարկավոր է ազնվորեն և օբյեկտիվորեն կողքից նայել ինքներդ ձեզ՝ բացահայտելու համար ձեր բոլոր թույլ տեղերը,- այն ամենը, ինչից պետք է ազատվեք հնարավորինս շուտ։

Եվ եթե դա հաջողվի, դուք զարմանքով կնկատեք, որ ձեր շրջապատը կսկսի փոխվել։

Օրինակ, մարդիկ, որոնք սովոր էին գանգատվել կյանքից, այլևս չեն կարողանա ձգվել դեպի ձեզ իրենց թրթռանքով, քանի որ ինքներդ արդեն «դուրս եք մնացել» «բողոքավորների» էներգետիկական խմբից։

Մյուսները կդադարեն կիսել ձեզ հետ իրենց վախերը, որովհետև դուք արդեն լրիվ արմատախիլ եք արել դրանք ձեր միջից։

Եվ հետզհետե, ձեր բացասական մտքերի և հույզերի բոլոր մնացորդներից ազատվելու հետ, այդ էներգիաներով ապրող բոլոր մարդիկ կսկսեն անհետանալ ձեր էներգետիկական տարածությունից։

Տվյալ դեպքում **Նմանության Օրենքն** արդեն կվերածվի **Անդրադարձման Օրենքի**, քանի որ ձեզ ոչ բնորոշ հույզերը, անկարող լինելով ձգվել դեպի ձեզ, կսկսեն «վանվել» ձեր էներգետիկական տարածությունից։

Հենց այդպես է տեղի ունենում այդ Օրենքի «կառավարումը»։

Հոգևոր աճի ամեն նոր աստիճանի հետ դուք կփոխեք ձեր գոյության «նմանը», այսինքն ձեր շրջապատը նույնպես կփոխվի ձեր նոր թրթիռներին համապատասխան։

Դուք կձգեք արդեն նոր բարձրաթրթիռ «նման», որը կսկսի հրաշալի կերպով դրսևորվել ձեր կյանքում։

Անգիտակցական մակարդակում դուք վաղուց ի վեր օգտվում եք ձեր շրջապատը «վերադասավորելու» այդ մեխանիզմից, բայց հիմա կարող եք արագացնել այդ պրոցեսը՝ գիտակցաբար աշխատելով նրա հետ։

Եվ իմ հաջորդ ուղերձում ես ձեզ կտամ մի պրակտիկա, որը կօգնի կարգավորել էներգետիկական հոսքերն այնպես, որ դեպի ձեզ ձգվեն միայն այն էներգիաները, որոնք կհանեն ձեզ գոյության ավելի բարձր մակարդակ, միաժամանակ մաղելով այն էներգիաները, որոնք կարգելակեն ձեր հոգևոր զարգացումը։

ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՄԱԳՆԻՍ (ՊՐԱԿՏԻԿԱ)

Եվ այսպես, որպես [իմ նախորդ ուղերձի](#) շարունակություն, այսօր կանցնենք Նմանության Օրենքի «կառավարման» պրակտիկ աշխատանքին։

Դրա համար դուք պետք է սովորեք կարգավորել (настраивать) ձեր մարմինն այնպես, որ այն ընդունի միայն բարձր հաճախության «ալիքներ»։

Սակայն դա հնարավոր կլինի միայն այն դեպքում, եթե ինքներդ թրթռաք այդ հաճախություններով։

Դուք կարող եք առարկել, որ եթե ձեր թրթիռները բարձր լինեն, Նմանության Օրենքը ինքն իրեն էլ կգործի՝ ինքնաբերաբար դեպի ձեզ ձգելով նույնպիսի բարձրաթրթիռ մարդկանց և բարենպաստ իրավիճակներ։

Եվ իրավացի կլինեք, բացառությամբ այն բանի, որ, ինչպես բազմիցս ասել ենք, ՄՇՏԱՊԵՍ պահել բարձր թրթիռներ դեռևս շատ քչերիդ է հաջողվում:

Ցավոք, օրվա ընթացքում, զանազան իրավիճակներից կախված, որոնք անվերջ ծագում են ձեր կյանքում, ձեր թրթիռները «լողում են», և երբեմն՝ բավական լայն դիապազոնով:

Այդ իսկ պատճառով, նման թրթիռային «անկումների» ժամանակ ինքներդ ձեզ ապահովագրելու և էներգետիկորեն վտանգազերծելու համար ես ուզում եմ առաջարկել հետևյալ պրակտիկան:

Անվանենք այն **«Էներգետիկական մագնիս»**:

Պատկերացրեք ձեր մարմինը էներգետիկական «մագնիսի» տեսքով, որը լիցքավորված է որոշակի թրթիռային հաճախության համար:

Այն պետք է լինի առնվազն չորրորդ չափման:

Սակայն չսխալվելու համար դուք կարող եք ընտրել հետևյալ ձևակերպումը.

«Իմ մարմինն իր մեջ կրում է այնպիսի հաճախության թրթիռներ, որոնց ձգվում են միայն Աստվածային էներգիաները»:

Տվյալ դեպքում դուք կխուսափեք էներգետիկական գերդոզավորումից, որին գուցե դեռ պատրաստ չեք:

Սակայն դա հարկավոր է արտասանել ոչ թե մեքենայաբար, այլ բառերի մեջ ներդնելով խոր իմաստ և ձեր դիտավորության ողջ ուժը:

Իսկ հետո փորձեք զգալ, թե ինչպես կարձագանքեն դրանց ձեր մարմինն ու Հոգին:

Հավանաբար կարձագանքեն ձեր վերին չակրաները՝ «Ոսկյա եռանկյունին»:

Ոմանք էլ կզգան նաև իրենց մարմնի հակազդեցությունը թեթև թրթռանքի, ծակոցների, նոսրացածության տեսքով...

Եվ միայն այն բանից հետո, երբ կհամոզվեք, որ ձեր մարմինն ու Հոգին լսել են ձեզ և իրենց մեջ «ամրակայել» ձեր մտաձևը, պետք է պաշտպանական գունդ ստեղծեք ձեզ համար Տիեզերական Սիրո Կրակով, արտաքին հայելային պատերով։

Այն լրացուցիչ պաշտպանություն կդառնա ձեզ համար, — էներգետիկական «հանդերձանք»՝ ձեր նոր բարձրաթրթիռ «մագնիս»-մարմնի համար։

Այս դյուրին պրակտիկան ոչ միայն կպաշտպանի ձեզ արտաքին ցածրաթրթիռ էներգիաներից, այլև կօգնի ներքին մաքրություն պահել։

Ձեր մարմնի՝ բարձրաթրթիռ էներգիաներից կազմված երևակայական «մագնիսը» կներգործի նաև ձեր սեփական մտքերի և հույզերի վրա՝ թույլ չտալով նրանց իջեցնել իրենց մակարդակը։

Այդուհետ ձեր մարմինն ու Հոգին կթրթռան Լույսի և Սիրո հաճախությամբ, որոնք բարենպաստ ձևով կազդեն ինչպես ձեզ, այնպես էլ շրջապատի բոլոր մարդկանց վրա։

Եվ Նմանության Օրենքի համաձայն դեպի ձեզ ձգվել կկարողանան միայն այն մարդիկ և իրավիճակները, որոնք թրթռում են նույն հաճախություններով, ինչ դուք։

Սովորեցրեք ինքներդ ձեզ, զավակնե՛րս, անել այս պրակտիկան ամեն առավոտ, այդ կերպ ձեզ «լիցքավորելով» Աստվածային էներգիաներով ամբողջ օրվա համար, ինչը կպաշտպանի անախորժություններից և կօգնի դեպի ձեզ ձգել նույնպիսի մաքուր և լուսավոր հոգիների, ինչպիսին ինքներդ եք։

Օրհնում եմ ձեզ, զավակնե՛րս, և անչափ սիրում...

ՄԻԱՄՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՄԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Այսօր ես ուզում եմ խոսել այն մասին, թե ինչպես կարելի է սեփական գիտակցության մեջ միավորել **Միասնության Օրենքը** և **Նմանության Օրենքը**, որպեսզի երկուսն էլ պատասխանեն այսօրվա պահանջներին։

Հենց այս երկու օրենքներն են ներկայումս որոշում մարդկության թե՛ լավագույն, թե՛ վատագույն հատվածների շարժման վեկտորը։

Ինչպես տեսնում եք, վերջին ժամանակներս ավելի ու ավելի շատ մարդիկ են սկսում հասկանալ, որ իրենց խաբել են։

Արդեն տեսնում են տեղի ունեցողի իսկական պատկերը, և ոչ թե այն, ինչ կոծկվում է պաշտոնական իշխանությունների և ծախված լրատվամիջոցների կեղծավորությամբ ու սուտ հավաստումներով։

Եվ այդ ըմբռնումն արտահայտվում է արդեն ոչ միայն տեղի ունեցողի ներքին մերժումով, այլ նաև արտաքին դրսևորումներով՝ զանազան հանրագրերի և բողոքի ակցիաների տեսքով։

Սակայն նման դիմակայության արժեքը նվազեցնում են այն բացասական էներգիաները, որ զգում են խաբված և հուսահատության հասած մարդիկ։

Երբեմն մարդկանց Միասնությունը դրսևորվում է ագրեսիայի էներգիայով միավորվելու մեջ, որը, համաձայն Նմանության Օրենքի, ձգում բերում է է՛լ ավելի ագրեսիվ տրամադրված մարդկանց։

Դրա հետևանքն այն է լինում, որ իրենց իրավունքները պաշտպանելիս մարդիկ միևնույն ժամանակ իրենց ստրկացնողներին մատակարարում են նրանց անհրաժեշտ էներգիաները, ինչը իջեցնում է այդ մարդկանց և ընդհանրապես Երկրի թրթիռները։

Իսկ չէ՞ որ սողունակերպների և իրենց համախոհների նպատակն էլ հենց դա է։

Ուրեմն ինչպե՞ս վարվել, զավակնե՛րս։

Ինչպե՞ս հանդարտեցնել շիկացած կրքերը և միաժամանակ սաստկացնել պայքարի միջոցները՝ ձեզ պարտադրվող վարքականոնների և հատկապես ամենուր արմատավորվող անմարդկային փորձարկումների դեմ, որ կատարվում են մարդկանց վրա։

Դա անասելի դժվար խնդիր է, քանի որ օրըստօրե ավելի ու ավելի շատ մարդիկ, տեսնելով հիրավի տիեզերական մասշտաբի այդ խաբեությունը, որ իրենց պարտադրվեց սուտ համավարակի տեսքով, կսկսեն արթնանալ և ագրեսիա ցուցաբերել իրենց դժբախտությունների մեղավորների նկատմամբ։

Եվ նրանց մեծ մասը, ունենալով եռաչափ գիտակցություն, կսկսի գործել սովորական շաբլոններով՝ ագրեսիային պատասխանելով ագրեսիայով։

Այդպես կդրսևորվեն Միասնության և Նմանության Օրենքները Երկրի բնակչության ահռելի զանգվածի մոտ, որն ամբողջովին եռաչափ աշխարհի գերին է։

Նրանք կշատանան բնակչության պատվաստված մասի մեջ, հենց որ վերջիններս իրենց վրա սկսեն զգալ այդ փորձարկման հետևանքները կողմնակի ազդեցությունների, բազմաթիվ հիվանդությունների և հոգեկան խանգարումների տեսքով։

Եվ դուք, զավակնե՛րս, պետք է նրանց հակադրեք այդ հզոր Տիեզերական Օրենքների ձե՛ր ըմբռնումն ու կենսագործումը։

Ձեր Միասնության հիմքում պետք է լինեն Ազատության, Հավասարության և Եղբայրության սկզբունքները, որոնք կբխեն այն խոր ըմբռնումից, որ դրանք ձեր միանգամայն բնական վիճակն են և ձեզ են պատկանում ծննդյան իրավունքով։

Իսկ դա նշանակում է, որ դուք պետք չունեք դրանց համար պայքարելու, այլ պետք է պարզապես ապրեք դրանց ըմբռնումով և այն զգացողությամբ, որ ամեն ոք, ինչպես դուք, ունի նման իրավունքներ։

Եվ դա բոլորովին այլ էներգետիկական լիցք կկրի իր մեջ, որի հիմքում կլինեն ձեր վստահությունը ինքներդ ձեզ և ձեր իրավունքների նկատմամբ, Միասնության գիտակցումը ձեր մոլորակի յուրաքանչյուր բնակչի հետ՝ անկախ նրա մաշկի գույնից, ազգային ու սոցիալական պատկանելությունից, ինչպես նաև ըմբռնումը, որ դուք բոլորդ զավակներն ու մասնիկներն եք Արարչի։

Հենց դրանում է արտահայտվում մարդու սեփական արժանապատվության զգացումը, և այդ վիճակի էներգետիկան այնքան ուժեղ է, որ ունակ է ոչ միայն դիմակայելու օտարածին միջամտությանը ձեր կյանքի մեջ, այլև իր հետևից տանելու մյուսներին։

Եվ դա հատկապես ակնհայտորեն է դրսևորվում այն բանում, թե ով և ինչպես է ձեզ մատուցում ընթացիկ դեպքերի տեղեկատվությունը։

Վերհիշեք, թե որքան տարբեր ընկալումներ եք ունենում այն մարդկանցից, ովքեր ամեն ինչի մասին պատմում են հանգիստ, հավասարակշիռ և իմաստուն կերպով, ցուցաբերելով ինքնահարգանք և հարգանք ունկնդիրների նկատմամբ, և նրանցից, ովքեր ձեզ են հասցնում իմացությունները պարտադրողաբար, ավելորդ հուզականությամբ, դատելով բոլորին և ամեն ինչ։

Եվ եթե առաջինները դրդում են մարդուն հանգիստ ելք փնտրել ստեղծված իրավիճակից, ապա երկրորդները, ագրեսիայի էներգիաներ հրահրելով մարդու մեջ, ապակողմնորոշում են նրան՝ քաոս և խուճապ սերմանելով նրա հոգում։

Այսքանով կսահմանափակվենք այսօր, և իմ հաջորդ ուղերձում ես կպատմեմ, թե ինչպիսին պիտի լինի այն մարդու պահվածքը, որն արդեն դուրս է եկել եռաչափ աշխարհի ծրագրերի շրջանակից։

ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԽՈՀՆԵՐ

Եվ այսպես, շարունակելով [իմ նախորդ ուղերձը](), այսօր մենք կխոսենք, թե ինչպես կարող է իր մեջ միավորել Միասնության և Նմանության Օրենքները արթնացած մարդը, այսինքն նա, ում գիտակցությունն արդեն դուրս է եկել եռաչափ աշխարհի շրջանակից։

Նման մարդն արդեն մտածում է բարձր կարգի կատեգորիաներով, ուստի և հասկանում է, որ այդ աշխարհում ամեն ինչ ենթարկվում է որոշակի օրենքների և Աստվածային Նպատակահարմարության։

Այդպես, եթե սովորական մարդը բողոքում է, որ աշխարհում գոյություն ունի տառապանք ու սոցիալական անարդարություն, ընդունելով դա դատապարտությամբ և արգեսիայով, ապա գիտակից մարդը հասկանում է, որ հենց դա է այն խթանը, որը մղում է արթնացման և հոգևոր վերելքի, քանզի իդեալական պայմաններում վրա է հասնում կանգային վիճակ, որը կարող է բերել հոգու ինվոլյուցիային։

Եվ այդ ըմբռնումը ծնունդ է տալիս պատասխան հակազդեցության Խավարի Ուժերին արդեն ոչ թե ագրեսիայի և դատապարտության տեսքով, այլ՝ հոգևոր դիմակայության և սեփական օրինական իրավունքների ու շահերի հանգիստ պաշտպանության։

Նման մարդը, բացի ինքն իր, մարդկության հավաքական գիտակցության և ընդհանրապես Երկրի վրա տարվող էներգետիկական աշխատանքից, ֆիզիկական պլանում նույնպես սկսում է ելք փնտրել փակուղային իրավիճակից։

Սակայն հասկանալով, որ միայնակ ի զորու չէ հաղթել դարերով ձևավորված իշխանական համակարգը, սկսում է որոնել «էներգետիկական համախոհներ», որոնք կթրթռան նույն հաճախությամբ, ինչ ինքը, այսինքն՝ կառուցողական, այլ ոչ թե ավերիչ։

Հենց այդպես են ստեղծվում մարդկանց այն խմբերը, որոնք, շրջապատում խուճապ ու վախ սերմանելու փոխարեն, սկսում են

հանգիստ և հետևողականորեն փնտրել խնդրի լուծման օրինավոր ուղիներ, որոնք միշտ էլ կան, քանի որ բացարձակապես ապօրինի և հակաօրինական են հենց իշխանությունների բոլոր ներկա գործողությունները։

Այդ իսկ պատճառով վերջիններս շտապում են ծուղակը գցել մարդկանց, իմանալով, որ հզոր դիմադրության են բախվում արթնացած մարդկանց կողմից, որոնց գիտակցությունն ու վարքը տուրք չի տալիս իրենց էժանագին հնարքներին ու ստահոդ խոստումներին։

Եվ հիմա դա կարելի է տեսնել ամեն օր։

Երկիր հեղվող նոր բարձրաթրթիռ էներգիաները արդեն բառացիորեն «պոկում են» դիմակները իշխանությունների կամակատարների դեմքից, որոնք կանգնում են մարդկանց առջև իրենց ողջ սահմռկեցուցիչ հոգևոր «մերկությամբ»։

Եվ հակառակը՝ ոգով ուժեղ, հանգիստ ու ինքնավստահ մարդիկ ավելի ու ավելի մեծ վստահության են արժանանում Երկրի բնակչության մեջ։

Այդպես նոր էներգիաները դառնում են արթնացման պրոցեսի կատալիզատոր, մերկացնելով յուրաքանչյուր մարդու իսկական էությունը և այդ կերպ ուժգնացնելով Միասնության և Նմանության Օրենքների ազդեցությունները, որոնք գործում են յուրօրինակ «մարտկոցների» պես, որոնցում «բացասական» նշանը ձեր մոլորակի ցածրաթրթիռ բնակիչների ձգողության կենտրոնն է, իսկ «դրական» նշանը՝ բարձրաթրթիռ։

Եվ այդ բաժանումը, որ կատարվում է ըստ թրթռանքի, սրընթաց կերպով կմեծանա, մինչև որ հասնի իր գագաթնակետին, երբ երրորդ և հինգերորդ խտության աշխարհները լիովին «կանջատվեն» իրարից։

Սակայն երկար սպասված Հինգերորդ չափման աշխարհում հայտնվելու համար դուք պետք է ոչ միայն հետևեք ձեր բոլոր աններդաշնակ մտքերին ու հույզերին, այլև աշխատեք կանխել դրանք, որպեսզի այլևս չկարողանան ծնվել ձեր գիտակցության մեջ։

Եվ իմ հաջորդ ուղերձում ես կտամ մի պրակտիկա, որը կօգնի ձեզ հաղթահարել այդ վերջին խոչընդոտը, որ ծառացել է դեպի Լույսն ուղղված ձեր ճանապարհին:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՐՁԻԿ (ՊՐԱԿՏԻԿԱ)

Եվ այսպես, անցնենք պրակտիկային՝ ուղղված նրան, որ կանխարգելվի ձեզ ցանկացած բացասական մտքի և հույզի առաջացումը:

Անվանենք այն **«Անվտանգության բարձիկ»**:

Ինչու՞ եմ ընտրել հենց այդ անունը:

Նախ և առաջ՝ որովհետև այս պրակտիկան ուղղված է «մեղմացնելու» էներգետիկական հարվածը, որ հասցնում են ձեզ բացասական մտքերն ու հույզերը, և այդ կերպ փրկելու ձեզ «անկումից» եռաչափ աշխարհ, որից այնպես ձգտում եք դուրս պրծնել ընդմիշտ:

Սա մեդիտացիա չէ, այլ ավելի շուտ կենսակերպ,- վիճակ, որին հարկավոր է ձգտել, թեև ավելի լավ կլինի արդեն մշտապես կենալ նրանում:

Փորձեք պատկերացնել ձեր կյանքը որպես հետաքրքիր ճամփորդություն մի մեքենայով, որի ղեկին ինքներդ եք նստած:

Կարող եք ձեր երևակայության մեջ պատկերել ցանկացած ավտոմեքենա՝ ամենազարմանալի ձևերով ու աներևակայելի հնարավորություններով:

Մեկի մոտ այն կլինի հարմարավետ ու պատկառելի, մյուսի մոտ՝ անպաճույճ ու արագընթաց, մի խոսքով՝ ամեն ինչ կախված է ձեր բնավորությունից և երևակայությունից:

Այս պրակտիկայի համար ես ընտրեցի մեքենայի և ձեր՝ որպես նրա վարորդի կերպարը լոկ այն պատճառով, որ ղեկին նստած մարդը,

որպես կանոն, չափազանց հավաք է, չի շեղվում մանրուքների վրա և ուշի ուշով հետևում է, թե ինչ է կատարվում շուրջը։

Այլ խոսքով, այդ վիճակում մարդը ոչ միայն կողմնակի դիտորդ է, այլև իրադարձությունների մասնակից, քանի որ պատասխանատվություն է կրում անցորդների և մյուս մեքենաների վարորդների համար, միաժամանակ ջանալով զերծ պահել իրեն և սեփական մեքենան վթարային իրավիճակներից։

Եվ այսպես, ինչ տեղերով էլ որ «վարեք» մեքենան՝ արագընթաց մայրուղով, քաղաքային փողոցներով, գեղատեսիլ քաղաքամերձ խճուղով, թե գյուղական ճանապարհով, ջանացեք հայացքով առավելագույնս ընդգրկել այն ամենը, ինչ երևում է պատուհանից, որպեսզի վաղօրոք տեսնեք վտանգը, որ ամեն վայրկյան կարող է հայտնվել ձեր ճանապարհին։

Եվ այստեղ ամեն ինչ կախված է ձեր հակազդեցությունից՝ ճիշտ ժամանակին խուսավարելու կամ արգելակելու ունակությունից, երբ հանդիպում է մի ապաշնորհ վարորդ, կամ էլ մարդ կամ գազանիկ է ելնում ձեր դիմաց։

Իսկ հիմա պատկերացրեք պոտենցիալ վտանգները ձեր կյանքի ճանապարհին՝ ձեր անփույթ մտքերի կամ բացասական հույզերի տեսքով։

Եվ փորձեք հեռվից նկատել դրանք, որպեսզի կանխեք անցանկալի և ձեզ համար վտանգավոր բախումը։

Բայց եթե չհաջողվի և բախումն այնուամենայնիվ տեղի ունենա, անվրեպ կերպով կգործի «անվտանգության բարձիկը», որը կարող է ցավագին հարված հասցնել, երբեմն էլ լրջորեն վիրավորել ձեզ։

Իրականում հենց դա է տեղի ունենում այն մարդկանց հետ, որոնք, անկարող լինելով տիրապետելու իրենց ինքնաբերական բացասական հակազդեցությունները և թույլ տալով դրանց արտահայտվել, ի պատասխան ստանում են կյանքային անախորժություններ և բարդություններ մարդկանց հետ փոխհարաբերվելիս։

Հիմա ամեն ինչ շատ արագ է վերադառնում մարդուն, գրեթե վայրկենապես։ Հավանաբար շատերդ արդեն նկատել եք դա։

Այդ իսկ պատճառով, խնդրում եմ ձեզ, զավակնե՛րս, ինչ էլ որ կատարվի շուրջը, վարեք ձեր կյանքի «ավտոմեքենան» հանգիստ և վստահորեն, ուշադիր հետևելով պատուհանից երևացող «բնապատկերները», ճանապարհային «նշանները», հարևան մեքենաների «վարորդներին», «անցորդներին», հիշելով, որ ձեր մեքենայի անվտանգության բարձիկը միշտ կազմ ու պատրաստ է և ակնթարթորեն կգործի՝ տեղի ունեցողի հանդեպ դրսևորած ձեր առաջին իսկ բացասական հակազդեցության դեպքում։

Հենց դա թող լինի ձեր ուշադրության կենտրոնում, երբ ձեր էներգետիկական տարածությունում կզգաք անկոչ հյուրեր՝ բացասական մտքերի կամ զգացմունքների տեսքով, որոնք սովորության համաձայն կարող են դուրս լողալ ձեր գիտակցության մեջ՝ խրթին և անկանխատեսելի հանգամանքներում։

«Խույս տվեք» դրանցից կամ ժամանակին «արգելակեք» «վթարից» խուսափելու համար, որի դիմաց հետո թանկ պիտի վճարեք, և այս դեպքում՝ ոչ թե դրամով, այլ ձեր հոգևոր անկմամբ, որ անթույլատրելի «շքեղություն» կլինի հիմա։

Հուսով եմ, զավակնե՛րս, որ այս պրակտիկան, ինչպես և մյուսները, կօգնի ձեզ ոչ միայն ջրի երեսին մնալ, այլև արագ ու վստահորեն շարժվել առաջ, որ հատուկ է ստաժավոր փորձառու «վարորդներին», ինչպիսիք դուք եք արդեն։

Օրհնում եմ ձեզ և անսահման սիրում...

ՀԱՅԵԼԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆ

Այսօր մենք կանցնենք նոր Տիեզերական Օրենքի, որը ներկայումս՝ երկու ժամանակաշրջանների հանգուցակետում, բավական ցայտուն է դրսևորում իրեն։

Խոսքը **Անդրադարձման Օրենքի** մասին է։

Ինչպես արդեն գիտեք, նրա էությունն այն է, որ մարդու ճառագած յուրաքանչյուր էներգիա վերադառնում է իրեն՝ այս կամ այն տեսքով։

Այլ կերպ ասած, ձեզ պատահած ամեն մարդ և ձեր կյանքում ծագած ամեն իրավիճակ ձեր իսկ մտքերի և զգացմունքների անդրադարձն է։

Նրանք «արտացոլում են» ձեր սեփական էներգիաները, սակայն երբեմն դուք ակամա ընկնում եք «ծուռ հայելիների թագավորություն», և հիմա մենք ավելի հանգամանալից կխոսենք այդ մասին։

Ի՞նչ են ծուռ հայելիները։

Նրանք ձեր բեկված արտացոլանքն են, և այդ բեկումը կարող է անվերջանալի ձևեր ու երանգներ ընդունել։

Նույնը տեղի է ունենում նաև նուրբ պլանում, միայն թե ձեր արտացոլանքը մնում է աչքի համար անտեսանելի։

Եկեք տեսնենք դա կոնկրետ օրինակով, թերևս՝ ամենատարածված։

Դուք հանդիպում եք մեկին, որը համակրելի չէ ձեզ։ Արտաքուստ հանդես եք բերում բարեհաճություն և նույնիսկ ժպտում եք՝ պահելով պատշաճության կանոնները։

Սակայն նուրբ պլանում տեղի է ունենում այդ մարդու էներգետիկական վանում, և ձեր պատկերը անտեսանելի «հայելու» մեջ երևում է ոչ թե քաղաքավարի և ժպտադեմ, այլ ինչպես զզվանքի կամ դժգոհության ծամածռություն։

Եվ քանի որ Անդրադարձման Օրենքը նույնքան անողոք է, որքան Տիեզերքի մյուս Օրենքները, բացասական զգացմունքները, որ ապրում եք դուք, անպայման վերադառնում են ձեզ։

Սակայն պարտադիր չէ, որ դրանք վերադառնան հենց նույն մարդուց, դա կարող է լինել ով ասես, քանզի դուք Մեկ և Անբաժանելի Ամբողջություն եք, այսինքն՝ անբարյացակամություն զգալով ձեր մասնիկներից մեկի նկատմամբ, դուք կարող եք հայելային պատասխան ստանալ որևէ այլ մասնիկից։

Եվ որքան ուժգին եղած լինի ձեր բացասական էներգետիկական առաքումը, այնքան ցավագին կլինի «վերադարձը»։

Օրինակ՝ դուք ծուռ հայացքով նայեցիք պատահական անցորդին, իսկ հուզականորեն ձեզ կարող է խոցել արդեն ձեր ամենամտերիմ, սիրելի մարդը։

Եվ գտնել վեճի պատճառը հաճախ անհնար է լինում։ Ձեզ թվում է, թե բախումը դատարկ տեղը եղավ։

Սակայն իրականում գործել է Անդրադարձման Օրենքը. ինչ ցանես, այն էլ կհնձես։

Այդ իսկ պատճառով, սիրելինե՛րս, որպեսզի չընկնեք «ծուռ հայելիների թագավորություն», ջանացեք չդատել և չգնահատել ուրիշներին՝ ելնելով բարու ու չարի ձեր ըմբռնումներից, որովհետև միշտ չէ, որ դուք կարող եք թափանցել իրերի էության մեջ, և այն, ինչ առաջին հայացքից բարի է թվում, կարող է չար դուրս գալ, և հակառակը։

Հենց երկվությունն է՝ իր բոլոր դրսևորումներով, մեղավոր դառնում ձեր շատ ու շատ սխալների և մոլորությունների համար։

Իհարկե, անասելի դժվար է գտնվել եռաչափ աշխարհում և ամեն ինչի վերաբերվել հավասարապես, հանգիստ ու անաչառորեն, հատկապես երբ շուրջդ տիրում է արդեն անհեթեթության հասցված քաոս։

Բայց չէ՞ որ երկու ժամանակաշրջանների հանգուցակետում ապրելու հենց այդ անգին փորձառությունն է ընտրել ձեր Հոգին, և հարկավոր է հուսախաբ չանել նրան, մնալ բարձունքում և օգնել ավարտին հասցնելու սկսածը։

Եվ դա հնարավոր է միայն այն ժամանակ, երբ դուք վերածվեք անաչառ կողմնակի դիտորդի, որը գործում է՝ ելնելով ոչ թե իր սեփական էգոիստական պատկերացումներից և բոպեական ցանկություններից, այլ համաձայն Աստվածային Նպատակահարմարության՝ ի բարձրագույն բարօրություն բոլորի:

Միայն այդ դեպքում ամեն պատահած մարդու դուք կնայեք որպես ձեր ուսուցչի, որն օգնում է հոգևոր «իմունիտետ» մշակել կյանքի ցանկացած ձևի նկատմամբ, իսկ ձեր կյանքում ծագող ամեն իրավիճակ կդառնա ձեր հոգևոր հասունության ստուգում:

Եվ եթե լուծեք այդ խնդիրը, ցանկացած հայելի՝ թե՛ նուրբ պլանում, թե՛ ֆիզիկական պլանում, կարտացոլի ձեր Աստվածային էությունը՝ անկեղծ, սիրող, լուսավոր և սրտագին մարդու:

Ամեն անգամ, երբ կուզենաք դատել կամ քննարկել ինչ-որ մեկին, վերհիշե՛ք ձեզանում շատ գործածական դարձած արտահայտությունը . «Մի՛ դատիր, որ չդատվես»:

ԲՈՒՄԵՐԱՆԳԸ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ Է

Շարունակելով [իմ նախորդ ուղերձը](), այժմ կուզենայի խոսել Անդրադարձման Օրենքի մասին՝ Երկրի ներկայիս իրավիճակի վրա նրա ազդեցության տեսանկյունից:

Այն, ինչ կատարվում է հիմա ձեր մոլորակում, առանց չափազանցության կարելի է անվանել Բարու և Չարի Ուժերի վճռորոշ գոտեմարտ:

Ու թեև նուրբ պլանում այն արդեն ավարտվել է Լույսի Ուժերի հաղթանակով, ֆիզիկական պլանում դեռևս շարունակվում է, և ոմանց թվում է, թե առավելությունը դեռ Մութ Ուժերի կողմն է:

Իսկ ինչպե՞ս է ներգրվում այդ իրավիճակի մեջ Անդրադարձման Օրենքը։

Ամենաանմիջական կերպով, և ահա թե ինչու։

Զրկվելով վերևից եկող սնուցումից ու ղեկավարությունից, Մութ Ուժերի ներկայացուցիչները Երկրում գործում են արդեն անհետևողական և քաոսային ձևով։

Նրանք չափազանց շտապում են, հասկանալով, որ իրենց պլաններն ավարտին հասցնելու ժամանակ իրականում չի մնացել։

Նախ՝ սրընթաց բարձրանում են Երկրի թրթիռները, սպառնալով գլխովին ոչնչացնել նրանց։

Երկրորդ՝ նույնքան սրընթաց տեղի է ունենում մարդկանց զարթոնքը, որոնք օրըստօրե ավելի են հասկանում, թե ով և ինչու է փորձում իրենց քշել թվային հասարակության մեջ՝ փաստորեն բռնի պատվաստման ճանապարհով։

Ինչպես արդեն գիտեք, գենը, որ ներարկվում է մարդու արյան մեջ այդ պրոցեդուրայի ժամանակ, կրում է ոչ միայն շատ ցածր թրթիռներ, այլև վարքագծային հատկանիշներ, որոնք բնորոշ են այն ռասային, որից վերցված է այն։

Հենց այդ պատճառով էլ պետությունների մեծ մասի պաշտոնական իշխանությունները, որոնք անմնացորդ ենթարկվում են խորքային պետությանը, այդպես հետամուտ են մարդկանց զանգվածային պատվաստմանը։

Այդ կերպ նրանք փորձում են խլացնել ողջ աշխարհում ահագնացող բողոքը կեղծ համավարակի և ամբողջ բնակչության պատվաստման դեմ։

Իշխանությունների ներկայացուցիչների մեծ մասը չի գործում կուրորեն. նրանք հրաշալի տեղյակ են պատվաստանյութերի բաղադրությանը և թե ինչ ազդեցություն ունեն դրանք մարդկանց ֆիզիկական և հոգեկան առողջության վրա։

Բայց քանի որ հարկավոր է թաքցնել մարդկանցից ճշմարտությունը, պատվաստումը ներկայացնում են որպես համընդհանուր բարիք և հոգատարություն բնակչության առողջության նկատմամբ։

Իսկ ի՞նչ է այդ ընթացքում տեղի ունենում նուրբ պլանում։

Եթե նյութական աշխարհում նրանց հաջողվում է «պահել իրենց դեմքը» կեղծավորության և համաքաղաքացիների ճակատագրերով մտահոգվելու դիմակի տակ, ապա այդ աշխարհի սահմաններից դուրս «ծուռ հայելիները» ոչ միայն արտացոլում են նրանց չարահոգի և կեղծավոր ծամածռանքը, այլև հարյուրապատիկ վերադարձնում են այն բովանդակ Չարիքը, որ պատճառում են նրանք մարդկանց։

Եվ դա կատարվում է հետևյալ կերպ։

Նրանց մոտ սկսվում է անհաջողությունների շարան կեցության բոլոր մակարդակներում։

Դա վերաբերում է առողջությանը, մասնագիտական և ֆինանսական գործունեությանը, ընտանեկան հարաբերություններին, մանր ու մեծ անախորժություններին, որոնք թափվում են նրանց գլխին ինչպես առատության եղջյուրից։

Անշուշտ, ոչ մի բան պատահական չի լինում։

Այդպես Տիեզերքը վերադարձնում է այն չարիքը, որ նրանք ուրիշներին են բերել։

Եվ իհարկե, նրանց հանցավոր հրահանգներից անմիջականորեն տուժած մարդկանց հակազդեցությունը նույնպես նրանց գործողությունների հայելային արտացոլանքն է։

Դուք ականատես եք լինում մարդկանց զանգվածային բողոքներին ողջ աշխարհով մեկ, և դրանք օրավուր ավելի մեծ թափ են առնում։

Այդպես կշարունակվի այնքան ժամանակ, մինչև որ իրադրությունը փոխվի։

Սակայն չցանկանալով ինքնակամ հրաժարվել իրենց անսահմանափակ իշխանությունից, վերնախավը կկառչի նրանից

մինչև վերջ՝ ավելի ու ավելի խստացնելով միջոցները իրենց երկրների բնակչության նկատմամբ։

Ի վերջո, Անդրադարձման Օրենքը կգործի բումերանգի պես և բառիս բուն իմաստով «կսրբի» նրանց իրենց զբաղեցրած պաշտոններից։

Եվ դա կկատարվի շատ շուտով։

Ինչ վերաբերում է ղեկավարների նոր սերնդին, որոնք արդեն ասպարեզ են գալիս և ուժ հավաքում, նրանց ճակատագիրը նույնպես կախված է այն էներգիաներից, որ կրում են նրանց դիտավորությունները։

Եթե դրանք մաքուր են, անշահախնդիր և ուղղված են մարդկանց կյանքի բարելավմանը, ապա հայելային պատասխանը կլինի համաքաղաքացիների սերն ու հարգանքը։

Միշտ հիշեք, զավակնե՛րս, որ նուրբ պլանին խաբել հնարավոր չէ. այնտեղ ամեն ինչ երևակվում է ճշմարիտ լույսի տակ, իսկ կեղծիքը, երեսպաշտությունն ու շահամոլությունը «ծուռ հայելիները» շատ արագ վերադարձնում են մարդուն, և հաճախ՝ իր համար բոլորովին անսպասելի ձևով։

ԶՈՀ ԵՎ ԴԱՀԻՃ

Այսօր մենք կդիտարկենք **Անդրադարձման Օրենքը** ևս մեկ տեսանկյունից, որը մեծապես համապատասխանում է այժմյան իրականությանը։

Քանի որ ներկայումս ողջ հասարակությունը բաժանվել է իշխող վերնախավին հլու-հնազանդ ենթարկվողների և այն մարդկանց, որոնք ոչ մի պայմանով չեն համաձայնում հետևել նրանց, Անդրադարձման Օրենքը այդ խմբերից յուրաքանչյուրի համար գործում է յուրովի։

Եկեք տեսնենք, թե ինչ է կատարվում հլու կատարողների **առաջին խմբի** հետ։

Նրանց ստրկամտությունը իշխանությունների առջև դեպի իրեն է ձգում հնազանդության և ենթարկման էներգիայի հակառակ էներգիան։

Դա ճնշման և իշխանության էներգիան է։

Դա կարող է տարօրինակ թվալ ձեզ, որովհետև առաջին հայացքից խախտվում է Նմանության Օրենքը. դեպի մարդն է ձգվում մի էներգիա, որը հակառակն է նրա ճառագած էներգիայի։

Բայց իրականում ամեն ինչ շատ տրամաբանական է։

Երրորդ չափման երկվության աշխարհում, որտեղ ամեն ինչ ունի իր հակադրությունը, զոհը հաճախ ձգում է դահճին, իսկ ազատ ու անկախ մարդը, ընդհակառակը, ահ է ներշնչում վերջինիս։

Եվ հենց դա էլ հիմա տեղի է ունենում Երկրում։

Երկրորդ խումբը, ունենալով ամուր Հոգևոր առանցք և պատրաստ լինելով գնալու մինչև վերջ՝ ազատության իր իրավունքը պաշտպանելու համար, ի պատասխան իր գործողությունների ձգում է խուճապն ու վախը նրանց, ովքեր փորձում էին խլել իրենցից այդ ազատությունը։

Այլ խոսքով, եռաչափ աշխարհում Անդրադարձման Օրենքը ունենում է երկվության երանգ՝ բազմաթիվ նրբերանգներով։

Սակայն հիմքը մնում է անփոփոխ. մարդն իր արտածած էներգիայի դիմաց միշտ ստանում է պատասխան, բայց հաճախ անսպասելի կողմից։

Տվյալ դեպքում տեղի է ունենում Նմանության և Անդրադարձման երկու Տիեզերական Օրենքների «միահյուսում»՝ իրենց երկվութենական տարբերակով։

Այդպես, առաջին խմբի մարդիկ իրենց հնազանդության արդյունքում ստանում են մի կողմից՝ է՛լ ավելի մեծ ստրկացում, մյուս կողմից՝ իշխանական կառույցների ներգործության սաստկացում իրենց վրա։

Եվ դուք ինքներդ կարող էիք համոզվել դրանում՝ հետևելով, թե ինչպես են զարգանում ձեզ պարտադրված սուտ համավարակի իրադարձությունները։

Հենց որ մարդիկ համաձայնեցին դիմակներ կրել, նրանց առաջարկվեցին նաև ձեռնոցներ։ Եվ դրան էլ համաձայնեցին։

Այնուհետև ընդունեցին մեկուսացման պայմանները և խելոք նստեցին տներում։

Զգալով իրենց իշխանությունն ու ամենակարողությունը, իշխող վերնախավը մտցրեց պարտադիր թեստեր, ընդ որում՝ վճարովի։

Եվ շատերը ընդունեցին, որ այդպես էլ պիտի լիներ։

Այդ ժամանակ իշխանությունները ավելի հեռու գնացին՝ մտցնելով գրեթե պարտադիր պատվաստում։

Եվ միլիոնավոր մարդիկ հնազանդորեն թույլ տվեցին կասկածելի փորձարկման ենթարկել իրենց՝ նույնիսկ չբարեհաճելով իմանալ, թե ինչ է այսպես կոչված պատվաստումների բաղադրությունը։

Իսկ այն, ինչ կատարվում է հիմա աշխարհի շատ երկրներում, առանց չափազանցության կարելի է անվանել մարդկության ցեղասպանություն, քանի որ այժմ «օրենսդրորեն» մտցվում են պատվաստման անձնագրեր՝ վերջնականապես ամրագրելով մարդու՝ որպես համակարգի ստրուկի կարգավիճակը։

Այդպես աշխատեցին միաժամանակ Նմանության և Անդրադարձման Օրենքները ձեր մոլորակի բնակչության առաջին՝ հնազանդ կատեգորիայի համար։

Այդ իրավիճակը հենց իրենք ձգեցին դեպի իրենց, որովհետև նրանց գիտակցությունը դեռ լիովին եռաչափ աշխարհի և իր դարեր ի վեր ներդրվող վարքային նորմերի գերին է։

Հենց դրա վրա էլ հույս էին դրել Դրակոսողունակերպներն ու իրենց իշխանավոր համախոհները։

Եվ ցավոք սրտի, նրանց ակնկալիքները շատ առումներով արդարացան։

ԱՆՆՎԱՃՆԵՐԸ

Շարունակելով [իմ նախորդ ուղերձը](), այսօր դիտարկենք Անդրադարձման Օրենքի ներգործությունը մարդկանց երկրորդ խմբում, որոնք չենթարկվեցին իշխող վերնախավին և որոնց նախապատվությունը իրենց կյանքում ազատությունն է՝ ներքին և արտաքին։

Որպես կանոն, այդ մարդիկ փնտրում են իմացության այլընտրանքային աղբյուրներ, որովհետև վաղուց արդեն դադարել են հավատալ մինչև ուղնուծուծը ծախված պաշտոնական լրատվամիջոցներին։

Եվ գտնում են այդպիսիք։

Ծանոթանալով անկախ բժիշկների, գիտնականների, իրավաբանների և պարզապես ոչ անտարբեր մարդկանց կարծիքներին, նրանք սկսում են հասկանալ ներկայումս Երկրում ստեղծված իրավիճակի ողջ ողբերգականությունը և փրկության ուղիներ փնտրել թե՛ իրենց, թե՛ շրջապատի գիտակից մարդկանց համար։

Նրանց դեպքում Անդրադարձման Օրենքը դրսևորվում է այսպես. ի պատասխան նրանց աներեր հավատի, որ ունեն իրենց իրավացիության նկատմամբ, ինչպես նաև ֆիզիկական պլանում համապատասխան գործողությունների՝ իշխանությունների «բռնի» ցուցումները շրջանցում են նրանց։

Եվ նույնիսկ եթե հայտնվում են այնպիսի իրավիճակում, որ ստիպված են լինում պաշտպանել իրենց կարծիքն ու որոշումներ ընդունելու ազատությունը, նրանք անում են դա արժանապատվորեն, հանգիստ և վստահ, որը փակուղու առաջ է կանգնեցնում նրանց, ովքեր սովորել են իրենց ենթակաների վախին և հնազանդությանը:

Արդյունքում՝ նրանց Ոգու զորությունը «հետ է մղում» բռնությունն ու իշխանությունը, որոնք վերածվում են այն ուժերի թուլության ու անկարողության, որոնք փորձում են հարկադրել նրանց անելու մի բան, որ ոչ մի պայմանով չի ընդունում իրենց Հոգին:

Եվ դուք կարող եք դա տեսնել ոչ միայն առանձին մարդկանց, այլև ամբողջ ժողովուրդների օրինակով, ինչպես ասենք՝ Ֆրանսիայում:

Ողջ երկիրը, անկախ այսպես կոչված «համավարակի» մասին ունեցած հայացքներից, ոտքի ելավ մարդկանց իրավունքներն ու ազատությունները սահմանափակելու գլոբալիստների փորձերի դեմ:

Այդպես դրսևորվում է ազգի Ոգին, և ես վստահ եմ, որ այն լավ օրինակ կլինի մյուս ազգերի համար, որոնք դեռ չեն համարձակվել համախմբված ձևով ելնել իրենց երկրների իշխանության գլուխ կանգնած հանցագործների դեմ:

Ինչպես տեսնում եք, այստեղ ևս սերտորեն միահյուսվում են Անդրադարձման և Նմանության Տիեզերական Օրենքները:

Ազգի «միջուկը» կազմող մարդկանց Ոգու ուժը անվրեպ դեպի իրեն է ձգում նրանց, ովքեր, ունենալով համանման որակներ և թրթիռներ, չեն համարձակվել միայնակ գործել, բայց զգալով իրենց «էներգետիկական համախոհների» աջակցությունը, վստահություն են ձեռք բերել իրենց նկատմամբ:

Նման Միավորման արդյունքում «թշնամու» շարքերում, որը ֆիզիկական պլանում պաշտոնական իշխանություններն են, խուճապ ու վախ է սկսվում իրենց անհնազանդ ժողովրդի հանդեպ:

Եվ նույնիսկ այն փաստը, որ փորձում են ուժով ճնշել բողոքի ակցիաները, նրանց թուլության նշանն է, որ շուռ է գալիս հենց իրենց

դեմ, քանի որ է՛լ ավելի է սրացնում իրավիճակը՝ սաստկացնելով մարդկանց դիմակայությունը։

Այս օրինակով կարելի է տեսնել արդեն երեք Տիեզերական Օրենքների փոխգործակցությունը՝ Միասնության, Նմանության և Անդրադարձման։

Եվ Երկրի ու իր բնակիչների թրթիռների բարձրանալու հետ նրանց ազդեցությունը օրավուր դառնում է ավելի ակնհայտ։

Դա բացատրվում է նրանով, որ ոչ միայն ձեր մոլորակը և դուք ինքներդ, այլ նույնիսկ Տիեզերքի Օրենքները ձեր կյանքի այս բախտորոշ պահին՝ երկու ժամանակաշրջանների հանգուցակետում, գործում են արդեն նոր ռիթմով ու որակով։

Տոգորվելով ամենաբարձր թրթռանքի էներգիաներով, բոլոր պրոցեսները, որ ընթանում են ինչպես առանձին մարդու, այնպես էլ ողջ ազգի էներգետիկական տարածությունում, բազմակի արագանում են և դրսում արտահայտվում արդեն «խտացած» տեսքով։

Դա հրաշալի գիտեն նրանք, ովքեր կառավարում են ձեր մոլորակը կուլիսների ետևից, այդ պատճառով էլ շտապում են՝ այլևս չթաքցնելով իրենց պլաններն ու մտադրությունները։

Եվ հիմա ձեր առաջնային խնդիրը, զավակնե՛րս, պիտի լինի «մեղմացնել հարվածը» Երկրի տարաթրթիռ բնակիչների միջև՝ թույլ չտալով քաոսի, խուճապի և ագրեսիայի ահագնացում ձեր մոլորակում։

Եվ դա դուք կարող անել միայն էներգապես՝ հանդես գալով իբրև «միջնորդներ» նուրբ և ֆիզիկական պլանների միջև, հնարավորինս հաճախ անցկացնելով ձեր միջով Աստվածային էներգիայի հոսանքներ, որոնք կմաքրեն մարդկանց գիտակցությունը բացասական էներգիաներից և եռաչափ ծրագրերից, այդ կերպ ներդաշնակեցնելով և մեղմելով սոցիալական բախումները, որոնք բռնկվում են հիմա ողջ Երկրով մեկ։

Օրհնում եմ ձեզ և անսահման սիրում...

ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Այսօր ես կպատմեմ Տիեզերքի ևս մեկ Օրենքի մասին, որն այժմ կարևորվում է առավել քան երբևէ։

Եվ խոսքը կվերաբերվի **Պատճառի և Հետևանքի Օրենքին**։

Հավանաբար ձեզնից շատերն արդեն հասկացել են, որ Երկրում հիմա տեղի ունեցող բոլոր իրադարձությունները ունեն իրենց պատճառներն ու հետևանքները։

Եվ գլխավոր պատճառը, որ աշխարհի փաստորեն բոլոր երկրներում իշխանությունների հանցավոր գործողությունները հասան իրենց բարձրակետին, բնակչության ինքնություն է, որը հենց սկզբից անձնատուր եղավ բոլոր պաշտոնական լրատվամիջոցներով հրահրվող խուճապին ու վախին։

Դա բացատրվում է նրանով, որ մարդիկ հետ են վարժվել ինքնուրույն մտածելուց և իրենց կյանքի պատասխանատվությունը ստանձնելուց։

Նրանց գիտակցության մեջ պլանաչափ կերպով ներդրվել են իշխանավորներին անմնացորդ ենթարկվելու և վերևից եկող հրահանգներից կախված լինելու ծրագրերը։

Դրա հետևանքով մարդիկ կորցրել են հավատն իրենց նկատմամբ և վերածվել իրենց կամքը ճնշող ահռելի «մեքենայի» հլու հնազանդ «պտուտակների»։

Դա արվել է բավական նրբորեն, որպեսզի մարդիկ գլխի չընկնեն, որ իրենց մտքերն ու գործողությունները կառավարում են անտեսանելի տիկնիկավարները՝ իրենց թողնելով լոկ ինքնուրույն որոշումներ ընդունելու ազատության պատրանքը։

Եվ միայն հիմա, երբ մարդկանց սովորական կյանքը փոխվել է անճանաչելիության աստիճան, շատերը սկսեցին վերջապես արթնանալ և զարմանքով շուրջը նայել։

Ցավոք սրտի բանը դեռ չի հասել զանգվածային զարթոնքին, քանի որ մեծամասնությունը գերադասում է հանձնվել հոսանքին,

հրաժարվելով հավատալ, որ իրենց երկրների կառավարությունները ոչ միայն չեն ձգտում փրկել իրենց «սարսափելի» հիվանդությունից, այլ հակառակը՝ ջանում են անել ամեն ինչ հնարավորինս շատ մարդ ոչնչացնելու համար։

Այդ հրեշավոր ճշմարտությունը չի տեղավորվում մարդկանց մեծ մասի գիտակցության մեջ, որոնք սովոր են հավատալու իրենց կառավարությանը, և հատկապես՝ սպիտակ խալաթով մարդկանց, որոնք իրենց մտքում զուգակցվում են փրկիչների հետ։

Եվ այն, որ հսկայական քանակությամբ բժիշկներ տուրք տվեցին այդ ստին՝ գիտակցորեն թե անգիտակցորեն, նույնպես պատճառ եղավ, որ միլիոնավոր անմեղ մարդիկ ենթարկվեն այդ մահացու պրոցեդուրային, որ բերում է ոչ միայն բազմաթիվ հիվանդությունների, այլև մարդու դիմազրկմանը՝ Աստվածային կայծից և Արարչի հետ ունեցած կապից զրկվելուն։

Տվյալ դեպքում Պատճառի և Հետևանքի Օրենքը դրսևորվեց արդեն ոչ թե առանձին մարդու կյանքի մասշտաբով, այլ՝ շատ պետությունների և ընդհանրապես մոլորակի։

Այլ կերպ ասած, ծրագրերը, որ հարյուրամյակների ընթացքում սողունակերպները հետևողականորեն ներդրել են մարդկանց գիտակցության մեջ, հանգեցրին նման տխուր «հետևանքի»։

Մարդիկ անկարող եղան ճանաչելու կեղծիքը՝ դյուրահավատորեն ճշմարիտ համարելով իրենց կառավարությունների այդքան ակտիվորեն պարտադրած «հոգատարությունը»։

Եվ դժվար է մեղադրել նրանց. չափից դուրս հրեշավոր ու աներևակայելի է այն, ինչ որոշել են ձեր մոլորակի իշխանությունը զավթած մի բուռ հանցագործները։

Մարդիկ մինչև այսօր հակված են հավատալու ավելի շուտ իրենց կառավարություններին, քան այն անվեհեր մարդկանց, որոնք փորձում են բացել նրանց աչքերը տեղի ունեցողի իսկական էության վրա և որոնք դեմ են գնում Երկրում ձևավորված իշխանության և անձի ճնշման համակարգին։

Հենց այդ պատճառով էլ ձեր մոլորակի միլիոնավոր մարդիկ նախընտրեցին գնալ նվազագույն դիմադրության ճանապարհով և թույլ տվեցի ներարկել իրենց անհայտ փորձարարական պատրաստուկ, միայն թե չզրկվեն իրենց սովորական հանգիստ կյանքից։

Այդպես, Պատճառի և Հետևանքի Օրենքը հառնեց ձեր դիմաց իր բովանդակ տեսքով, իր ողջ անողորմությամբ և ողբերգականությամբ՝ շոշափելով ձեր մոլորակի ողջ բնակչության ճակատագիրն ու կյանքը։

Եվ հիմա, զավակնե՛րս, դուք պետք է «վերածրագրավորեք» այդ Օրենքը, որպեսզի փրկեք նրանց, ում դեռ կարելի է փրկել։

Դրանք այն մարդիկ են, որոնք գոնե սկսել են մտածել, որ ամեն ինչ այնպես չէ, ինչպես երևում է առաջին հայացքից, և որոնք կարողացել են ընդդիմանալ իրենց պարտադրված պատվաստումից՝ բնազդորեն վտանգ զգալով դրանում։

Եվ հաջորդ ուղերձում մենք ավելի հանգամանորեն կխոսենք այդ մասին։

ՊԱՏՃԱՌԻ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔԻ «ՎԵՐԱԾՐԱԳՐԱՎՈՐՈՒՄ»

Եվ այսպես, շարունակելով իմ նախորդ ուղերձը, այսօր կխոսենք, թե ինչպես կարելի է «վերածրագրավորել» Պատճառի և Հետևանքի Օրենքը, որպեսզի ներկայիս դժվարին պայմաններում այն սկսի գործել ի բարձրագույն բարօրություն բոլորի։

Հավանաբար դուք արդեն գլխի եք ընկել, որ «հետևանքը» փոխելու համար հարկավոր է ամենից առաջ փոխել «պատճառը», բայց դարձյալ այնպես, որ այն դառնա համընդհանուր, այլ ոչ թե ենթարկվի մարդկանց որևէ խմբի պահանջներին ու ցանկություններին։

Եվ մենք ձեզ հետ միասին կգանք հակառակ կողմից։

Քանի որ արդեն գիտեք, որ աբսուրդի հասած այժմյան իրավիճակի պատճառը մարդկանց ինքնուրույն մտածելու անկարողությունն է, դուք պետք է դա՛ սովորեցնեք բոլոր նրանց, ովքեր դեռ հնարավորություն ունեն փոխելու իրենց գիտակցությունը։

Եվ դրա համար պետք է մարդկանց հետ սկսած զրույցը կառուցեք այնպես, որ ստիպեք՝ հենց իրե՛նք մտածեն, թե ով, ինչպես և ինչու գցեց իրենց «ծուղակը» և ինչպես կարելի է դուրս գալ դրանից։

Վերհիշեք ձեզ երեխա հասակում, երբ հաջողվում էր ինքնուրույն լուծել որևէ դժվար խնդիր, այլ ոչ թե արտագրել ուրիշներից։

Դուք հպարտություն և բավականություն եք զգացել, այնպես չէ՞։

Հենց դա էլ պետք է առաջարկեք մարդկանց. ինքնուրույն գտնել բոլոր այն հարցերի պատասխանները, որ կյանքը կդնի նրանց դիմաց։

Միայն այդ դեպքում դրանք իսկապես արժեքավոր կլինեն նրանց համար, այլապես «խնդրի պատրաստի լուծումը» կընդունեն ձեզնից, ինչպես ժամանակին ընդունել են իրենց ծնողներից, ղեկավարներից, կառավարությունից, լրատվամիջոցներից...

Այդպես, աստիճանաբար, այդ մարդիկ կսկսեն արթնանալ, ձեռք բերելով ինքնուրույնություն և հավատ իրենց նկատմամբ, իսկ ընդհանուր առմամբ՝ սեփական արժանապատվության զգացում, որին, ինչպես անառիկ ժայռի, կբախվեն իշխանությունների ողորմելի ջանքերը՝ ստիպելու մարդուն «պարել իրենց դուդուկի տակ»։

Արդեն այդ նոր «պատճառի» արդյունքում, որի հիմքում կընկնեն մարդու ազատ կամքը և տեղի ունեցողի լիակատար ըմբռնումը, կփոխվի նաև «հետևանքը»։

Հարկադրանքի միջոցները իրենց բոլոր դրսևորումներով կանտեսվեն արթնացած մարդկանց կողմից որպես ապօրինի և ողջամտությանը հակասող։

Նրանք զարմանքով հետ կնայեն և կապշեն, թե որքան ահաբեկված ու հնազանդ են եղել իրենց պարտադրված այդ սուտ համավարակի բոլոր ամիսների ընթացքում, ինչպես են ենթարկվել անհեթեթ կանոններին, որոնք ոչ միայն վնասել են իրենց առողջությանը, այլև նսեմացրել արժանապատվության զգացումը։

Սակայն, կրկնում եմ, զավակնե՛րս, շատ կարևոր է, որ մարդն ինքը գա դրան, որ ինքնուրույն «վերածրագրավորի» իր մտածողությունն ու վարքը, այլ ոչ թե ստանա ձեզնից պատրաստի վիճակում։

Այլապես իր հոգևոր անկման լիակատար և խոր գիտակցման փոխարեն, նա պարզապես կհանձնվի ձեզ՝ բառացի հավատալով ձեզ, ինչպես ժամանակին կառավարությանն ու լրատվամիջոցներին էր հավատում։

Իսկ դուք, ձեր կողմից, արջի ծառայություն կմատուցեք նրան՝ զրկելով իր խնդիրների պատճառները ինքնուրույն հետազոտելուց և ինքնուրույնաբար լուծման ուղիներ որոնելուց։

Եվ որքան շատանան Երկրում խորապես ու անկեղծորեն արթնացած մարդիկ, այնքան շուտ կանհետանա պատճառը, որ բերեց նման տխուր հետևանքի՝ ձեր բարոյական, քաղաքական, սոցիալական և ֆինանսական ստրկացմանը Երկրի իշխանությունը զավթած մի բուռ հանցագործների կողմից։

Եվ ես հավատում եմ, սիրելինե՛րս, որ դուք կգտնեք հարկ եղած խոսքերն ու ճիշտ մոտեցումները ձեզ հանդիպող յուրաքանչյուր մարդու համար, որպեսզի նա սկսի փոխվել, ազատվելով եռաչափ աշխարհի հին ծրագրերից իրենց ստրկական հոգեբանությամբ և կարծրատիպային մտածողությամբ ու վարքով։

Եվ օրհնում եմ ձեզ, որ այդպես լինի...

ՓՈԽԵԼՈՎ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԴ՝ ՓՈԽՈՒՄ ԵՍ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԴ

Այսօր մենք կրկին կխոսենք **Պատճառի և Հետևանքի Օրենքի** մասին, բայց՝ արդեն ձեր անձնական ընկալման հարթության մեջ։

Ինչպես արդեն բազմիցս խոսվել է իմ ուղերձներում, վերջին տարիներին և հատկապես ամիսներին կտրուկ փոխվել են ժամանակային պարամետրերը։

Դուք ինքներդ էլ նկատում եք, թե որքան արագ է սահում ժամանակը. ձեզ թվում է, թե ամիսները թռչում են շաբաթների պես, շաբաթները՝ օրերի, օրերը՝ ժամերի։

Եվ դա բացատրվում է նրանով, որ Երկրի էներգետիկան այնքան է փոխվել, որ սկսել է բառացիորեն «տարրալուծել» հին եռաչափ պարամետրերը ձեր կյանքի բոլոր ոլորտներում։

Եվ այդպիսի մի պարամետր է նաև, ժամանակայինի նման, Տիեզերական Օրենքների ազդեցությունը։

Նրանք սկսում են դրսևորվել շատ ավելի արագ, քան նախկինում։

Ընդ որում, դա վերաբերում է բացարձակապես բոլո՛ր Օրենքներին՝ Միասնության, Անդրադարձման, Պատճառի և Հետևանքի։

Բայց ինչու՞ ես որոշեցի ավելի հանգամանորեն կանգ առնել հատկապես այդ վերջինի վրա։

Դա բացատրվում է նրանով, որ հենց դուք, ավելի ճիշտ՝ ձեզնից յուրաքանչյուրի գիտակցության մակարդակն է շատ առումներով պատճառ դառնում ձեր մոլորակում հիմա տեղի ունեցող իրադարձությունների։

Հիշու՞մ եք արտահայտությունը՝ «Փոխի՛ր քեզ և կփոխես աշխարհը»։

Ներկայումս այն արդիական է առավել քան երբևէ։

Ձեր մոլորակի և միլիոնավոր մարդկանց ճակատագիրը կախված է այն բանից, թե որքան արագ կփոխվեք և որ ուղղությամբ, քանի որ նուրբ պլանում դուք բոլորդ անքակտելիորեն կապված եք միմյանց, և վերջնական ցատկը դեպի նոր աշխարհ կարող եք իրագործել միայն ձեռք-ձեռքի տված:

Հարկավոր է հավաքել բարձրաթրթիռ էներգիայի այն կրիտիկական քանակը, որը վերջապես կպատռի եռաչափ աշխարհը Հինգերորդ չափման աշխարհից զատող վարագույրը:

Եվ ամեն մեկդ ձեր լուման եք բերում Երկրի և իր լավագույն ներկայացուցիչների նոր, հրաշալի դարաշրջան Անցնելու գործում:

Իհարկե, գոյություն ունի նաև հսկայական «բալլաստ»՝ ձեր մոլորակի այն բնակիչների տեսքով, որոնք ունակ չեն կատարելու Անցումը:

Դրանք և՛ ցածրաթրթիռ քաղաքակրթությունների ներկայացուցիչներն են, որ մարմնավորված են մարդկային մարմիններում, և՛ բոլորովին ջահել մարդկային հոգիները, որոնք դեռ երկար ճանապարհ ունեն անցնելու եռաչափ աշխարհներում, և՛ նրանք, ովքեր աշխարհ են եկել արհեստականորեն ստեղծված ձվաբջիջը կնոջ արգանդի մեջ ներդնելու ճանապարհով, որ հիմա փոքր թիվ չեն կազմում և որոնց կարելի է անվանել «ծնված», այլ ոչ թե արհեստականորեն ստեղծված կլոններ:

Հարկավոր է հասկանալ և ընդունել սա, զավակնե՛րս, առանց դույզն-ինչ դատելու և ափսոսալու, այլ որպես իրողություն:

Այժմ կարևոր է կենտրոնացնել ողջ ուշադրությունն ու ջանքերը, որպեսզի միավորելով բոլոր լուսավոր մարդկային հոգիների Ոգու Ուժը՝ ավարտին հասցնեք ձեր սկսած Վերելքը դեպի ավելի բարձր թրթռանքի աշխարհներ:

Եվ դրա համար դուք պետք է օրինակ դառնաք մյուսներին՝ ավելի թույլերին և անփորձներին, որոնք սակայն մաքուր են հոգով և ներունակորեն պատրաստ Անցում կատարելու Հինգերորդ չափման աշխարհ ձեր չքնաղ մոլորակի հետ միասին:

Վերացրե՛ք ձեր գիտակցությունից բոլոր այն «պատճառները», որոնք կարող են արգելակել այդ մեծ գործընթացը:

Եվ այդ ժամանակ ձեր ջանքերի «հետևանքն» իրեն սպասել չի տա ու կդրսևորվի իշխանության հին համակարգի փլուզման և նոր, հրաշալի աշխարհի կառուցման տեսքով, որի հիմքը կկազմեն Ազատության, Հավասարության և Եղբայրության սկզբունքները արդեն իրենց իսկական՝ Աստվածային ըմբռնմամբ, առանց որևէ աղճատման, որ բնորոշ է երկվության աշխարհին:

Եվ ես օրհնում եմ ձեզ, որ այդպես լինի...

ՌԻԿՈՇԵՏԻՑ ԽՈՒՍԱՓԵԼՈՒ ՀԱՄԱՐ (ՊՐԱԿՏԻԿԱ)

Ավարտելու համար զրույցը **Պատճառի և Հետևանքի Օրենքի** մասին, որը ներկա պայմաններում դրսևորվում է ոչ միայն սովորականից ավելի արագ, այլև շատ ավելի ցավագին կերպով, այսօր ես ուզում եմ ձեզ տալ մի պրակտիկա, որը կօգնի անմիջապես տեսնել այդ օրենքի զույգ բաղադրիչների փոխներգործությունը:

Կանվանենք այն **«Ռիկոշետից խուսափելու համար»**:

Այն բավական պարզ է, այնպիսի պրակտիկաներից է, որ չեն պահանջում մեդիտատիվ դրություն, այլ միայն՝ կենտրոնացում սեփական մտքերի, հույզերի և արարքների վրա:

Այն կարելի է անգամ համատեղել **«Անվտանգության բարձիկ»** պրակտիկայի հետ, քանի որ երկուսն էլ համանման հիմք ունեն:

Պրակտիկայի իմաստն այն է, որ այժմ դուք պետք է ոչ միայն հետևեք ձեր յուրաքանչյուր բառի և արարքի էներգետիկային, այլև փորձեք կանխագուշակել դրանց հետևանքները:

Առաջին հայացքից դա կարող է դժվար թվալ ձեզ, բայց իրականում, ժամանակի հետ, այն ձեզնից կխլի ընդամենը ոչ ավելի:

Ավելի լավ հասկանալու համար բուն պրոցեսը, եկեք քննենք կոնկրետ օրինակով։

Ենթադրենք՝ դուք չեք զսպել ձեզ և բորբոքվել եք՝ ի պատասխան ձեր մտերիմ մարդու վիրավորական արտահայտությունների։

Եթե իսկույն գիտակցեք, որ ձեր հակազդեցությունը չափազանց ուժեղ էր և անցանկալի, կարող եք անմիջապես վերախաղալ այն։

Բայց հարկավոր է այդ անել ոչ միայն մտովի՝ էներգետիկական պլանում, այլև բառացի՝ ֆիզիկապես։

Դուք կարող եք ներողություն խնդրել ձեր անզսպության համար և հակազդել արդեն այլ կերպ՝ կատակի տալով, սրտանց խոսելով կամ էլ մեկ ուրիշ լուծում գտնելով պայթյունավտանգ իրավիճակից ելնելու համար։

Կարելի է պարզապես խուսափել քննարկումից՝ զբաղված լինելու կամ վատ ինքնազգացողության պատրվակով։

Գլխավորը՝ որ չթողնեք «խարույկը բոցավառվի», քանի որ դուք արդեն գիտեք, որ ձեր ագրեսիայի պատասխանը կլինի համարժեք, երբեմն էլ՝ առավել ագրեսիվ։ Եվ դուք պատճառ կդառնաք Երկրում բացասական էներգիայի առաջացման, որ հոգևոր պլանում հետ կշպրտի ոչ միայն ձեզ, այլև ձեր զրուցակցին։

Իսկ եթե անկեղծորեն ներողություն խնդրեք մարդուց իր խոսքերին այդպես հակազդելու համար, նույնիսկ եթե դրանք իսկապես վիրավորական են եղել, բախումը վայրկենաբար կհանգի, հատկապես եթե դրա հետ մեկտեղ գրկեք ձեր սիրելի մարդուն։

Շոշափողական շփումը անչափ կարևոր է, այն ձեր դիտավորությունների ամենաուժեղ լրացումն ու հաստատումն է ֆիզիկական պլանում։

Երբեմն նույնիսկ խոսքեր հարկավոր չեն. քնքուշ գրկախառնությունը կարող է հանգցնել ցանկացած «բռնկման օջախ» ավելի լավ, քան որևէ խոսակցություն և բացատրություն։

Իսկ ո՞րն է բուն պրակտիկան։

Հենց դա, զավակնե՛րս. **ձեր սխալի շտկման լավագույն և ամենաարագ ճանապարհի որոնումը, եթե այն արդեն թույլ է տրվել**։

Ինչպես և՝ նրա հետևանքների գիտակցումը թե՛ ձեզ, թե՛ դիմացինի համար։

Առավել ակներևության համար կարող եք պատկերացնել, թե ինչպես են ձեր խոսքերը ռիկոշետով խփում հենց ձեզ՝ հետ թռչելով վիրավորանքով «զրահավորված» ձեր զրուցակցի աուրայից։

Իսկ եթե դուք, ժամանակին սթափվելով, Սիրո փոխարկեք ձեր գրգռվածությունն ու ագրեսիան, այն իր քնքուշ էներգիայով կհալեցնի նույնիսկ ամենապինդ «զրահները», որոնք «կընկնեն» մարդու վրայից՝ բացելով նրա մաքուր Աստվածային Հոգին, որը դրանց հետևում պատսպարվում է երրորդ չափման դաժան, երկվության աշխարհից։

Մի՛շտ հիշեք, զավակնե՛րս, որ ագրեսիան հաճախ սոսկ պաշտպանական հակազդեցություն է, մարդու թուլության, այլ ոչ թե ուժի նշան։

Եվ եթե ձեր պատասխանը «չի արդարացնում դիմացինի սպասելիքները» և նա կարիք չի ունենում պաշտպանվելու ձեզնից, նա կծաղկի և իսկապես երջանիկ կզգա իրեն ձեր կողքին։

Իհարկե, կյանքը ձեզ հրամցնում է ամենատարբեր անակնկալներ, և կանխագուշակել ձեր մտքերի ու արարքների բոլոր «հետևանքները» միշտ չէ, որ հնարավոր է լինում։

Բայց ես հավատում եմ, որ դուք հոգևոր առումով բավական հասուն եք և կկարողանաք «չոր դուրս գալ» ցանկացած ջրից, նույնիսկ ամենաբարդ իրավիճակում։

Եվ այդուհանդերձ, ամենադժվարին փորձությունների համար ամենօրյա վարժանք կարող են դառնալ ձեր հարազատներն ու մտերիմները, առավել ևս, որ ձեր ջանքերի արդյունքները ի հայտ կգան գրեթե վայրկենապես։

ՈՐՔԱՆ ՇԱՏ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ, ԱՅՆՔԱՆ ՀՈՒԺԿՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ

Այսօր ես ուզում եմ խոսել Երկրի վերջին իրադարձությունների մասին՝ Տիեզերքի Օրենքների հետ դրանց փոխազդեցության լույսի ներքո։

Եթե դրանք դիտեք հենց այդ տեսանկյունից, կհամոզվեք, թե որքան արագ են հայտնի դառնում ստվերային կառավարության բոլոր ծածուկ դիտավորություններն ու ծրագրերը, որոնք ուղղված են մարդկության ոչնչացմանը։

Նրանք այլևս ոչինչ չեն թաքցնում, քանի որ հետդարձի ճանապարհ չունեն, և այդ պատճառով ամեն բան երևում է այն աստիճանի ցինիկ ու լկտի, որ չտեսնել դա կարող են լոկ շատ խոր քնած մարդիկ, որոնք լիովին կորցրել են ինքնուրույն մտածելու ունակությունը։

Իշխանավորների ողջ քաղաքականությունը կառուցվում է ստի և փաստերի խեղաթյուրման, ինչպես նաև ճշմարտությունը կոծկելու վրա, որ բավական լավ է հաջողվում նրանց, քանզի ոչ միայն զանգվածային լրատվամիջոցները, այլև համացանցային ռեսուրսների մեծ մասը նրանց ձեռքում է։

Իսկ հիմա եկեք տեսնենք, թե ինչ պատասխան են ստանում նրանք մոլորակի արթնացած բնակչությունից։

Եվ կդիտարկենք դա Տիեզերական Օրենքների տեսակետից, որոնք տվյալ համատեքստում փոխգործակցում և միահյուսվում են։

Այդպես, Միասնությունը, որ կազմում են Մութ ուժերի ներկայացուցիչները ի դեմս աշխարհի երկրների մեծ մասի պաշտոնական իշխանությունների, բումերանգի պես նրանց է վերադառնում մարդկանց միաբանման տեսքով, ինչը ֆիզիկական պլանում դրսևորվում է բողոքի բազմամիլիոնանոց երթերով, գործադուլներով ու անհնազանդության ակտերով։

Որքան շատ են սահմանափակվում մարդկանց իրավունքները, այնքան սաստիկ է դառնում պատասխանը։

Ու թեև իշխանության բոլոր լծակները դեռևս գլոբալիստների ձեռքում են, դրանք այլևս չեն ներգործում մարդկանց վրա նույն արդյունավետությամբ, ինչ այսպես կոչված համավարակի առաջ բերած խուճապի առաջին ամիսներին, քանի որ վախը հետզհետե լքում է մարդկանց հոգիները, երբ տեսնում են սուտն ու անհամապատասխանությունը այն ամենի, ինչ ասվում է իրենց հեռուստացույցի էկրաններից, իրականում տեղի ունեցողի հետ։

Ցավոք, պատկերը նույնքան հուսադրող չէ այն երկրներում, որտեղ համատարած պատվաստման պլանն իրոք աշխատեց և բնակչության ճնշող մեծամասնությունը ենթարկվեց իր մարմնի մեջ ներարկված օտարածին գենոմի ծրագրերի ազդեցությանը։

Այդ մարդկանց գիտակցությունն արդեն հեշտությամբ կառավարելի է, նրանք վերածվել են հնազանդ խամաճիկների, որոնք ապրում են իրենց համար սահմանված կանոններով և իրենց կառավարության լիակատար վերահսկողության տակ։

Բայց, միևնույն ժամանակ, մյուսների՝ արթնացած հոգիների համար դա եղավ ակնհայտ ցուցադրությունն այն կյանքի, որն իրենք ոչ մի պայմանով չեն կարող ընդունել, դարձավ օրինակ հոգևոր և ֆիզիկական ստրկության՝ մարդկային անձի լիակատար ոչնչացման և Արարչի հետ ունեցած կապի կորստի։

Այդպես գործեց **Անդրադարձման Օրենքը** իր երկակի դրսևորումով, որի մասին խոսվել է [իմ նախորդ ուղերձներից մեկում](#)։

Եվ հիմա ուժերի հաշվեկշիռը Երկրում բաշխվել է հետևյալ կերպ։

Աստվածային կշեռքի նժարներից մեկին հինավուրց և մաքուր հոգիներն են՝ մարդկության արթնացած մասը, իսկ մյուսին՝ բնակչության պատվաստված մասը՝ արդեն փոփոխված գենոմով, ինչպես նաև մնացյալ բոլոր ցածրաթրթիռ էակները, որ մարմնավորված են մարդկային մարմիններում, այսինքն՝ բոլոր

նրանք, ովքեր ոչ մի պարագայում այլևս ի վիճակի չեն կատարելու Անցումը։

Բայց չնայած այն բանին, որ մարդկանց առաջին խումբը շատ ավելի սակավաթիվ է երկրորդից, էներգետիկորեն այնքան ավելի հզոր է, որ ծանր է կշռում նրանցից, ովքեր զուրկ են Աստվածային բաղադրիչից։

Եվ հիմա ձեր մոլորակում տեղի է ունենում այդ «կշեռքի» վերջնական բալանսավորում, և արդյունքը կախված է յուրաքանչյուրիցդ։

Ձեզ օգնության են գալիս նոր էներգիաները և Լույսի Ուժերի աջակցությունը, և տվյալ դեպքում որքան բարձր լինեն ձեր սեփական թրթիռները, այնքան ուժեղ կգործի Նմանության Օրենքը՝ առձգելով բարձր թրթիռները նրանց, ովքեր ձեզ օգնում են Երկրի նուրբ պլանից։

Եվ հաշվի առնելով նոր ժամանակային պարամետրերը, երբ մարդու արտածած ամենայն բան վերադառնում է իրեն շատ արագ և սաստկացած տարբերակով, դուք պետք է գիտակցեք, թե ինչ մեծ պատասխանատվություն է ընկած ձեր ուսերին ոչ միայն ձեր սեփական Հոգու ճակատագրի, այլև համայն մոլորակի Համբարձման սցենարի համար։

Անսահման սիրող Բացարձակ-Հայրը խոսեց ձեզ հետ...

ԳԼՈՒԽ X

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ՝ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿԻ ԷՆԵՐԳԻԱՆԵՐՈՒՄ

Բացարձակ-Հոր ուղերձները՝ թելադրված Մարթային 2022 Թ. նոյեմբերի 18 – 24

(«ՊԱՏՈՒՀԱՆ ԴԵՊԻ ՆՈՐ ԱՇԽԱՐՀ» շարքի մի մասը)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԻՆԳԵՐՈՐԴ ՉԱՓՄԱՆ ԿՇԵՌՔԻ ՆԺԱՐԸ

2. ՁԳՈՂՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԳԵՎՈՐ ԶԱՐԹՈՆՔԻ ՎՐԱ

3. ԱՆԴՐԱԴԱՐՁՄԱՆ ՕՐԵՆՔԸ ԵՎ ԱՆՑՄԱՆ ՍՑԵՆԱՐԸ

4. ՄԻԱՄՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԲԱԶՄԱՍՏԻՃԱՆՈՒԹՅՈՒՆԸ

5. ԱԶԱՏ ԿԱՄՔԻ ՕՐԵՆՔԻ «ՎԵՐԱԴԱՐՁԸ»

6. ԱԶԱՏ ԿԱՄՔԻ «ՊԱՐԱՆԻ ՁԳՈՒՄ»

7. «ԸՆԿԵՐԱՆԱԼ» ՊԱՏՃԱՌԻ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔԻ ՕՐԵՆՔԻ ՀԵՏ

8. ՏԻԵԶԵՐՔԻ ՕՐԵՆՔՆԵՐԻՆ ՀԱՄԱՔԱՅԼ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՉԱՓՄԱՆ ԿՇԵՌՔԻ ՆԺԱՐԸ

Ողջունում եմ ձեզ, իմ սիրասու՛ն զավակներ։

Եթե իմ նախորդ ուղերձներում խոսվում էր, թե ինչն է խոչընդոտում ձեր առաջընթացին դեպի Հինգերորդ չափում, ապա հիմա մենք կխոսենք, թե ինչն է օգնում և Հինգերորդ չափման ինչ նշաններ են սկսել ի հայտ գալ ձեր այժմյան կյանքում։

Այլ կերպ ասած, եկել է ժամանակը չորրորդ չափման մեջ ձեր գտնվելու «կշեռքի նժարը» հակել դեպի Հինգերորդը։

Սակայն դա կարող է տեղի ունենալ միայն այն ժամանակ, երբ համոզվեք, որ արդեն վերջնականապես ազատվել եք եռաչափ մտածողության բեռից, որի հիմքում դարերով նրա մեջ արմատավորված կարծրատիպերն են։

Ու թեև ամենևին էլ հեշտ չէ դա իրագործել, «ազատախոհության» ընդհանուր ուրվագծերն արդեն շատերիդ մոտ են դրսևորվում։

Իհարկե, դա առաջին հերթին ձեր սեփական վաստակն է՝ **ձեր ամենօրյա հոգևոր աշխատանքը ինքներդ ձեզ վրա**։

Սակայն գոյություն ունեն նաև արտաքին տարրեր, որոնք նպաստում են ձեր հոգևոր աճին։

Եվ չնայած իրենց աննկատ լինելուն, դրանք հսկայական ազդեցություն են գործում ձեզ վրա՝ վեր ձգելով ձեր թրթիռները արդեն մինչև Հինգերորդ չափման մակարդակը։

Իսկ այդ ի՞նչ տարրեր են դրանք։

Առաջին հերթին՝ բարձրաթրթիռ էներգիաները, որոնք տառացիորեն Երկրից դուրս են մղում ամենայն հնացած, ցածրաթրթիռ բան։

Արդյունքում, ովքեր դիմանում են այդ էներգիաներին, իրենց գիտակցությամբ ու մարմնով ակամա հարմարվում են դրանց, իսկ ովքեր չափից դուրս ցածր թրթիռներ ունեն, սկսում են հեռանալ ֆիզիկական պլանից, ինչն էլ ամենուրեք տեղի է ունենում ներկայումս։

Եվ որքան բարձր լինեն նոր էներգիաների թրթիռները, այնքան արագ կազատագրվի ձեր մոլորակը իր ցածրաթրթիռ բալլաստից, որքան էլ որ դաժան հնչի դա եռաչափ մարդու տեսակետից։

Այստեղ ոչ մի չար դիտավորություն չկա. այդպես գործում է Տիեզերքի գլխավոր Օրենքներից մեկը՝ Զգողության Օրենքը, որը ոչ ոք ի զորու չէ վերացնելու։

Ձեր մոլորակի էվոլյուցիան անխուսափելի է, այն արդեն ընթանում է իր ամբողջ թափով։

Եվ որ շարունակել այդ էվոլյուցիան մոլորակի հետ միասին կարող են ոչ բոլորը, անխուսափելի օրինաչափություն է։

Յուրաքանչյուր Հոգի անցնում է զարգացման իր սեփական ուղին և Երկրի համար ճակատագրական այս շրջափուլում ունի այստեղ մարմնավորվելու իր սեփական նպատակները։

Ոմանց վիճակված է Երկրի հետ մեկտեղ անցնել Հինգերորդ չափում, ոմանց էլ կբավարարի սոսկ հպումն այդ պրոցեսին՝ բացասական փորձառությամբ։

Ոմանք կկարողանան համբարձվել իրենց ֆիզիկական մարմիններով, ոմանք էլ Հինգերորդ չափման նոր Երկիր կտեղափոխվեն ապամարմնավորման միջոցով, քանի որ իրենց մարմինը չափից դուրս մաշված է նման ուժգին էներգետիկական ցնցման համար՝ չնայած որ գիտակցությունն արդեն պատրաստ է Անցմանը։

Գոյություն ունեն անսահման քանակությամբ տարբերակներ, և դուք կզարմանաք, թե ֆիզիկական պլանը լքած որքան լուսավոր մարդկային հոգիների կհանդիպեք Հինգերորդ չափման Երկրում։

Սակայն ձեր մոլորակի բնակչության գերակշռող մեծամասնությունը այդուհանդերձ կգնա այլ աշխարհներ, և դրա հետ հարկավոր է համակերպվել։

Նրանց Հոգիները կձգվեն դեպի այնտեղ, ուր կկարողանան իրենց համար ամենաօգտակար և անհրաժեշտ փորձառությունը ձեռք բերել։

Եվ հիմա նման շերտավորումն ըստ թրթռանքի մտել է իր եզրափակիչ փուլը։

Լրանում է ժամկետը, որ տրվել էր մարդկությանը Զարթոնքի համար, և ամեն Հոգի հիմա իր վերջնական ընտրությունն է կատարում՝ գիտակցված թե անգիտակից։

Եվ ես գիտեմ, որ ձեր ինտուիցիան թույլ տալիս է տեսնել այն մարդկանց, որոնք կանգնած են Համբարձման շեմին, և նրանց, ովքեր շատ հեռու են դրանից։

Ներկայումս Երկրում տեղի է ունենում բոլոր մարմնավորված հոգիների հզոր «վերախմբավորում», և այդ գործընթացը գնալով թափ է հավաքում։

Շատ շուտով ձեզ կթվա, թե զուգահեռ իրականություններում եք ապրում նրանց հետ, ովքեր դուրս են մնացել Անցման «նավից»։

Հենց դա է Հինգերորդ չափման այն տարրը, որն ակտիվորեն ներխուժում է ձեր կյանք։

ՁԳՈՂՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԳԵՎՈՐ ԶԱՐԹՈՆՔԻ ՎՐԱ

Այսօր մենք կզրուցենք Հինգերորդ չափման ևս մեկ նշանի մասին, որն առկա է ձեր կյանքում։

Խոսքը կվերաբերի ժամանակային պարամետրերի փոփոխությանը, որ ձեզնից շատերն արդեն վաղուց նկատել են։

Բայց այս անգամ մենք շեշտը կդնենք այն բանի վրա, թե ինչ ազդեցություն են գործում այդ փոփոխությունները Տիեզերական Օրենքների վրա, որոնցով ապրում է յուրաքանչյուր մարդ՝ անկախ նրանից, թե որ չափման մեջ է կենում։

Եկեք քննենք այդ Օրենքներից յուրաքանչյուրը առանձին-առանձին։

Սկսենք **Զգողության Օրենքից**, որի մասին արդեն խոսվել է [իմ նախորդ ուղերձներից մեկում](#)։

Թերևս հենց այս Օրենքով կարելի է տեսնել Հինգերորդ չափման ամենավառ դրսևորումները ձեր մոլորակում։

Համեմատության համար եկեք վերհիշենք, թե ինչպես էր այն գործում նախկինում՝ թեկուզ տասը տարի առաջ։

Եվ դիտարկենք այն ձեր հոգևոր զարթոնքի լույսի ներքո։

Հիշեք 2012 թվականը, երբ շատերը սպասում էին Երկրում մեծ, ճակատագրական փոփոխությունների, ոմանք՝ աշխարհի վերջին, ոմանք էլ՝ Համբարձմանը, նայած թե ով ինչ իմացության էր տիրապետում այդ պահին։

Իսկ ի՞նչ կատարվեց իրականում 2012 թվականի դեկտեմբերին։

Մոլորակի սպասված Անցումը իր զարգացման նոր շրջափուլ այնուամենայնիվ տեղի ունեցավ, սակայն ոչ այնպես, ինչպես ակնկալում էին։

Այն անտեսանելի եղավ թե՛ առաջինների, թե՛ երկրորդների համար, քանի որ կատարվեց միայն նուրբ պլանում։

Արդյունքում՝ ովքեր սպասում էին աշխարհի վերջին, հանգստացան և շարունակեցին իրենց սովորական կյանքը։

Իսկ ովքեր սպասում էին Համբարձման, բաժանվեցին մի քանի խմբի։

Ոմանք, հիասթափվելով, որ իրենց ակնկալիքները չարդարացան, հեռու քաշվեցին Համբարձման թեմայից, մյուսները, որոնց հավատն ավելի ուժեղ էր և ինտուիցիան էլ հուշում էր, որ ամեն ինչ դեռ առջևում է, կրկնապատկված ուժով սկսեցին խորամուխ լինել Անցման թեմայի մեջ՝ ջանալով հասնել ճշմարտությանը և հասկանալ նման հապաղման պատճառները։

Ինչպե՞ս աշխատեց այս պարագայում Զգողության Օրենքը։

Նախ և առաջ՝ ըստ յուրաքանչյուրի թրթռանքի և ազատ կամքի։

Աշխարհի վերջին սպասողների թրթիռները ցածր էին կյանքի համար մշտապես վախի մեջ գտնվելու պատճառով։

Դրա համար էլ հաճույքով վերադարձան եռաչափ աշխարհի սովորական կեցությանը՝ այն իրականություն, որը համապատասխանում էր իրենց թրթիռներին և սեփական կյանքում ոչինչ չփոխելու ցանկությանը։

Իսկ ովքեր ամբողջ հոգով ձգտում էին նոր իրականության՝ եռաչափ աշխարհն ընկալելով իբրև դարն ապրած և իրենց ցանկություններին ու հոգևոր ձգտումներին այլևս չհամապատասխանող, պահեցին իրենց բավական բարձր թրթիռները։

Եվ այդ մարդիկ շարունակեցին իրենց ուղին դեպի Հինգերորդ չափում։

Ինչպես տեսնում եք, թե՛ առաջինները, թե՛ երկրորդները, համաձայն Զգողության Օրենքի, հայտնվեցին այն իրականության մեջ՝ այն էներգետիկական տարածությունում, որ ընտրել էին իրենք և որին համապատասխանում էր իրենց թրթռանքը։

Սակայն դա բնավ էլ չի նշանակում, թե առաջին խմբի մարդկանց ճանապարհը դեպի Համբարձում այլևս անդառնալիորեն փակվել է, իսկ երկրորդ խմբին պատկանող մարդիկ անպատճառ կկատարեն Անցումը։

Կյանքային հանգամանքները, նոր էներգիաները, ինչպես նաև Լույսի Ուժերի անդադրում աշխատանքը իրենց շտկումներն են ներմուծում մարդկային ճակատագրերի մեջ, որի արդյունքում ոմանք կարող են գրեթե վայրկենապես արթնանալ, ոմանք էլ՝ ընկնել արդեն ձեռք բերած հոգևոր բարձունքներից։

Ինչը և տեղի է ունենում այս վերջին տարիներին։

Բազմաթիվ, թվում է՝ Համբարձմանը բոլորովին անպատրաստ մարդիկ արթնացան, իսկ նրանք, ովքեր տարիներ ի վեր երկար և համառորեն հետամուտ էին նրան, գլխապտույտ անկում ապրեցին

եռաչափության մեջ՝ այդ կերպ խզելով իրենց ուղին դեպի Համբարձում։

Եվ հիմա այդ գործընթացներն ավելի են արագանում ժամանակային պարամետրերի փոփոխության, ինչպես նաև այն պատճառով, որ այժմ մակերես է ելնում ամեն ինչ՝ թե՛ լավը, թե՛ վատը, և մարդիկ գնալով դժվարանում են թաքցնել իրենց իսկական էությունը։

ԱՆԴՐԱԴԱՐՁՄԱՆ ՕՐԵՆՔԸ ԵՎ ԱՆՑՄԱՆ ՍՑԵՆԱՐԸ

Այսօր մենք կդիտարկենք ևս մեկ Տիեզերական Օրենք, որպեսզի դուք հասկանաք, թե ինչպես է այն հարաբերվում ներկայիս փոփոխվող ժամանակային պարամետրերին։

Եվ հիմա կզրուցենք **Անդրադարձման Օրենքի** մասին։

Մենք բազմիցս խոսել ենք, որ վերջին տարիներին արդեն այլ կերպ են գործում **կարմայական օրենքները**՝ շատ ավելի արագ, քան նախկինում։

Այս երևույթը նույնպես Հինգերորդ չափման դրսևորումն է Երկրում, որ նպաստում է շատ շատերի զարթոնքին։

Այդպիսի **արագ կարման** թույլ է տալիս ձեզ հստակ տեսնել ձեր կյանքում տեղի ունեցող ամեն բանի պատճառա-հետևանքային կապերը և ժամանակին շտկել ձեր վերաբերմունքը տարբեր մարդկանց կամ իրադարձությունների նկատմամբ։

Իհարկե, գործնականորեն կիրառել այդ հմտությունը կարող են բնավ ոչ բոլորը, այլ միայն նրանք, որոնց թրթիռները թույլ տալիս են։

Խորապես քնած մարդիկ սովոր են իրենց բոլոր դժբախտությունների ու տառապանքների համար մեղադրել ուրիշներին։

Եվ միայն նրանք, որոնց գիտակցությունն արդեն դուրս է եկել եռաչափության շրջանակից, ունակ են գիտակցելու իրենց անհաջողությունների «ներքին» պատճառները:

Ընդ որում, դա վերաբերում է ոչ միայն առանձին մարդկանց, այլև համայն մարդկությանը:

Այսպես, օրինակ, եթե մարդկության հավաքական գիտակցությունն ավելի բարձր թրթիռային մակարդակ ունենար, մարդիկ չէին ընկնի համաշխարհային կառավարության լարած ծուղակը՝ իրենց պարտադրված կեղծ համավարակի ու կեղծ պատվաստման տեսքով և դրանցից բխող բոլոր հետևանքներով:

Այդ կերպ, ձեր մոլորակի բնակչության գերակշռող մեծամասնության ստրկական հոգեբանությունը և անմռունչ հնազանդությունը իշխանությունների անհեթեթ ու ապօրինի պահանջներին, ավելի մեծ անախորժություններ բերեցին իրենց հետ:

Բացի նրանից, որ բազմաթիվ մարդիկ զրկվեցին առողջությունից և անգամ կյանքից, վատթարագույն ուղղությամբ **փոխվեց նաև մոլորակի և մարդկության՝ Հինգերորդ չափում անցնելու սցենարը**:

Այդպիսով Անդրադարձման Օրենքը դրսևորվեց ոչ միայն առանձին մարդկանց, այլև ողջ մարդկության կյանքում:

Եվ հիմա եկել է ժամանակը դա գիտակցելու, որպեսզի չկրկնեք նախկինում թույլ տված սխալները, այլ արագ ու վստահ շարժվեք դեպի Հինգերորդ չափում ձեր մոլորակի հետ միասին:

Մենք արդեն բազմիցս խոսել ենք, որ ճշմարտապես արթնացած մեկ մարդը արժի հարյուրավոր, երբեմն էլ հազարավոր չարթնացածների:

Հետևաբար, եթե ձեզնից յուրաքանչյուրը սկսի գիտակցորեն վերաբերվել իր կյանքում տեղի ունեցող ամեն ինչին, վեր հանելով բոլոր իրադարձությունների, բոլոր մարդկանց հետ ունեցած իր հարաբերությունների պատճառա-հետևանքային շղթաները, դա արդեն իսկ հսկայական ներդրում կլինի մարդկության հավաքական գիտակցության թրթիռների բարձրացման մեջ:

Հենց դա՛ էլ կնշանակի հարգել Անդրադարձման Օրենքը և ժամանակին շտկել վարքագիծը նրա համաձայն։

Ջանացեք, զավակնե՛րս, ավելի մանրակրկիտ հետևել ձեր բոլոր մտքերին ու հույզերին, որ բաց չթողնենք այն պահը, երբ դրանք կշեղեն ձեզ ձեր իսկ նախանշած ուղուց։

Իրականում դա անչափ հետաքրքրական զբաղմունք է։

Այն կարելի է համեմատել պինգ-պոնգ խաղի հետ. եթե ժամանակին որսաք «գնդակը»,- իրադարձությունը, որն արտացոլել է ձեր աննկարագրելի մտքերն ու հույզերը,- և չեզոքացնեք դրա հետևանքները գոնե էներգետիկական մակարդակում, դուք կհաղթեք, իսկ եթե չորսաք «գնդակը», ստիպված կլինեք կրկին ու կրկին «խաղալ»՝ անցնելով միևնույն դասերը։

Եվ ես մաղթում եմ ձեզ, զավակնե՛րս, ավարտել այս «պարտիան» արագ ու համոզիչ հաղթանակով, ազատագրվելով բոլոր եռաչափ հակազդեցություններից՝ ի պատասխան ձեզ «արտացոլող» դեպքերի և մարդկանց։

Եվ թող այսուհետ դեպի ձեզ առնգվեն միայն երջանկությունն ու հրճվանքը, ձեր Հոգու ներդաշնակ վիճակն արտացոլող մաքուր ու լուսավոր հոգիները։

ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԲԱԶՄԱՍՏԻՃԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այսօր մենք կշարունակենք զրույցը տարբեր չափումներում Տիեզերքի Օրենքների դրսևորման յուրահատկությունների մասին։

Եվ հիմա կխոսենք **Միասնության Օրենքի** մասին։

Ես կարծում եմ, ձեզնից շատերն արդեն նկատել են, թե որքան տարբեր է «իրեն պահում» այդ Օրենքը երրորդ և Հինգերորդ չափումներում։

Եվ դա բնական է, քանի որ մարդը, որի գիտակցությունն արդեն ելել է Հինգերորդ չափման մակարդակ, բոլորովին այլ կերպ է հասկանում այն, որովհետև իր համար հիմա այդ Օրենքը դուրս է գալիս եռաչափության շրջանակից և ընդգրկում ոչ միայն ձեր Գալակտիկան, այլև համայն Տիեզերքը։

Հենց դա է նկատվում ներկայումս շատ ու շատ արթնացած հոգիների մոտ, ինչը միևնույն ժամանակ նաև Հինգերորդ չափման դրսևորումն է իրենց այժմյան կյանքում։

Սակայն այդ ամենը գալիս է աստիճանաբար՝ փուլ առ փուլ։

Որպես կանոն, հոգևոր զարգացման ուղի ոտք դրած մարդը նախ սկսում է Միասնություն զգալ բնության տարերքների, կենդանական աշխարհի, շուրջը եղած մարդկանց հետ։

Սակայն հենց որ նրան բացահայտվում են գիտելիքները Աշխարհի, Տիեզերքում եղած կյանքի բազմազանության, իր Գալակտիկական եղբայրների ու քույրերի մասին, Միասնության Օրենքը նրա ըմբռնման մեջ արդեն լրիվ ուրիշ մասշտաբներ է ընդունում։

Իհարկե, դա հնարավոր է միայն այն դեպքում, երբ մարդն անվերապահորեն հավատում է՝ զգում է իր ամբողջ հոգով, որ հենց այդպես էլ կա իրականում, որ դա իր երևակայության պտուղը չէ, այլ իրականություն, թեկուզ դեռևս անտեսանելի ու անապացուցելի՝ եռաչափ աշխարհի մարդու տեսակետից։

Այդպես դրսևորվում է **Միասնության Օրենքի բազմաստիճանությունը**, որը, կախված մարդու թրթիռներից և աշխարհազգացողությունից, ընդունում է տարբեր ձևեր՝ ընտանեկան, խմբային, ազգային Միասնությունից մինչև Համատիեզերական մասշտաբի Միասնություն։

Իսկ ինչ վերաբերում է չորրորդ չափմանը, որտեղ գտնվում են հիմա ձեզնից շատերը, այստեղ կատարվում է միջին մի բան՝ այդ Օրենքի՝ երրորդ և հինգերորդ չափումներում դրսևորվելու միջև։

Եվ ահա թե ինչու։

Ինչպես գիտեք, այժմ ըստ թրթռանքի հզորագույն շերտավորում է գնում Երկրի բնակիչների միջև։

Արդյունքում՝ ոմանք Միասնության զգացում են ունենում բնակչության խորապես քնած մասի հետ, ոմանք էլ՝ արթնացածի։

Իսկ այդ երկու խմբերի միջև, որ հաճախ հակամարտ են տրամադրված միմյանց նկատմամբ, ոչ մի Միասնություն չկա։

Դրա մեղավորը եռաչափ աշխարհի երկվությունն է, որն այժմ սրվել է ինչպես երբեք։

Սակայն հասարակության նման շերտավորումը միանգամայն օրինաչափ է. այդպես գործում են Զգողության Օրենքը և Ազատ Կամքի Օրենքը։

Յուրաքանչյուր ոք ընտրել է իր ուղին՝ այն էներգետիկական տարածությունը և այն իրականությունը, որտեղ հարմարավետ է զգում իրեն և որոնք պատասխանում են իր Հոգու թելադրանքին։

Այդպիսով, Երկրում ստեղծվել է բացառիկ իրավիճակ՝ երկու զուգահեռ, թեև երբեմն հատվող իրականություններ, որոնցում մարդիկ ապրում են իրե՛նց Միասնության Օրենքներով։

Սակայն մարդկանց առաջին՝ եռաչափ աշխարհում մնացած խմբում, Միասնության Օրենքը դրսևորվում է կրճատված տեսքով, սահմանափակված ընտանիքի, քաղաքի, երկրի, առավելագույնը՝

Երկիր մոլորակի շրջանակներով, իսկ երկրորդ խմբում՝ իր ընդլայնված տարբերակով, քանի որ այս Օրենքն ընդգրկում է արդեն ոչ միայն Երկիրը, այլև Գալակտիկան և բովանդակ Տիեզերքը։

Վերջին հաշվով, երկրորդ խմբի մարդիկ սկսում են Միասնություն զգալ նաև նրանց հետ, ովքեր նախընտրել են մնալ եռաչափ աշխարհում, գիտակցելով մոլորակի բնակիչների՝ ըստ թրթռանքի շերտավորման անխուսափելիությունը և Երկրի յուրաքանչյուր բնակչի ազատ ընտրությունը։

Եվ որքան բարձր են մարդու թրթիռները, այնքան լայն և ընդգրկուն է դրսևորվում նրա կյանքում Միասնության Օրենքը՝ ներառելով արդեն բոլոր չափումները, կենդանի էակների բոլոր տեսակները թե՛ Երկրում, թե՛ նրա սահմաններից դուրս։

ԱԶԱՏ ԿԱՄՔԻ ՕՐԵՆՔԻ «ՎԵՐԱԴԱՐՁԸ»

Այսօր մենք կխոսենք Տիեզերքի ևս մեկ Օրենքի՝ ամենակարևորներից մեկի մասին, որն առնչվում է Երկրի երեսին ապրող յուրաքանչյուր կենդանի արարածի։

Դա **Ազատ Կամքի Օրենքն** է։

Հատկապես այս Օրենքն է ամենից շատ ոտնահարվել Երկրի վրա և ոտնահարվում է տակավին։

Նրանք, ովքեր զավթել են ձեր մոլորակի իշխանությունը, շարունակ խցկել են մարդկանց որոշակի շրջանակների մեջ՝ թույլ չտալով ինքնուրույն տնօրինել իրենց ճակատագիրը։

Ավելին, հետզհետե հաջողվել է հնազանդությունն ու սահմանված երկրային օրենքներին հետևելը առաքինությունների կարգին դասել։

Դա բերել է նրան, որ բոլոր համամարդկային արժեքներն ու մարդկային Հոգու բնական պահանջմունքները խեղաթյուրվել են։

Դեռ մանկուց երեխային սովորեցնում են, որ նա ազատ չէ իր ընտրության մեջ. որ նրա կյանքն ու ճակատագիրը ենթարկվում են իր ծնողներին, կրոնին, պետությանը կամ պարզապես հանգամանքներին և որ ինքն ի զորու չէ փոխելու որևէ բան։

Հատուկենտ «ապստամբներին» էլ, որոնք համարձակվում են «զատվել հոտից», վաղ թե ուշ դարձի են բերում, և այդպես հազարամյակներ շարունակ։

Հենց դրանով է բացատրվում ձեր մոլորակի ներկայիս իրավիճակը, երբ միլիարդավոր մարդիկ պատանդ դարձան Երկրի իշխանությունը զավթած մի բուռ հանցագործներին։

Ինչպես կարողացել եք նկատել վերջին տարիներին, մարդու ազատ կամքի ճնշումն արդեն հասցվել է անհեթեթության, վերածվելով մարդկության զանգվածային ոչնչացման։

Սակայն դա էլ հենց խթան ծառայեց հարյուր հազարավոր մարդկանց զարթոնքի համար, որոնք վերջապես գիտակցեցին իշխող վերնախավի իսկական բնույթն ու իսկական նպատակները։

Եվ այն փաստը, որ վերջ ի վերջո դա տեղի ունեցավ, շատ առումներով Ազատ Կամքի Օրենքի դրսևորման հետևանքն է, որը Երկիր է վերադարձել Հինգերորդ չափման նոր բարձրաթրթիռ էներգիաների հետ միասին։

Մաքրելով մարդկանց գիտակցությունը, այդ էներգիաներին հաջողվել է ճեղքել եռաչափ աշխարհի դարավոր նստվածքների ստվար շերտն իր կարծրատիպային մտային դրույթներով, որոնք ճնշում են մարդկանց ազատ կամքը՝ համակարգի հլու ստրուկների վերածելով նրանց։

Եվ հիմա այդ համակարգն սկսում է փլուզվել, իր հետևից չգոյության մատնելով բոլոր այն օրենքներն ու ավանդույթները, որոնք հիմնված են վախի և մարդու կամքի ճնշման վրա։

Իհարկե, բոլորը չէ, որ պատրաստ են ելնելու «ազատ նավարկության», ստանձնելով սեփական կյանքի և ճակատագրի պատասխանատվությունը։

Շատերը կկառչեն իրենց այնքան սովորական դարձած հին բարոյական արժեքներից, չմտածելով, թե ով է պարտադրել նման «բարոյականությունը»։

Բայց ազատախոհությունն արդեն ազատության մեջ է, և իշխանավորներին այլևս չի հաջողվի վերստին եռաչափության «վանդակը» քշել այն մարդկանց, որոնք լիակուրծք շնչել են նոր կյանքի բերկրալից կանխավայելքով տոգորված «օդը»։

Եռաչափ մատրիցն այժմ ցրիվ է գալիս աչքի առաջ, և միայն կույրը կարող է չտեսնել դա։

Եվ այդուհանդերձ նման «կույրեր» Երկրի վրա դեռ բավական շատ կան, նրանք կհեռանան այլ ցածրաթրթիռ աշխարհներ՝ շարունակելու իրենց գոյությունն այնտեղ, մինչև որ բացվեն իրենց աչքերը և իրենք էլ ձեռք բերեն ազատ կամք. այն կամքը, որը կարող է վերադարձնել մարդուն իր Աստվածային էությունը՝ սեփական կյանքի Արարիչը դարձնելով նրան։

ԱԶԱՏ ԿԱՄՔԻ «ՊԱՐԱՆԻ ՁԳՈՒՄ»

Այսօր ես ուզում եմ շարունակել զրույցը **Ազատ Կամքի Օրենքի** մասին, որն այժմ առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում։

Եվ հիմա մենք այն կդիտարկենք գլոբալ մասշտաբով։

Սակայն նախ և առաջ ես ուզում եմ բացատրել, թե ինչով է տարբերվում այդ Օրենքի՝ առանձին մարդկանց վրա գործած ազդեցությունը մարդկության հավաքական գիտակցության վրա ունեցած ազդեցությունից։

Ինչպես արդեն բազմիցս ասվել է իմ ուղերձներում, յուրաքանչյուր մարդ իր դրական կամ բացասական ներդրումն է անում մարդկության հավաքական գիտակցության մեջ։

Եվ դա մեծագույն չափով վերաբերում է Տիեզերքի Օրենքների պահպանմանը։

Սակայն այդ Օրենքներից ոչ մեկն այնպես ուժգին չի ազդում հավաքական գիտակցության «որակի» վրա, ինչպես Ազատ Կամքի Օրենքը։

Հենց նա է որոշում, թե հետագայում ինչ ուղղությամբ կընթանա մարդկությունը՝ էվոլյու՞ցիայի, թե՞ ինվոլյուցիայի։

Այն, ինչ կատարվում է ներկայումս Երկրի վրա, կարելի է համեմատել պարանի ձգման հետ, ընդ որում ոչ միայն քանակական, այլև որակական հարաբերակցությամբ։

Եվ հիմա ես կբացատրեմ՝ ինչ է դա նշանակում։

Մի կողմում այն մարդիկ են, որոնք ամբողջ ուժով կառչած են հին կյանքից՝ սոսկալի վախենալով որևէ բան փոխել դրանում։

Նրանք համաձայն են ամեն բանի, անվերապահորեն հավատալով այն ամենին, ինչ լսում են պաշտոնական լրատվական աղբյուրներից։

Նրանց թվում է՝ եթե իրենք համբերությամբ տանեն իրենց կյանքի դժվարին ժամանակները, կրելով նյութական ու բարոյական զրկանքներ, ապա շատ շուտով ամեն բան կդառնա ի շրջանս յուր։

Այդ կերպ նրանք դրսևորում են իրենց ազատ կամքը՝ մնալու որպես համաշխարհային կառավարության իշխանությանը ենթակա եռաչափ աշխարհի արդեն հնացած համակարգի հնազանդ պտուտակներ։

Մյուսները տեսնում են ամեն ինչ առանց գունազարդման, հստակ գիտակցելով, որ անցյալն այլևս ետ չի գա և որ այն, ինչին տանում է իրենց աշխարհը կառավարող վերնախավը, մարդկության համար կդառնա աղետ, բառիս բուն իմաստով կործանում։

Եվ նրանց ազատ կամքն արտահայտվում է գործուն դիմակայությամբ ներկայիս իշխանական համակարգին, որն անշեղորեն առաջ է տանում թվայնացումը մարդկանց կյանքի բոլոր ոլորտներում և գենափոխված պատրաստուկները, որոնք սպանում են Հոգին՝ վերածելով մարդուն ուրիշի հլու կամակատարի:

Այդ իսկ պատճառով կարելի է առանց դույզն չափազանցության ասել, որ մարդկանց այս կամ մյուս կատեգորիայի ազատ կամքի արտահայտությունը արտացոլանքն է Լույսի և Խավարի ուժերի պայքարի:

Ամեն ինչ միախառնվել է ձեր մոլորակի վրա, հասնելով եռման բարձրակետին ոչ միայն քաղաքական, ֆինանսական և սոցիալական ոլորտներում, այլև յուրաքանչյուր մարդու գիտակցության և Հոգու մեջ:

Սակայն արթնացած լուսավոր մարդկային հոգիները հսկայական առավելություն ունեն ի դեմս Հինգերորդ չափման բարձրաթրթիռ էներգիաների, որոնք այժմ հզոր հորձանքով ողողում են Երկիրը, ինչպես նաև՝ Լույսի Ուժերի և ձեր Գալակտիկական եղբայրների օգնության, որոնք ապահովագրում են ձեզ ոչ միայն նուրբ, այլև ֆիզիկական պլանում:

Եվ դա հնարավոր է եղել միայն շնորհիվ այն բանի, որ նրանք «կարդացել» են միլիոնավոր մարդկանց ազատ կամքը, որոնք չեն ցանկանում ապրել առաջվա պես՝ կատարելով իշխող վերնախավի անմիտ հրամանները:

Իսկ Խավարի Ուժերը, որոնք ապահովում են խորքային պետության պաշտպանությունը, արդեն «շնչահեղձ են լինում» նոր էներգիաների մեջ և ի վիճակի չեն առաջվա նման սատարել իրենց երբեմնի հզոր «խնամյալներին» և նրանց, ովքեր որոշել են հետևել սրանց:

Այդպիսով, Երկրի բնակիչների դրսևորած ազատ կամքի «պարանի ձգման» մեջ անխուսափելիորեն կհաղթեն նրանք, ովքեր կլինեն Լույսի կողմից:

Մի փոքր ջանադրություն, և այդ «պարանը» երկու մասի կկիսվի՝ ոմանց տանելով երրորդ չափում, ոմանց էլ՝ նոր բարձրաթրթիռ աշխարհ։

Ամեն ոք կհայտնվի այն էներգետիկական տարածության մեջ, որն ինքն է ընտրել՝ դրսևորելով իր ազատ կամքը։

Սակայն հիմա արդեն այդ բաժանարար գիծը կանցնի նաև մարդկության հավաքական գիտակցության միջով. նրա մի մասը կգնա էվոլյուցիայի ուղիով, մյուս մասը՝ ինվոլյուցիայի։

Եվ փոխել դա չի կարող ոչ ոք, քանզի Տիեզերքի Օրենքները մշտնջենական են և անխախտ։

«ԸՆԿԵՐԱՆԱԼ» ՊԱՏՃԱՌԻ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔԻ ՕՐԵՆՔԻ ՀԵՏ

Այսօր ես ուզում եմ անդրադառնալ Տիեզերքի Օրենքներից ևս մեկին, որն ազդում է ձեզ վրա ավելի շուտ միջնորդավորված կերպով։

Եվ խոսքը կվերաբերի **Պատճառի և Հետևանքի Օրենքին**, որն անխզելիորեն կապված է երկու այլ Օրենքների հետ՝ **Զգողության** և **Անդրադարձման**։

Ինչու՞ եմ որոշել առանձին ուղերձով խոսել նրա մասին։

Նախ և առաջ այն պատճառով, որ հատկապես այս Օրենքը ամենատեսանելին է ձեզ համար, մանավանդ հիմա, երբ իր իրավունքներն է ստանձնել **արագ կարման**։

Նրա հետ շատ դյուրին է աշխատել, քանի որ նա ամեն ինչ «կոչում է իր անունով»՝ անհապաղ ի հայտ գալով ֆիզիկական պլանում։

Կարելի է նույնիսկ ասել, որ նա Տիեզերքի «ամենանյութական» Օրենքն է։

Այդպես, ձեր կյանքի ցանկացած իրադարձություն ՄԻՇՏ ձեր այս կամ այն մտքերի, զգացմունքների ու գործողությունների հետևանքն է թե՛ մեծ, թե՛ փոքր բաներում։

Այդ իսկ պատճառով, եթե դուք սովորեք իսկույն ևեթ, առանց հետաձգելու գտնել ձեր անհաջողությունների կամ, ընդհակառակը, հաջողությունների պատճառները, ապա արագ «կընկերանաք» այդ Օրենքի հետ, և դա թույլ կտա ձեզ նշանակալից առաջընթաց ապրել ձեր հոգևոր զարգացման մեջ։

Գործնականորեն յուրացնելով այն, դուք կհամոզվեք, որ **ձեր կյանքում ամեն ինչ կախված է ՄԻՄԻԱՅՆ ձեզնից՝** անկախ արտաքին հանգամանքներից, ձեր շրջապատից, քաղաքական իրավիճակից և այլն։

Եվ դրա ամենավառ օրինակը բերեցին վերջին տարիները, երբ բոլորի համար միատեսակ պայմաններում ոմանք անմռունչ տեղի տվեցին իշխանություններին, իսկ մյուսները նույնիսկ նյութական և բարոյական կորուստների գնով կարողացան պաշտպանել սեփական ճակատագիրն ինքնուրույն վճռելու իրենց իրավունքը, թույլ չտալով անարգանքի ենթարկել իրենց մարմինն ու Հոգին։

Այդպես, միևնույն պատճառը, մարդկանց ազատ կամքից կախված, հանգեցրեց բացարձակապես տարբեր հետևանքների. ոմանց է՛լ ավելի ընկղմեց եռաչափության մեջ, իսկ ոմանց բարձրացրեց մինչև չորրորդ չափում, այդպիսով նրանց առջև բացելով Համբարձման ուղին։

Իհարկե, ամեն ինչ այդքան միանշանակ չէ, քանի որ թե՛ մի, թե՛ մյուս կատեգորիայի մարդկանց վարքագծում առկա են բազմաթիվ տարատեսակ նրբերանգներ։

Օրինակ, ինչ-որ մեկի Հոգին չի ընդունել «խաղի կանոնները», սակայն մարդը ստիպված է եղել տեղի տալ՝ զավակներին սովից փրկելու համար, ինչ-որ մեկն էլ, հրաժարվելով այսպես կոչված «պատվաստումից», մտածել է լոկ իրեն չվնասելու մասին,

չգիտակցելով մարդկության դեմ ուղղված հանցագործությունների ողջ մասշտաբը։

Ամեն մարդ, ինչպես և իր կյանքի պայմանները, այնքան անհատական է, որ Երկրի վրա գոյություն չունեն միատեսակ պատճառներ և հետևանքներ, կան միայն դրանց ընդհանուր ուղղությունները, որոնցից էլ ի վերջո ձևավորվում են համայն մարդկության զարգացման ընդհանուր դրական կամ բացասական վեկտորները։

Եվ յուրաքանչյուր առանձին մարդու վարքագիծ համալրում է ընդհանուր հավաքական գիտակցության գանձատուփը։

Եվ ես ուզում եմ, զավակնե՛րս, որ դուք հստակ գիտակցեք ձեր պատասխանատվությունը ոչ միայն ձեր սեփական Հոգու, այլև ողջ մարդկության առջև, որի մասնիկն եք ինքներդ։

Ջանացե՛ք մշտապես դրական ավանդ ներբերել ձեր ընդհանուր էներգետիկական «գանձատուփի» մեջ, ինչը թույլ կտա ձեզ և միլիոնավոր այլ մարդկանց ավելի արագ իրականացնել սպասված անցումը դեպի Հինգերորդ չափում։

ՏԻԵԶԵՐՔԻ ՕՐԵՆՔՆԵՐԻՆ ՀԱՄԱՔԱՅԼ

Այսօր ես ուզում եմ հանրագումարի բերել մեր զրույցը Տիեզերքի Օրենքների մասին, որոնք շատ առումներով այժմ նորովի են դրսևորվում։

Եվ դա տեղի է ունենում ոչ թե այն պատճառով, որ փոխվում են իրենք՝ Օրենքները, այլ որովհետև փոխվում է էներգետիկական տարածությունը, այսինքն՝ նաև մարդկանց թրթիռները, որոնք ապրում են այդ Օրենքներով։

Ներկայումս Երկրի վրա ընթացող պրոցեսները բացառիկ են, որովհետև դեռ երբեք ոչ մի մոլորակում թե՛ իր՝ մոլորակի, թե՛ նրա

բնակիչների թրթիռները չեն փոխվել այսքան սրընթաց կերպով՝ մի քանի տասնամյակի ընթացքում։

Սովորաբար դրա համար հարկավոր են դարեր, եթե ոչ հազարամյակներ։

Եվ իհարկե, ձեր մոլորակի բնակիչներից ոչ բոլորն են ի վիճակի վերակառուցելու իրենց գիտակցությունը և առավել ևս՝ իրենց մարմինները նման սեղմ ժամկետներում։

Սակայն հոգիներն էլ, որ մարմնավորված են հիմա Երկրի վրա, սովորական չեն. դրանք այն հոգիներն են, որոնք երկար ու խնամքով նախապատրաստվել են այդ վիթխարի իրադարձությանը։

Բացի այդ, քիչ չեն նաև ուրիշ մոլորակներից՝ ավելի բարձր չափումներից եկած հոգիները։

Նրանցից ոմանք որոշել են ձեռք բերել իրենց ֆիզիկական մարմնով ավելի բարձր չափում անցնելու բացառիկ փորձառությունը։

Մյուսներն էլ ինքնակամ են մասնակցում այդ փորձարկմանը, որպեսզի օգնեն ներկայումս Երկրի վրա մարմնավորված իրենց աստղային եղբայրներին ու քույրերին պատվով անցնել եռաչափ աշխարհի փուշ ու տատասկի միջով, որոնցով ծածկված է Համբարձման տանող նրանց ուղին։

Եվ ծննդյան ժամանակ պահպանվել է նրանցից ոմանց հիշողությունը, թե ովքեր են իրենք և որտեղից են եկել։

Սակայն վերադառնանք մեր թեմային, թե ինչպես են գործում Տիեզերքի Օրենքները նոր իրականության մեջ, երբ փոխվում է Երկրի էներգետիկական տարածությունը, ինչը այս կամ այն կերպ անդրադառնում է յուրաքանչյուր մարդու կյանքի վրա։

Նման պայմաններում **արագ կարման**, որի մասին խոսվել է [իմ նախորդ ուղերձներից մեկում](), ամեն մեկի մոտ գործում է տարբեր կերպ՝ կախված մարդու թրթիռների մակարդակից։

Շատ առումներով այն կախված է նրանից, թե որչափ ճշգրտորեն է մարդը շարժվում Տիեզերքի Օրենքներով. գիտի արդյոք դրանց մասին և արդյոք ձգտում է պահել դրանք:

Անշուշտ, ձեր մոլորակի բնակչության մեծ մասը ոչ միայն չգիտի, այլև չի էլ կասկածում դրանց գոյության մասին՝ առաջնորդվելով սոսկ իր նսեմ բնազդներով:

Դրա համար նոր էներգիաները շրջանցում են նման մարդկանց, «վանվելով» նրանց էներգետիկական տարածությունից թրթիռային ահռելի տարբերության պատճառով:

Բանը լրիվ այլ է մաքուր մարդկային հոգիների պարագայում, որոնք Երկիր են եկել Համբարձման փորձն ապրելու նպատակով:

Նույնիսկ ոչինչ չիմանալով Երկրի Հինգերորդ չափում անցնելու մասին, նրանք անգիտակցորեն պատրաստ են դրան և ազահաբար կլանում են իրենց այնքան մոտ ու հարազատ բարձրաթրթիռ էներգիաները:

Հենց այդ մարդկանց գիտակցությունն է սկսում արագորեն փոխվել, և նրանք գլխովին խորասուզվում են նոր գիտելիքների, էներգետիկական պրակտիկաների և մեդիտացիաների մեջ, ջանալով վերականգնել բաց թողածը:

Տիեզերքի Օրենքներն արդեն դատարկ հնչյուն չեն նրանց համար, այլ գործողության ուղեցույց:

Նրանք սկսում կիրառել այդ Օրենքներն իրենց առօրյա կյանքում, հետևելով դրանց ներգործությանը և ըստ այդմ շտկելով իրենց մտքերը, զգացմունքներն ու արարքները:

Եվ այդ մարդիկ արդեն ունակ են տեսնելու, թե որքան արագ են փոխվում ժամանակային պարամետրերը Երկրի վրա, որքան սրընթաց են «բումերանգի պես» իրենց վերադառնում թե՛ վատը, թե՛ լավը, թե ինչպիսի մարդիկ և իրադարձություններ են ձգվում դեպի իրենց՝ կախված իրենց իսկ հոգեվիճակից և արտածած հույզերից:

Կարելի է ասել, որ Տիեզերքի Օրենքները, փոխելով իրենց պարամետրերը Երկրի՝ դեպի ավելի բարձր չափումներ առաջխաղացման համեմատ, օգնում են մարդկանց ոգեպես աճել և համաքայլ ընթանալ մոլորակի նոր թրթիռների հետ։

Եվ քանի որ Տիեզերքի բոլոր Օրենքները մշտապես փոխգործակցում են միմյանց հետ, բխելով մեկը մյուսից, մարդկանց գիտակցության փոխակերպումն էլ տեղի է ունենում բազմապլանային ձևով՝ միաժամանակ մի քանի մակարդակում։

Օրինակ, սովորելով հստակ տեսնել իրենց կյանքի բոլոր իրադարձությունների պատճառա-հետևանքային կապերը, մարդիկ բարձրանում են Ձգողության, Անդրադարձման, Ազատ Կամքի Օրենքների յուրացման, իսկ ընդհանուր առմամբ՝ այն իրականության գիտակցման նոր մակարդակին, որում իրենք գտնվում են իրենց կյանքի տվյալ պահին։

Եվ դա արդեն իսկ հսկայական առաջընթաց է Համբարձման տանող իրենց ճանապարհին։

ԳԼՈՒԽ XI

ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԵՆՔԸ

Բացարձակ-Հոր ուղերձները՝ թելադրված Մարթային 2022 Թ. դեկտեմբերի 2 – 9

(«ՊԱՏՈՒՀԱՆ ԴԵՊԻ ՆՈՐ ԱՇԽԱՐՀ» շարքի մի մասը)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՈԳԵԿԱՆ ՍԿԻԶԲ՝ ԳՈՐՇ ԱՌՕՐՅԱՅՈՒՄ

2. ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԵՆՔԸ

3. ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ «ԳՈՐԾՎԱԾՔԸ» (ՊՐԱԿՏԻԿԱ)

5. ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՄՆՈՒԹՅՈՒՆԸ

6. ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԴԵՊԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

7. «ԴԵՂ» ԵՐԿՎՈՒԹՅԱՆ ԴԵՄ

8. ՍՏԵՂԾԱԳՈՐԾԵԼՈՎ ՏԻԵԶԵՐՔԻ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ

ՈԳԵԿԱՆ ՍԿԻԶԲ՝ ԳՈՐԾ ԱՌՕՐՅԱՅՈՒՄ

Ողջունում եմ ձեզ, իմ սիրասու՛ն զավակներ։

Այսօր մենք կսկսենք մի նոր թեմա, որը կվերաբերի **Հինգերորդ չափման մարդու աշխարհայացքին**։

Ու թեև ձեր մեծամասնությունը զանազան հանգամանքների բերումով դեռևս մնում է երրորդ չափման մեջ, սակայն կյանքի նկատմամբ նոր մոտեցում զարգացել ձեզանում արդեն իսկ միանգամայն հնարավոր է։

Նախ և առաջ ես ուզում եմ ցույց տալ այդ ճանապարհի ամենակարևոր փուլանիշերը։

Առաջին – կյանքային առաջնահերթությունների տեղաշարժ դեպի ձեր գոյության հոգևոր ասպեկտները։

Իհարկե, դա ամենևին չի նշանակում, թե նյութական կողմը պետք է բոլորովին վերանա ձեր կյանքից, բայց այն պիտի դառնա կյանքի «շրջանակը», այլ ոչ թե էությունը։

Դա ինչպե՞ս կարող է դրսևորվել գործնականում։

Վերցնենք այսպիսի մի օրինակ։

Ենթադրենք, այժմյան աշխատանքը ամենատարբեր պատճառներով չի գոհացնում ձեզ, սակայն հորիզոնում դեռ ոչ մի ուրիշ բան չի կանխատեսվում։

Թողնել աշխատանքը դուք չեք կարող, որովհետև ընտանիքի միակ կերակրողն եք։

Ուրեմն ինչպե՞ս վարվեք այդ դեպքում։

Լավագույնը կլինի հիշել հայտնի արտահայտությունը. **«Եթե չեք կարող փոխել իրավիճակը, փոխե՛ք ձեր վերաբերմունքը նրա նկատմամբ»**։

Եվ փորձեք **հոգևոր սկիզբ** ներբերել ձեր աշխատանքի մեջ։

Ձեր ամբողջ ուշադրությունը կենտրոնացրեք հենց դրա վրա։

Եվ այդ ժամանակ ձեր աշխատանքի նյութական կողմը հոգևոր բաղադրիչի սոսկ հաճելի լրացումը կդառնա։

Այսպիսի մոտեցումը ունիվերսալ է, որովհետև ցանկացած աշխատանք իր մեջ հոգևոր սկիզբ է բովանդակում, պարզապես մարդիկ հաճախ չեն մտածում այդ մասին։

Իսկ ի՞նչ է ենթադրում «հոգևոր սկիզբ» արտահայտությունը։

Նախ և առաջ՝ ստեղծագործական մոտեցում գործին, այլ ոչ թե աշխատանքի մեխանիկական, անմիտ կատարում։

Այդպիսի մոտեցումը պահանջում է արդեն Հոգու, և ոչ թե Մտքի մասնակցությունը։

Իսկ Հոգու ներկայությունը ձեր գործերում իր մեջ ներառում է ինտուիցիան, այսինքն՝ ելք դեպի ձեր կեցության նուրբ պլանը։

Հավանաբար ձեզնից յուրաքանչյուրը կարող է վերհիշել իր սեփական օրինակները, թե որքան գորշ ու տաղտկալի է թվացել կյանքը, երբ ինչ-որ գործ արել եք չուզելով, անմտածված ձևով, և, հակառակը, ինչ վառվռուն է դարձել գոյությունը, երբ ձեր գործին ստեղծագործաբար եք մոտեցել։

Առաջին դեպքում աշխատանքի վրա ծախսված ժամերը անվերջանալի են թվացել ձեզ, իսկ երկրորդ դեպքում՝ ժամանակը թռել է աննկատելիորեն։

Հենց ժամանակային պարամետրերն են գործի նկատմամբ ունեցած ձեր մոտեցման գլխավոր ցուցիչը։

Եվ ահա թե ինչու։

Աշխատելով Հոգու հետ տանդեմ կազմած, դուք տեղափոխվում եք կեցության նուրբ պլան, որտեղ ժամանակ գոյություն չունի, իսկ ձանձրալի մեխանիկական անմիտ աշխատանքը ձեզ ամուր պահում է եռաչափ աշխարհում՝ իր գծային ժամանակով։

Այդ պատճառով էլ, զավակնե՛րս, ինչ էլ որ անեք, ջանացե՛ք հոգևոր սկիզբ ներմուծել ձեր զբաղմունքի մեջ, դա ոչ միայն կփոխակերպի ձեր

էներգետիկական տարածությունը՝ բարձրացնելով նրա թրթիռները, այլև կմոտեցնի ձեզ այդքան սպասված անցումին դեպի Հինգերորդ չափում։

ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԵՆՔԸ

Այսօր մենք կշարունակենք զրույցը Հինգերորդ չափման մարդու աշխարհայացքի մասին։

Կյանքային առաջնահերթությունները դեպի հոգևոր սկիզբը տեղաշարժելու հաջորդ քայլը **ձեր վերաբերմունքն է մարդկանց նկատմամբ**։

Եվ ես տեսնում եմ, որ շատերիդ համար հենց դա է դարձել հոգևոր աճի հիմնական խոչընդոտը։

Ձեզ համար դժվար է առանց դատելու, հավասարապես վերաբերվել տարբեր մարդկանց՝ վատ կամ լավ, բարի կամ չար, ժլատ կամ առատաձեռն, հոգևոր կամ ոչ հոգևոր, մի խոսքով՝ ձեզնից շատ քչերին է հաջողվում այդ առումով երկվության աշխարհից վերջնականապես տեղափոխվել միաբևեռ աշխարհ։

Դրա համար էլ մենք կրկին ու կրկին վերադառնում ենք նույն թեմային, սակայն այս անգամ կքննենք այն ոչ թե Միասնության Օրենքի, այլ **Հակադրությունների Օրենքի** լույսի ներքո, հասկանալու համար, թե ինչպես է այն իրեն դրսևորում երկվության իրականության մեջ։

Բայց նախ և առաջ ես ուզում եմ ավելի հանգամանալից պատմել այդ Օրենքից, քանի որ մինչև այժմ խոսք չի եղել նրա մասին։

Հակադրությունների Օրենքը բխում է Ձգողության և Անդրադարձման Օրենքներից՝ հանդես գալով իբրև նրանց «օժանդակ» մաս։

Նրա հիմքում թե՛ ձգողության սկզբունքն է, թե՛ վանողության։

Բարձրագույն ըմբռնումով՝ այդ հասկացությունները իրարամերժ չեն։

Հիշեք լիցքավորման մեխանիզմի սկզբունքը. էլեկտրական սարքը գործի գցելու համար դուք նրա մեջ մարտկոց եք տեղադրում, այնպես, որ միակցեք դրականը և բացասականը՝ տարաբևեռ մեծությունները։

Ընդհանուր առմամբ նույն բանն է կատարվում նաև մարդու հետ. մարդուն բարձրաթրթիռ էներգիայով «լիցքավորելու» համար անհրաժեշտ է նրա կյանքի մեջ ներմուծել տարաբևեռ էներգիաներ, որպիսիք ունենում են նրա ճանապարհին հանդիպող մարդիկ։

Եվ հոգևոր բարձունքների նա կարող է հասնել միայն այն ժամանակ, երբ գա իր գիտակցության միաբևեռությանը, որը թույլ կտա նրան միատեսակ ձևով՝ առանց դատելու վերաբերվել ցանկացած մարդու, անկախ նրա անձնական հատկություններից։

Ես գիտեմ, որ դա շատ դժվար է, բայց անհրաժեշտ է։

Միայն այդպես՝ ձեռք բերելով էներգետիկական միաբևեռություն ձեր իսկ մեջ, դուք կկարողանաք կիսել այն մնացյալ աշխարհի հետ, որն առավել քան երբեք ունի դրա կարիքը։

Եթե վերլուծեք ձեր մոլորակի այժմյան իրավիճակը, կհասկանաք, որ երկվությունն այդտեղ հիմա հասել է իր բարձրակետին։

Համաշխարհային կառավարությունն ու իր իշխանավոր խամաճիկները անում են հնարավոր ամեն բան, որպեսզի բաժանեն և միմյանց դեմ լարեն ժողովուրդներին, երկրներին, ռասաներին, ազգություններին, սովորական մարդկանց՝ գործի դնելով իրենց հասանելի բոլոր միջոցները։

Իսկ ձեր խնդիրն է այդ բաժանմանը հակադրել **Միավորումը**, գոնե էներգետիկական մակարդակում։

Եվ հաջորդ անգամ մենք ավելի հանգամանալից կխոսենք այդ մասին։

ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շարունակելով իմ նախորդ ուղերձը, մենք այսօր կխոսենք, թե ինչպես կարող է **Հակադրությունների Օրենքը** ձեզ օգնել երկվությունը վերափոխել միաբևեռության։

Սակայն նախ և առաջ հարկավոր է հասկանալ, թե ինչ է ընկած մարդկանց փոխգործակցությունների հիմքում, ինչ մտքեր, հույզեր, ցանկություններ։

Որպես կանոն, դա մարդու ձգտումն է՝ գտնելու իրեն ոգեպես մերձավոր մեկին, ում հետ կկամենար կապել իր կյանքը՝ ամուսին, կին, ընկեր, համախոհ։

Երբեմն դա մարդուն միանգամից է հաջողվում, սակայն առավել հաճախ՝ փորձերի ու սխալների, հիասթափությունների ու հոգեկան տառապանքների ճանապարհով։

Եվ նման տխուր փորձառությունը բացատրվում է նրանով, որ մարդկանց փոխհարաբերություններն ընդգրկում են բազմաթիվ տարատեսակ գործոններ՝ մտային, հուզական, մշակութային, ազգային, հոգևոր և շատ ուրիշ։

Մարդկանց ներդաշնակ փոխհարաբերությունները կարող են կառուցվել այդ գործոնների ինչպես նմանության, այնպես էլ հակադրության վրա։

Բայց առավել հաճախ դրանցում առկա են թե՛ մեկ, թե՛ մյուս տարրերը։

Այսպես, օրինակ, միանգամայն ներդաշնակ ամուսնական զույգ կկազմվի, եթե տղամարդն ու կինը ունենան համանման հետաքրքրություններ, կուլտուրայի ու կրթության մակարդակ, սակայն տարբեր և նույնիսկ հակադիր խառնվածքներ ու մտածելակերպեր։

Տվյալ դեպքում ընդհանուր բարենպաստ հիմքին գումարվում է նրանց անձնավորությունների այլազանությունը, որի արդյունքում նրանք լրացնում ու հարստացնում են միմյանց։

Իսկ ի՞նչ էներգետիկական պրոցեսներ են ընթանում այդ ժամանակ։

Համառոտակի՝ դա կարելի է բնութագրել որպես **Հակադրությունների Միություն**։

Նրանց միանման աշխարհայացքների միասնական էներգետիկական շերտի վրա «դասավորվում են» և անհատական առանձնահատկությունները, որոնցից յուրաքանչյուրն ունի իր էներգետիկական նրբերանգը։

Դա կարելի է համեմատել գեղեցիկ գործվածքի հետ, որի ընդհանուր գունային ֆոնին նկարվում է երփներանգ պատկերը։

Արդյունքում, չնայած բազմագույն լինելուն, ամեն ինչ միանգամայն ներդաշնակ տեսք է ունենում։

Սակայն լրիվ այլ կերպ են ձևավորվում այն մարդկանց փոխհարաբերությունները, որոնք զուրկ են ընդհանուր հոգևոր և աշխարհայացքային հիմքից, և առկա են սոսկ տարաբևեռ մտքեր, հույզեր ու ցանկություններ։

Այդ պարագայում առաջանում է էներգետիկական քաոս, քանի որ Հակադրությունների Օրենքը հայտնվում է «ազատ թռիչքի մեջ»՝ առանց կապակցող հենքի, որն ունակ կլիներ ներդաշնակեցնել նման տարաբևեռությունը։

Հենց դա էլ ներկայումս տեղի է ունենում Երկրի հասարակության հետ, երբ մարդիկ կորցրել են հիմքը՝ սովորական համամարդկային բարոյական արժեքների այն միագույն «կտավը», որի վրա «նկարվում են» մարդկանց անհատական առանձնահատկությունները։

Այլասերելով համամարդկային հոգևոր հենքը և փոխարինելով այն անբնական ու մարդկանց խորթ կյանքային առաջնահերթություններով, համաշխարհային վերնախավն աշխարհում սերմանել է աներևակայելի էներգետիկական քաոս, որն ամենից առաջ դիպել է մարդկային փոխհարաբերություններին։

Եվ ձեր խնդիրն է, զավակնե՛րս, այդ քառսի ցածր թրթիռները փոխակերպել գոնե միջինի, որոնք սահմանակից կլինեն արդեն չորրորդ չափման հետ։

Եվ հաջորդ անգամ ես կպատմեմ, թե ինչպես կարելի է դա անել։

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ «ԳՈՐԾՎԱԾՔԸ» (ՊՐԱԿՏԻԿԱ)

Շարունակելով [իմ նախորդ ուղերձը](), այսօր ես ուզում եմ ձեզ տալ **քառսի էներգիան ներդաշնակ էներգիայի հոսքի փոխակերպող** ունիվերսալ մի պրակտիկա։

Դուք կարող եք այն կիրառել ինչպես ձեր կողքին եղած մարդկանց հետ հարաբերությունները բարելավելու համար, այնպես էլ համընդհանուր՝ համամարդկային մասշտաբով։

Եվ խոսքը կվերաբերի ընդհանուր էներգետիկական ֆոնին, որի վրա դասավորվում են մարդկանց անհատական էներգիաները։

Այդ «ֆոնի» ներդաշնակեցումն ինքը արդեն կնպաստի, որ մարդկանց արտածած բացասական էներգիաները սկսեն հետզհետե համահարթվել. այդ էներգիաների ճչան, գրգռիչ «գույները» ձեռք կբերեն ավելի նուրբ ու ազնիվ երանգներ։

Կանվանենք այս մեդիտացիան **«Մարդկային հարաբերությունների էներգետիկական "գործվածք"»**։

Հարկավոր է կանչել ձեր բոլոր Երկնային օգնականներին և ընկղմվել բավական խոր մեդիտատիվ վիճակի մեջ։

Եվ կախված այն բանից, թե ինչի հետ եք աշխատում տվյալ պահին, պատկերացրեք ձեր և որևէ մարդու, կամ ընդհանրապես մարդկության հարաբերությունների գունային ֆոնը։

Թե ինչ գույն ընտրել, կհուշի ձեր ինտուիցիան, որովհետև ամեն գույն ունի իր որոշակի բնութագիրը։

Տարբեր ժամանակներում և տարբեր իրավիճակներում գույները կարող են փոփոխվել։

Սակայն ամեն պարագայում ընդհանուր ֆոնը պետք է ունենա նուրբ, գեղեցիկ երանգ, որը ներդաշնակորեն կհամադրվի այն նկարին, որ կգծագրվի նրա վրա ձեր աշխատանքի արդյունքում։

Իսկ հետո կանչեք **Համբարձման Էներգիան** և սկսեք արարել՝ գործի դնելով ձեր ողջ երևակայությունը։

Եթե ուզում եք ներդաշնակեցնել ձեր հարաբերությունները որևէ մեկի հետ, ջանացեք հասկանալ, թե ինչ գունային գամմա կհամապատասխանի ձեր երկուսին։

Ընդ որում, շատ կարևոր է չներգրավել Միտքը և կարողանալ լսել Հոգու հուշումը։

Թուլացած մեդիտատիվ վիճակում դուք անպայման կա՛մ կտեսնեք այդ գույնը ձեր ներքին տեսողությամբ, կա՛մ էլ պարզապես կզգաք այն ինտուիտիվ մակարդակում։

Եվ կախված նրանից, թե ինչ գույն ցույց կտրվի ձեզ, դուք կկարողանաք որոշել ձեր հարաբերությունների էներգետիկական ֆոնը՝ հարաբերակցելով այն ձեր չակրաների գույնի հետ։

Այսպես, օրինակ, եթե տեսնեք դեղին գույնի երանգ, ուրեմն ձեր փոխհարաբերությունների հիմքում հուզական կապվածությունն է, եթե կանաչ՝ ուրեմն սրտագին, եթե երկնագույն՝ ուրեմն ձեր հարաբերությունները ավելի մտավորական բնույթի են, իսկ կապույտը կամ մանուշակագույնը արդեն նշանակում է խոր հոգևոր կապ։

Այնուհետև, որոշելով ձեր հարաբերությունների «գործվածքի» ֆոնը, սկսեք նկարել այդ «գործվածքի» վրա՝ ընտրելով այն գույները, որ կհուշի ձեր ինտուիցիան, բայց դարձյալ հարաբերակցելով դրանք ձեր չակրաների գույների հետ։

Եթե, օրինակ, կզգաք, որ դրանցում պակասում է հոգևորությունը, կարող եք ձեր նկարին ավելացնել կապույտ կամ մանուշակագույն նախշեր, եթե սրտակցությունը՝ կանաչ, և այլն։

Եվ հենց որ տվյալ մարդու հետ նոր ու ավելի ներդաշնակ հարաբերությունների ձեր «կտավը» պատրաստ լինի, մտովի նուրբ պլանից տեղափոխեք այն ֆիզիկական պլան, և երկուսով փաթաթվեք կամ վերմակի նման ծածկվեք նրանով։

Այս մեդիտացիայի իմաստն այն է, որ ձեր հարաբերությունների ընդհանուր ներդաշնակ ֆոնին նկարվի նույնպիսի ներդաշնակ պատկեր, որը կխորհրդանշի ձեր նոր փոխհարաբերությունների նրբերանգները՝ թրթիռային ավելի բարձր մակարդակ հանելով ձեզ։

Սկսեք դրանից, զավակնե՛րս, և միայն երբ կտեսնեք ձեր աշխատանքի արդյունքները՝ մերձավորների հետ ունեցած հարաբերությունների լավացումը, կարող եք արդեն ձեռնամուխ լինել Երկրի և համայն մարդկության էներգետիկական ֆոնի ներդաշնակեցման գլոբալ մեդիտացիային։

Աշխատանքի սկզբունքը նույնն է, այն տարբերությամբ, որ գունային «կտավը» կլինի ավելի լայն և բազմագույն։

Ջանացե՛ք գեղեցիկ և ներդաշնակ նկար պատկերել վրան, իսկ հետո նրանով փաթաթեք ամբողջ Երկիրը՝ քնքշորեն ու խնամքով, Անպայման Սիրով նրա ամեն մի բնակչի նկատմամբ։

Օրհնում եմ ձեզ, զավակնե՛րս, և անսահման սիրում։

ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՄՆՈՒԹՅՈՒՆԸ

Այսօր ես ուզում եմ դարձյալ խոսել ձեզ հետ **Հակադրությունների Օրենքի** մասին, բայց արդեն այն տեսանկյունից, թե **ինչպես է հարաբերակցվում Միասնության Օրենքի հետ**:

Իրականում նրանց միջև գոյություն ունի սերտագույն կապ, և ահա թե ինչու:

Բանն այն է, որ **Հոգու Էվոլյուցիայի պրոցեսը հնարավոր է միայն այն ժամանակ, երբ մարդն ընտրություն է ունենում**:

Եվ այս առումով երկվությունը ամենահզոր լծակն է գոյություն ունեցող բոլոր «ազդեցության լծակներից», այն բառացիորեն ամեն քայլափոխին ընտրության իրավունք է տալիս մարդուն:

Առանց նման հնարավորության բավական արագ վրա է հասնում բարոյական և ֆիզիկական դեգրադացումը, որ արդեն բազմիցս եղել է Երկրի վրա:

Եվ դրա օրինակն է Ատլանտիդայի և Լեմուրիայի նման հրաշալի, բարձրաթրթիռ քաղաքակրթությունների կործանումը:

Ունենալով սրտի ուզածը, մարդն ակամա ընկնում է գերհագեցման վիճակի մեջ, որն էլ ի վերջո բերում է դեգրադացման:

Եվ դա տեղի է ունենում այն պատճառով, որ նա սկսում է ենթագիտակցորեն որոնել մի բան, որ իր ունեցածի հակառակն է, որպեսզի բազմազան դարձնի իր կյանքը և ազատվի ձանձրույթից:

Այդպես, գերհագեցածությունը հաճախ վերածվում է այլասերման, ագրեսիայի, սադիզմի, և դա նույնպես Հակադրությունների Օրենքի դրսևորումն է:

Իսկ նա, ով հատակում է, ի հակադրություն տառապանքի և չքավորության, որոնում է ուրախության զգացում ու հարստություն, որոնց հաճախ հասնում է հանցավոր ճանապարհով:

Եվ դրանից խուսափելու համար կա միայն մեկ ելք՝ ցանկացած իրավիճակում ընտրել ոչ թե հակադրությունը, այլ Միասնություն:

Ցավոք, եռաչափ աշխարհում դա շատ քչերին է հաջողվում:

Սակայն որպեսզի դուք հասկանաք, թե ինչպես կարելի է դրան հասնել, ես կպատմեմ, թե ինչպես է զարգանում ավելի բարձր չափումների բնակիչների Հոգին, որտեղ երկվություն որպես այդպիսին գոյություն չունի:

Ինչո՞վ է լցված կյանքը նրանց, ովքեր պետք չունեն հանապազօրյա հացի մասին մտածելու և կարող են իրականացնել իրենց ցանկությունները մտքի ու դիտավորության ուժով:

Նրանց Հոգիները, հասած լինելով Հինգերորդ չափման և ավելի բարձր, ապրում են բոլորովին այլ պահանջմունքներով, որոնք դուրս են եռաչափ աշխարհի մարդու ըմբռնման շրջանակից:

Նրանք մտածում են արդեն գլոբալ մասշտաբով՝ համագալակտիկական և նույնիսկ տիեզերական:

Եվ ողջ ունեցածը ջանում են կիսել իրենց բանական եղբայրակիցների հետ՝ կապ հաստատելով նրանց հետ կյանքի բոլոր ասպարեզներում ունեցած իրենց փորձը փոխանցելու նպատակով:

Նրանք արդեն չեն սահմանափակվում իրենց մոլորակով և «հակադրություններ» են որոնում ուրիշ աշխարհներում, բայց արդեն բոլորովին այլ նպատակով՝ զգալու իրենց Միասնությունը Գալակտիկական եղբայրների ու քույրերի հետ և փոխանակելու նրանց հետ իրենց հաջողություններն ու նվաճումները:

Հենց այդպես են նրանք վերաբերվում երկրացիներին՝ տեսանելի և անտեսանելի օգնություն ցուցաբերելով և լիակատար Միասնություն զգալով ձեզ հետ՝ չնայած ձեր գոյության բազմաթիվ «հակադրություններին»:

Նույն կերպ էլ դուք կարող եք վերաբերվել նրանց, ինչն էլ հենց կլինի **հակադրությունների Միասնության** ամենավառ օրինակը պատմության մեջ:

ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԴԵՊԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Այսօր մենք դարձյալ կվերադառնանք **Հակադրությունների Օրենքին** և կդիտարկենք այն որպես **Զգողության Օրենքի** բաղադրամաս։

Չնայած այդ Օրենքների թվացյալ տարբերությանը, իրականում առաջինը բխում է երկրորդից, քանի որ **ամեն ոք ուրիշի մեջ ակամա որոնում է այն, ինչ ինքը չունի բավարար չափով**։

Այդպես, օրինակ, անչափ համեստ և ամաչկոտ մարդիկ հիանում են համարձակ ու անկաշկանդ, իսկ չափից դուրս բռնկուն ու հուզական մարդիկ՝ զուսպ ու հանգիստ մարդկանցով։

Հակադրությունները հաճախ իսկապես ձգում են իրար, ինչի արդյունքում ձևավորվում են բավական ներդաշնակ միություններ՝ ընտանեկան և մասնագիտական։

Բայց ինչպես արդեն ասվել է, դա հնարավոր է միայն այն դեպքում, եթե այդ մարդիկ ունեն **ընդհանուր աշխարհայացքային հիմք**, որի վրա էլ կառուցվում են նրանց հարաբերությունները։

Իսկ այս ուղերձում ես ուզում եմ ավելի հանգամանալից քննել այն էներգետիկական պրոցեսները, որոնք միավորում են այդ երկու Օրենքները՝ Զգողության և Հակադրությունների։

Նախ և առաջ հարկավոր է հասկանալ, որ երկու մարդու ներդաշնակ միության համար անհրաժեշտ է նաև ներդաշնակ թրթիռային ֆոն, որը կարող է առաջանալ նույնիսկ «բևեռայնորեն» հակադիր թվացող էներգիաների վերադրման դեպքում։

Սակայն նման ֆոնը նախատեսում է էներգիաների որոշակի «դիապազոն» կամ, այլ կերպ ասած, «համարժեք» էներգետիկական շրջանակներ։

Օրինակ, հիվանդագին ձևով համեստ մարդը և շատ սանձարձակ մեկը հազիվ թե կարողանան ներդաշնակ միություն կազմել։

Չափից դուրս շռայլը և չափից դուրս ժլատը նույնպես չեն կարողանա հասկանալ մեկմեկու։

Նույնը վերաբերում է նաև կրթությանն ու դաստիարակությանը։

Նրբակիրթ և բազմագիտակ մարդը լեզու չի գտնի բիրտ ու անտաշ տգետի հետ։

Բայց եթե հիշատակված որակները (էներգիաները) միջինացված ցուցանիշ ունեն, միանգամայն հնարավոր է, որ դրանց տերերը կարողանան լիովին ներդաշնակորեն համագործակցել։

Նման միության մեջ արդեն նրանք **կլրացնեն իրար՝** կիսելով այն լավագույնը, որ ունեն։

Նրանց հակադիր էներգիաները այլևս ոչ թե կհակասեն իրար, այլ կհանգցնեն մեկը մյուսի չափն անցնող դրսևորումները։

Այդպես, իր վրա վստահ կյանքի ուղեկցի կողքին մյուսի երկչոտությունն արդեն շատ ակնհայտ չի արտահայտվի։

Ինչպես նաև մեկի անչափ ու անմիտ շվայտությունը կշտկվի մյուսի խելամիտ հաշվենկատությամբ։

Այլ խոսքով, տարատեսակ, բայց համանման թրթիռային հաճախություններով էներգիաների համագործակցության դեպքում տեղի է ունենում ոչ թե վանում, այլ ձգում,- դիմացինի աններդաշնակ էներգիաների յուրօրինակ շտկում և հավասարեցում։

Ինչպես տեսնում եք, զավակնե՛րս, մենք դարձյալ վերադառնում ենք նրան, որ չափազանցումը իր ցանկացած դրսևորմամբ միշտ ցածր թրթիռներ ունի, և ամեն ինչում հարկավոր է գտնել **ոսկե միջինը**։

Այդ ժամանակ ուրիշների հետ հարաբերություն հաստատելն էլ շատ ավելի դյուրին կլինի ձեզ համար։

«ԴԵՂ» ԵՐԿՎՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Եվ եզրափակելով մեր զրույցը **Հակադրությունների Օրենքի** մասին, ես ուզում եմ պատմել, թե ինչպես է այն հարաբերակցվում **Անդրադարձման Օրենքի** հետ:

Բայց նախ ուզում եմ բացատրել, թե ինչու որոշեցի այսքան հանգամանորեն կանգ առնել Հակադրությունների Օրենքի վրա:

Առաջին հերթին այն պատճառով, որ հենց նա է գերիշխում **երկվության աշխարհում**:

Այս Օրենքը ոչ միայն սերտորեն հաղորդակից է Ձգողության և Անդրադարձման Օրենքներին, այլև ինքն է դրանց «գործարկման մեխանիզմը»:

Այլ խոսքով, նրա շնորհիվ գործարկվում են էներգետիկական պրոցեսներ, որոնք «հրահրում են» մյուս երկուսի՝ Ձգողության և Անդրադարձման Օրենքների աշխատանքը, որոնք իրենց նշանակությամբ շատ մոտ են միմյանց:

Սակայն եթե Ձգողության Օրենքը «երկկողմանի» է, քանի որ նրա ազդեցության արդյունքում տեղի է ունենում ինչպես համասեռ, այնպես էլ տարաբնեռ էներգիաների առձգում, ինչի մասին խոսվում է [իմ նախորդ ուղերձներից մեկում](), ապա Անդրադարձման Օրենքը գործում է առավելապես միակողմանի կերպով:

Այն անդրադարձնում՝ վերադարձնում է մարդուն այն էներգիաները, որ նա արտածում է դեպի դուրս:

Եվ տվյալ դեպքում Հակադրությունների Օրենքը նրա հետ հարաբերակցվում է ոչ թե անմիջականորեն, այլ միջնորդավորված ձևով:

Այլ կերպ ասած, էներգափոխանակությունը մարդկանց միջև կատարվում է ոչ թե որևէ էներգիայի ուղիղ անդրադարձման միջոցով, այլ, ավելի շուտ, էներգիան նրան է վերադառնում «ռիկոշետով»:

Եկեք դիտարկենք դա կոնկրետ օրինակով:

Ենթադրենք, մեկը շատ ցավագին է տանում կոպտությունը, քանի որ ինքը ծայր աստիճան բարեկիրթ մարդ է։

Սակայն «չգիտես ինչու», ամենաանբացատրելի ձևով, նա հանդիպում է ոչ թե քաղաքավարի մարդկանց, որ, թվում է, պիտի տեղի ունենար Զգողության Օրենքի համաձայն, այլ շարունակ բախվում է կոպիտ մարդկանց։

Ինչու՞ է այդպես լինում։

Որովհետև տվյալ դեպքում գործում է Անդրադարձման Օրենքը, բայց ոչ թե ուղղակիորեն, այլ Հակադրությունների Օրենքի միջոցով։

Եվ այդպես կլինի այնքան ժամանակ, մինչև որ մարդը վերհիշի **Միասնության Օրենքը**, որը թույլ չի տալիս դատել, այլ պահանջում է յուրաքանչյուրին ընդունել այնպես, ինչպես կա։

Հենց որ դա տեղի ունենա, կոպիտ մարդիկ կդադարեն հայտնվել քաղաքավարի մարդու ճանապարհին, և այդ ժամանակ ողջ ծավալով իր իրավունքները կստանձնի Զգողության Օրենքը՝ արդեն առանց «միջնորդի»՝ ի դեմս Հակադրությունների Օրենքի։

Այդպիսով կարելի է ասել, որ **Հակադրությունների Օրենքը գոյություն ունի միայն նրա համար, որ մարդն իր մտքերն ու հույզերը այնքան լավ սովորի կառավարել, որ մյուս՝ Զգողության և Անդրադարձման Օրենքներն արդեն գործեն ուղղակիորեն**։

Արդյունքում ներդաշնակություն կհաստատվի իր շուրջը եղած մարդկանց հետ, և իր ճանապարհին կհանդիպեն մարդիկ, որոնք բոլոր չափանիշներով՝ թե՛ էներգետիկական, թե՛ ֆիզիկական, իդեալապես կհամապատասխանեն իրեն։

Հետևաբար, զավակնե՛րս, ջանացեք հետևել ձեր հակազդեցությանը յուրաքանչյուր պատահած մարդու առնչությամբ, որպեսզի սովորություն ձեռք բերեք թույլ տալու մյուսներին լինել այնպիսին, ինչպիսին են, և ոչ թե ինչպիսին դուք կուզենաք տեսնել նրանց։

Հենց դա է **Միասնության Օրենքը** և այն **Անպայման Սերը**, որի մասին բազմիցս խոսել ենք ձեզ հետ։

Օրհնում եմ ձեզ, զավակնե՛րս, և անսահման սիրում։

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԵԼՈՎ ՏԻԵԶԵՐՔԻ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ

Այսօր ես կուզեի ամփոփել Տիեզերքի Օրենքներին նվիրված իմ ուղերձների շարքը։

Ինչպես տեսնում եք, նույնիսկ նրա՛նք ենթակա են էներգետիկական ներգործության և ինչ-որ չափով փոխում են իրենց պարամետրերը՝ կախված այն բանից, թե որ չափման մեջ են համագործակցում նրա բնակիչների հետ։

Եվ դրա ամենավառ օրինակը Հակադրությունների Օրենքն է, որն իշխում է երկվության աշխարհում և փոփոխում Տիեզերքի մյուս Օրենքների,- օրինակ՝ Զգողության և Անդրադարձման,- ելման դիրքերը։

Եվ այդուհանդերձ, **իրենք Տիեզերքի Օրենքները մնում են անփոփոխ**, քանզի գոյում են ժամանակից և տարածությունից անդին և տարատեսակ էներգիաների փոխազդեցության հավերժական ու անդադար գործընթացն են ներկայացնում։

Ինչպես տեսնում եք, մարդը, լինելով Արարչի մասնիկը, այնքան ամենազոր է, որ ունակ է ինչ-որ չափով ներգործելու Տիեզերքի Օրենքների պարամետրերի վրա՝ իր ցանկության և դիտավորության ուժով փոխելով նրանց ազդեցության աստիճանը։

Ցավոք, նա հաճախ գործի է դնում բնությունից իրեն տրված ուժը ոչ թե հօգուտ, այլ ի վնաս իրեն։

Այդպես, ունակ լինելով փոխելու իրադարձությունների ընթացքը ոչ միայն իր սեփական, այլև ողջ մոլորակի կյանքում՝ սոսկ կառուցողական հունով ուղղորդված իր մտքով և **Անպայման Սեր**

ճառագող հույզով, նա ոչ միայն այդպես չի վարվում, այլ ընդհակառակը՝ ավերում է ամեն ինչ իր ճանապարհին։

Պատճառն այն է, որ մարդկանց մեծ մասը ոչ միայն չգիտի **Տիեզերքի Օրենքների** գոյության մասին, այլև չի էլ մտածում, որ իր կյանքի վրա ազդում են էներգետիկական պրոցեսներ, որոնց հենց ինքն է շարունակ ծնունդ տալիս։

Այդ էներգետիկական և Աստվածային անգրագիտությունը դարեր ի վեր արմատավորվել է Երկրում ձեր մոլորակի իշխանությունը զավթողների կողմից։

Իրենք տիրապետելով այդ գիտելիքներին՝ խնամքով թաքցրել են դրանք մարդկանցից՝ ամենից ավելի վախենալով, որ մարդը հանկարծ կգիտակցի իր ներքին ուժը և կսկսի ապրել ըստ Տիեզերքի Օրենքների, այլ ոչ թե երկրային՝ արհեստական և մարդկային բնությանը հակասող օրենքների։

Զրկելով մարդկությանը Աստվածային գիտելիքների հիմքից, այդ ոչ-մարդիկ ավելի հեռու են գնացել՝ հրահրելով մարդկանց ամենանսեմ էներգիաների արտանետման, որոնք էլ հանգեցրել են մարդկանց բաժանմանը, հոգեկան ցավին ու տառապանքին։

Արդյունքում մարդկության պատմությունը գնացել է սխալ՝ ոչ Աստվածային ճանապարհով, որովհետև փոխվել է Երկրի էներգիայի որակը։

Եթե մարդկության ծաղկման շրջանում ձեր մոլորակում տիրում էին Միասնության և Անպայման Սիրո Էներգիաները, հետզհետե, Սողունակերպների և Օրիոնցիների՝ իշխանությունը Երկրի վրա ամենուրեք զավթելու հետ, սկսել են գերակշռել միայն ցածր հաճախության էներգիաներ՝ բաժանման, ատելության, նախանձի, ագրեսիայի, իշխանատենչության ու վերահսկման և իհարկե վախի՝ իր բոլոր դրսևորումներով։

Եվ հիմա եկել է ժամանակը, զավակնե՛րս, ոչ միայն գիտակցելու ձեր ամենազորությունը, այլև լիովին օգտվելու նրանից։

Դրա համար անհրաժեշտ է վերածրագրավորել ձեր իսկ գիտակցությունն ու ենթագիտակցությունը այնպես, որ ընդմիշտ ազատվեք նրանցում ներդրված երկվության ծրագրերից և ներմուծեք միաբևեռության Աստվածային ծրագիրը իր հավերժական ու անխախտ Տիեզերական Օրենքներով։

Հե՛տ դարձրեք բացասական և կազմաքանդող էներգետիկական պրոցեսները ձեր մոլորակում և սկզբնավորե՛ք նոր՝ դրական ու ստեղծագործ պրոցեսներ։

Այդ ամենը հնարավոր է, զավակնե՛րս, հարկավոր է միայն, որ փոխեք ձեր մտքերի և դիտավորությունների ընթացքը։

Եվ օրհնում եմ ձեզ, որ այդպե՛ս լինի։

Անսահման սիրող Բացարձակ-Հայրը խոսեց ձեզ հետ

Ընդունել է Մարթան 2022 թ. դեկտեմբերի 2-9

КНИЖНАЯ ЛАВКА

В нашей Книжной Лавке вы найдете и другие Сборники Посланий Отца-Абсолюта и Вознесенных Мастеров:

О НОВОМ ВИДЕНИИ ЖИЗНИ

ВОЗВРАЩЕНИЕ К БОГУ (МАТЕРЬ МИРА)

ТРИЕДИНСТВО ДУХА, ДУШИ И ТЕЛА

АСТРАЛЬНЫЙ МИР

ВТОРОЕ ПРИШЕСТВИЕ ХРИСТА (НАЧАЛО)

ВТОРОЕ ПРИШЕСТВИЕ ХРИСТА (ЧАСТЬ 2)

ТРИЕДИНСТВО ДУХА, ДУШИ И ТЕЛА

РЕЛИГИЯ И ЗАКОНЫ ВСЕЛЕННОЙ

ЧАСТО ЗАДАВАЕМЫЕ ВОПРОСЫ

НА ПОРОГЕ ВОЗНЕСЕНИЯ

ПРАКТИКИ НА КАЖДЫЙ ДЕНЬ

ПОСОБИЕ ПО ПЕРЕХОДУ В ПЯТОЕ ИЗМЕРЕНИЕ

УСТРОЙСТВО МИРОЗДАНИЯ

АРХАНГЕЛЫ

НЕБЕСНАЯ ГВАРДИЯ

АГАРТА И ЖРЕЦЫ ГИПЕРБОРЕИ

ГФС - КТО МЫ ТАКИЕ

МЕДИТАЦИИ И ПРАКТИКИ

НАШЕ СОВМЕСТНОЕ ВОЗНЕСЕНИЕ

КАК ОТДЕЛИТЬ ЗЕРНА ОТ ПЛЕВЕЛ

МУЖЧИНА И ЖЕНЩИНА

ВЗАИМООТНОШЕНИЯ С ДЕТЬМИ

РЕПТИЛОИДЫ И КЛОНЫ

А также другие текстовые и аудио сборники Посланий.

КНИЖНАЯ ЛАВКА И КАТАЛОГ ПОСТОЯННО ОБНОВЛЯЮТСЯ

Книжная Лавка сайта «Возрождение» *https://vozrojdeniesveta.com/book/*

Каталог *https://vozrojdeniesveta.com/book/katalog.html*

АВТОРСКИЕ ПРАВА

Все права на тексты и аудиозаписи защищены законом об авторском праве и принадлежат сайту «Возрождение».

При перепечатке и распространении материалов, а также воспроизведении их в любом виде и любыми средствами, обязательна активная ссылка на сайт “Возрождение” *https://vozrojdeniesveta.com/*